# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՍԱՅԱՆ ԳՈՌ ՍՈՒՐԵՆԻ

# Ա.Ի. ՄԻՐԱՔՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

**Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Նաղդյան Ռուբեն Միքայելի**

**ԵՐԵՎԱՆ – 2016**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ....................................................................................................... 4**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԱԼՄԱՆ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

1.1. Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համատեքստում ......................................................................... **14**

1.2. Ա.Ի. Միրաքյանի գիտական ուղին և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները..................................................................................... **22**

1.3. Տարածության ընկալման հետազոտման ժամանակ արգասիքային մոտեցման սահմանափակումների բացահայտումը և վերլուծությունը տարբեր գիտություններում ....................................................................................................... **32**

1.4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունները և փորձարարական հաստատումները ...................................................................... **51**

1.5. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանական հիմքերը .......**72**

**ԳԼՈՒԽ 2. ԱՐԳԱՍԻՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ................................................................................. 78**

2.1. Օբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսություններ .......................... **78**

2.2. Սուբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսություններ ....................... **89**

2.3. Ընկալման տեսությունը կոնստրուկտիվիստական մոտեցումում......................... **96**

2.4. Ընկալման տեսությունը նեյրոֆիզիոլոգիական մոտեցումում ............................ **99**

2.5. Ընկալման տեսությունները Ռուսաստանի հոգեբանների աշխատանքներում __**105**

**ԳԼՈՒԽ 3. ԸՆԿԱԼՄԱՆ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ Ա.Ի. ՄԻՐԱՔՅԱՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ _116**

3.1. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումը էկոհոգեբանությունում ..................................................................................**117**

3.2. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումը հոգեկան արտացոլման համարժեքության խնդրի համատեքստում ........................................ **129**
3.3. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կիրառման հեռանկարները արդի ուսուցման համակարգում.............................................................................................. **143**
3.4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների կիրառման հնարավորությունները հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով) ............ **154**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ......................................................................................... 168**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ............................................................................... 171**

**ՀԱՎԵԼՎԱԾ ....................................................................................................... 188**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Հոգեկան արտացոլման գործընթացը մարդկության պատմության մեջ լինելով ամենախնդրահարույց հարցերից մեկը, միաժամանակ պատկանում է ամենաքննարկված և մեկնաբանված խնդիրների շարքին: Դրանով հետաքրքրվել են մարդկության ամենապայծառ ուղեղները՝ անտիկ ժամանակներից սկսած մինչ օրս, սակայն, առ այսօր, այդ խնդրի շուրջ գիտական բանավեճերը չեն թուլացել և չեն կորցրել իրենց հրատապությունը:

Արշակ Իսրայելի Միրաքյանի (1929-1995) հետազոտությունները ևս նվիրված են հոգեկան արտացոլման գործընթացի բացահայտմանը, միայն թե, ի տարբերություն նախորդների, նա իր ուսումնասիրությունները սկսեց ոչ թե այն հարցից, թե ինչպես են մարդիկ, կենդանիները արտացոլում իրենց շրջապատող աշխարհը, այլ նրանից, թե ինչպես է հնարավոր լինում ընդհանրապես՝ հոգեկան արտացոլման գործընթացի առաջացումը:

Այդ հարցին պատասխանելու համար հայազգի հոգեբանը, Մոսկվայի Ընդհանուր և մանկավարժական հոգեբանության ինստիտուտի (այժմ՝ Ռուսաստանի Կրթության Ակադեմիայի Հոգեբանական ինստիտուտ) ընկալման լաբորատորիայում, իր աշակերտների և համախոհների հետ սկսեց զբաղվել այդ դժվարին գործով: Արդյունքում, նրա կողմից առաջարկվեց հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու մի նոր մոտեցում, ինչն անվանվեց ոչ արգասիքային (непродуктный)՝ «աֆիզիկալ» (афизикальный), հակառակ գերիշխող մեխանիստական, ֆիզիկալ (физикальный) մոտեցման, իսկ նրա հայեցակարգը կոչվեց ընկալման տրանսցենդենտալ հոգեբանություն:

Այդ հայեցակարգը հետազոտողին թույլ է տալիս դուրս գալ արգասիքային մտածելակերպի սահմաններից և հոգեկան արտացոլման խնդիրը ուսումնասիրել ավելի խոր մակարդակի վրա, որի ժամանակ հետազոտողին հնարավորություն է ընձեռվում բացահայտել հոգեկան արտացոլման գործընթացը առաջացնող սկզբունքները և օրինաչափությունները: Սակայն, հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգը այդպես էլ դուրս չեկավ մոսկովյան իր լաբորատորիայի շրջանակներից (բացի որոշ վերապահումներից) և

չընդգրկվեց ո՛չ հոգեբանության դասագրքերում (թե Հայաստանում և թե Ռուսաստանում) և ո՛չ էլ հայ հոգեբանների գործունեությունը նկարագրող և լուսաբանող որևիցե գիտական ձեռնարկում:

Այս հանգամանքը պայմանավորված չէր նրանով, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգում բացակայում էին նորարարական կամ ստեղծագործական գիտական արժեքները, այլ դրա հիմնական պատճառները թաքնված էին հետևյալ երկու հանգամանքներում. 1) ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը կասկածի տակ էր դնում հոգեկան արտացոլման գործընթացի սկզբունքները և օրինաչափությունները բացահայտելու խորհրդային հայտնի հոգեբանների (Բ.Գ. Անանև, Ա.Ն. Լեոնտև, Վ.Պ, Զինչենկո, Ս.Դ. Սմիրնով և ուրիշներ) մոտեցումները և այնքան էլ համահունչ չէր մատերիալիստական, մարքսիստական գաղափարախոսությանը (ինչը խորհրդային ժամանակաշրջանում, եթե ոչ պարտադիր, ապա առաջնային պայմաններից էր) ու 2) նրա հայեցակարգը լավ ըմբռնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել ֆիզիկալ (արգասիքային) մտածելակերպը և ձեռք բերել աֆիզիկալ (ոչ արգասիքային) մտածելակերպ, ինչի մշակումը հեշտ գործ չէր և պահանջում էր մեծ ջանքեր [109, էջ 58]:

Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների գիտական արժեքի մասին է նաև խոսում այն փաստը, որ 1999 և 2004թթ., Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի հոգեբանության Ինստիտուտի կողմից հրատարակվեցին «Контуры трансцендентальной психологии» (Տրանսցենդենտալ հոգեբանության ուրվագծերը) երկհատորյա մենագրությունը [108], [109], և 2010թ. Ռուսաստանի Կրթության Ակադեմիայի, Հոգեբանական ինստիտուտի կողմից կազմակերպվեց միջազգային կոնֆերանս՝ «А.И. Миракян и современная психология восприятия» (Ա.Ի. Միրաքյանը և ժամանակակից ընկալման հոգեբանությունը) թեմայով [27]: Սակայն, այդուհանդերձ, պետք է նշել, որ նրա աշխատանքները լուսաբանվելու և ամբողջական կերպով ներկայացվելու կարիք ունեն:

Այժմ, երբ այլևս չկան խորհրդային ժամանակաշրջանին բնորոշ գաղափարախոսական սահմանափակումները, անհրաժեշտ ենք համարում նկարագրել և վերլուծել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության

առանձնահատկություններն ու մեկնաբանությունները, ինչի շնորհիվ արժանվույնս կներկայացնենք հոգեբանության զարգացման մեջ, մասնավորապես՝ հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու գործում Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը և ներդրումը, ինչը, *պարզաճ և ամբողջական ձևով մինչ օրս արված չէ*: Քիչ կարևոր չենք համարում նաև այն հնարավոր հեռանկարների մատնանշումը, որոնք կարող են ստեղծվել հոգեբանության արդի տարբեր խնդիրները Ա.Ի. Միրաքյանի նոր մոտեցման օգնությամբ  հետազոտելու ժամանակ:

Թեկնածուական մեր ատենախոսության *արդիականությունը և կարևորությունը* պայմանավորված է վերը թվարկված հանգամանքներով:

**Հետազոտության օբյեկտը** ընկալման Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հոգեբանությունն է և հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում նրա աշխատանքների դերը:

**Հետազոտության առարկան** հանդիսանում է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները, առանձնահատկությունները, ընկալման հիմնական տեսությունների հետ համեմատական վերլուծությունը և հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հնարավոր զարգացումները:

**Հետազոտության վարկածը:** Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում օգտագործվող ոչ արգասիքային մոտեցումը, հնարավորություն է ընձեռում դուրս գալ հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու սահմաններից՝ նախադրյալներ ստեղծելով հոգեբանության այլ բնագավառներում նոր ուսումնասիրություններ կատարելու համար:

**Հետազոտության նպատակը՝** համակարգված և ամբողջական ձևով ցույց տալ Ա.Ի. Միրաքյանի գիտական ժառանգությունը, բացահայտել և արժանվույնս գնահատել հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում նրա ներդրումը, ինչպես նաև ցույց տալ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցման կիրառման հնարավորությունների շրջանակը:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Համառոտ կերպով ցույց տալ Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համատեքստում:

2. Ուսումնասիրել Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին և հոգեկան արտացոլման նրա հայեցակարգի ստեղծման նախադրյալները:

3. Հետազոտել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական դրույթները:

4. Համեմատական վերլուծություն անցկացնել ընկալման հոգեբանության հիմնական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության միջև:

5. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մոտեցման կիրառելիության հեռանկարները ցույց տալու համար հետազոտել և վերլուծել Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքները:

6. Հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով) և կրթական ոլորտում ցույց տալ ու մեկնաբանել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների և ոչ արգասիքային մոտեցման կիրառման հեռանկարները:

**Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը:** Աշխատանքում որպես մեթոդաբանական հիմք է ընդունվել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգը (Ա.Ի. Միրաքյան): Այն օգտագործվել է ընկալման հոգեբանության հիմնական տեսություններում արգասիքային մոտեցման սահմանափակումները ցույց տալու նպատակով և Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքները վերլուծելու համար:

Աշխատանքում նաև օգտագործվել է սուբյեկտ-անձնային մոտեցումը (Բ.Գ. Անանև, Ա.Վ. Բրուշլինսկի, Դ.Բ. Բոգոյավլենսկայա, Կ.Վ Կարպինսկի), ինչի շնորհիվ հնարավոր եղավ ամբողջական ձևով ցույց տալ և վերլուծել Ա.Ի. Միրաքյանի անձը ու գիտական գործունեության հոգեբանական նախադրյալները:

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները.**

- Կենսագրական մեթոդ. այն անհրաժեշտ է եղել Ա.Ի. Միրաքյանի՝ որպես գիտնականի, հոգեբանական որակների նախադրյալները և ձևավորման պայմանները բացահայտելու համար:

- Գործունեության արդյունքների վերլուծության մեթոդ. այն հնարավորություն ընձեռեց ուսումնասիրելու Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին, որը արտացոլված է նրա ատենախոսություններում, մենագրություններում և հոդվածներում;
- Հարցազրույցի մեթոդ. օգտագործվել է գիտնականի աշակերտներից, հետևորդներից և ընտանիքի անդամներից, նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ լրացուցիչ տվյալներ հավաքելու համար:
- Համեմատական վերլուծության մեթոդ. այն թույլ է տվել բացահայտելու ընկալման ավանդական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունների տարբերությունները:

**Հետազոտության գիտական նորույթը.**

1. Ամբողջականորեն ներկայացվում է Ա.Ի. Միրաքյանի գիտական գործունեությունը՝ ներառելով նրա անցած գիտական ուղին, որի արդյունքում բացահայտվում են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ձևավորման նախադրյալները:
2. Վերլուծվում և ամփոփվում է Ա.Ի. Միրաքյանի աշակերտների (Հ.Ա. Ադամյան, Ա.Ն. Անդրեև, Ս.Լ. Արտեմենկով, Ա.Մ. Զալցման, Վ.Ի. Կոզլով, Է.Ի. Կոչուրովա, Ն.Լ. Մորինա, Գ.Վ. Շուկովա, Վ.Ի. Պանով, Տ.Ս. Պոգորելցևա, Ն.Վ. Պոդլեսնովա, Ի.Լ. Ռուդենկո, Ա.Ա. Քանանյան և ուրիշներ) տեսական և փորձարարական հետազոտությունները, որոնցում բացահայտվում են ճանաչողական տարբեր մոդալականությունները հետազոտելու գործում ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների կիրառման հնարավորությունները:
3. Ընկալման հիմնական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության միջև համեմատական վերլուծություն է անցկացվել, որի արդյունքում վեր են հանվել և ընդգծվել վերջինիս առանձնահատկությունները և հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում Ա.Ի. Միրաքյանի ներդրումը:
4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական սկզբունքների և ոչ արգասիքային մոտեցման համատեքստում ցույց է տրվում հոգեթերապիայում

(հոգեվերլուծության օրինակով) և կրթական ոլորտում դրանց օգտագործման հեռանկարները:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:** Հոգեկան արտացոլման խնդրին անդրադարձել են հոգեբանական տարբեր տեսություններ (ընկալման օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող մոտեցումներ, ընկալման կոնստրուկտիվիստական տեսություն, ընկալման նեյրոֆիզիոլոգիական տեսություն և այլն), սակայն, այդ խնդրի վերաբերյալ Ա.Ի. Միրաքյանի մոտեցումը էականորեն տարբերվում է նախորդներից՝ իրենում ներառելով հետազոտման լրիվ նոր մոտեցում:

Նրա աշխատանքները գլխավորապես լուսաբանվել են իր աշակերտների և համախոհների կողմից (Վ.Ի. Պանով, Ռ.Մ. Նաղդյան, Ռ.Հ. Պողոսյան, Ն.Լ. Մորինա, Գ.Վ. Շուկովա, Վ.Ի. Կոզլով, Ա.Մ. Զալցման, Հ.Ա. Ադամյան և այլք), ովքեր, հիմնականում դա անում էին ընկալման առանձին մոդալականությունները (Հ.Ա. Ադամյան՝ ախրոմատիկ գույների ընկալում, Ա.Մ. Զալցման՝ լսողության որոշ առանձնահատկություններ և այլն) հետազոտելու միջոցով [154, էջ 63-222]: Այստեղ պետք է առանձնացնել Վ.Ի. Պանովի [148] և Ռ.Մ. Նաղդյանի աշխատանքները [20]:

Վ.Ի. Պանովը էկոհոգեբանության տեսությունը կառուցելիս, իբրև մեթոդաբանական հիմք է վերցնում Ա.Ի. Միրաքյանի ոչ արգասիքային մոտեցումը և տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական սկզբունքները, իսկ Ռ.Մ. Նաղդյանը, հոգեկան արտացոլման համարժեքության խնդիրը բացահայտելու համար, որպես ելակետային տվյալ է վերցնում «Ոչինչ» (Ничто) հասկացությունը, որը բնորոշում է մինչ արտացոլումը գոյություն ունեցող իրականությունը և ընկած է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանության ձևավորման հիմքում:

Այդուհանդերձ, թե՛ Վ.Ի. Պանովը (էկոհոգեբանություն) [148] և թե՛ Ռ.Մ. Նաղդյանը (իրականության հոգեկան արտացոլում) [124] իրենց մոտեցումները կառուցելիս օգտվել են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցումից և այդ հայեցակարգի հիմնական դրույթներից:

Հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի մի յուրատիպ համեմատական վերլուծություն է արել Գ.Վ. Շուկովան: Նա զուգահեռներ է անցկացրել

հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանող երեք հիմնական մոտեցումների միջև. իմացաբանական, գոյաբանական և տրանսցենդենտալ [183]:

Անհրաժեշտ է նաև նշել մտածողության հետազոտման գործում Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հետևորդ Ռ.Հ. Պողոսյանի առանձնահատուկ տեսական վերլուծությունը, որում նշվում էր, որ հոգեբանությունում այդ խնդրի մեկնաբանությունները բացառապես կատարվել են արգասիքային մակարդակի վրա և առաջարկվում էր այդ խնդիրը ուսումնասիրել ոչ արգասիքային մոտեցման միջոցով [152, էջ 423-426]: Վերոնշյալ մեկնաբանությունը կարելի է համարել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կիրառելիության սահմանների ընդլայնման ևս մեկ փորձ, ինչը, իհարկե, կարիք ունի մանրակրկիտ վերլուծության և բազմակողմանի ուսումնասիրության:

Հայերեն լեզվով աղբյուրներից, որտեղ հակիրճ ձևով հիշատակվում է Ա.Ի. Միրաքյանի անունը, թերևս Ա. Նալչաջյանի և Հ. Թակուշյանի հեղինակությամբ գիրքն է («Հոգեբանական մտքի զարգացումը Հայաստանում») [19, էջ 65]:

Սակայն, այսքանով հանդերձ, պետք է փաստել, որ հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգը լիարժեք և ամբողջական ձևով ուսումնասիրված չէ (որտեղ նշված կլիներ Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին, ինչում թաքնված են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները): Մեր կարծիքով, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունները և ոչ արգասիքային մոտեցումը առավել ամբողջական և ընդգծված ցույց տալու համար անհրաժեշտ է նաև այդ հայեցակարգի և ընկալման հիմնական տեսությունների միջև համեմատական վերլուծություն անցկացնել (ինչը մինչ օրս ամբողջական ձևով արված չէ), որը թույլ կտա համեմատության մեջ ներկայացնել հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի էական տարբերությունները և դրանով իսկ ընդգծված ձևով նշել հոգեբանության մեջ նրա ներդրումը:

**Հետազոտության տեսական նշանակությունը:**

Աշխատանքում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցումը և այդ հայեցակարգին բնորոշ աֆիզիկալ մտածելակերպը կարող են օգտագործվել արդի

հոգեբանության այլ ոլորտներում (ինչպես ցույց ենք տվել էկոհոգեբանության՝ Վ.Ի. Պանով, հոգեկան արտացոլման համարժեքության հետազոտությունների՝ Ռ.Մ. Նաղդյան օրինակներով)՝ տեսական տարբեր խնդիրները ձևակերպելու, մեկնաբանելու և լուծելու ժամանակ:

**Հետազոտության կիրառական նշանակությունը:**

1. Աշխատանքում ներառված վերլուծությունները կարող են օգտագործվել հոգեթերապիայում՝ հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքները ոչ արգասիքային մոտեցման միջոցով մեկնաբանելու համար, ինչպես նաև ուսուցման գործընթացը կազմակերպելիս գոյություն ունեցող որոշ սահմանափակումներից (ինչը պայմանավորված է արգասիքային, ֆիզիկալ մտածելակերպով) ձերբազատվելու համար:

2. Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «Հոգեբանության պատմություն», «Ընդհանուր հոգեբանություն» և հոգեկան արտացոլմանը վերաբերող դասընթացներում, ինչպես նաև «Հայ հոգեբանական մտքի զարգացման պատմություն» հատուկ դասընթացներում:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Ա.Ի. Միրաքյանի աշխատանքները մեծացրեցին հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու, մեկնաբանելու և հասկանալու սահմանները:

2. Ընկալման հոգեբանության հիմնական տեսություններում (օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող, կոնստրուկտիվիստական, նեյրոֆիզիոլոգիական, ինչպես նաև Ռուսաստանի հոգեբաններ՝ Բ.Գ. Անանևի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Դ. Սմիրնովի և Վ.Ա. Բարաբանշչիկովի ընկալման տեսություններ) ի տարբերություն ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության, օգտագործվում է արգասիքային մոտեցում:

3. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը ոչ միայն նորովի է հետազոտում և մեկնաբանում հոգեկան արտացոլման գործընթացը, այլ նաև նախադրյալներ է ստեղծում արդի հոգեբանության տարբեր բնագավառներում հոգեկան երևույթները ոչ արգասիքային մոտեցման միջոցով հետազոտելու և մեկնաբանելու համար:

**Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը:** Ատենախոսությունում ներառված գիտական դրույթները, վերլուծությունները, հետևություններն ու եզրահանգումները հիմնավորվում են աշխատանքում կիրառված մեթոդների, բազմաթիվ գիտական աղբյուրների օգտագործման և դրանց վերլուծության միջոցով, ինչպես նաև կենսագրական, գիտական փաստերի կիրառմամբ:

**Հետազոտության փորձաքննությունը:** Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները, գործնական և տեսական առաջարկությունները ներկայացվել են զեկույցների և հրապարակումների տեսքով. «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով (ԵՊՀ 2011), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային IV գիտաժողով (ԵՊՀ 2013), Ութերորդ տարեկան գիտաժողով (ՀՌՀ 2013), Գիտական և պրակտիկ նյութերի X միջազգային կոնֆերանս (Անգլիա 2014), «Գիտության և կրթության զարգացման արդի հիմնախնդիրները» միջազգային գիտական կոնֆերանս (ՀՌՀ 2014), ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին նվիրված, երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողով (ԵՊՀ 2014), «Արդիականության մարտահրավերները, փիլիսոփայության և հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով, նվիրված ֆակուլտետի 50-ամյակին (ԵՊՀ 2014), Իններորդ տարեկան գիտաժողով (ՀՌՀ 2014), «Հումանիտար և հասարակական գիտություններ», լրաբեր (ՀՌՀ 2015), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային V գիտաժողով (ԵՊՀ 2015):

Աշխատանքում օգտագործված *«արգասիքային», «ոչ արգասիքային», «ֆիզիկալ»* և *«աֆիզիկալ»* եզրույթները համապատասխանաբար համարժեք են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում օգտագործված *«продуктный», «непродуктный», «физикальный»* և *«афизикальный»* եզրույթներին:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և 2

հավելվածից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքով 187 էջ է: Գրականության ցանկը կազմում է 213 աղբյուր:

# ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԱԼՄԱՆ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

## 1.1. Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համատեքստում

«Ա.Ի. Միրաքյանի ներդրումը հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում» վերնագրով մեր թեկնածուական ատենախոսությունը ունենալով պատմական բնույթ, անհրաժեշտ ենք համարում սկսել հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համառոտ ակնարկով, ինչը մեզ թույլ կտա, այդ համատեքստում, գիտնականի աշխատանքների դերը և ներդրումը նշելիս, ավելի լավ կողմնորոշվել ու արժանվույնս գնահատել նրա գիտական գործունեությունը:

Աշխատանքի այս հատվածում ընդգրկվել են այն հայ հոգեբանները, որոնց աշխատանքները կարող ենք համարել առավել ամբողջական և ավարտուն: Այդպիսիք են՝ այլևս իրենց գիտական ուղին ավարտած հոգեբանները, որոնց աշխատանքները, ինչ-որ կերպ, հետք են թողել հոգեբանության զարգացման գործում: Նման ընտրությունը պայմանավորված չէ նրանով, որ գործող հոգեբանների աշխատանքները կամ նրանց ներդրումը ավելի քիչ կարևոր են կամ քիչ գնահատելի, այլ դա արվել է միայն այն հանգամանքը հաշվի առնելով, որ ներկայիս հոգեբանները այժմ էլ ակտիվ աշխատում և ստեղծագործում են ու նրանց աշխատանքների դերը՝ այդ դինամիկայի պայմաններում, ամբողջական և ամփոփիչ կերպով հնարավոր կլինի ներկայացնել միայն ապագայում: Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ մեր աշխատանքի թե՛ ֆորմատը և թե՛ ծավալը թույլ չէր տալիս այս ենթագլխում ավելի ընդգրկուն կերպով ներառել հայ հոգեբանների աշխատանքները, ինչը կարող է առիթ դառնալ տարակարծությունների և որոշ անհամաձայնությունների: Այսպիսով.

Հայկական հոգեբանական մտքի կազմավորմանը և զարգացմանը կարողանում ենք հետևել միայն 5-րդ դարից սկսած, երբ ստեղծվեցին հայոց գրերը (404-405): Մինչ այդ, բնականաբար, հայոց լեզվով գրականություն չկար և հետևաբար դժվար ու անհնարին կլիներ հետևել հոգեբանական մտքի ձևավորման ընթացքին [19, էջ 9]:

Հայոց գրերի ստեղծումից հետո, մի շարք անվանի գործերի թարգմանությունների հետ մեկտեղ, թարգմանվեցին նաև Արիստոտելի, Պլատոնի և այլ հայտնի փիլիսոփաների գործեր: Նման աշխատանքն իրենց վրա էին վերցրել հույն գրականությանը և լեզվին լավ ծանոթ հայ մտածողները:

Այդ ժամանակաշրջանի առավել հայտնի մտածողներից, ում աշխատանքներում մենք կարող ենք հանդիպել հոգեբանությանը առնչվող ամենատարբեր հարցերի՝ Ագաթանգեղոսն է, Եզնիկ Կողբացին, Փավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, Եղիշեն՝ որոնց աշխատանքները պահպանվել են մինչ օրս:

Ագաթանգեղոսի (IV կամ V դար) «Պատմությունը», ինչը հայտնի է նաև «Գրիգորի վարքը» անվանմամբ (այն թարգմանվել է մի շարք լեզուներով) [5, էջ 144], մեզ հասած բացառիկ արժեքներից է, որը ծանոթացնում է ընթերցողին ոչ միայն հայոց պատմության ուշագրավ իրադարձությունների հետ, այլ նաև մեզ է հասցնում Հայաստանում ընդունված նոր կրոնի՝ քրիստոնեության վերաբերյալ մարդկանց մոտեցումները, ինչը, հոգեբանության տեսանկյունից շատ արժեքավոր է:

Եզնիկ Կողբացու (մոտ. 380-450) «Եղծ աղանդոց» գրքում, որը կրկին նվիրված էր հավատքի հարցերին, հերքվում են աղանդները: Այն հիմնավորելու համար Ե. Կողբացին դիմում է որոշ հոգեբանա-փիլիսոփայական վերլուծությունների, ինչը այդ ժամանակների համար եզակի կարևորություն ունեցող աշխատանք էր [3, էջ 31-182]:

Հոգեբանության համար նախորդներից ոչ պակաս կարևոր տեղեկություններ կարող ենք գտնել Փավստոս Բուզանդի (IV կամ V դար) «Պատմություն հայոց» աշխատությունում: Դրանում նկարագրվում է հայոց սպարապետ Վասակի և Պարսից թագավոր Շապուհի երկխոսությունը, որտեղ արտացոլվում են այն հոգեբանական առանձնահատկությունները, ինչով հայ ժողովուրդը օժտում էր իր առաջնորդներին [15, էջ 42, 43]:

Հաջորդ հայ մեծ մտածող և պատմաբան Ղազար Փարպեցուց (մոտ 442–VI դ. սկիզբ) մեզ է հասել երկու աշխատանք. «Հայոց պատմություն» և «Նամակ՝ ուղղված Վահան Մամիկոնյանին»: Վերջինում Ղ. Փարպեցին խոսում է մարդկային մի շարք հոգեբանական յուրահատկությունների մասին. նախանձ, դավաճանություն, փառասիրություն, հավատարմություն և այլն [17]:

Հոգեբանության տեսանկյունից մեծ է եղել Եղիշեի (400-480) «Վարդանանց պատմությունը» աշխատանքը, որտեղ նա առաջ է քաշում ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը [18, էջ 210]: Այն, մեր կարծիքով, բացառիկ գործերից է, որը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը ու կարող է ուղեցույց ծառայել ազգային գաղափարախոսությունը մշակելու ժամանակ [16]:

Միջնադարյան մտածողներից, հայ հոգեբանական մտքի զարգացման գործում, թերևս, ամենանշանակալի հետքը թողողներից մեկը Դավիթ Անհաղթն է (V–VIդդ. ծն. և մահ. թթ. անհայտ): Նրա աշխատանքներից մեզ են հասել «Փիլիսոփայության սահմանումները», «Պորփյուրոսի ներածության վերլուծությունը» և «Արիստոտելի Անալիտիկայի մեկնաբանությունը» գրվածքները: Հոգեբանության համար հետաքրքիր տեղեկություններ կարող ենք գտնել Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» աշխատությունում: Այդտեղ նա ներկայացնում է հոգու կառուցվածքը, որը կազմված է երեք մասից. բանականություն, ցասում և ցանկություն: Հոգեկան առաքինությունների մասին խոսելիս նա առանձնացնում է չորսը՝ արիություն, արդարություն, խոհեմություն և ողջախոհություն [2, էջ 79]: Դ. Անհաղթի աշխատանքներում հանդիպում ենք նաև մահվանը, զգայություններին, հույզերին, կամքին վերաբերող մոտեցումների [19, էջ 24-32]:

Միջնադարյան մեծանուն հայ փիլիսոփա-մտածողներից անհրաժեշտ ենք համարում նաև նշել Անանիա Շիրակացուն (մոտ. 610-685), Գրիգոր Նարեկացուն (951-1003), Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն (990-1058), Հովհաննես Սարկավագին (1047-1129), Հովհաննես Երզնկացուն (1230-1293): Վերջինս համարում էր, որ «...մարդու հոգին չունի բնածին գիտելիք և բարոյական հատկանիշ: Միտքը խոպան հողի է նման, որ ինչ սերմանեն զայն պտղաբերե» [12, էջ 352]: Առանձնահատուկ ուշադրության են արժանի գիտնական, բժիշկ և հայկական դասական բժշկության հիմնադիր Մխիթար Հերացու (1120-1200) աշխատանքները: Հոգեկանը ուսումնասիրելու ժամանակ, նա մեծ տեղ էր հատկացնում մարդու ֆիզիոլոգիական վիճակին և փորձում էր կապ հաստատել հոգեկանի և գլխուղեղի միջև: Հոգեկան տարբեր խնդիրները լուծելու ժամանակ նա մատնանշում էր երաժշտության և բժշկի ազդու խոսքի դերը [9]:

14-18դդ. անվանի մտածողներից են եղել Հովհաննես Որոտնեցին (1315-1386), Գրիգոր Տաթևացին (1346-1409), Առաքել Սյունեցին (1350-1425), Սիմեոն Ջուղայեցին (1595-1657), Խաչատուր Էրզրումցին (1666-1740), ովքեր իրենց աշխատանքներում փորձել են մեկնաբանել և բացահայտել հոգու ծագմանը ու բնույթին վերաբերող մի շարք հարցեր [12, էջ 352]:

Հոգեբանությունը որակապես փոխվեց 19-րդ դարի վերջերին, երբ Վ. Վունդտը հիմնեց առաջին հոգեբանական լաբորատորիան (1879) և հոգեբանությունը հռչակվեց որպես առանձին գիտություն: Այդ փոփոխություններից զերծ չմնաց նաև Հայաստանը: Սակայն մինչ դրան անդրադառնալը, ցանկանում ենք նշել ևս երկու հայ անվանի գիտնականների, ում աշխատանքները նշանակալի են եղել հայ հոգեբանական մտքի զարգացման գործում: Առաջինը Ստեփանոս Նազարյանցն էր (1812-1879), ով լինելով Կազանի համալսարանի դասախոս, 1851թ. հրատարակեց «Հաղագս փորձնական հոգեբանության ճառ» գիրքը, որը կարելի է համարել հայերեն լեզվով հոգեբանության առաջին աշխատանքներից մեկը [22, էջ 130]: Այդտեղ, Ս. Նազարյանցը գլխավորապես անդրադառնում է հոգեբանության հիմունքներին, ախտաբանական հարցերին, մանկավարժական հոգեբանությանը և այլն: Ընդգծելով հոգեբանության կիրառելիության սահմանները, նա այդ ժամանակ արդեն նշում էր, որ հոգեբանության իմացությունը պետք է ոչ միայն մանկավարժներին, այլ նաև իրավաբաններին, բժիշկներին և նրանց, ովքեր չեն կարող կազմակերպել իրենց գործունեությունը առանց այդ գիտության [19, էջ 45]:

Հաջորդ գիտնականը Միքայել Նալբանդյանն է (1826-1866): Հոգեբանությանը վերաբերող նրա հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում էր, մասնավորապես՝ հոգեբանության փիլիսոփայական հիմքերի, իմացաբանական հոգեբանության և խոսքի, անձի հոգեբանության, էթնիկական հոգեբանության, արվեստի հոգեբանության հետ կապված խնդիրները [21]: Չնայած իր երիտասարդ տարիքին, Մ. Նալբանդյանը բավական հարուստ ժառանգություն է թողել, որում մեծ տեղ է հատկացվում հոգեբանությանը վերաբերող հարցերին:

Այսպիսին էր Հայաստանում հոգեբանական մտքի վիճակը, երբ 1879թ. հոգեբանությունը առանձնացվեց և հռչակվեց որպես առանձին գիտություն: Այդ

ժամանակ, աշխարհի տարբեր հատվածներից, բազմաթիվ գիտնականներ գնացին Վ. Վունդտի լաբորատորիայում ուսուցանելու և վերապատրաստվելու: Դրանցից էր մեր հայրենակից Գ. Էդիլյանը (1885-1942): Վերապատրաստվելուց հետո, վերադառնալով Հայաստան, նա 1921թ., ԵՊՀ-ում հիմնում է հոգեբանության և մանկավարժության ամբիոնն ու փորձարարական հոգեբանության լաբորատորիան [159, էջ 4-12]:

Գ. Էդիլյանի աշխատությունները հիմնականում ուղղված էին ընկալման ֆենոմենի մեկնաբանության գործին: Համաձայն նրա՝ ընկալումը մի այնպիսի հոգեկան երևույթ է, որը տարբերվում է այլ հոգեկան երևույթներից, և երբ մենք կարողանանք առանձնացնել այդ երևույթները միմյանցից, մենք կհասկանանք դրա առանձնահատկությունները: Այստեղ, իհարկե, մենք տեսնում ենք Գ. Էդիլյանի վրա Վ. Վունդտի ազդեցությունը, ով կարծում էր (Վ. Վունդտը), որ հոգեկան տարբեր երևույթները լավ հասկանալու համար անհրաժեշտ է դրանք բաժանել իր իսկ բաղկացուցիչ մասերի (ստրուկտուրալիստական մոտեցում): Գ. Էդիլյանը համոզված էր, որ ընկալումը հանդիսանում է օբյեկտիվ իրականության դրսևորումներից մեկը. մարդու կողմից ինչ-որ օբյեկտի ընկալումը պայմանավորված է նրա անմիջական ընկալումով, որը կապ չունի այն տարածության հետ, որտեղ գտնվում է այդ օբյեկտը: Ցանկացած ընկալման գործընթաց միշտ կոնկրետ է, այսինքն՝ այն վերաբերում է բնության մեջ գոյություն ունեցող որոշակի օբյեկտի [47, էջ 157]:

Գ. Էդիլյանի աշխատանքների մի մեծ մասը նվիրված են հայերեն գրերը ավելի դյուրին կարդալու գործին: Միայն 1933-1935թթ. նա Հայաստանում հրատարակել է 5 ձեռնարկ, որոնք արտացոլում էին նրա կատարած փորձերի վերլուծության արդյունքները: Դրանց թվին են պատկանում «Շրիֆտի ընթեռնելիությունը» (1933), «Տողերի ընթեռնելիության խնդիրը» (1933), «Գրքերի ձևավորման խնդիրները» (1933), «Տպատառ տողերի ընթեռնելիությունը» (1935) և այլն [28, էջ 19-22]:

1946թ., Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում է հիմնադրվում հոգեբանության ամբիոն, որի վարիչ է նշանակվում Գ.Տ. Հովսեփյանը [10, էջ 4], ում մասնագիտական գործունեությունը հիմնականում նվիրված էր երեխաների դիտողականության խնդիրներին [138]:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920-1991), եթե Գ. Էդիլյանին, ինչ-որ կերպ հաջողվում էր զերծ մնալ մարքսիստական գաղափարախոսության ազդեցությունից [19, էջ 59], ապա նրան հաջորդող հոգեբանների գործունեությունը պետք է դիտարկել մատերիալիստական գաղափարախոսության շրջանակներում: Չնայած այդ սահմանափակումներին, այդ ժամանակահատվածում հայ հոգեբանների կողմից մեծ աշխատանքներ կատարվեցին ընդհանուր հոգեբանության, հոգեբանության պատմության, երեխայի հոգեբանության, մանկավարժական հոգեբանության, բժշկական հոգեբանության, աշխատանքի և ինժեներական հոգեբանության, սպորտի հոգեբանության, սոցիալական հոգեբանության ոլորտներում [19], [22], [10], մասնավորապես.

1934թ. Մ. Մազմանյանի (1910-1977) հեղինակությամբ հրատարակվեց հայերեն լեզվով հոգեբանության առաջին ամբողջական դասագիրքը [10, էջ 5], ինչից հետո, աստիճանաբար լույս տեսան հոգեբանության բուհական տարբեր դասագրքեր, որոնցից էին «Ուրվագծեր հոգեբանությունից», «Զգայական Ըմբռնումներ» [14] և «Դասախոսություններ հոգեբանությունից» աշխատանքները [13]:

Հոգեբանության պատմությունից արժեքավոր են Հ. Թութունջյանի (1918-1994) աշխատանքները [8], ով գիտության պատմության հարցերում առկա միակողմանիությունը հաղթահարելու նպատակով առաջարկում էր հոգեբանության պատմությունը դիտարկել մի կողմից՝ փիլիսոփայական ուղղությունների համեմատության, իսկ մյուս կողմից՝ պատմական ժամանակաշրջանի բոլոր կողմերի ազդեցության և գիտական կոնկրետ ձեռքբերումների դիրքերից [7, էջ 16]:

Երեխայի հոգեբանության հետազոտություններով էին զբաղվում, մասնավորապես՝ Մ.Ս. Երիցյանը, Ի.Մ. Գյոդակյանը, Գ.Ռ. Կանեցյանը, Է.Ա. Ալեքսանդրյանը [22, էջ 164-230]: Վերջինիս հետազոտությունները նվիրված էին երեխայի զգայական զարգացմանը [32]:

Մանկավարժական հոգեբանության բնագավառում աչքի էին ընկնում Ա.Հ. Հակոբյանը, Գ.Հ. Հովհաննիսյանը, Լ.Ս. Վարդանյանը և ուրիշներ: Աշակերտների մտածողության խնդիրներին վերաբերող նշանակալի աշխատանքներ են կատարել, Կ.Վ. Ոսկանյանը (1930-1996) [60] և Ն.Ս. Քոչարյանը [85]:

Բժշկական հոգեբանության ոլորտում նշանակալի են եղել Ա.Ա. Մեհրաբյանի (1904-1986) և Լ.Ա. Հովհաննիսյանի (1885-1970) ներդրումները: Ա.Ա. Մեհրաբյանի աշխատանքները նվիրված էին հոգեբանական հիվանդությունների ժամանակ «Դեպերսոնալիզացիա» համախտանիշի դրսևորումներին [98], ինչպես նաև ընդհանուր և պաթոլոգիական հոգեբանական խնդիրներին [99]: Լ.Ա. Հովհաննիսյանը իր աշխատանքներում քննարկում էր մարմնականի (սոմատիկի) և հոգեբանականի կապին վերաբերող մի շարք հարցեր [139]:

Իրավաբանական հոգեբանության բնագավառում անհրաժեշտ ենք համարում ընդգծել Ս.Ջ. Արզումանյանի (1941-2009) դերը, ով զարգացնում էր սոցիալ հոգեբանական դիրքորոշումների տեսությունը [40]:

Աշխատանքային հոգեբանության և պրոֆտեխնիկական կրթության հարցերին էին առնչվում Ե.Ա. Միլերյանի (1913-1986) հետազոտությունները [101]:

Սպորտի հոգեբանության բնագավառում մեծ ավանդ են ներդրել Ա.Ա. Լալայանը (1925-1983) և Ա.Հ. Կոստանյանը (1927-1996): Ա.Ա. Լալայանի գործունեությունը ընդգրկում է ֆիզիկական դաստիարակության, սպորտի և այլ հարցեր [6]: Ա.Հ. Կոստանյանի հետազոտությունները հիմնականում նվիրված էին սպորտի և ֆիզիկական դաստիարակության հոգեբանությանը, ինչպես նաև հոգեֆիզիոլոգիայի, տարիքային, մանկավարժական և հատուկ հոգեբանության հարցերին [11, էջ 178]:

Այսքանով, իհարկե, չի սահմանափակվում հայ հոգեբանների անվանացանկը և ներդրումը, սակայն, ինչպես վերևում նշել էինք, աշխատանքի ծավալից և ֆորմատից ելնելով չենք կարող հիշատակել բոլորին ու պատշաճ կերպով ներկայացնել նրանց աշխատանքները: Կարևոր ենք համարում նաև շեշտել այն փաստը, որ խորհրդային տարիներին, Հայաստանի սահմաններից դուրս էլ աշխատել և հոգեբանության զարգացման գործում իրենց լուման են ներդրել մի շարք անվանի հայ հոգեբաններ, որոնցից են Բ.Գ. Անանևը (1907-1972, Լենինգրադ, այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Տ.Տ. Ջամգարովը (1921-1980, Լենինգրադ, այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Ա.Ի. Միրաքյանը (1929-1995, Մոսկվա) և ուրիշներ: Եթե առաջին երկուսի մասին խոսել ու նրանց աշխատանքները հոգեբանության տարբեր դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում ընդգրկվել են [35], [156], ապա վերջինի՝ Ա.Ի. Միրաքյանի մասին

նույնը ասել չենք կարող: Նրա աշխատանքները մինչ օրս չեն ներառվել ընդհանուր հոգեբանության կամ հոգեկան արտացոլմանը նվիրված որևէ բուհական դասագրքում (ռուսական թե հայկական), հայ հոգեբաններին նվիրված գրեթե ոչ մի գիտական աշխատանքում գիտնականի անունը չի հիշատակվել և նրա գործերը չեն ներկայացվել, չնայած այն բանին, որ հոգեկան արտացոլման խնդրին վերաբերող նրա մոտեցումները էականորեն տարբերվում էին գոյություն ունեցողներից և համահունչ էին գիտական տրամաբանությանը: Դրա պատճառը այն չէր, որ Ա.Ի. Միրաքյանի ավանդը ավելի քիչ էր կամ ստեղծագործական առումով նրա հայեցակարգում ավելի քիչ բան կար ասելու (դրանում մենք կհամոզվենք հաջորդ ենթագլուխները ներկայացնելիս), այլ, մեր կարծիքով, դրա հիմնական պատճառն այն էր, որ մի կողմից ընկալման նրա հայեցակարգում տեղ գտած վերլուծությունները և մեկնաբանությունները այնքան էլ չէին տեղավորվում մատերիալիստական, մարքսիստական գաղափարախոսության շրջանակներում [116, էջ 80-107], [124], իսկ մյուս կողմից, այդ հայեցակարգը ըմբռնելու համար անհրաժեշտ էր դուրս գալ մեխանիստական, ֆիզիկալ մտածելակերպի սահմաններից և դրսևորել աֆիզիկալ մտածելակերպ, ինչն այդքան էլ հեշտ գործ չէր:

Հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգը, որը հեղինակի կողմից անվանվեց ընկալման տրանսցենդենտալ հոգեբանություն, այդ խնդրի հետազոտման գործում, ինչպես նշեցինք, ցուցաբերում է նոր մոտեցում, ինչն էականորեն տարբերվում է նախորդներից: Այն պատշաճ կերպով ներկայացնելու և մեկնաբանելու դեպքում մենք ցույց կտանք հայ հոգեբանական մտքի զարգացման գործում նրա աշխատանքների դերը և կհարստացնենք, ընդհանրապես՝ հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու ժամանակ մեր ունեցած մեթոդաբանական հմտությունները:

Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը առավել ամբողջական և ամփոփիչ ներկայացնելու նպատակով հաջորդ ենթագլուխը կսկսենք Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղուց՝ որում բացահայտվում են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները և ձևավորման հիմքերը:

## 1.2. Ա.Ի. Միրաքյանի գիտական ուղին և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները

Արշակ Իսրայելի Միրաքյանը ծնվել է 1929թ. մարտի 9-ին, Խորհրդային Հայաստանի, Թալինի շրջանի Փիրմալակ գյուղում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի, Թալինի ենթաշրջանի Թաթուլ գյուղ): Հայրը՝ Իսրայել Միրաքյանը, ով դպրոցի ուսուցիչ էր, 1939թ. վաղաժամ մահացավ, երբ Արշակ Միրաքյանը ընդամենը 10 տարեկան էր: Հոր մահից հետո նա համտեսեց կյանքի բոլոր դժվարությունները. ընտանիքի հոգսերը հոգալու համար աշխատում էր տան մեծերի հետ միասին՝ ինչի արդյունքում նրա մեջ մշակվեց պայքարելու և անմնացորդ աշխատելու միտումը:

1948թ. ընդունվելով և 1953թ. ավարտելով Երևանի Պետական Համալսարանի լեզվաբանական ֆակուլտետը, աշխատանքի է անցնում Երևանի Ազգային գրադարանում: Երկու տարի աշխատելուց հետո, 1955թ. հասկանալով, որ Ազգային գրադարանում չի կարող իրեն լիարժեք դրսևորել և գիտնականին հատուկ իր պոտենցիալը իրացնել, տեղափոխվում է աշխատանքի Երևանի Էլեկտրական սարքերի գործարան, որտեղ, գործ ունենալով տեխնիկական սարքավորումների հետ, նա կկարողանար իրացնել իր հմտություններն ու իրականացնել ստեղծագործական մտահղացումները: Այդ ընթացքում Ա.Ի. Միրաքյանը զուգահեռաբար սկսում է հաճախել Պոլիտեխնիկական Համալսարանի երեկոյան կուրսերը:

Գործարանում աշխատելու տարիներին, զբաղվելով արտադրական գործընթացների ավտոմատացմամբ, նա ձեռք է բերում երիտասարդ գյուտարարի համբավ և գործուղվում ք. Մոսկվա՝ Ժողովրդական Տնտեսության Ձեռքբերումների ցուցահանդեսին մասնակցելու: Այնտեղ նա ծանոթանում է անվանի հոգեբան Դմիտրի Ալեքսանդրի Օշանինի հետ, ով այն ժամանակ ղեկավարում էր ԽՍՀՄ Մանկավարժական Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր և մանկավարժական հոգեբանության Ինստիտուտի (այժմ՝ Ռուսաստանի Կրթության Ակադեմիայի Շչուկինայի անվան հոգեբանական ինստիտուտ) ինժեներական հոգեբանության լաբորատորիան և միաժամանակ ՍՍՀՄ-ում առաջին էրգոնոմիկայի ինստիտուտի կազմակերպիչն էր: Այդ հանդիպումը կարելի է համարել Ա.Ի. Միրաքյանի գիտական

կյանքում շրջադարձային: Նա տարվելով, այդ ժամանակ մեծ զարգացում ապրող ինժեներական հոգեբանությամբ, 1962թ. ընդունվում է ՍՍՀՄ ՄԳԱ Ընդհանուր և Մանկավարժական հոգեբանության Ինստիտուտի ասպիրանտուրա: Սովորելու տարիներին զբաղվում է տեսողական ընկալման հաստատունության խնդրով: Այդ ժամանակ նա արդեն առաջարկում էր դասական այդ խնդրի վերաբերյալ ոչ ավանդական մոտեցում [120, էջ 308]:

Տեսողական ընկալման հաստատունության խնդրի վերաբերյալ նրա ոչ ավանդական մոտեցումը արտացոլված է այդ տարիներին (1969-1983) հրատարակված տարբեր գիտական ամսագրերում [112], [115], [117], [104], [110], [107]:

«Опыт изучения константности восприятия величин в ограниченном поле зрения» («Սահմանափակ տեսադաշտի ժամանակ մեծությունների ընկալման հաստատունության հետազոտման փորձը») հոդվածում [112] Ա.Ի. Միրաքյանը ներկայացնում է ընկալման հաստատունության խնդրի վերաբերյալ իր կատարած փորձերի արդյունքները և դրանց վերլուծությունները, ինչից պարզ է դառնում, որ հետազոտողներից աննկատ էր մնացել մի կարևոր փաստ, այն է. միաժամանակ տարբեր մեծությունների դիտման ժամանակ ընկալման հաստատունությունը մասամբ կախված է դրանցից որևէ մեկի ֆիքսման հանգամանքից. «...փորձարկվողները ավելի հեռու գտնվող օբյեկտը ֆիքսելու ժամանակ ընկալում են մեծությունները ավելի հաստատուն (չափանիշները ավելի մոտ են հաստատունության տվյալներին), իսկ մոտ գտնվող օբյեկտի ֆիքսման ժամանակ՝ ավելի մոտ անհաստատունության տվյալներին» [112, էջ 58]: Այս մոտեցումը ավելի մանրակրկիտ ուսումնասիրվել և ամբողջական ձևով ամփոփվել է նրա թեկնածուական ատենախոսությունում [103]:

«Изучение константности восприятия величин» («Մեծությունների ընկալման հաստատունության հետազոտումը») [103] թեմայով թեկնածուական ատենախոսության մտահղացումը նրա մոտ առաջ եկավ այն ժամանակ, երբ փորձում էր մարդու կողմից կատարվող որոշ տեխնոլոգիական գործընթացներ ավտոմատացնել: Այն իրագործելու համար նա համեմատական վերլուծություն է անցկացնում ավտոմատիկայում գոյություն ունեցող ղեկավարման սկզբունքների և մարդու գործունեության կատարման սկզբունքների միջև, ինչի արդյունքում պարզ է դառնում, որ մարդու կողմից

օպերացիաներ կատարելու միջոցները շատ ավելի ֆունկցիոնալ են և ճկուն: Սակայն, վերոնշյալ սկզբունքների համեմատական վերլուծությունը թույլ չէր տալիս բացահայտել այն մեխանիզմները և օրինաչափությունները, որոնք հնարավորություն են տալիս մարդուն, իր գործունեությունը ղեկավարելու ժամանակ, ցուցաբերել այդպիսի ճկունություն:

Այդ մեխանիզմները և օրինաչափությունները բացահայտելու համար Ա.Ի. Միրաքյանը իբրև հետազոտման առարկա է վերցնում ընկալման հաստատունությունը, որի ժամանակ, համաձայն նրա, գործում են այն սկզբունքները և օրինաչափությունները, ինչի դեպքում մարդը հնարավորություն է ունենում իր գործունեությունը ղեկավարել այդքան մեծ ճկունությամբ:

Նա ենթադրում էր, որ տեսադաշտի անկյունային մեծությունից կախված օբյեկտների չափերի ընկալման հաստատունության աստիճանը հետազոտելու ժամանակ կբացահայտվեն այն մեխանիզմների աշխատանքի սկզբունքները, որոնք խախտվում են, երբ տեսադաշտը սահմանափակվում է: Անցկացված հետազոտությունները չեն տալիս սպասվող արդյունքները և հստակ օրինաչափական կապ չի հայտնաբերվում տեսադաշտի սահմանափակման աստիճանի և մեծությունների ընկալման հաստատունության միջև: Սակայն ընդգծվում է այն փաստը, որ «…դիտարկման անփոփոխ օբյեկտիվ պայմաններում մեծությունների հաստատուն ընկալման գործընթացը մեծությունների հարաբերությունների արտացոլման բազմաֆունկցիոնալ գործընթաց է» [103, էջ 4]:

Այդ հետազոտություններից հետո նա փորձում է գտնել ընկալման համար այդքան կարևոր հատկության՝ ճկունության (ինչը ապահովում է արտացոլման բազմաֆունկցիոնալությունը) անտեսման պատճառները: Այն իրագործելու համար նա հանձն է առնում ուսումնասիրելու անտիկ ժամանակներից սկսած մինչ իր օրերը գոյություն ունեցող ընկալման հաստատունության գործընթացի վերաբերյալ առկա մոտեցումները և փորձում է հասկանալ, թե ինչ պայմաններում են ի հայտ եկել այդ խնդրի վերաբերյալ պատկերացումները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջին անգամ ընկալման հաստատունության երևույթը բացահայտվել և մեկնաբանվել է պատճառա-հետևանքային մեխանիստական պատկերացումներում,

երբ հայտնաբերվեցին ֆիզիոլոգիական օպտիկայի օրենքները. «Օպտիկա-երկրաչափական պատկերացումներից ելնելով, բնագետները սկսում են անհամապատասխանության օրինակ տեսնել աչքի ցանցաթաղանթի վրա ընկած պատկերի մեծության փոփոխութան և օբյեկտի ընկալվող մեծության միջև, ինչը դիտորդից գտնվում է տարբեր հեռավորությունների վրա» [103, էջ 11]:

Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ իդեալիստ-փիլիսոփաները (Ն. Մալբրանշ, Ջ. Բերկլի) այդ փաստը օգտագործում էին որպես բազմադարյան վեճի ապացույց, ասելով, որ օբյեկտների հատկությունների և դրանց ընկալման միջև առկա է անհամապատասխանություն: Իսկ մատերիալիստները (Է. Կոնդիյակ, Ի. Սեչենով) այդ փաստը փորձում էին մեկնաբանել իրենց փիլիսոփայությանը համահունչ, ասելով, որ չնայած այն բանին, թե գոյություն ունի ցանցաթաղանթի վրա պատկերի մեծության փոփոխություն, այնուամենայնիվ, ընկալվող առարկայի մեծության և օբյեկտիվ մեծության միջև համապատասխանությունը առկա է:

Անդրադառնալով դեկարտյան մեխանիստական պատկերացումներին նշում է, որ ընկալումը այդ ժամանակ դիտարկվում էր իբրև հոգու վրա օբյեկտների կողմից անմիջական ազդեցության  արդյունք: Զգայական օրգանների հոգեֆիզիոլոգիայի զարգացման հետ միաժամանակ, ընկալման հասկացությունը ձևակերպվում է որպես նյարդային ապարատի գրգռման հետևանք. («Օբյեկտ-ցանցաթաղանթի վրա պատկեր-հոգի, (Դեկարտ)», «ցանցաթաղանթի վրա պատկեր-հոգի (Ն. Մալբրանշ. Ջ. Բերկլի)», որոնց հիման վրա ստեղծվում է մեզ հայտնի ժամանակակից պատկերացումը. «ցանցաթաղանթի վրա գրգիռ (զգայություն)-ընկալում»):

Յ. Մյուլլերի «ֆիզիոլոգիական իդեալիզմը», Ռ. Լոտցեի, Հ. Հելմհոլցի նշանային տեսությունը Վունդտին ուղղորդում են մտածելու, որ օբյեկտների տարածական հարաբերությունների ընկալումը նշանների և ընկալման միջև հարաբերություն է, ընդ որում, օբյեկտը փոխարինվում է ցանցաթաղանթի վրա նրա պատկերով՝ որպես գրգիռ, ինչը ձևավորում է տվյալ օբյեկտի ընկալվող նշանը:

Ֆիզիոլոգիական օպտիկայի զարգացման հետ մեկտեղ առաջ են գալիս բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս ցանցաթաղանթի վրա գրգիռի տվյալների և ընկալման միջև անհամապատասխանությունը, մասնավորապես՝ երրորդ

(խորության) չափման ընկալումը: Այդ անհամապատասխանությունները բացատրելու համար հետազոտողները դիմում են թե բնածին, և թե ձեռքբերովի մեխանիզմներին, հիմնականում հենվելով մկանային զգայությունների վրա, ինչը ուղեկցվում է աչքերի շարժումով: Սակայն, նման հիմքի վրա դրված հաստատունության երևույթը բավարար բացատրություն չի ստանում: Հ. Հելմհոլցը տվյալ երևույթի դիտարկումը ֆիզիոլոգիականից տեղափոխում է հոգեբանական պլան, համարելով հաստատունությունը «անգիտակցական եզրահանգումների» արդյունք: Իր նշանային տեսությանը համապատասխան, Հ. Հելմհոլցը ցանցաթաղանթի վրա պատկերը դիտարկում էր իբրև օբյեկտիվ օպտիկական պրոյեկցիա, ինչը հանդիսանում է օբյեկտի և նրա ընկալման միջև որպես միջնորդ, և օբյեկտի փոխարինող: Արդյունքում, նա հաստատունության երևույթը կրկին դիտարկում է որպես ցանցաթաղանթի վրա պատկերի մեծության և ընկալվող մեծության միջև հարաբերություն: Ընկալման հաստատունության երևույթի հասկացությունը, ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը, հենց այս մեկնաբանման փուլում էր գտնվում, երբ անցում կատարեց հոգեբանության ոլորտ [103, էջ 12]:

Հանգամանքների այսպիսի դասավորվածության շնորհիվ էր, որ «Հոգեբանական հաստատունության խնդիրը կտրեցին իրական ընկալման գործընթացից և սկսեցին այն դիտարկել որպես տեսողության անկյան օրենքի և ընկալման արդյունքի միջև հարաբերակցություն, իսկ խնդրի լուծումը, հետևաբար, փորձեցին փնտրել այն բանում, թե ինչով է պայմանավորված կամ ինչպես են կարգավորվում ընկալման մեջ ցանցաթաղանթի վրա եղած տվյալները» [103, էջ 13]:

Թեկնածուական ատենախոսության ամփոփիչ խոսքում Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ ընկալման հաստատունության երևույթի վերաբերյալ պատմության իր ուսումնասիրությունները և վերլուծությունները թույլ են տալիս ենթադրելու, որ ֆունկցիոնալ-օպերատիվ գործընթացի ժամանակ ընկալվող օբյեկտի համապատասխանությունը հասկանալու բանալին թաքնված է «գործունեություն-ընկալում» միտումներում: Այս ամենը հաշվի առնելով անհրաժեշտություն է առաջանում նաև ուսումնասիրել տարբեր հեռավորությունների վրա գտնվող ավելի մոտ օբյեկտի դիտարկման (ֆիքսման) ժամանակ օբյեկտների մեծության հաստատուն - ոչ

հաստատուն ընկալման խնդիրը: Դրա ուսումնասիրումը, նրա կարծիքով, մեծ հնարավորություններ կստեղծեր ընկալման հաստատունության երևույթը նոր կողմերից բացահայտելու և, ինչը ամենակարևորն էր, կկարողանայիհն բացահայտել այն սկզբունքներն ու օրինաչափությունները, որոնց շնորհիվ օբյեկտների հարաբերությունների և տարածական հատկությունների օպերատիվ արտացոլման գործընթացի ժամանակ ապահովվում էր ընկալման ֆունկցիոնալ ճկունությունը [103, էջ 28]:

1971թ. պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը [103], շարունակում է զարգացնել ընկալման գործընթացի վերաբերյալ իր նոր մոտեցումները, ինչը, հետագայում, պետք է իր հետևորդների կողմից դիտարկվեր իբրև նոր հայեցակարգ (պարադիգմա): 1987թ.-ին արդեն պաշտպանելով դոկտորական ատենախոսական թեզը՝ «Константность и полифункциональность восприятия» («Ընկալման հաստատունությունը և բազմաֆունկցիոնալությունը») [105], նա ավելի ամբողջական և հիմնավորված ձևով է ներկայացնում հոգեկան արտացոլմանը վերաբերող իր նոր հայեցակարգը: Այն ավելի ամբողջական և բազմակողմանի ներկայացնելու համար դիտարկենք դրան նախորդող տարիներին, գիտական տարբեր ամսագրերում լույս տեսած նրա աշխատանքները: Այսպես.

1972թ. «Вопросы психологии» («Հոգեբանության հարցերը») գիտական ամսագրում «Проблема константности величин и изучение тенденций к константности и к аконстантности в процессе восприятия» («Մեծությունների հաստատունության խնդիրը և ընկալման գործընթացի ժամանակ հաստատունության և ոչ հաստատունության միտումների հետազոտումը») վերնագրով հոդվածում գրում է. «Ընկալման հաստատունության երևույթը անհրաժեշտ է հասկանալ գործունեության և մարդու ընկալման ու բարձրագույն կենդանիների տեսողական կենսական անհրաժեշտ ֆունկցիաների միջև ֆունկցիոնալ հարաբերությունից ելնելով» [115, էջ 48]: Այդտեղ վերլուծելով ընկալման հաստատունության խնդրի շուրջ իդեալիստ և մատերիալիստ փիլիսոփաների տեսանկյունները, ինչպես նաև հենվելով իր կողմից կատարած փորձերի արդյունքների վրա Ա.Ի. Միրաքյանը կրկին հիմնավորում է իր կողմից առաջ քաշված ենթադրությունը, որ ընկալման հաստատունության խնդիրը մենք չենք կարող

հասկանալ, եթե շարունակենք այն դիտարկել որպես ցանցաթաղանթի վրա ընկած պատկերի մեծության և ընկալման միջև հարաբերակցության խնդիր [115, էջ 43-49]:

1973թ. «Психологические вопросы регуляции деятельности» («Գործունեության շտկման հոգեբանական հարցերը») գիտական հոդվածների գրքում [117] նա հետազոտության առարկա է վերցնում այն բացառիկ դեպքերը, որոնք ստացվել էին տարբեր մարդկանց կողմից ֆիքսված և չֆիքսված օբյեկտների մեծությունները նկարագրելու ժամանակ: Այդ ուսումնասիրությունների ժամանակ փորձարկվողի կողմից, ճիշտ է բացառիկ դեպքերում, «...չֆիքսված օբյեկտի չափերը նկարագրելիս փոքրացման էֆեկտը բացակայում էր և նույնիսկ նկատվում էին հակադիր փաստեր՝ չֆիքսված օբյեկտի չափերը մեծանում էին» [117, էջ 77]: Այս հանգամանքը առիթ է հանդիսանում տվյալ մարդկանց հետ կատարել ևս մի քանի ստուգողական փորձեր, ինչի արդյունքում պարզվում է, որ կախված փորձերի առաջադրանքից, այն է՝ նկարագրել չֆիքսված և ֆիքսված օբյեկտի չափերը, փորձարկվողները, խուսափելով փոփոխվող չափերը նկարագրելու դժվարությունից, մտապահում էին արդեն իրենց կողմից ֆիքսված չափերը, չնայած այն բանին, որ նրանց աչքերը ուղղվում էին դեպի մատնացույց արված օբյեկտները: Ադուհանդերձ, փորձարկվողը նկարագրում էր մտապահած չափերը [117, էջ 79]:

Այս նոր հանգամանքը Ա.Ի. Միրաքյանը մեկնաբանում է իբրև իր կողմից առաջ քաշված ենթադրության (հիպոթեզի) ապացույց. «Փոքրացման էֆեկտը կարող է հանդես գալ որպես ընկալման ֆունկցիոնալ ճկունության մեխանիզմ, թույլ տալով հեռու գտնվող օբյեկտը ընկալել մի դեպքում իբրև փոքրացված, մեկ այլ դեպքում չփոքրացված. հենց դա էլ ապահովում է տարբեր հեռավորությունների վրա գտնվող օբյեկտների մեծությունների օպերատիվ արտացոլումը, ինչը դրսևորվում է ընկալման հաստատունության և ոչ հաստատունության միջոցներում» [117, էջ 86]:

Վերոնշյալը հիմնավորելու համար նա սկսում է նոր փորձերի շարք և առաջ քաշում այլ հիպոթեզներ: 1975թ. «Вопросы психологии» («Հոգեբանության հարցերը») գիտական ամսագրում լույս է տեսնում «Константно-аконстантное восприятие величин» («Մեծությունների հաստատուն - ոչ հաստատուն ընկալումը») [104] հոդվածը, որտեղ նա «ընկալման հաստատուն - ոչ հաստատուն» հասկացությունը սկզբունքորեն

տարանջատում է «ընկալման հաստատունություն և ոչ հաստատունություն» հասկացությունից: Այդ տարբերությունը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Եթե ընկալման հաստատունություն և ոչ հաստատունություն ասելով հասկանում են ընկալման տարբեր միջոցները՝ որպես արդեն ընկալման գործընթացի արդյունքներ, ապա, երկրորդի դեպքում, հասկանում են իբրև հենց ընկալման գործընթացի հատկություն, ինչով պայմանավորվում են այդ միջոցների դրսևորումները» [104, էջ 39]: Իսկ ընկալման այդ միջոցները տեղի են ունենում ընկալման ներսում գործող ֆունկցիոնալ ճկուն գործընթացների օգնությամբ՝ ստեղծելով ճկուն համահարաբերակցություն հաստատուն և ոչ հաստատուն ձևերի միջև, ինչպես նաև ապահովելով օբյեկտների այլ տարածական հատկությունների կողմերի ընկալումը, ինչպիսիք են խորության, հեռավորության և այլնի ընկալումը [104, էջ 50-52]: Այսպիսով, ընկալման գործընթացի էությունը խորությամբ հետազոտելու և հասկանալու համար անհրաժեշտ էր կիրառել ֆունկցիոնալ մոտեցում, ինչը կբերեր այն մեխանիզմների աշխատանքների և ֆունկցիոնալ ճկունության սկզբունքների բացահայտմանը, որոնց միջոցով իրագործվում է արտացոլման բազմաֆունկցիոնալ դրսևորումները [104, էջ 52]:

Ավանդական հոգեբանությունը փորձում էր ընկալման հաստատունության խնդիրը մեկնաբանել միայն մեկ գործոնով, այն է. «Եթե ընկալվող առարկան ընկալվում է համապատասխան միջավայրի առկայության դեպքում, ապա տեղի կունենա այդ առարկայի հաստատուն ընկալում, և ընդհակառակը, հաստատունությունը խախտվում է, երբ օբյեկտը կտրվում է այդ միջավայրից» [110, էջ 56]: Սակայն, այդ ճանապարհը, ինչպես ցույց է տալիս Ա.Ի. Միրաքյանը, չէր կարող տանել ընկալման ֆունկցիոնալ ճկունություն ապահովող սկզբունքների բացահայտմանը:

Հետագայում, 1983թ., «Константность и функциональная гибкость восприятия» («Ընկալման ֆունկցիոնալ ճկունությունը և հաստատունությունը») [107] հոդվածում նա գրում է, որ տարբեր հեռավորությունների վրա գտնվող օբյեկտների մեծությունների ընկալումը ապահովվում է օբյեկտների մեծությունների (միմյանց նկատմամբ) անփոփոխ հարաբերությունների ստեղծման շնորհիվ, և «...դրանց շնորհիվ է նաև

ընկալվում մեծությունների գերհաստատուն և գերոչհաստատուն ընկալումը, որոնց միջոցով թուլանում կամ ուժեղանում է տարբեր հեռավորությունների վրա գտնվող օբյեկտների խորության և հեռավոր տարածական հարաբերակցության ընկալումը» [107, էջ 110]:

Ընկալման խնդրի մեկնաբանման շուրջ նման իրավիճակ էր ստեղծվել, երբ 1987թ. Ա.Ի. Միրաքյանը պաշտպանում է «Константность и полифункциональность восприятия» («Ընկալման հաստատունությունը և բազմաֆունկցիոնալությունը») թեմայով դոկտորական ատենախոսությունը [105]: Այն ուներ մի շարք յուրահատկություններ. նախ՝ այդտեղ շոշափվում և մանրակրկիտ վերլուծության էին ենթարկվում՝ տեղ-տեղ նաև սուր քննադատության առարկա դառնում ընկալման հաստատունության և հոգեկան արտացոլման վերաբերյալ ականավոր փիլիսոփաների մոտեցումները, ինչպես նաև հոգեկան արտացոլման խնդիրը մեկնաբանելիս ոչ միայն ցույց էին տրվում հոգեբանների կատարած ոչ ամբողջական, մակերեսային վերլուծությունները, այլ նաև այդ վերլուծությունների սկզբնաղբյուրները գտնելու համար հետազոտվում էին անտիկ ժամանակաշրջանի փիլիսոփաների գործերը:

Այդ աշխատանքում, ընկալման հաստատունությունը և բազմաֆունկցիոնալությունը ապահովող սկզբունքների բացահայտման համար կատարվում են մի շարք փորձեր, որոնք մինչ այդ ներառված չեն եղել հոգեբանական լաբորատոր հետազոտություններում:

Դոկտորական իր ատենախոսությունում Ա.Ի. Միրաքյանը մեծ տեղ է հատկացնում նաև հետազոտողների մտածելակերպին, որում նա տեսնում էր այն բանալին, ինչի միջոցով (համապատասխան մտածելակերպի) հնարավոր կլիներ հասկանալ և բացահայտել ոչ միայն ընկալման հաստատունությունը և բազմաֆունկցիոնալությունը ապահովող սկզբունքները, այլ նաև հոգեկան արտացոլման գործընթացը ընդհանրապես [105, էջ 17-20]:

Բազմաթիվ փորձերի արդյունքում հաստատված է համարվում այն փաստը, որ հետազոտողները ընկալման հաստատունության և հոգեկան արտացոլման վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և վերլուծությունները սկսել են

ուսումնասիրել արգասիքից ելնելով (արդեն արտացոլվածից, ինչի մասին մենք կխոսենք հաջորդ ենթագլուխներում և գլուխներում), որը թույլ չէր տալիս բացահայտել ընկալման այն սկզբունքները և օրինաչափությունները, որոնց միջոցով կատարվում է ընկալման հաստատունության և ոչ հաստատունության գործընթացը ու բազմաֆունկցիոնալ դրսևորումները: Այդ սկզբունքները և օրինաչափությունները բացահայտելու համար նա առաջարկում է հաղթահարել գոյություն ունեցող մեխանիստական, էմպիրիկ (ֆիզիկալ) մտածելակերպը և հետազոտությունները չսկսել արդեն արտացոլվածից՝ ուսումնասիրվող օբյեկտի հատկություններից (արգասիքներից): Նրա կարծիքով, հոգեկան արտացոլումը ապահովող սկզբունքները և օրինաչափությունները պետք է փնտրել բնության օրինաչափություններում, քանի որ, համաձայն նրա, հոգեկանը առաջացել է մատերիայի ինչ-որ զարգացման փուլում:

Հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ իր առանձնահատուկ (ոչ արգասիքային) մոտեցումների շնորհիվ Ա.Ի. Միրաքյանին ի վերջո հաջողվում է ցույց տալ ընկալման հաստատունության և ոչ հաստատունության, ինչպես նաև ընկալման բազմաֆունկցիոնալության հիմքում ընկած անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը, ինչը հետագայում հաստատվում է իր լաբորատորիայում կատարված բազմաթիվ փորձերի միջոցով: Այդուհանդերձ, նա համարում է, որ անմիջական-զգայական գործընթացը ուսումնասիրելու ժամանակ կիրառելով ոչ արգասիքային՝ աֆիզիկալ մեթոդ, պետք է այն դիտարկել իբրև հոգեկան արտացոլման հետազոտման մեթոդներից մեկը [105, էջ 35]:

Ինչպես տեսնում ենք Ա.Ի. Միրաքյանը չէր հերքում ընկալման առկա հետազոտման մեթոդաբանության (արգասիքային) անհրաժեշտությունը, միայն նշում էր, որ հոգեկան արտացոլման խորքային սկզբունքները հետազոտելու ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ոչ արգասիքային՝ աֆիզիկալ մոտեցում, ինչը հնարավորություն է ընձեռում հետազոտողին այդ խնդիրը նորովի ուսումնասիրել և մեկնաբանել:

Պաշտպանելով դոկտորական ատենախոսությունը նա շարունակում է զարգացնել հոգեկան արտացոլման գործընթացի բացահայտմանն ուղղված հետազոտման իր մեթոդաբանությունը և տեսական ենթադրությունները, որոնք

արտացոլված են մի շարք մենագրություններում (Константность и полифункциональность восприятия. М.,1992., Контуры трансцендентальной психологии. (Книга 1) 1999., Контуры трансцендентальной психологии. (Книга 2) 2004., Психология пространственного восприятия. 1990., Принципы порождающего процесса восприятия. 1992.) [106], [108], [109], [116], [154]:

Հայազգի գիտնականը մահացավ 1995թ. ապրիլի 25-ին, երբ ընդամենը 66 տարեկան էր, թողնելով հարուստ գիտական փորձ, ինչը կատարել էր իր բացառիկ աշխատասիրության և յուրօրինակ՝ աֆիզիկալ մտածելակերպի շնորհիվ:

Այսպիսին էր Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին, որում բացահայտվում են ստեղծագործող գիտնականին բնորոշ յուրօրինակ մտքերը և դրանց իրագործման համար կատարված քայլերը: Ինչպես նաև դրանում (անցած գիտական ուղղում) արտացոլվում են դեռևս չձևավորված ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման հնարավորությունները և նախադրյալները, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել գիտնականի աֆիզիկալ (ոչ արգասիքային) մտածելակերպը, ինչը թույլ տվեց բացահայտել հոգեկան արտացոլման գործընթացը ուսումնասիրելիս արգասիքային մոտեցման սահմանափակումները:

Հաջորդ ենթագլխում կներկայացնենք և կվերլուծենք, Ա.Ի. Միրաքյանի կողմից, օբյեկտների տարածական չափերի ընկալման ժամանակ, արգասիքային մոտեցման դրսևորումների բացահայտումը, ինչն ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կայացման գործում կարևորագույն վերլուծություններից մեկն է:

### 1.3. Տարածության ընկալման հետազոտման ժամանակ արգասիքային մոտեցման սահմանափակումների բացահայտումը և վերլուծությունը տարբեր գիտություններում

Անցած ենթագլխում ներկայացրեցինք և մեկնաբանեցինք գիտնականի անցած ուղին, ինչը նվիրված էր, գլխավորապես՝ տարածության մեջ գտնվող օբյեկտների չափերի ընկալման հաստատունության խնդրին, որում ուրվագծվում և տեսանելի էին դառնում ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման

հնարավորությունները և նախադրյալները: Սակայն, ընկալման իր հայեցակարգը ամբողջական և վերջնական տեսքի բերելու համար դեռևս բազմաթիվ աշխատանքներ կար անելու, ինչը կներկայացնենք ստորև:

Ա.Ի. Միրաքյանը շարունակելով տարածությունում գտնվող օբյեկտների չափերի ընկալման խնդրին նվիրված իր հետազոտությունները, բախվում է մի փաստի հետ, որը հնարավոր չէր բացատրել ավանդական մոտեցումներից ելնելով, այն է՝ օբյեկտների տարածական հատկությունները միևնույն միջավայրում փոփոխական կերպով էին ընկալվում (խոսքը չֆիքսված օբյեկտի փոքրացման էֆեկտի մասին է, որի մասին մենք խոսեցինք նախորդ գլխում), ինչը ոչ մի կերպ չէր տեղավորվում գոյություն ունեցող հասկացությունների շրջանակներում: Այդ դժվարին խնդիրը բացատրելու համար, նա հանձն է առնում հետազոտելու այն նախադրյալները, որոնց շնորհիվ հոգեբանությունում և փիլիսոփայությունում պատմականորեն ձևավորվել էին ընկալման հաստատունության վերաբերյալ մեկնաբանությունները: Ա.Ի. Միրաքյանը համոզված էր, որ այդ աշխատանքը կատարելու դեպքում, հնարավոր կլինի հոգեբանությունում ընկալման հաստատունության վերաբերյալ մեթոդաբանական հիմքերը ավելի լավ հասկանալ, և, այնուհետև, այնպիսի հետազոտման ուղղություն ընտրել, որը թույլ կտար ստեղծել ավանդական մոտեցումերից տարբերվող հետազոտման մի նոր մեթոդաբանություն, ինչի միջոցով հնարավոր կլիներ բացահայտել հոգեկան արտացոլման այն սկզբունքները և մեխանիզմները, որոնց օգնությամբ ապահովվում է մարդու գործունեության ֆունկցիոնալ ճկունությունը [106, էջ 37]:

Օբյեկտների տարածական չափերի ընկալման նրա տեսական հետազոտությունները պայմանականորեն կարելի է բաժանել չորս մասի. հետազոտություններ՝ 1) փիլիսոփայությունում, 2) հոգեբանությունում, 3) ֆիզիոլոգիայում և 4) կիբեռնետիկայում:

Հոգեկան արտացոլման և տարածական ընկալման խնդրի վերաբերյալ հետազոտելով ինչպես անտիկ ժամանակների մտածողների աշխատանքները (Էպիկուր, Լուկրեցի, Լեվկիպպ, Դեմոկրիտ, Հերակլիտ, Պլատոն, Արիստոտել և այլն), այնպես էլ նոր ժամանակների փիլիսոփաների գործերը (Ռ. Դեկարտ, Լեոնարդո դա-

Վինչի, իդեալիստ փիլիսոփաներ՝ Ն. Մալբրանշ, Դ. Բերկլի, Դ. Յում, մատերիալիստ փիլիսոփաներ՝ Է. Կոնդիլյակ, Դ. Դիդրո, բնախույզներ՝ Հ. Հելմհոլց, Է. Գերինգ, Ի. Սեչենովը և այլն), եկավ այն եզրահանգման, որ անտիկ հույն մտածողներից սկսած, հոգեկան արտացոլման խնդրի շուրջ անում էին արդեն մեզ ծանոթ հետևյալ հարցադրումները. ինչքանով է այն արժանահավատ, ինչպես է տեղի ունենում ընկալման տվյալների փոփոխականությունը և, թե ինչպես է արտացոլման փոփոխականության ժամանակ հաստատուն կերպով ընկալվում հասկացությունները:

Ընկալման վերաբերյալ անտիկ փիլիսոփաների պատկերացումների հետազոտությունները թույլ տվեցին Ա.Ի. Միրաքյանին գալ այն համոզման, որ դրանցում (պատկերացումներում) արտացոլված են ընկալման վերաբերյալ ժամանակակից մոտեցումների հիմնական սկզբունքները:

Այդ խնդրի շուրջ անտիկ փիլիսոփաների գործերի ուսումնասիրումը նրան թույլ է տալիս կատարել հետևյալ ենթադրությունները. նրանք (վերոնշյալ անտիկ փիլիսոփաները) արտացոլման գործընթացը դիտարկում էին իբրև արտացոլվող օբյեկտի (ինչը պատկերացվում էր արդեն իր արտացոլված հատկությունների միջոցով. ձև, մեծություն, գույն ձայն և այլն) և արտացոլող մարդու միջև (ով ընդունում է օբյեկտների հատկությունները զգայական օրգանների միջոցով) փոխազդեցություն: Սակայն, նրա խոսքով, ընկալման գործընթացի նման պատկերացման ժամանակ օբյեկտը և նրա հատկությունները ի սկզբանե իմպլիցիտ կերպով նրանում արդեն որոշակիացված են: Այլ կերպ ասած, մինչ այն գործընթացը, որում դրանք պետք է ընկալվեն, արդեն իրենց ենթադրյալ հատկությունների կամ որակների միջոցով անուղղակիորեն նրա մեջ ներառված են, որոնք, սակայն, կարող են միայն բացահայտվել ընկալման գործընթացի ավարտից հետո: Ասվածը ավելի պարզ և ամբողջական պատկերացնելու համար ներկայացնենք օրինակներով:

Պյութագորասի և էպիկուրի հետևորդները, օբյեկտի ձևի և չափի ընկալումը բացատրելիս (կամ աչքերից ելնող ճառագայթների, կամ օբյեկտից աչքերին եկող «բարակ շերտի» միջոցով), նախապես արդեն ենթադրում էին, որ աչքը «պատրաստ» է ընկալելու ձևը և մեծությունը: Հոգեբանության տեսանկյունից այդպիսի բացատրությունը առաջ է բերում օրինաչափ մի հարց. ինչպես են ձևավորվում

հետազոտվող օբյեկտի վերաբերյալ ելակետային այն պատկերացումները, որ տվյալ օբյեկտը ունի ձև, մեծություն և այլ տարածական հատկություններ: «Եթե պատասխանեն, որ այդ ելակետային պատկերացումները ձևավորվել են օբյեկտների հետ գործ ունենալու փորձի արդյունքում, ապա այդ ժամանակ առաջ է գալիս արմատական մի հարց. ինչ ելակետային գործընթացի միջոցով են առաջին անգամ բացահայտվել, ընկալվել օբյեկտների այդ հատկությունները» [116, էջ 103]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Պլատոնի մոտ նախապես ընդունված «իդեաների» գոյությունը պատասխանել է այդ հարցին, քանի որ «իդեաները» սկզբնային են և գոյություն ունեն մինչ փորձը: Սակայն, ինչպես նկատում է գիտնականը, ավելի մանրակրկիտ դիտարկման դեպքում կարող ենք տեսնել, որ ցանկացած օբյեկտի ինքնին իդեայի մեջ, նրա հատկությունների մասին արդեն գոյություն ունի պատկանելիության վերաբերյալ գիտելիք: Հետևաբար, այդ դեպքում ևս, ընկալման գործընթացները բացատրելիս հետազոտողների մոտ օբյեկտի և նրա հատկությունների վերաբերյալ նախնական էմպիրիկ պատկերացումները նախապես գոյություն ունեն (իբրև այդ օբյեկտների վերաբերյալ նախնական իդեաներ) [116, էջ 10-14]:

Ինչպես ցույց է տալիս Ա.Ի. Միրաքյանը, ընկալման գործընթացը բացատրելու նման արգասիքային (արդեն արտացոլվածի միջոցով) մոտեցում են ցուցաբերում նաև Պլատոնից հետո եկող փիլիսոփաները: Ճիշտ է, ունենալով իրենց մոտեցումներում այլ մեկնաբանություններ, երբեմն նույնիսկ իրար հակասող, նրանց բոլորին հատուկ էր մի ընդհանուր բան. ընկալման գործընթացը մեկնաբանելիս նրանք բոլորը գալիս էին արգասիքից՝ օբյեկտի արդեն արտացոլված հատկություններից, որոնք, պետք է ի հայտ գային միայն ընկալման գործընթացի արդյունքում:

Արիստոտելը քննադատաբար մոտենալով ամեն ինչից անկախ գոյություն ունեցող «իդեաների» Պլատոնի ուսմունքին, ասում է, որ դրանք ընդամենը հանդիսանում են զգայական իրերի կրկնօրինակները կամ պատճենները: Համաձայն նրա, առարկաների հատկությունների ճանաչումը տեղի է ունենում հասկացությունների միջոցով, սակայն, ի տարբերություն Պլատոնի, Արիստոտելը հասկացությունների կապը տեսնում էր զգայական ընկալման տվյալների հետ, որոնց հաճախակի կրկնումը

բերում է այդ տվյալների վերացարկման և ընդհանուր հասկացությունների ձևավորման: Հակառակ Պլատոնի, նա այդ երևույթները դիտարկում էր ոչ միայն անմիջականորեն կապված մարդու հետ, այլ նաև առանձին զգայական օրգանների հնարավորությունների: Սակայն, ինչպես նկատում է Ա.Ի. Միրաքյանը, հոգեկան արտացոլման գործընթացը բացատրելիս, ինչպես Պլատոնը՝ Արիստոտելը ևս, ցուցաբերում էր արգասիքային մոտեցում՝ փորձելով ընկալման գործընթացը բացատրել արդեն արտացոլվածից՝ զգայական տվյալներից, (գույն, մեծություն և այլն) որոնք պետք է միայն արտացոլման գործընթացի արդյունքում ի հայտ գային [116, էջ 14-18]:

Մեկ այլ անտիկ մտածող՝ Էպիկուրը, ընկալման գործընթացի վերաբերյալ ուներ իր յուրօրինակ մոտեցումները, ինչը շատ հարցերում տարբերվում էր նախորդներից, սակայն ուներ նաև ընդհանրություններ: Նրա մոտեցումը այդ հարցում կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. գոյություն ունեն ուրվագծեր, հետքեր, որոնք իրենց տեսքով նման են պինդ մարմիններին: Դրանց մենք անվանում ենք «պատկերներ»: Նշվածները ունեն անգերազանցելի նրբություն և զգայական օրգանների մեջ մտնելու արագություն, ինչի արդյունքում առաջանում է առարկաների զգայական ընկալումը: Այդ կերպ, հենց զգայական ընկալման տվյալներն են հանդիսանում ընդհանուր պատկերացումների հիմք և դրանով հանդերձ ճշմարտության չափանիշ ու իրական գիտելիքի հիմք: Օբյեկտների հատկությունների (ձև, մեծություն, գույն, համ, հոտ, ձայն և այլն) և զգայական օրգանների վրա ազդելու միջոցով ստացված պատկերացումների նմանության հանգամանքը Էպիկուրը բացատրում էր պատկերների միանմանության փաստով, որոնք գալիս են այդ օբյեկտներից: Դա թույլ է տալիս նրան մեթոդաբանորեն հաստատված համարել այն փաստը, որ զգացումները երբեք մեզ չեն խաբում, և որ դրանց խաբելու պատճառը ինքնին զգայական ընկալումների մեջ չէ, այլ նրանցում ավելացված մտքերում [116, էջ 20-22]:

Էպիկուրը հետևելով Արիստոտելին, հոգեկան երևույթը դիտարկում էր իբրև բնագիտության հետազոտման առարկա, սակայն, հակառակ նախորդի, նա նշեց դրանց ձևավորման ուսումնասիրման մատերիալիստական ուղին, այն է. օբյեկտների առանձին հատկությունների ընկալումից դեպի դրանց ամբողջական ճանաչումը և

ընդհանուր հասկացությունների ձևավորումը, որում տեղ չհատկացվեց ամեն ինչից անկախ «իդեաների» վերաբերյալ Պլատոնի մոտեցումներին [116, էջ 20-22]:

Այդուհանդերձ, ընկալման գործընթացը բացատրելիս Էպիկուրը նույնպես ցուցաբերում էր արգասիքային մոտեցում: Ա.Ի. Միրաքյանի խոսքով, ինչը բնորոշ էր Արիստոտելի տեսությանը, նույնը հատուկ էր նաև մատերիալիստ փիլիսոփա Էպիկուրին. նա նախապես, իմպլիցիտ կերպով ուրվագծերի և հետքերի մեջ տեսնում էր այն հատկությունները, որոնք համապատասխանում են պինդ մարմիններին (մեծություն, գույն, ձև և այլն):

Ինչպես տեսնում ենք վերը բերվածից, օբյեկտների տարածական չափերի ընկալումը բացատրելիս, անտիկ ժամանակաշրջանի փիլիսոփաներին (իդեալիստ՝ Պլատոն, և մատերիալիստ՝ Էպիկուր) հատուկ էր արգասիքային մոտեցումը. ընկալման հետազոտումն իրականացվում էր հենց իրենց սեփական արգասիքների օգնությամբ (երկարություն, գույն և այլն): Նրանք շարժվում էին մի սխեմայով, ինչը հայտնի է մեզ որպես  մի գործընթաց, որը տեղի է ունենում արտացոլվող օբյեկտի և արտացոլող սուբյեկտի միջև [116, էջ 103,104]:

Ընկալման գործընթացը բացատրելու գործում Ա.Ի. Միրաքյանը մեծ տեղ էր հատկացնում Լեոնարդո դա Վինչիի աշխատանքներին: Նա համարում էր, որ Լեոնարդո դա Վինչիի բնագիտական աշխատություններում առկա են ֆիզիկայի, օպտիկայի և նկարչական արվեստի տեսանկյունից առարկաների տարածական հատկությունների և միմյանց նկատմամբ հարաբերությունների վերաբերյալ զգայական ընկալման հոգեբանական գործընթացի բազմակողմանի վերլուծություններ:

Լեոնարդո դա Վինչիի կարծիքով ամբողջ ճանաչումը սկսում է զգացումներից և, որ տեսողությունը իրականացվում է լույսի միջոցով: Ընկալման գործընթացի վերաբերյալ բնագիտական նրա պատկերացումները հիմնվում էին փորձի վրա և համաձայն նրա, նույն կերպ՝ փորձի հիմքի վրա էլ պետք է կառուցվի տեսողական գործընթացների հետազոտման տրամաբանությունը:

Նկարչության մեջ մեծ պրակտիկան, հեռանկարչության օրենքների իմացությունը, օպտիկային և աչքի անատոմիային լավ տիրապետելը Լեոնարդո դա Վինչիին օգնեցին մեկնաբանելու իրական պայմաններում գտնվող օբյեկտների

ընկալման և դրանք նկարներում հեռանկարչության կանոններով արված ընկալման միջև անհամապատասխանությունը: Լինելով տաղանդավոր պրակտիկ, նա նկատում է, որ երբ գործում են ընկալման բնական գործընթացների օրինաչափությունները, անհրաժեշտ է խուսափել հեռանկարչության գծային օրենքի համաձայն հեռավորությունից կախված առարկայի մեծության համաչափ փոքրացման և նկարի իրական ընկալման միջև հակասությունից: Սակայն, ինչպես նկատում է Ա.Ի. Միրաքյանը, Լեոնարդո դա Վինչին ընկալման հաստատունության հատկությունը համարում էր որպես տեսողության այնպիսի մի հատկանիշ, որի ժամանակ մոտ գտնվող օբյեկտների ընկալված մեծությունները չեն փոքրանում, իսկ հեռու գտնվող օբյեկտների մեծությունները, համապատասխան իրենց հեռավորության, ընկալվում են փոքրացված (ինչն համապատասխանում էր տեսողական անկյունի օրենքին) [116, էջ 42-48]:

Այսպիսով, Լեոնարդո դա Վինչին տեսողական ընկալումը դիտարկելով որպես բազմաֆունկցիոնալ մի գործընթաց, այնուամենայնիվ, «Տեսողական գործընթացները վերլուծելու ժամանակ, ընկալման գործընթացի վերաբերյալ իր պատկերացումների հիմքում կրկին դնում էր օբյեկտի իմպլիցիտ ինքնությունը կամ դրա հատկությունները, այդ իսկ պատճառով, բազմաֆունկցիոնալությունը նրա մոտ հանդիսանում էր որպես արդեն արտացոլված առանձին հատկությունների՝ մեծության, ձևի, խորության միջև հարաբերություն» [116, էջ 105]:

Վերլուծելով փիլիսոփայության պատմության մեջ հոգեկան արտացոլման խնդրի վերաբերյալ ամենաշրջադարձային հայացքներ ցուցաբերած մտածողներից մեկի՝ Ռենե Դեկարտի փիլիսոփայական հայացքները, Ա.Ի. Միրաքյանը գրում է, որ ֆիզիկայում և ֆիզիոլոգիայում օպտիկայի բացահայտումները այդ փիլիսոփային թույլ տվեցին աչքի ցանցաթաղանթի վրա օբյեկտների պատկերները դիտարկել որպես մի երևույթ, ինչը հաստատում է օբյեկտի և տեսողական օրգանի՝ իբրև զգայական դիստանտ օրգանի միջև մատերիալիստական բնույթի կապը: Այդ ժամանակ տեսողական ընկալման իմացաբանական հետազոտման նշանակությունը մեծացավ, քանի որ ի հայտ եկան բազմաթիվ նոր կոնկրետ փաստեր, որոնք վկայում էին

զգայության տվյալների և «իսկական» օբյեկտների հատկությունների միջև անհամապատասխանությունը [106, էջ 40, 42]:

Ռ. Դեկարտի գաղափարները մեծ ազդեցություն ունեցան ընկալման խնդրի հետագա ուսումնասիրությունների զարգացման վրա: Փաստացի Ռ. Դեկարտին է պատկանում ընկալման երևույթների հետազոտման խնդիրների գրեթե բոլոր ձևակերպումները և դրանց լուծման ուղիների որոշակիացումը: Այդ սահմանումներով է պայմանավորված ընկալման հոգեբանության հետագա զարգացումը և դրա գիտական բովանդակությունը:

Սակայն, այսքանով հանդերձ, ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը, «ընկալման երևույթը վերլուծելիս Ռ. Դեկարտը օպերացիաներ է կատարում առարկաների որակների վերաբերյալ հասկացությունների, իմացությունների և պատկերացումների միջոցով, այդ ժամանակ օգտագործելով ցանցաթաղանթի վրա ընկած պատկերի օպտիկա-ֆիզիոլոգիական տվյալները (ակոմոդացիա, կոնվերգենցիա և այլն)» [116, էջ 105, 106]:

Ռ. Դեկարտից հետո ինչպես փիլիսոփաները, այնպես էլ հոգեբանները և ֆիզիոլոգները անմիջական-զգայական ընկալման գործընթացը բացատրելիս բաժանվեցին երկու ճամբարի. 1) հետազոտողներ, ովքեր իմպլիցիտ կերպով (թաքնված, ոչ ակնհայտ) ընդունեցին օբյեկտի ինքնությունը և առաջնայնությունը տվեցին օբյեկտին, (մատերիալիստական մոտեցում. Ջ. Լոկկ, Պ. Հասսենդի, Տ. Հոբբս, Ժ. Լամետրի, Է. Կոնդիլյակ, Դ. Դիդրո, Ի. Սեչենով, Հ. Հելմհոլց, Է. Հերինգ, Վ. Վունդտ և այլոք) և 2) հետազոտողներ, ովքեր առաջնայնությունը տալիս էին արտացոլող սուբյեկտին՝ գիտակցությանը, Պլատոնի առաջ քաշած ամեն ինչից անկախ «իդեային» (իդեալիստական մոտեցում, Ն. Մալբրանշ, Դ. Բերկլի, Դ. Յում, Գ. Լեյբնից, Գ. Մյուլլեր, Է. Մախ և այլոք) [116, էջ 67-101]:

Այս երկու հակադիր մոտեցումները, անկախ այն բանից, թե ինչպիսի փիլիսոփայական ելակետային դրույթներ ունեին իրենց մոտեցումներում (մատերիալիստական թե իդեալիստական), Ա.Ի. Միրաքյանի բնորոշմամբ, ընկալման գործընթացը ներկայացնում էին ընկալվող օբյեկտի արգասիքների (հատկությունների և հատկանիշների) միջոցով, մի դեպքում՝ «իդեաների», հասկացությունների իմպլիցիտ

ինքնության ձևով, մյուս դեպքում՝ ընկալման ենթակա օբյեկտների հատկությունների և հարաբերությունների միջոցով [116, էջ 106]:

Այս երկու մոտեցումները (մատերիալիստական և իդեալիստական) ակամայից միմյանց հակադրեցին հոգեկան արտացոլման որակապես տարբեր երկու երևույթներ. անմիջական զգայական ընկալումը և միջնորդավորված հասկացական ճանաչումը: «Հոգեկանի տարատեսակ երևույթների նկատմամբ այդպիսի վերացական-տրամաբանական հակադրումը բերեցին անմիջական-զգայական արտացոլման իրական բազմաֆունկցիոնալության թերագնահատմանը, ինչը նախատեսված է փոփոխվող պայմաններում ցանկացած և ամեն պահի մարդու և կենդանիների կենսագործունեությունը ապահովելու գործին» [116, էջ 107]:

Ա.Ի. Միրաքյանի դիտարկմամբ, վերոնշյալ բոլոր փիլիսոփաներից աննկատ էր մնացել այն հանգամանքը, որ համարժեքությունը և իզոմորֆությունը «изоморфность» (հավասար, միանման ձևի) բնութագրում են արդեն արտացոլված արդյունքի հատկությունները, այսինքն, նկարագրում են պատկերներ կամ հասկացություններ որոնք դարձել են այդպիսին տվյալ օբյեկտներին վերաբերող հատկությունների առանձնացման արդյունքում: Այդ իսկ պատճառով, «Համարժեքության կամ իզոմորֆության հասկացություններին դիմելը իրավաչափ է միայն այն ժամանակ, երբ իմացաբանական մակարդակում դիտարկում են ճանաչելիի (օբյեկտի) հարաբերությունը ճանաչմանը (ընկալման գործընթացին), այլ ոչ թե այն դեպքում, երբ փորձում են բացահայտել անմիջական-զգայական ընկալման հոգեկան գործընթացները և, առավել ևս, երբ փնտրում են արտացոլման գործընթացի օրինաչափությունները և մեխանիզմները» [116, էջ 107]:

Հոգեբանությունում տարածության ընկալման խնդիրը ուսումնասիրելիս Ա.Ի. Միրաքյանը առանձնակի ուշադրություն է դարձնում նատիվիստական և էմպիրիստական մոտեցում ցուցաբերող հոգեբանների աշխատանքներին, ինչպես նաև այդ խնդրի վերաբերյալ գեշտալտ հոգեբանության, Ջ. Գիբսոնի էկոլոգիական հոգեբանության, Ժ. Պիաժեի հետազոտություններին և խորհրդային ժամանակաշրջանի որոշ հոգեբանների մոտեցումներին:

Համաձայն Ա.Ի. Միրաքյանի, հոգեբանական նատիվիզմը, ինչի հիմքերը դրվել են Ի. Մյուլլերի աշխատանքներում, հետևել է Ի. Կանտի փիլիսոփայությանը և տարածությունը դիտարկել որպես հայեցության ձև: Տարածության ընկալման նատիվիստական սկզբունքները առավել ամբողջական ներկայացվել են Կ. Շտումպֆի գործերում: Այնտեղ մասնավորապես նշվում է, որ տարածականությունը՝ ինտենսիվության և որակի նման, կազմում է զգայության «պահը» և հանդիսանում է իբրև վերացական հասկացություն: Նա գտնում էր, որ տարածականությանը բնորոշ է համապատասխան որակ, քանի որ, անհնար է պատկերացնել որակը առանց որևէ տարածական ձգվածության, ինչպես նաև տարածությունը առանց որևէ որակի: Այդուհանդերձ, համաձայն նրա, տարածությունը նույնպես նախնական է և ընկալվում է անմիջականորեն՝ ինչպես որակը, քանի որ դրանք կազմում են անբաժան ամբողջական էություն: Կ. Շտումպֆի կարծիքով, խորությունը ևս ենթակա է անմիջական ընկալման. «Անհնարին է պատկերացնել մի հարթություն, որն ուղիղ կամ թեք չլինի, իսկ ուղիղությունը կամ թեքությունը ենթադրում են երրորդ չափման առկայությունը» [116, էջ 112]:

Նատիվիստական ուսմունքի հետևորդներից հաջորդը՝ ամերիկացի հոգեբան Վ. Ջեյմսն է: Համաձայն նրա տեսության, ցանկացած զգայության մեջ նախապես գոյություն ունի տարածականության տարր, ինչն իրենում ներառում է տարածությանը բնորոշ բոլոր որակները՝ մակերևույթ, խորություն և այլն: Այդ տարրը սկզբից գտնվում է չտարբերակված վիճակում և միայն հետագայում է որոշակիացվում: Տարածականությունը Վ. Ջեյմսի կողմից ընդունվում էր որպես զգայության այնպիսի մի ձև, ինչպիսին է ինտենսիվությունը: Զգացումի ինտենսիվության կամ պասիվության չափը նա կապում էր ֆիզիոլոգիական գործոնի հետ, ինչը տեղի է ունենում նյարդային վերջույթների միաժամանակյա գրգռման արդյունքում [116, էջ 113, 114]:

Անդրադառնալով Վ. Ջեյմսի մոտեցումներին Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ տարածական բոլոր հարաբերությունները նրա մոտ ոչ այլ ինչ են, եթե ոչ մաքուր զգայական զգացումներ: Օրինակ, «եթե մենք զգում ենք, տեսնում ենք գիծը, ապա մենք զգում ենք, տեսնում ենք հարաբերությունը: Համաձայն նրա, մեր օրգանիզմում ամեն մի մասի բնորոշ է յուրահատուկ մի զգացում, այսինքն տեղային նշան: Տեղային

նշանները օգնում են մեզ ոչ միայն մեր զգացումները տեղայնացնել, այլ նաև օգնում են դրանց տալ համապատասխան տարածական հերթականություն» [116, էջ 113]:

Տարածական ընկալման էմպիրիստական տեսություններց Ա.Ի. Միրաքյանը առավել մանրակրկիտ վերլուծել է Ի. Հերբարտի աշխատանքները: Նրա կարծիքով, այդ հեղինակի աշխատանքներում ամբողջական կերպով արտացոլված են այդ խնդրի վերաբերյալ էմպիրիստական հիմնական մոտեցումները:

Համաձայն Ի. Հերբարտի, տարածության պատկերացումը ստեղծվում է առանձին հասարակ պատկերացումներից (ինչպիսիք են օրինակ կարմիրը, կապույտը, աջը, ձախը, վերևը, ներքևը), որոնք առաջանում են զգայական օրգանների միջոցով և գիտակցության մեջ ընթանում հերթականորեն, սակայն, այնպիսի արագությամբ, որ դրանք թվում են միաժամանակ կատարվող և համագոյակցված: Տարածությունը, ըստ նրա, այսպիսով, անմիջական ընկալման առարկա չէ: «Պատկերացումները, որոնք հետևում են համապատասխան օրենքների և զրկված են տարածական բնույթից, միահյուսվելով միմյանց, կարող են ձևավորել տարածական շարք» [116, էջ 113, 114]:

Հաջորդ էմպիրիստ հոգեբան Ա. Բենը մտածում էր նախորդի պես, ասելով, որ տարածության մեջ տարածականության պատկերացումը, չլինելով նախապես մեր գիտակցության մեջ, կազմավորվում է ժամանակի մեջ տարածականության վերաբերյալ մեր պատկերացումների շնորհիվ: Տարածականության պատկերացումը, առաջին հերթին կատարվում է հաջորդականության զգացումի միջոցով:

Տարածության ընկալման Հ. Սպենսերի տեսությունում փորձ է արվում էմպիրիզմը և նատիվիզմը միացնել իրար: Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ Հ. Սպենսերը անգամ թույլ չի տալիս այն պատկերացման գոյությունը, որ տարածության ընկալումը անմիջական է այնպես, ինչպես և գույնի ընկալումը: Համաձայն նրա, տարածականության վերաբերյալ ամբողջական մեր պատկերացումը ձևավորվում է այն ժամանակ, երբ մենք, օրինակ, հետազոտում ենք մեր սեփական մարմնի մակերեսը:

Վերջապես, հաջորդ հայտնի էմպիրիստը, ում աշխատանքները (տարածության ընկալման վերաբերյալ) մանրակրկիտ ուսումնասիրվել և վերլուծվել են Ա.Ի. Միրաքյանի կողմից՝ Վ. Վունդտն է: Այդ հոգեբանի սինթեզի կամ ասոցիատիվ

միահյուսման տեսության մեջ տարածության պատկերացումը դիտարկվում է որպես տարատեսակ զգացումների փոխազդեցության արդյունք: Այդտեղ տարածության պատկերացումը բացատրվում է տարատեսակ տարրերի սինթեզի կամ բարդ տեղային նշանների շնորհիվ, որոնք մարմնի այս կամ այն հատվածին (ցանցաթաղանթին և շարժողական զգացումներին) բնորոշ յուրահատուկ որակի զգացումներ են:

Վ. Վունդտի մոտ տարածությունը դիտարկվում էր որպես տարբեր զգացումների (միատեսակ և տարատեսակ) փոխազդեցություններ, որոնք միահյուսվում են էքստենսիվ սինթեզում: Օրինակ. ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը. «Տեսողական պատկերացման մեջ մտնում են, առնվազն, երեք տարր. լուսային զգացումներ, ցանցաթաղանթի տեղային նշաններ և շարժողական զգացումներ» [116, էջ 121]:

Նատիվիստական և էմպիրիստական ուղղությունների մեթոդաբանական հիմքերը վերլուծելով գիտնականը գալիս է այն ենթադրության, որ, ինչպես տարածության ընկալման խնդրին վերաբերող հարցադրումների ժամանակ, այնպես էլ աշխարհի տարածական հատկությունների ընկալման և մարդու գիտակցության մեջ տարածության վերաբերյալ հասկացությունների ձևավորման հիմքում ընկած մեխանիզմների և օրինաչափությունների փնտրելու ժամանակ, հետազոտողների ուշադրության կենտրոնում (ինչպես նատիվիստների, այնպես էլ էնպիրիստների) մնում էր փիլիսոփայությունում գոյություն ունեցող միևնույն իմացաբանական հարցը. «Եթե զգայական օրգաններում անմիջական զգացումի ձևով տրված չէ աշխարհի տարածականությունը՝ ինչպես գույնը, ձայնը, ճնշումը, ցավը, ապա ինչպես է մեր գիտակցության մեջ կազմավորվում աշխարհի տարածականությունը և, ինքնին, տարածության հասկացությունը» [116, էջ 120]:

Հոգեբանությունում օբյեկտների տարածական չափերի ընկալման խնդիրը մեկնաբանելիս, Ա.Ի. Միրաքյանի բնորոշմամբ, հոգեբանները իբրև ելակետային հիմք էին վերցնում տարածության ընկալման կամ բնածին, կամ ձեռքբերովի բնույթը և իրենց տեսությունները ու հետազոտման մեթոդները կառուցում հենց դրանց համապատասխան: Սակայն, այստեղ շատ կարևոր է նշել, որ նատիվիստների և էմպիրիստների կողմից զգայական օրգանների առանձնահատկությունները և հատկությունները դիտարկվում էին արտացոլման գործընթացների արդեն ավարտված

արգասիքների հիմքի վրա: Ելնելով արդեն ավարտված գործընթացի արգասիքներից (օբյեկտների հատկանիշներից) և անմիջական-զգայական արտացոլման իմացաբանական հասկացություններից, նրանք իրենց տեսության հիմքում վերցնում էին այնպիսի մտահայեցական կանխադրույթներ, որոնք արտահայտում էին օբյեկտների հատկությունների և զգայական օրգանների հնարավորությունների միջև վերացական երկրաչափական հարաբերակցությունը և ամբողջովին կտրված էին մարդու կենսագործունեության հոգեկան արտացոլման գործընթացից [116, էջ 123, 124]:

Ինչպես տեսնում ենք, օբյեկտների տարածական չափերի ընկալումը բացատրելիս, այն արգասիքային մոտեցումները, որոնք հատուկ էին իդեալիստ և մատերիալիստ փիլիսոփաներին, բնորոշ էին նաև նատիվիստ և էմպիրիստ հոգեբաններին, չնայած այն բանին, որ իրենց ելակետային հիմքերում և մեկնաբանություններում ունեին իրարից էականորեն տարբերվող մոտեցումներ:

Հաջորդը՝ գեշտալտ հոգեբանությունը, Ա.Ի. Միրաքյանի տեսադաշտից չվրիպեց, քանի որ այդ տեսության ներկայացուցիչները ինտենսիվ կերպով ուսումնասիրում էին օբյեկտների տարածական հատկությունները և նրանց միջև հարաբերությունները: Գիտնականի խոսքով, գեշտալտ հոգեբանները այդ խնդրի շուրջ հետազոտումները չսկսեցին նախկին հարցադրումներից ելնելով (ինչպես է գիտակցության մեջ առաջանում տարածականությունը և օբյեկտների տարածական հատկությունները, որոնք գիտակցության մեջ նախապես գոյություն չունեն), այլ առաջարկեցին իրենց առանձնահատուկ մոտեցումը. «Քանի որ ֆիզիկական, երկրաչափական օբյեկտները ունեն տարածական կառուցվածք ձևավորող հատկություններ, ապա հոգեբանության խնդիրը պետք է կայանա հենց նրանում, որ բացահայտի այն ֆիզիոլոգիական հնարավոր սկզբունքները և հոգեբանական օրինաչափությունները, որոնց միջոցով ֆունկցիոնալ կերպով իրականացվում է ֆիզիկական տարածական կառուցվածքների և օբյեկտների հատկությունների անցումը (ձևափոխումը) սուբյեկտիվ երևույթների՝ պատկերների կամ պատկերացումների» [116, էջ 125]:

Այդուհանդերձ, Ա.Ի. Միրաքյանը նկատում է, որ չնայած այն բանին, որ գեշտալտ հոգեբանները օբյեկտների առանձին հատկությունների դիտարկումները

փոխեցին օբյեկտների կառուցվածքաստեղծ հասկացությունով և առանձին զգացումների հետազոտությունների փոխարեն սկսեցին ուսումնասիրվել ուղեղի կառուցվածքներում դրանց անբաժան ամբողջականությունը, միևնույն է, տարածության ընկալման խնդրի նման հարցադրումը ամբողջությամբ համընկնում է բնագիտությունում գոյություն ունեցող հարցադրումներին և ուսումնասիրություններին, որտեղ հետազոտման ենթակա օբյեկտը միշտ նախապես ունի ինչ-որ արդեն որոշակիացված հատկություններ և առանձնահատկություններ: Այս դեպքում հետազոտողները իրենց առջև խնդիր են դնում բացահայտել և ընգծել օբյեկտների հատկությունների հարաբերությունները և կապերի օրինաչափությունները, ինչպես նաև նկարագրել կառուցվածքների կազմավորումը կամ նրանցում կատարվող գործընթացները [116, էջ 125-130], [109, էջ 191, 193]:

Այսպիսով, նա ցույց է տալիս, որ գեշտալտ հոգեբանությունը իբրև հետազոտման առարկա կրկին վերցնում է արդեն արտացոլված օբյեկտների ֆիզիկական հատկությունները, միայն թե, դրանց ֆենոմենալ կառուցվածքների տեսքով:

Ֆիզիկական տարածության մեջ օբյեկտների կառուցվածքաստեղծ գեշտալտ հոգեբանության հիմնական գաղափարը ընդունելով, ինչպես նաև ընդունելով հեռապատկերի և խորության ընկալման գործընթացում աչքի ցանցաթաղանթի վրա տվյալների դերի վերաբերյալ Վ. Ջեյմսի մոտեցումը, Ջ. Գիբսոնը առաջարկում է օբյեկտների միջև հարաբերությունների և տարածական հատկությունների ընկալման իր մոտեցումը: Համաձայն այդ մոտեցման, ինչպես ցույց է տալիս Ա.Ի. Միրաքյանը, տարածության եռաչափության ընկալումը հասկանալու և բացատրելու համար բավարար էր համարվում պրոքսիմալ տեղեկությունը: Համաձայն Ջ. Գիբսոնի, ֆիզիկական աշխարհի կառուցվածքի գրադիենտը կազմավորում է աչքի ցանցաթաղանթի վրա խտության օպտիկական գրադիենտը, որտեղ, չափով և ձևով ֆիզիկապես միասեռ օբյեկտները կամ դրանց տարածականորեն ընդգծված մասերը, կախված դիտորդից հեռանալու աստիճանից, ունենում են իրենց չափերի համապատասխան փոքրացում [116, էջ 130-135]:

Օբյեկտների և դրանց հատկությունների տարածական ընկալման էկոլոգիական հոգեբանության մեկնաբանություններում, գիտնականի խոսքով, նախապես արդեն հայտնի էր այն գործընթացը, որը բերում է օբյեկտների մեծության և ձևի ընկալմանը, ավելին, հայտնի էր նաև գրադիենտ հարաբերություն ձևավորող մեխանիզմը, որն ամեն մի մեծության ընկալման դեպքում տալիս է տարբեր արդյունքներ: Այս աքսիոմատիկայի ընդունումից հետո Ջ. Գիբսոնը ցանցաթաղանթի երկչափ հարթության վրա ֆիզիկական օբյեկտի պրոեկտման ժամանակ եռաչափ ընկալումը բացատրում է մեծությունների և ձևերի տարբերությունը ընկալելու միջոցով: «Այդ կերպ, նա տարածական ընկալման ենթադրյալ մեխանիզմների և օրինաչափությունների բացատրման ժամանակ նույնպես իմպլիցիտ կերպով ներառում է արդեն արտացոլված տարածական հատկությունները» [116, էջ 181]:

Ընկալման նախորդ տեսություններից, մասնավորապես՝ Ջ. Գիբսոնի էկոլոգիական հոգեբանությունից էականորեն տարբերվող մի նոր մոտեցում է առաջարկում Ժ. Պիաժեն: Այն, Ա.Ի. Միրաքյանի դիտարկմամբ հոգեբանության պատմությունում առաջին դեպքն էր, երբ ընկալման գործընթացը փորձում էին բացատրել չօգտագործելով օբյեկտների արդեն արտացոլված հատկությունները: Ժ. Պիաժեն ընկալումը համարում էր մի գործընթաց, որը տեղի է ունենում ժամանակի շատ կարճ ընթացքում, երբ տեսողական համակարգը ֆիքսում է (կենտրոնանում է) հասարակ գրգիռի աննշան մի հատվածը (նման գրգիռ կարող է լինել կետը կամ ուղղի մի փոքրիկ կտրվածք): Այդ ժամանակ տեղի է ունենում տեսողական համակարգի որոշ տարրերի և գրգիռի որոշ տարրերի միջև հանդիպում: Այդ մոդելում կարևոր է ինքնին հանդիպման վերացական հասկացությունը, այլ ոչ թե իրականության մեջ դրա կոնկրետ իրացումը, այդ իսկ պատճառով, Ժ. Պիաժեն չի սահմանում ոչ այդ տարրերի բնույթը, և ոչ էլ դրանց փոխադարձ հանդիպման բովանդակությունը:

Ինչպես նկատում է Ա.Ի. Միրաքյանը, Ժ. Պիաժեն ստեղծում է ընկալման գործընթացը մեկնաբանող մի վերացական մոդել, որում ներառված չէին նախապես արտացոլված արգասիքները: Այդ մոդելում հնարավորություն է ստեղծվում, որպեսզի ընկալման գործընթացում տարրական հանդիպումների և խառնուրդների (купляжи) հավանական դինամիկայի միջոցով ինքնաբերաբար ծնվեն ոչ միայն օբյեկտների

մեծությունները և ձևերը, այլ նաև փոխադարձ կապակցման գործընթացում հավանական դինամիկայի շնորհիվ ինքնաբերաբար ստեղծվեն օբյեկտների տարածական հատկությունների միջև հարաբերությունները [116, էջ 136-139]: Սակայն, ինչքան էլ Ժ. Պիաժեի կողմից փորձ է արվում ընկալման գործընթացը բացատրելիս չօգտագործել օբյեկտների արդեն արտացոլված հատկանիշները, միևնույն է, նա չի կարողանում ամբողջությամբ հրաժարվել արգասիքային մոտեցումից: Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ Ժ. Պիաժեն իր մոդելում հոգեկան արտացոլման արգասիքների իմպլիցիտ ներառումը կատարում է այլ ձևով՝ իմացաբանական համարժեքության և իզոմորֆության (հավասարաձև) ելակետային դրույթների տեսքով: Արդյունքում. «Նրա կողմից ընկալման գործընթացը դիտարկվում է ոչ թե որպես բազմաֆունկցիոնալ մի գործընթաց, այլ գործընթաց, որը բերում է արտացոլվողի իմացաբանական համարժեքությանը և իզոմորֆությանը արտացոլվածի նկատմամբ» [116, էջ 183]:

Վերլուծելով հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ խորհրդային ժամանակաշրջանի հոգեբանների աշխատանքները (Բ. Անանև, Լ. Վիգոդսկի, Ա. Զապորոժեց, Պ. Զինչենկո, Ա. Լեոնտև, Ս. Ռուբինշտեյն, Ա. Սմիրնով, Դ. Օշանին, Վ. Դավիդով, Վ. Զինչենկո, Բ. Լոմով և ուրիշներ), ինչպես նաև այդ ժամանակաշրջանի որոշ ռուս փիլիսոփաների աշխատանքներ (Վ. Իվանով, Վ. Լեկտորսկի, Ֆ. Միխայլով, Է. Յուդին) Ա.Ի. Միրաքյանը նշում է, որ ի տարբերություն նախորդ հետազոտողների, խորհրդային ժամանակաշրջանի հոգեբանները առաջին անգամ ընկալման հոգեբանության հետազոտման պատմության մեջ փորձեցին անմիջական-զգայական հոգեկան արտացոլման գործընթացը բացատրել ֆունկցիոնալ տեսանկյունից: Նրանց աշխատանքներում բացահայտվում են ընկալման ֆունկցիոնալ-գործուն բնութագրերը: Ընկալման գործընթացը, համաձայն այդ ռուս հոգեբանների, այնպիսի մի գործընթաց է, որի ժամանակ ակտիվ կերպով իրար հետ են փոխազդում մարդու համար ֆունկցիոնալ անհրաժեշտ առարկաների օբյեկտիվ հատկությունները և ֆիզիոլոգիական (զգայական օրգանները իրենց շարժունությամբ և այլն) ու հոգեբանական (պատկեր, հասկացություն և այլն) միջոցները: Այդ հատկությունները արտացոլելու ժամանակ մարդը հանդես է գալիս ոչ թե իբրև պասիվ «ընդունիչ», այլ որպես ակտիվորեն արտացոլող սուբյեկտ, ով իրականացնում է արտացոլվող

առարկայի կամ նրա հատկությունների հետ ֆունկցիոնալ-նպատակաուղղված գործողություններ [116, էջ 139-147], [109, էջ 202-209]:

Սակայն, միևնույն ժամանակ, Ա.Ի. Միրաքյանի խոսքով, ընկալման գործընթացի վերաբերյալ նրանց մեկնաբանությունները դուրս չէին գալիս հոգեկան արտացոլման գործընթացի հասկացման իմացաբանական շրջանակներից, ինչի ժամանակ հետազոտվում էր արտացոլված արգասիքի (ինչը նախապես ունի տարածական նկարագրություն) և արտացոլվող աշխարհի միջև համեմատությունը: Չնայած այն բանին, որ խորհրդային ժամանակաշրջանի հոգեբանները ընկալման գործընթացը բացատրելու գործում ցուցաբերեցին նախորդներից էականորեն տարբերվող մոտեցումներ և իմացաբանական մակարդակում շատ հարցեր ստացան նոր պատասխաններ, միևնույն է, նրանք ևս չկարողացան դուրս գալ հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանելու արգասիքային մոտեցման սահմաններից և այդուհանդերձ, նրանց չհաջողվեց բացահայտել հոգեկան արտացոլման անմիջական-զգայական գործընթացի ներքին մեխանիզմները և օրինաչափությունները [116, էջ 183]:

Փիլիսոփայությունում և հոգեբանությունում օբյեկտների չափերի տարածական ընկալման խնդրին վերաբերող մոտեցումները մանրակրկիտ հետազոտելուց և դրանցում տեղ գտած սահմանափակումները մատնացույց անելուց հետո Ա.Ի. Միրաքյանը այդ խնդիրը ուսումնասիրում է նաև այն ժամանակ (խորհրդային ժամանակաշրջանում) մեծ զարգացում ապրող այնպիսի գիտություններում ինչպիսիք են ֆիզիոլոգիան և կիբեռնետիկան:

Ընկալման գործընթացը ֆիզիոլոգիայում բավականաչափ ուսումնասիրվել էր և արտացոլվել այնպիսի գիտնականների աշխատանքներում, ինչպիսիք են՝ Է. Հերինգը, Ի. Սեչենովը, Ի. Պավլովը, Ս. Կրավկովը, Պ. Անոխինը և ուրիշներ: Ա.Ի. Միրաքյանը վերլուծելով նրանց աշխատանքները գալիս է այն եզրակացության, որ փիլիսոփայական և հոգեբանական տեսությունների նման ֆիզիոլոգները և նեյրոֆիզիոլոգները ևս, ընկալման գործընթացը սկսում էին մեկնաբանել արդեն արտացոլված այն հատկությունների միջոցով (գույն, համ, հոտ և այլն), որոնց ֆիզիոլոգիական մեխանիզմները դեռևս պետք է ուսումնասիրվեր: Եթե փիլիսոփայությունում և հոգեբանությունում հոգեկան արտացոլման խնդիրը

մեկնաբանվում էր «օբյեկտ-սուբյեկտ» սխեմայի միջոցով, որում իմպլիցիտ ինքնության ընդունումը արդեն իսկ արտացոլված էր, ապա ֆիզիոլոգիայում այն դիտարկվում էր «գրգիռ-ֆիզիոլոգիական մեխանիզմ՝ պայմանավորված օրգանիզմի պատասխանով» սխեմայի միջոցով: Առաջին հայացքից մեզ կարող է թվալ, ասում է Ա.Ի. Միրաքյանը, որ գրգիռը իր մեջ չի ներառում տարածական-առարկայական նախնական արտացոլում, այսինքն, գրգիռը կարծես թե օժտված չէ իմպլիցիտ ինքնությամբ, և այն (առարկայի հատկությունները), ձեռք է բերվում, այս կամ այն ֆիզիոլոգիական գործընթացի արդյունքում: Սակայն, «Իրականում, երբ խոսքը գնում է աչքի գրգիռի մասին, ապա այն ընդունվում է որպես ցանցաթաղանթի վրա օպտիկա-երկրաչափական պատկեր, ինչը փոփոխվում է օբյեկտի հեռացման կամ մոտեցման ընթացքում, իսկ դա, այդ գրգիռի վերաբերյալ, արդեն իսկ նախապես արտացոլված պատկերացում է» [116, էջ 159]:

Այդ նույն տրամաբանությունը, նշում է Ա.Ի. Միրաքյանը, հատուկ է նաև աչքերի շարժումների և մկանային զգացումների միջոցով տարածական ընկալման գործընթացը բացատրելիս: Դրանք լինելով միայն ֆիզիոլոգիական մեխանիզմներ, այդքանով անկախ են օբյեկտից, սակայն, երբ դրանք մեկնաբանվում են իբրև մեխանիզմներ, որոնք ապահովում են օբյեկտների եռաչափ հատկությունները, ապա այդ դեպքում, փաստացի դիտարկվում են հենց այդ տարածական հատկությունների միջոցով՝ ձև, մեծություն և նման բաներ, այսինքն օբյեկտների արդեն արտացոլված հատկությունների միջոցով: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս օբյեկտների տարածականությունը իմպլիցիտ կերպով տրված է, իսկ «Ֆիզիոլոգիական մեխանիզմները (աչքերի շարժում, մկանային զգացում) կանխադրվում են իբրև բացատրական մեխանիզմներ, որոնք նկարագրում են այդ օբյեկտների արդեն նախապես տրված հատկությունները» [116, էջ 160]:

Տարածական ընկալման խնդիրը այս անգամ արդեն դիտարկելով կիբեռնետիկայում, Ա.Ի. Միրաքյանը ուսումնասիրում է հայտնի գիտնականներ Ն. Վիների, Մ. Այզերմանի, Վ. Վասիլևի, Կ. Վերհագենի, Մ. Բոնգարդի և ուրիշների աշխատանքները: Նրա համոզմամբ կիբեռնետիկայում ևս ընկալման գործընթացի վերաբերյալ մեկնաբանությունները կատարվել են արգասիքային մակարդակի վրա:

Այդ ոլորտում տարածության ընկալման գործընթացը դիտարկվում է իբրև ինֆորմացիոն գործընթաց, ինչն ապահովում է նկարագրվող օբյեկտի և նրա սուբյեկտիվորեն արտացոլված պատկերի միջև իզոմորֆությունը [116, էջ 175-176]:

Կիբեռնետիկայում, իբրև հիմնական խնդիր, առաջ է քաշվում պատկերների ճանաչման հարցը, որում, արդեն անթաքույց կերպով արտացոլված էր արգասիքային մոտեցումը (պատկերը ընկալման գործընթացի արդեն ավարտված երևույթ է): Արդյունքում, «Կիբեռնետիկայում ընկալման գործընթացի վերաբերյալ պատկերացումները կառուցվում էին վերջնական արդյունքների միջև (պատկերների) հարաբերակցությունների տրամաբանության հիմքի վրա» [116, էջ 166]:

Ինչպես նախորդներում, կիբեռնետիկայում ևս, ընկալման գործընթացի վերաբերյալ պատկերացումները և մեկնաբանությունները կառուցվում էին նույն արգասիքային մոտեցման վրա:

Ամփոփելով այս ենթագլուխը պետք է նշել, որ հայազգի գիտնականի հետազոտումների շնորհիվ պարզ դարձավ, որ փիլիսոփայությունում, հոգեբանությունում, ֆիզիոլոգիայում և կիբեռնետիկայում հոգեկան արտացոլման վերաբերյալ պատկերացումները, մասնավորապես՝ օբյեկտների տարածական ցուցանիշների ընկալումը մեկնաբանվել և վերլուծվել են ելնելով արտացոլվող օբյեկտների նախնական տվյալներից, իմպլիցիտ ինքնությունից, պատկերներից և հասկացություններից: Ընդունելով այդ նախնական տվյալները, պատկերները և այլն, հետազոտողները սկսում էին փնտրել հոգեկան արտացոլման գործընթացների այն օրինաչափությունները և մեխանիզմները, որոնց շնորհիվ իրականացվում է ընկալման գործընթացը: Սակայն, ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը, նման մոտեցում ցուցաբերելով հետազոտողները ընկալման գործընթացը ուսումնասիրում էին արգասիքային, ֆիզիկալ մակարդակի վրա, ինչի պատճառով թաքնված էին մնում հոգեկան արտացոլում առաջացնող այն մեխանիզմները և սկզբունքները, որոնց միջոցով, կենդանի օրգանիզմներում, իրականացվում է արտաքին աշխարհի արտացոլման հնարավորությունը [116, էջ 186-188]:

Հոգեկան արտացոլման գործընթացի ուսումնասիրությունը, երբ դրվում է նման (ոչ արգասիքային) հիմքի վրա, առաջ է գալիս օրինաչափ մի հարց. եթե հոգեկան

արտացոլման ֆունդամենտալ ուսումնասիրությունը իր իսկ ավարտուն, արտացոլված բյեկտների հատկությունների վրա հիմնվելով հնարավոր չէ ուսումնասիրել, ապա ինչպե՞ս հետազոտել արտացոլման գործընթացը. չէ՞ որ այն ուսումնասիրելու համար մարդն ուրիշ միջոցներ չունի և գուցե երբեք էլ չունենա: Այս հարցին, որն առաջին հայացքից կարծես անլուծելի է, Ա.Ի. Միրաքյանը պատասխանում է, որ բանը նրանում չէ, թե չի կարելի ընդհանրապես հիմնվել արտացոլման ֆենոմենների վրա: Խոսքը գնում է խոր էմպիրիկ արգասիքային-ֆիզիկալ մտածելակերպի հաղթահարման մասին, ինչը հիմնված է թաքնված իզոմորֆության կանխադրույթների, արտացոլման անմիջական-զգայական գործընթացների նույնականացման և միջնորդավորված մտածողության վրա [4, էջ-75]:

Հոգեկան արտացոլման ինչ մտածելակերպ և հետազոտման մեթոդաբանություն նկատի ուներ Ա.Ի. Միրաքյանը մենք կխոսենք հաջորդ ենթագլխում, որտեղ կներկայացնենք նրա ոչ արգասիքային՝ աֆիզիկալ մոտեցումը և դրա շուրջ կատարված տեսական ու փորձարարական հետազոտությունները:

## 1.4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունները և փորձարարական հաստատումները

Նախորդ ենթագլխում ներկայացրեցինք օբյեկտների տարածական ցուցանիշների ընկալման հետ կապված գիտնականի մեկնաբանությունները և վերլուծությունները, ինչից պարզ դարձավ, որ այդ խնդրի շուրջ մինչ այդ կատարված հետազոտությունները իրականացվել են արգասիքային մակարդակի վրա (իբրև ելակետային տվյալներ ընտրվել են հետազոտվող օբյեկտի հատկությունները) և, որի հետևանքով, հետազոտողներից թաքնված է մնացել ընկալման գործընթացի արդյունքում ստեղծված հոգեկան ֆենոմենների առաջացման սկզբունքները և օրինաչափությունները:

Հետազոտման նման մեթոդաբանությունից (արգասիքային) հրաժարվելու համար, ինչը, նրա խոսքով, իմացաբանական պարադիգմայից օգտվելու արդյունք էր, Ա.Ի. Միրաքյանը առաջարկում է սկզբունքորեն լրիվ նոր մոտեցում, ինչը հետագայում

պետք է ստանար «*ոչ արգասիքային*», «*աֆիզիկալ*» և «*ընկալման տրանսցենդենտալ հոգեբանություն*» անվանումները:

Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը առաջարկում էր հոգեկան արտացոլման ստեղծող (ծնող) գործընթացը ուսումնասիրել այնպիսի ելակետային հիմքերի վրա, որոնք ունեն «ոչ արգասիքային», ոչ ֆիզիկալ (աֆիզիկալ) բնույթ, այսինքն՝ չեն հիմնվում ընկալման գործընթացի անմիջական ֆենոմենների (արգասիքների) վրա: Այն իրագործելու համար, անհրաժեշտ էր, իբրև ելակետային հիմքեր վերցնել ոչ թե ընկալման գործընթացի այս կամ այն տվյալները կամ նրա անմիջական արգասիքները, այլ այնպիսի ցուցանիշներ, որոնք բնորոշ կլինեին, կվերաբերեին ավելի ընդհանուր իրականությանը: Հետազոտողները, ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը, ընկալման անմիջական-զգայական գործընթացը հասկանալու համար փորձում են իրենց ուսումնասիրությունները սկսել և կառուցել օբյեկտի առանձին հատկությունների օգնությամբ (շարժում, ձև մեծություն և այլն), նրանք, «Հոգեկան արտացոլման գործընթացին վերագրում են օբյեկտների առանձին հատկությունների հետ օպերացիաներ անելու իրեն ոչ հատուկ առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները բնորոշ են մտածողությանը, երբ վերացարկվում են ընկալման անմիջական-զգայական արդյունքներն իրենց ստեղծող գործընթացի պայմաններից և տեղափոխվում պատկերացումների կամ հասկացությունների ձևի մեջ» [114, էջ 150]: Այդ իսկ պատճառով, նա առաջարկում էր վերցնել այնպիսի տվյալներ (ոչ թե հետազոտվող օբյեկտի ինչ որ հատկություններ), որոնք կբնորոշեն ավելի ընդհանուր իրականություն:

Այդպիսի իրականություն Ա.Ի. Միրաքյանը դիտարկում էր նյութական կեցության ինքնաշարժումը, (ինքնաստեղծումը, ինքնապահպանումը և ինքնափլուզումը), որի գլխավոր յուրահատկությունը, իբրև ամբողջ բնության ձևաստեղծ գործընթացի, հանդիսանում է կեցության ամբողջական ձևը: Մատերիայի ինքնաշարժման յուրահատկությունը նկարագրելու համար նա, իբրև համասեռության հակադիր հասկացություն, մտցնում է *անիզոտրոպություն* «анизотропность» եզրույթը, ինչի ցայտուն վիճակ կարելի է համարել դիսկրետությունը (дискретность):

Անիզոտրոպության օրինակներ կարող են ծառայել 1) միևնույն էլեկտրական դաշտի պոտենցիալների տարբերությունը, որն էլեկտրական հոսանք առաջացնելու համար  անհրաժեշտ պայման է, 2) կանացի և տղամարդկային էակների միջև միասնությունը և տարբերությունները, ինչը պարտադիր է նոր էակի առաջացման համար, 3) ընկալման օրգանների և ընդհանրապես ուղեղի համաչափ կառուցվածքը և դրանց անհամաչափ գործունեությունը և այլն: Ա.Ի. Միրաքյանը գտնում էր, որ օրգանների, օբյեկտների միջև անիզոտրոպ հարաբերությունները հնարավոր է բացահայտել, երբ մենք ընկալման գործընթացի հոգեբանական բովանդակությանը մոտենանք ֆունկցիոնալ տեսանկյունից. «Այդ ժամանակ միայն հնարավոր կլինի դուրս հանել անիզոտրոպ հարաբերություններ ստեղծող մեխանիզմները և դրա ֆունկցիոնալ ճկուն բնույթը, որի շնորհիվ իրականացվում է օբյեկտների հարաբերությունների և տարբեր տարածական հատկությունների ճկուն բազմաֆունկցիոնալ արտացոլումը» [107, էջ 110]:

Ընկալման գործընթացը վերոնշյալ կերպ դիտարկելու դեպքում, մենք դուրս ենք գալիս «օբյեկտ-սուբյեկտ» հարաբերության սահմաններից, քանի որ այդ հարաբերություններում, թե՛ օբյեկտը՝ իր որակներով և հատկություններով, թե՛ սուբյեկտը՝ իր նեյրոֆիզիոլոգիական բնութագրերով և զգայական փորձի դրսևորումներով, վերաբերում են արդեն արտացոլված իրականությանը, ինչը թույլ չի տալիս հետազոտել հենց այդ հատկությունները և որակները ստեղծող գործընթացների օրինաչափությունները [125, էջ 370]:

Ա.Ի. Միրաքյանի կողմից անիզոտրոպության սկզբունքի ընտրությունը, որպես առաջացնող (ստեղծող) գործընթաց, պայմանավորված էր մի շարք դատողություններով և գիտական աշխարհում կատարված բացահայտումներով, որից մենք կառանձնացնենք հետևյալը.

Քվանտային մեխանիկայի զարգացման պատմությունը ուսումնասիրելով նա նկատում է, որ այդտեղ (քվանտային ֆիզիկայում), հակամասնիկների փորձարարական բացահայտումները, փաստում են մատերիայի այնպիսի առանձնահատկության դրսևորումը, ինչպիսին է անիզոտրոպությունը, որի պատճառով տեսաբան ֆիզիկոսները հրաժարվեցին ֆիզիկական գործընթացների

համաչափության մասին իշխող հայացքներից ու գիտակցեցին ուսումնասիրվող երևույթների անհամաչափ (ասիմետրիկ) բնույթի հասկացման անհրաժեշտությունը: Որպես առավել ակնառու օրինակ կարող է ծառայել բյուրեղների մեջ կատարվող գործընթացները: Բյուրեղային ցանցերի համաչափության խախտումը՝ ինչը հասկացվում էր որպես բյուրեղի դեֆեկտ, միանգամայն անհրաժեշտ է վերջինիս աճի համար: Պ. Կյուրիի հետազոտությունները ցույց տվեցին, որ եթե բյուրեղի արտաքին ձևի և ներքին կառուցվածքի նկարագրության մեջ մեծ դեր է խաղում համաչափությունը (սիմետրիան), ապա դրանց հատկությունների ուսումնասիրման համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ համաչափության բացակա տարրերի վերաբերյալ: Նրա կարծիքով, համաչափության տարրերի բացակայությունը հենց այն անհամաչափությունն է, որը ստեղծում է երևույթը, այսինքն, կառուցվածքի նոր հատկությունները [113, էջ 77-85]:

Միկրոաշխարհում գոյություն ունեցող այս անհամաչափության վերաբերյալ փաստերը, ուղեղի ձախ և աջ կիսագնդերի գործունեության ոչ համաչափ ֆիզիոլոգիական գործընթացը, ինչպես նաև շատ ուրիշ հետազոտություններում ի հայտ եկած նմանատիպ բաները Ա.Ի. Միրաքյանին բերեցին այն համոզման, որ անհամաչափությունը, որպես մատերիայի անիզոտրոպության դրսևորումներից մեկը, հանդիսանում է նոր նյութատարածական, անօրգանական և օրգանական համակարգերի ձևավորման աղբյուր: Այդ համակարգերի առանձնացումը, դա միայն մարդու կողմից մատերիայի զարգացած ձևերի ֆիքսումն է, որոնք բնութագրում են մատերիայի տարբեր մակարդակները կամ էվոլյուցիայի աստիճանները:

Ա.Ի. Միրաքյանի խոսքով, մատերիալիստական փիլիսոփայության պատմության մեջ եղել են հոգեկան արտացոլման երևույթի էությունը հենց մատերիայի ակունքներում փնտրելու փորձեր, սակայն, միևնույն ժամանակ, մատերիան և նրա օրինաչափությունները վերլուծվում էին արտացոլման արդյունքներից ելնելով: «Որպես հետազոտության օբյեկտ, նրանց կողմից ընտրվում էր մարդն՝ իր բնական-հասարակական պատմությամբ և իր ենթադրվող մտածողության էվոլյուցիայով, այլ ոչ թե, այն անմիջական-հոգեկան արտացոլման բնական ձևերի առաջացման սկզբունք-օրինաչափությունները, որոնք մատերիան կրում է իր մեջ՝ որպես հնարավորություն:

Միայն դրանց վրա հենվելով կարելի է առաջ քաշել մատերիայի ընդերքում հոգեկան արտացոլման ծագման պայմանների և դրա կառուցվածքա-գործընթացային գործունեության սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ հիպոթեզ» [113, էջ 71]:

Նրա կողմից անիզոտրոպությունը (այսինքն տարբերությունը ընդհանուրում) հասկացվում էր իբրև բնություն, ինչը, համաձայն նրա, հաճախ փիլիսոփայության պատմության մեջ օգտագործվում էր մատերիա հասկացության տակ: Այստեղից գալիս էր այն հետևությունը, որ ընկալող օրգանիզմը հենց բնության հնարավոր անիզոտրոպ ձևերից մեկն է, որն ունի իր տարածաժամանակային ձևերը առաջացնելու հնարավորություն: Եվ, հետևաբար, եթե մարդը, որպես դիսկրետ օրգանական համակարգ, ընդհանուրում տարբերության ներկայությունն է, իսկ նրա ընկալումն ու մտածողությունն ունեն ընդհանուրում տարբերության արտացոլման դիսկրետ հնարավորություններ, ապա «Նա (մարդը), միայն ընդունակ է արտացոլելու ընդհանուրում անիզոտրոպ տարբերության ներկայությունը: Նշանակում է, որ անիզոտրոպությունը օբյեկտիվ գոյություն ունեցող մատերիայի յուրահատկություն է՝ ընդհանուրում նրա ձևի ստեղծող առաջացման հնարավորությունը» [113, էջ 71]:

Տվյալ կոնտեքստում կիրառվող «անիզոտրոպություն» հասկացության բովանդակությունը ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. անիզոտրոպությունն այնպիսի համակարգի յուրահատկություն է, որտեղ յուրաքանչյուր դիսկրետ իր մեջ միաժամանակ պարունակում է այդ միատարր ընդհանրության ամբողջությունը և տարբերությունը: Ինչպես գիտենք, կենդանի արարածների զգայական օրգանները ունեն նման դիսկրետ, անիզոտրոպ կառուցվածք (օրինակ աչքի ցանցաթաղանթը, ականջի Կորտիև օրգանը, մարդու ձեռքերի մատները և այլն), ինչի շնորհիվ (դրանց միջև հարաբերությունների), ամենայն հավանականությամբ, հնարավոր է դառնում օբյեկտների ձևերի և դրանց հատկությունների առաջացումը [113, էջ 80-82]:

Այսպիսով, Ա.Ի. Միրաքյանը, կենդանի համակարգում, արտացոլման գործընթացի հնարավորությունը դիտարկում էր իբրև որոշակի կառուցվածքում, որոշակի արտացոլման համակարգում, հարաբերությունների ձևավորում: Համաձայն

նրա, այդ կառուցվածքը պետք է ունենա ձևավորված հարաբերությունների ֆիքսման այս կամ այն հնարավորությունները, և հենց այդ հնարավորություններով էլ պետք է պայմանավորված լինի արտացոլման համակարգի ընդունակությունը: Այդպիսի հարաբերության ձևավորումը իրենից ներկայացնում է որպես որոշակի ակտ-ակնթարթ և դրանով իսկ ենթադրում դիսկրետիզացիա (ընդհատում, ֆիքսում, ճանաչում) ու տարբերության կամ նմանության ֆիքսում (հիշողության), ինչն էլ իր հերթին, ունի հաստատման ու պահպանման անհրաժեշտություն:

Այս տեսական ենթադրությունները գիտնականին թույլ են տալիս առանձնացնել հոգեկան արտացոլման առաջացման գործընթացի հնարավորությունը բացատրող մի շարք սկզբունքներ, որոնք, միաժամանակ, հանդես են գալիս իբրև ուսումնասիրության անմիջական օբյեկտներ:

Առաջին սկզբունքը նա ձևակերպում է որպես արտացոլման համակարգի անիզոտրոպ կառուցվածքապրոցեսուալ կազմակերպման անհրաժեշտություն: Դրանով պայմանավորվում է արտացոլման հնարավորությունը, որպես ձևագոյացման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան արտացոլման համակարգ, որը բնորոշվում է անիզոտրոպ կառուցվածքա-գործընթացային կազմակերպվածությամբ: Արտացոլման համակարգի հաջորդ անիզոտրոպության սկզբունքը կարելի է ձևակերպել իբրև համաչափ-երկմիասնական (симметрично-двуединый) հարաբերությունների ձևավորում, որի միջոցով բացահայտվում է ցանկացած ձևագոյացման գործընթացի ունիվերսալ մեխանիզմը:

Հոգեկան արտացոլման առաջացման հնարավորությունը կենդանի համակարգերի կենսագործունեության մեջ Ա.Ի. Միրաքյանի կողմից դիտարկվում և մեկնաբանվում էր երկակի իմաստով, առաջին. դա արտացոլման գործընթացի սովորական հասկացումն է, որում ենթադրվում է որոշակի հատկանիշներով օբյեկտների առկայություն (տարածականություն, ձև, գույն, մեծություն, ձայներ, բարձրություն և այլն), իսկ կենդանի օրգանիզմը ինչ-որ ձևով ընկալում է այդ օբյեկտներն ու դրանց հատկությունները: Երկրորդ մեկնաբանությունը, դա՝ իբրև արտացոլման առաջացման հնարավորությունն է, որում ծնվում, ստեղծվում են օբյեկտներն ու դրանց հատկությունները, և միայն այդ գործընթացի վերջում դառնում

արտացոլված: Առաջին դեպքում ընկալման հոգեբանական կամ ֆիզիոլոգիական գործընթացը նկարագրվում է հոգեֆիզիոլոգիական գործընթացի վերջնական արդյունքի միջոցով և արտացոլումը հասկացվում է իր պրիմիտիվ-ֆունկցիոնալ, էմպիրիկ-իմացաբանական բովանդակությամբ, որպես փոխհարաբերություն՝ արտացոլվող օբյեկտի և արտացոլված սուբյեկտիվ պատկերի միջև: Ինչպես արդեն ասվեց նախորդ ենթագլխում, դա արգասիքային մոտեցում է, որի սահմաններում անհնար է հասկանալ հոգեկան արտացոլման գործընթացի առաջացման հնարավորության սկզբունքներն ու օրինաչափությունները: Այս էր պատճառը, որ այդ խնդրի վերաբերյալ գիտնականի հարցադրումը տարբերվում էր նախորդից (ինչպես են արտացոլվում օբյեկտները և իրենց հատկությունները, ինչը ենթադրում է օբյեկտի և նրա հատկությունների առկայությունը) ու արտահայտվում էր հետևյալ կերպ. ինչպե՞ս է հնարավոր արտացոլման առաջացման գործընթացը, որում դրսևորվում են օբյեկտն ու իր հատկությունները:

Ընկալումն առաջացնող կառուցվածքագործընթացային սկզբունքներում Ա.Ի. Միրաքյանը հատուկ տեղ էր հատկացնում անիզոտրոպ հարաբերությունների համաչափ-երկմիասնական (симметрично-двуединый) սկզբունքին: Նա գտնում էր, որ այն արտացոլման գործընթացում նույնքան կարևոր է, որքան անիզոտրոպության սկզբունքը:

Հոգեկան արտացոլման գործընթացի ժամանակ, անիզոտրոպության սկզբունքը դիտարկելով իբրև ամբողջականի տարբերություն, Ա.Ի. Միրաքյանը, արտացոլող համակարգի կառուցվածքի առանձին էլեմենտի սխեմատիկ պատկերը ներկայացնում էր հետևյալ կերպ.




Նկար 1

Այստեղ 1 և 1-ը դիսկրետ, միաձև համաչափ մասնիկներ են, որոնք անիզոտրոպ են նրանց բաժանող համաչափության առանցքի նկատմամբ: 2 և 2-ը, համեմատության համար, ազդակների ժամանակավոր դադարի մասնիկներ են, իսկ 3-ը գրանցող մասնիկն է՝ ձևավորող 2 և 2-ի համեմատության հարաբերությունը [109, էջ 359]:

Ելնելով այն հանգամանքից, որ կենդանի օրգանիզմում հարաբերությունների ձևավորումը ֆիքսվում է արտացոլման համակարգի որոշակի անիզոտրոպ կառուցվածքում, որն ապահովում է երկմիասնական հարաբերությունների ձևավորման հնարավորությունը, Ա.Ի. Միրաքյանը ենթադրում է, որ համաչափությունն, անիզոտրոպության հետ միասին, հանդիսանում են արտացոլման համակարգի կառուցվածքաձևավորող հիմքը: «Գործընթացային տեսակետից դրանք կազմում են արտացոլման երևույթի՝ որպես ձևագոյացման գործընթացի հնարավորության հիմք» [109, էջ 360]:

Ա.Ի. Միրաքյանի համոզմամբ, համաչափ-երկմիասնական հարաբերությունների ձևավորման սկզբունքը ներդրված է կառուցվածքա-գործընթացային կազմավորման և տեսողական համակարգի գործունեության հնարավորության մեջ (նույնը ձեռքի մատների ծայրերի մակերեսին, ականջի խխունջի լսողական ուղիներում) և իրականանում է զույգերով փոխկապակցված մասնիկների միջոցով, որոնք տեղավորված են արտացոլման համակարգի համաչափ նույնատիպ դիսկրետ ընդունիչային (ռեցեպտորային) մասնիկների կառուցվածքային դաշտի բնական կենտրոններում. «Համաչափ-երկմիասնական հարաբերությունների սկզբունքն ընկած է ձևագոյացման գործընթացի հնարավորության հիմքում, և ընկալման իրական գործընթացում օբյեկտի ձևի ճանաչումը (տարբերակումը) պետք է կատարվի միայն համաչափ-երկմիասնական հարաբերությունների ձևավորման գործընթացից հետո» [109, էջ 360]:

Հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ տրանսցենդենտալ հոգեբանության այսպիսի տեսական վերլուծությունները հիմնավորելու համար, անհրաժեշտ էին փորձարարական հաստատումներ: Այն իրագործելու համար Ա.Ի. Միրաքյանը և իր լաբորատորիայի աշխատակիցները սկսեցին այդ ուղղությամբ աշխատանքներ տանել, որոնք գլխավորապես նվիրված էին տեսողական, լսողական և

շոշափողական ոլորտներին: Հետազոտական այդ աշխատանքները հիմնականում իրականացվում էին Վ.Ի. Կոզլովի, Վ.Ի. Պանովի, Ա.Ն. Անդրեևի, Ն.Լ. Մորինայի, Տ.Ս. Պոգորելցևայի, Է.Ի. Կոչուրովայի, Ա.Մ. Զալցմանի, Օ.Ա. Ադամյանի, Ի.Լ. Ռուդենկոյի, Գ.Վ. Շուկովայի և այլոց կողմից: Այդ աշխատանքներից շատերը հետագայում պաշտպանվեցին որպես թեկնածուական ատենախոսություններ:

Հոգեկան արտացոլման գործընթացի փորձարարական հետազոտումները նրանց կողմից կատարվում էին լրիվ նոր մոտեցումների միջոցով, որի ժամանակ, ընկալման գործընթացը չէր դիտարկվում իբրև օպերացիոն գործընթաց՝ արդեն արտացոլվածների, գիտակցված համակարգերի միջև հարաբերություն (ավանդական մոտեցում), այլ դիտարկվում էր որպես գործընթացային՝ իբրև առաջացնող (ծնող) գործընթացներ, որոնք իրագործվում են արմատական սկզբունքների հիմքի վրա և անտարբեր են (ինդիֆերենտ) ընկալման էմպիրիկ արդյունքների նկատմամբ: Սակայն, միաժամանակ ենթադրվում էր, որ այդ սկզբունքները ընկած էին ընկալման արդյունքները առաջացնող գործընթացների հիմքում: Այդպիսիք էին (սկզբունքներ) անհիզոտրոպության կառուցվածքա-գործընթացային սկզբունքը, համաներկայացվածության սկզբունքը, անհիզոտրոպ հարաբերությունների կազմավորման սկզբունքը և այլն:

Վերոնշյալ սկզբունքները հնարավոր եղավ առանձնացնել այն բանից հետո, երբ Ա.Ի. Միրաքյանը մատերիան և հոգեկանը իբրև մի ընդհանրություն դիտարկեց և ընդունեց, որ դրանց երկուսի (մատերիայի և հոգեկանի) զարգացման հիմքում ընկած են մի շարք միևնույն սկզբունքները:

Ինչպես ասացինք, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության շրջանակներում կատարվող հետազոտությունները էականորեն տարբերվում էին ավանդական մոտեցումներից: Դրա հիմնական պատճառը այն էր, որ ավանդական հետազոտությունները ելնում էին ի՞նչ է արտացոլվում հարցի շրջանակներից, իսկ Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգում հարցը ձևակերպվում էր այլ կերպ. ինչպե՞ս է արտացոլումը ընդհանրապես հնարավոր լինում: Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը իր հետազոտությունները, հետևաբար, ուղղում էր այն սկզբունքների

բացահայտման կողմը, որոնց օգնությամբ, ընկալման ընթացքում տեղի էր ունենում օբյեկտների և դրանց հատկությունների առաջացումը:

Այդ սկզբունքների բացահայտման գործին էր նվիրված տեսողական ընկալման Վ.Ի. Կոզլովի և Ն.Վ. Պոդլեսնովայի ուսումնասիրությունները: Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում տեսողական ընկալումը համարվում էր այնպիսի մի գործընթաց, որի ընթացքում, կառուցվածքա-գործընթացային անիզոտրոպ սկզբունքների հիման վրա տեղի են ունենում օբյեկտների ձևերի և հատկությունների առաջացում: Այդուհանդերձ, տեսողական ընկալման գործընթացը, իր էությամբ և բովանդակությամբ, հանդիսանում է ձևաստեղծ գործընթաց: Ձևաստեղծումը իրականանալու համար անհրաժեշտ է արտացոլման համակարգի համապատասխան նյութական (անատոմիական) կառուցվածք, որը պետք է ունենա անիզոտրոպ կազմություն: Տեսողական համակարգի անիզոտրոպությունը դրված է այդ համակարգը կազմավորող տարրերի դիսկրետության մեջ, ինչպես, օրինակ, անկենդան բնությունում, նոր ձևերի ստեղծումը տեղի է ունենում մատերիայի դիսկրետ ձևերի միջև հարաբերությունների ստեղծման միջոցով: Արտացոլման համակարգում ձևաստեղծումը իրագործվում է այդ համակարգի դիսկրետ տարրերի միջև կառուցվածքա-գործընթացային հարաբերությունների հաստատման հիմքի վրա [83, էջ 62]:

Վ.Ի. Կոզլովը և Ն.Վ. Պոդլեսնովան տեսողական ընկալման գործընթացը հետազոտելու ժամանակ, իբրև վարկած առաջ քաշեցին այն, որ այդ գործընթացում ձևերի ստեղծման հնարավորության գլխավոր սկզբունքներից մեկը հանդիսանում է համաչափ-երկակի (симметрично-двуединых) հարաբերությունների կազմավորման սկզբունքը: Ենթադրվում էր, որ «Համաչափ-երկակի հարաբերությունների կազմավորման սկզբունքը դրված է տեսողական համակարգի կառուցվածքա-գործընթացային կազմավորումների և դրանց գործելակերպի մեջ ու իրացվում է զույգ-զույգ փոխկապակցված տարրերի միջոցով» [83, էջ 63]:

Եթե տվյալ ենթադրությունը ճիշտ էր, և համաչափ-երկակի հարաբերությունների առաջացման սկզբունքը իսկապես ընկած է ձևաստեղծման հնարավորության հիմքում,

ապա օբյեկտի ձևի ընկալման գործընթացը պետք է կատարվեր միայն համաչափ-երկակի հարաբերությունների կազմավորումից հետո:

Այդ վարկածը ապացուցելու համար անցկացվեցին մի շարք փորձարարական հետազոտություններ, որում փորձարկվողը պետք է ճանաչեր երկրաչափական պատկերների ձևերը: Ճանաչման գործընթացին զուգահեռ, միաժամանակ, հատուկ վահանակի վրա գրանցվում էր փորձարկվողի աչքերի շարժումը՝ որպես համաչափ-երկակի հարաբերությունների կազմավորման գործընթացի արտաքին դրսևորումներ:

Այս հետազոտումները անցկացնելիս նրանք ելնում էին այն ենթադրությունից, որ, եթե իրենց վարկածը ճիշտ է, ապա պատկերի ձևի ճանաչումը պետք է կատարվի այն ժամանակ, երբ կետի ակամա ֆիքսումից հետո, ինչը գտնվում է ներկայացված պատկերի ուրվագծից այն կողմ, փորձարկվողի կողմից, ակամայից ֆիքսված կետը, պատկերի ներկայացման ժամանակ կգտնվի այդ պատկերի կոնտուրի անկյունային կետերից (հորիզոնական) հավասարաչափ հեռացված (ավելի մանրամասն տես՝ Принципы порождающего процесса восприятия. էջ 62-79):

Հետազոտումները ցույց են տալիս, որ պատկերների ձևերի ճանաչումը կատարվում է այն բանից հետո, երբ ակամայից ֆիքսված կետը, ինչը մինչ այդ գտնվում էր պատկերի ուրվագծից այն կողմ, պատկերի ձևի ճանաչման ժամանակ գտնվում է մի տեղ, որը հավասարաչափ հեռավորության վրա է (հորիզոնական) տվյալ պատկերի կոնտուրի անկյունային կետերից: Հետևաբար, քանի որ «Աչքերի շարժումները հանդիսանում են համաչափ-երկակի հարաբերությունների ստեղծման գործընթացի արտաքին դրսևորումները, ապա, մեր այն ենթադրությունը, որ ձևաստեղծման իրականացման հնարավորության հիմքում ընկած է համաչափ-երկակի հարաբերությունների ստեղծումը՝ կարող ենք համարել ապացուցված» [83, էջ 77,78]:

Այսպիսով, Վ.Ի. Կոզլովը և Ն.Վ. Պոդլեսնովան իրենց ենթադրություններում ճիշտ էին, սակայն, հասկանալով հարցի խորությունը և ավելի բազմակողմանի հետազոտությունների կարիքը, նշում են, որ այն ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է կատարել ավելի շատ փորձեր՝ որում ընդգրկված կլինեն ավելի մեծ թվով մարդիկ [83, էջ 78]:

Մասամբ, հենց այդ խնդրի իրագործմանն էր ուղղված Վ.Ի. Կոզլովի թեկնածուական ատենախոսությունը [82]: Այդ աշխատանքում՝ «Оперативные характеристики действия и особенности формирования его образа» («Գործողության օպերատիվ բնութագրերը և դրա պատկերի ձևավորման առանձնահատկությունները») զուգահեռներ էր տարվում և հիմնավորվում այն վարկածը, որ պատկերի և գործողության կազմավորման հիմքում ընկած են միևնույն ձևաստեղծ սկզբունքները, որոնք, իրենց հերթին, «...հանդիսանում են հոգեկան արտացոլման գործընթացի հիմնական հատկությունները» [82, էջ 15, 16]:

Հաջորդ հետազոտությունը ևս վերաբերում է տեսողական ընկալմանը: Վ.Ի. Պանովը հետազոտում էր տեսողական ընկալման գործընթացում շարժման առաջացման հնարավորությունները: Ի տարբերություն ավանդական մոտեցումների, որում շարժման ընկալումը հետազոտվում է ընկալվող շարժվող օբյեկտի ձևից և ընկալվող հաստատուն շրջակա միջավայրից առանձին, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում, տեսողական ընկալման գործընթացում, օբյեկտների շարժման ընկալումը դիտարկվում էր որպես այդ գործընթացում առաջացող երևույթ: Վերոնշյալից ելնելով, Վ.Ի. Պանովը առաջ է քաշում հետևյալ վարկածը. «Օբյեկտի շարժման արագության անմիջական-զգայական ընկալման հիմքը, այսինքն, արագ կամ դանդաղ շարժման առաջացումը, պայմանավորված է շարժվող օբյեկտի շատ կամ քիչ ձևաստեղծման աստիճանի հետ» [146, էջ 92]:

Այդ վարկածը ստուգելու համար Վ.Ի. Պանովի կողմից ձեռնարկվում են մի շարք փորձեր, որում մասնակցում էին 6 փորձարկվողներ: Փորձի ընթացքում, հետազոտվողներին ցուցադրում էին շարժման մեջ գտնվող (տարբեր արագություններով) բազմանկյուն պատկերներ, որոնք (պատկերները) փորձարկվողները պետք է նկարագրեին (ավելի մանրամասն տես՝ Принципы порождающего процесса восприятия. էջ 79-103):

Ընդհանրացնելով ասենք, որ հետազոտությունների արդյունքները դրական արդյունք արձանագրեցին և ապացուցեցին հետևյալ վարկածը. տեսողական ընկալման և շարժման հիմքում ընկած են ձևաստեղծ գործընթացները: Ինչպես նաև հաստատվեց այն ենթադրությունը, որ տեսողական ընկալման գործընթացում օբյեկտի

շարժման արագությունը պայմանավորված է ձևաստեղծ գործընթացի անավարտության աստիճանով [146, էջ 101]:

Վ.Ի. Պանովը 1983թ. պաշտպանեց «Взаимосвязь скорости и формы движущегося объекта в непосредственно-чувственном восприятии» («Անմիջական-զգայական ընկալումում շարժվող օբյեկտի արագության և ձևի փոխադարձ կապը») վերնագրով թեկնածուական ատենախոսությունը, որում հետազոտվում էր անմիջական ընկալման ժամանակ շարժվող օբյեկտի արագության և դրա ձևի միջև գոյություն ունեցող հնարավոր փոխադարձ կապը [143, էջ 3]: Այն կարելի է համարել վերը բերված աշխատանքի բազմակողմանի և ավելի հիմնավորված հետազոտություն: Վ.Ի. Պանովի աշխատանքներին ավելի մանրամասն մենք կանդրադառնանք աշխատանքի վերջին գլխում:

Օբյեկտի շարժման ընկալման հետ կապված նմանատիպ հետազոտություններ են կատարվել Ա.Ն. Անդրեևի կողմից: Այն ուղղված էր դեպի խորություն շարժվող օբյեկտի ընկալման խնդրի մեկնաբանմանը: Համարելով, որ այս խնդրում ավանդական մոտեցումները անարդյունավետ են, նա փորձում էր այն մեկնաբանել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության շրջանակներից ելնելով: Նա ենթադրում էր, որ դեպի խորություն շարժվող օբյեկտի անմիջական-զգայական ընկալման հիմքում ընկած է այդ օբյեկտի մեծության առաջացման գործընթացի անավարտությունը [38, էջ 62]:

Այդ ենթադրությունը ապացուցելու համար Ա.Ն. Անդրևը կատարում է մի շարք փորձեր, որոնք մասնավորապես ուղղված էին անշարժ օբյեկտի ժամանակային և տարածական պայմանների բացահայտմանը ու այդ պայմանների օգնությամբ դեպի խորություն շարժվող օբյեկտի ընկալման հիմքում ընկած գործոնների բացահայտմանը (ավելին տես՝ Принципы порождающего процесса восприятия. էջ 104-115):

Ա.Ն. Անդրեևի հետազոտությունները տալիս են սպասված արդյունքը և իր ենթադրությունները, մասնավորապես, որ դեպի խորություն շարժվող օբյեկտի անմիջական-զգայական ընկալումը առաջանում է այն ժամանակ, երբ տվյալ օբյեկտի մեծության առաջացման գործընթացը դեռևս ավարտված չէ, համարվում են ապացուցված [39]:

Ընկալման մի այլ՝ շոշափման ոլորտին էր նվիրված Ն.Լ. Մորինայի հետազոտությունները: Մանրակրկիտ ուսումնասիրելով այդ խնդրին վերաբերող գիտության պատմության մեջ նկարագրված հիմնական տեսակետները (Դեմոկրիտի և Արիստոտելի աշխատանքներից սկսած մինչև 20-րդ դարի վերջերը)՝ առանձին տեղ հատկացնելով խորհրդային ժամանակաշրջանի հոգեբանների մոտեցումներին [119, էջ 3-7], եկավ այն համոզման, որ շոշափմանը վերաբերող հետազոտությունները, ինչպես և տեսողական ընկալման ավանդական հետազոտությունները, կառուցվել են հոգեկան արտացոլման գործընթացի արդյունքում առաջացած արգասիքների (հատկությունների) հիմքի վրա [122, էջ 116]:

Ինչպես և տեսողական ընկալման ժամանակ, այս դեպքում ևս, շոշափման ակտը նրա կողմից դիտարկվում էր իբրև մի գործընթաց, որում տեղի են ունենում անմիջական-զգայական շոշափման զգացումի տեսքով, օբյեկտի ձևի, մեծության, ֆակտուրայի, կազմության (կոնսիստենցիայի) և այլնի առաջացում: Վերոնշյալների առաջացման համար, ինչպես նշում է Ն.Լ. Մորինան, անհրաժեշտ էր, որ արտացոլման համակարգը ունենա կառուցվածքա-գործընթացային անիզոտրոպ կազմություն:

Այս ենթադրությունը ստուգելու համար նա փորձում է խախտել, սահմանափակել մարդու արտացոլման համակարգի (անատոմիական և ֆիզիոլոգիական) անիզոտրոպությունը և գործունեությունը, մասնավորապես՝ ձեռքի կառուցվածքի անիզոտրոպ կազմությունը, որի ժամանակ (խախտման), համաձայն նրա, պետք է տեղի ունենա շոշափման ընկալում առաջացնող (ստեղծող) գործընթացի հնարավորությունների սահմանափակում [118, էջ 123-130]:

Նա առանձնացնում էր դաստակի անատոմիա-ֆիզիոլոգիական կազմության անիզոտրոպ հետևյալ տեսակները. «Ձեռքի մատների և ֆալանգների մկանային-ուժային բնութագրերը, դրանց տարբեր երկարությունները և միմյանց նկատմամբ տարածական դասավորվածությունը, շոշափողական զգացողությունները, ինչպես նաև տարածա-ժամանակային անիզոտրոպությունը» [122, էջ 122]:

Իր հետազոտություններում նա խախտում (մասամբ «անջատում է») է հենց այդ անիզոտրոպ տեսակները [121, էջ 170-201] և արդյունքում արձանագրում, որ ձեռքի

բնական անիզոտրոպության խախտումը կամ սահմանափակումը բերում է անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման դժվարեցման կամ անհնարինության, ինչն էլ իր հերթին դառնում է օբյեկտների տարածական ծավալային հատկությունների արտացոլման սահմանափակումների և խախտումների առիթ [122, էջ 135]:

Շոշափման ընկալման, մասնավորապես՝ օբյեկտի տարածական ցուցանիշների ընկալման գործընթացին էր նվիրված Տ.Ս. Պոգորելցևայի հետազոտությունները: Նա գտնում էր, որ շոշափման միջոցով օբյեկտների տարածական ձգվածության անմիջական-զգայական ընկալումը ապահովվում է մարդու ձեռքի կառուցվածքա-գործընթացային անիզոտրոպ համակարգի շնորհիվ [151, էջ 2, 3]:

Այդ վարկածը ստուգելու համար Տ.Ս. Պոգորելցևան կատարում է նմանատիպ փորձեր՝ ինչպիսին, որ արել էր նախորդ հետազոտողը [150, էջ 148-153] և համոզվում, որ օբյեկտի տարածական ցուցանիշները առաջանում (ծնվում) են շոշափման ընկալման գործընթացի ժամանակ կառուցվածքա-գործընթացային անիզոտրոպ սկզբունքների ստեղծման շնորհիվ:

Հաջորդ հետազոտությունը վերաբերում է լսողական ընկալման ոլորտին: Լսողություն երևույթը և դրա մեխանիզմները ուսումնասիրվում են տարբեր գիտությունների կողմից. բժշկություն, կենսաբանություն, էլեկտրոակուստիկա, կիբեռնետիկա, հոգեբանություն և այլն: Սակայն, ինչպես նշում է իր թեկնածուական ատենախոսությունում Ա.Մ. Զալցմանը, մինչ այժմ, լսողական ընկալման այնպիսի կարևոր հատկություն, ինչպիսին է բազմաֆունկցիոնալությունը (բազմաթիվ ձայնային ֆենոմենների, երևույթների ապահովման հատկությունը և դրանց նուրբ անցումները մեկը մյուսով) մնում է հանելուկային և չի ենթարկվում մոդելավորման [74 էջ 6,7]:

Չնայած այն բանին, որ լսողական ընկալման գործընթացը ուսումնասիրվել է վաղ ժամանակներից սկսած, մինչ այժմ չի հետազոտվել այն մեխանիզմները, որոնց միջոցով իրականանում է լսողական ընկալման բազմաֆունկցիոնալությունը: Դրա պատճառը, համաձայն Ա.Մ. Զալցմանի, հետազոտման ֆիզիկալիստական մոտեցումն է (физикалистический подход), որի ժամանակ հետազոտությունները կատարվում են արտացոլման արգասիքներից (հատկություններից) ելնելով [75, էջ 53-60]:

Համաhունչ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությանը, նա լսողական ընկալման գործընթացը համարում էր անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման արդյունքում իրականացվող գործընթաց: Սակայն, ինչպես նշում է նա, ընկալման ամեն մի մոդալականության բնորոշ է այդ սկզբունքի (անիզոտրոպ հարաբերությունների ստեղծում) իրացման իր եղանակները, ինչը համապատասխանում է տվյալ արտացոլման համակարգի կառուցվածքին և նրա հատկություններին (տեսողական, լսողական, համի, և այլն) [76, էջ 120-124]:

Լսողական ընկալման վերաբերյալ Ա.Մ. Զալցմանի հետազոտությունները ցույց են տալիս, որ ինչպես տեսողական ընկալման ժամանակ (տես այս աշխատանքի երկրորդ ենթագլուխը), այնպես էլ այս դեպքում, գործում է չֆիքսված ձայնի թուլացման էֆեկտը: Այն իրականանում է ընկալող համակարգի անիզոտրոպ կառուցվածքի շնորհիվ: Լսողական համակարգում նման օրգանական կառուցվածքներ են համարվում արտաքին ականջը, ականջի խխունջը և ականջի անցքերը, որոնց միջոցով տեղի է ունենում ձայնի տարածական-ակուստիկ ոչ համասեռ ընկալումը (ավելի մանրամասն տես՝ «Принципы порождающего процесса восприятия» էջ 156-171):

Օբյեկտի ախրոմատիկ գույնի ընկալմանն էր նվիրված Հ.Ա. Ադամյանի և Ի.Լ. Ռուդենկոյի աշխատանքը. «Принцип образования отношений в процессах восприятия ахроматического цвета объектов» («Օբյեկտների ախրոմատիկ գույնի ընկալման գործընթացի ժամանակ հարաբերությունների ստեղծման սկզբունքը») [23]: Այդ աշխատանքում, ի տարբերություն ավանդական մոտեցումների (ինչի ժամանակ հաշվի չէին առնվում հետազոտողների համապատասխան կողմնորոշումները), որի ժամանակ հետազոտողների կողմից իբրև ելակետային նախադրյալներ օգտագործվում էին ախրոմատիկ գույնի վերացական-տրամաբանական հասկացությունը, ինչը հիմնված է լուսավորվածության և պայծառության միջև վերացական-մտային հարաբերությունների վրա, հետազոտությունը չէր հիմնվում արտացոլման արգասիքների վրա:

Այդ ուսումնասիրության ժամանակ, ինչպես նշում է Հ.Ա. Ադամյանը, առաջադրանք է դրվում հետազոտել օբյեկտների ախրոմատիկ գույնի առաջացման հնարավորությունը, երբ անմիջական-զգայական արտացոլման գործընթացում գույնը

համաներկայացված է լուսավորվածության, պայծառության, հեռավորության, մեծության և օբյեկտների այլ հատկությունների և հարաբերությունների հետ [23, էջ 125-130]:

Նման պատկերացումներից ելնելով Հ.Ա. Ադամյանը և Ի.Լ. Ռուդենկոն առաջ են քաշում հետևյալ վարկածը. անիզոտրոպ հարաբերությունների առաջացման սկզբունքը, որպես գույնի առաջացման անհրաժեշտ պայման, կարող է իրացվել տեսողական համակարգի տարածական-ժամանակային անիզոտրոպության հիմքի վրա (մասնավորապես, լուսա-զգայական անիզոտրոպ դիսկրետ տարրերի և աչքի տարբեր բաժինների ընդունիչային (ռեցեպտորային) դաշտերի միջոցով), ավելի կոնկրետ՝ ցանցաթաղանթի կենտրոնի և ծայրամասերի (պերիֆերիա) միջոցով [24, էջ 191, 192]:

Այս վարկածը ստուգելու համար ձեռնարկվում են մի շարք փորձեր. 1) տեսադաշտի ծայրամասի սահմանափակում, 2) տեսադաշտի կենտրոնի սահմանափակում (ցանցաթաղանթի կենտրոնի և ծայրամասի միջև հարաբերությունների ստեղծման հնարավորության խախտում), 3) տեսադաշտի կենտրոնի մասնակի սահմանափակում (շրջանաձև սահմանափակում, որի ժամանակ լուսային հոսքը ամբողջությամբ չի սահմանափակվում), ինչի արդյունքում պարզվում է.

1. Սև և սպիտակ գույների անմիջական-զգայական ընկալումը չի որոշվում միայն ցանցաթաղանթի վրա ընկնող լույսի պայծառության ֆիզիկական ցուցանիշներով.

2. Օբյեկտի ախրոմատիկ գույնի զգացումի առաջացման հիքում ընկած է աչքի ցանցաթաղանթի կենտրոնի և ծայրամասի (պերիֆերիա) միջև անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման հնարավորությունը [24, էջ 196]:

Ինչպես տեսնում ենք, ախրոմատիկ գույնի ընկալման ժամանակ անհրաժեշտ պայման է հանդիսանում անիզոտրոպ հարաբերությունների ստեղծումը, ինչն իր դրսևորումն է գտել մարդու և կենդանիների ֆիզիոլոգիական և անատոմիական համակարգում:

Հաջորդ հետազոտությունը վերաբերում է հասկացությունները յուրացնելու ժամանակ ընկալման առանձնահատկություններին: Այս յուրօրինակ խնդրով զբաղվում էր Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հետևորդ Ա.Ա. Քանանյանը:

Համաձայն նրա, հասկացությունների յուրացման ժամանակ, կարևոր դերակատարությունը ընկած է ընկալման առանձնահատկությունների վրա: Սակայն, այդ խնդրի լուծման ժամանակ, ընկալման գործընթացային օրինաչափությունների վրա, բավարար ուշադրություն չի դարձվում:

Ա.Ա. Քանանյանը, վերոնշյալ խնդրի վերաբերյալ ավանդական մոտեցումները պայմանականորեն բաժանում էր երկու մասի. 1) հասկացությունների յուրացումը հետազոտվում է առանց հաշվի առնելու ընկալման յուրահատկությունները և, 2) հասկացությունների յուրացումը հետազոտելու ժամանակ պատկերը ուսումնասիրվում է իբրև հասկացությունների զգայական աղբյուր [171, էջ 100, 101]:

Առաջին մոտեցման մեջ, հասկացությունների յուրացման ուսումնասիրությունը դիտարկվում է որպես բացառապես մտածողական, օբյեկտի և դրա հատկանիշների միջնորդավորված գործընթաց: Իսկ երկրորդ ուղղությունում, հատուկ ուշադրություն է հատկացվում պատկերի ձևավորմանը և դրա ազդեցությանը հասկացությունների յուրացման գործում: Այս երկրորդ մոտեցման մեջ, ինչպես նշում է նա, ընկալման գործընթացը բացատրելիս, իբրև ելակետային տվյալներ վերցվում են օբյեկտի հատկանիշները և հատկությունները [172, էջ 3-7]:

Նրա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մոտեցումում, հասկացությունների յուրացման գործընթացի հետազոտումը տեղի է ունենում օբյեկտով, դրա հատկություններով և բնութագրերով միջնորդավորված: «Այդ ուսումնասիրություններում, ընկալման հետազոտումը իրականացվում է օբյեկտի արդեն ձևավորված և հասկացություններում ամրացված բնութագրերի հիման վրա, որը գիտակցության մեջ ներկայացված է ինչպես առանձին, այնպես էլ պատրաստի պատկերի ձևով» [173, էջ 201]:

Այսպիսով, Ա.Ա. Քանանյանը համարելով, որ հասկացությունների ձևավորման ժամանակ ընկալման առանձնահատկությունների հետազոտումը կատարվում է ընկալման արդյունքների հիման վրա (ինչը թույլ չի տալիս բացահայտել անմիջական-զգայական ընկալման օրինաչափությունները, որոնց միջոցով իրականանում է օբյեկտի արտացոլման հնարավորությունը), առաջարկում է հետազոտման այլ՝ ոչ արգասիքային

մոտեցում, որում իբրև ելակետային տվյալներ հանդես չեն գա ընկալման արդյունքում առաջացած հատկությունները և հատկանիշները:

Ա.Ա. Քանանյանը իր առջև խնդիր է դնում տեսականորեն հիմնավորել և փորձերով ապացուցել հասկացությունների յուրացման գործընթացի մեջ անմիջական-զգայական ընկալման, մասնավորապես՝ օբյեկտների տարբեր հատկությունների և հարաբերությունների համագոյության սկզբունքի դերը: Միաժամանակ ենթադրելով, որ «Ուսուցման սկզբնական փուլում, համագոյության սկզբունքի դրսևորումները խոչընդոտում են հասկացությունների միանշանակ յուրացմանը, իսկ հետագայում, դրանք արդեն նպաստում են հասկացությունների բազմաֆունկցիոնալ ընտրության գործին» [173, էջ 204]:

Այս ենթադրությունները հիմնավորելու համար, նա կազմակերպում է մի շարք հետազոտություններ (ավելի մանրամասն տես՝ Принципы порождающего процесса восприятия. էջ՝ 198-212), որոնք տալիս են դրական արդյունք: Այդ բացահայտումները Ա.Ա. Քանանյանը առաջարկում էր օգտագործել ուսուցման գործընթացում, մասնավորապես՝ դասագրքեր և ուղեցույցեր կազմելու ժամանակ [173, էջ 211]:

Հաջորդ և վերջին հետազոտությունը վերաբերում է խոսքի առաջացման գործընթացին: Այդ կարևոր խնդրի ուսումնասիրումը իր վրա էր վերցրել Գ.Վ. Շուկովան: Այդ ուղղությամբ, նրա կողմից, փորձարարական հետազոտումներ չեն իրականացվել և փորձերի միջոցով չեն ապացուցվել: Սակայն, ինչպես կտեսնենք, աշխատանքը շարադրված է գիտական տրամաբանությանը համապատասխան և իրենում ներառում է այդ խնդրի շուրջ (խոսքի գործընթացի) նոր հարցադրումներ և տեսական վերլուծություններ:

Գ.Վ. Շուկովան գտնում էր, որ խոսքի գործընթացները ուսումնասիրելիս հետազոտողները այն կատարում էին ֆիզիկալիստական մակարդակի վրա և դրա հետևանքով, նրանցից թաքնված էին մնում խոսքի գործընթացների առաջացման մեխանիզմները և օրինաչափությունները:

Ավանդական հոգեբանությունում խոսքի հետազոտման հիմնական շեշտը դրվում է դրա մեխանիզմները գտնելու վրա՝ թե ինչպես է մարդը խոսում: Այն հասկանալու համար հետազոտողները փորձում են վերլուծել արդեն արտացոլվածը՝

ինչ-որ գործընթացի արդյունքում առաջացած արգասիքները՝ խոսքը և, հետևաբար, հետազոտությունները իրականացվում են արգասիքային մակարդակի վրա: Այլ կերպ ասած. «Խոսքի հոգեբանական գործընթացների հետազոտությունների արգասիքայնությունը կայանում է նրանում, որ խոսքային գործընթացի վերլուծության ելքային կետը հանդիսանում է լինգվիստիկական սխեմաները և կառուցվածքները, որոնք ստեղծվել են գիտության կողմից՝ խոսքային ավարտված արգասիքների հիման վրա, ինչի դեպքում, այդ լինգվիստիկական սխեմաները տալիս են միայն խոսքի ֆենոմենոլոգիական կառուցվածքի նկարագրությունը, թույլ տալով վերացական-տրամաբանական վերլուծության ենթարկել արդեն պատրաստի խոսքի ձևերի օպերացիոն փոխհարաբերությունները, սակայն, թույլ չեն տալիս հետազոտել խոսքի այդ ձևերի առաջացումը» [182, էջ 215]:

Այս կերպ, ավանդական հոգեբանությունը խոսքի հոգեբանական գործընթացը հետազոտելիս շարժվում էր հոգեբանական գործառույթի բնական զարգացմանը հակառակ՝ արդեն արտացոլվածից, օբյեկտների հատկություններից, որոնք արդեն հասկացություններում ամրացված են: Սակայն, ինչպես գիտենք, արգասիքներում (տվյալ դեպքում՝ խոսքում) գործընթացը արդեն ավարտված է և, այդուհանդերձ, նման կերպ շարժվելով, մենք չենք կարող գտնել խոսքը կամ այլ խոսքային արդյունքները ստեղծող մեխանիզմները և սկզբունքները:

Այդ մեխանիզմները և սկզբունքները գտնելու համար Գ.Վ. Շուկովան առաջարկում էր կիրառել ոչ արգասիքային, աֆիզիկալ մեթոդաբանությունը, ինչը թույլ կտար խոսքի հոգեբանական գործընթացի հետազոտությունները իրականացնել չօգտագործել հենց այդ գործընթացի ֆենոմենները (խոսքը): «Մենք ենթադրում ենք, որ խոսքի առաջացման հիմքում ընկած են այն նույն հիմնավոր օրինաչափությունները, որոնք առկա են, օրինակ, տեսողության կամ լսողության ժամանակ. խնդիրը կայանում է միայն նրանում, որպեսզի բացահայտվեն այդ «խոսքային» յուրահատկությունները» [182, էջ 222]:

Խոսքի հոգեբանական գործընթացի վերաբերյալ նրա հետազոտությունները այսքանով սահմանափակվեցին՝ թողնելով բազմաթիվ հարցեր և միաժամանակ տալով

տեսական նոր լուծումներ, որոնք դեռևս սպասում են իրենց փորձարարական հաստատումներին:

Հետագայում Գ.Վ. Շուկովան, նույն հայեցակարգի շրջանակներում (ընկալման տրանսցեդենտալ հոգեբանության), ուսումնասիրեց տարածական երկարության տեսողական ընկալման խնդիրը և 2000թ. պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն. «Зрительное восприятие пространственной протяженности» («Տարածության ձգվածության տեսողական ընկալումը») [181]: Սակայն, այդ աշխատանքի շուրջ մենք կանգ չենք առնի, քանի որ տեսողական ընկալման գործընթացի խնդրին բավականաչափ անդրադարձել ենք:

Այս փորձարարական հետազոտությունները, որոնք կազմակերպվել էին ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության տեսական վերլուծություններից ելնելով, հիմնավորված համարեցին հոգեկան արտացոլման գործընթացի հիմքում ընկած մի շարք սկզբունքների գոյության փաստը (անհզոտրոպության կառուցվածքա-գործընթացային սկզբունքը, համաներկայացվածության սկզբունքը, անիզոտրոպ հարաբերությունների կազմավորման սկզբունքը և այլն), առանց որոնց, անհնարին կլիներ, ընկալման տարբեր մոդալականություններում, արտացոլման գործընթացի իրականացման հնարավորությունը: Իհարկե, այս հետազոտություններն ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է շարունակել ուսումնասիրությունները և ձեռնարկել նոր, բազմակողմանի փորձեր: Ասվածի ապացույց կարող ենք համարել 2010թ. – ին, Ա.Ի. Միրաքյանի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը, որում քիչ չեն այդ ուղղությամբ կատարված աշխատանքները [27]:

Այսպիսով, հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու համար Ա.Ի. Միրաքյանը առաջարկեց առկա մեթոդաբանություններից տարբերվող մոտեցում, ինչն իր կողմից անվանվեց ոչ արգասիքային, աֆիզիկալ, ի տարբերություն ֆիզիկալիստական մոտեցման, որտեղ ընկալման գործընթացը ուսումնասիրվում էր արգասիքային, ֆիզիկալ մակարդակի վրա (ելակետային տվյալներ էին վերցվում հետազոտվող երևույթի, օբյեկտի արտացոլված հատկությունները): Այդ մոտեցումը (ոչ արգասիքային) մշակելիս գիտնականը ինչպիսի ելակետային տվյալների վերցրեց և

ինչպիսի մեթոդաբանական հիմքերից օգտվեց կներկայացնենք հաջորդ՝ եզրափակիչ ենթագլխում:

### 1.5. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանական հիմքերը

Հոգեկան արտացոլման գործընթացը ուսումնասիրելիս, հետազոտողների կողմից արգասիքային մոտեցում ցուցաբերելու հիմնական պատճառը (երբ ելակետային տվյալներ էին ընտրվում ուսումնասիրվող երևույթի, առարկայի հատկությունները), ինչպես նշում է Ա.Ի. Միրաքյանը, իմացաբանական պարադիգմայի մեթոդաբանության սահմանափակումներն էին, որից օգտվում էին ընկալման ավանդական տեսությունները (այդ մասին ավելի մանրամասն կխոսենք հաջորդ գլխում): Այդ պարադիգմայի շրջանակներում հետազոտությունները կատարվում էին ֆիզիկալիստական (физикалистический) մտածելակերպի միջոցով, ինչը, «...ոչ միայն չէր օգնում բացահայտել հոգեկան արտացոլման սկզբունքները և օրինաչափությունները, այլ նաև ընդհակառակը, դրանք թաքցնում էր հետազոտողներից» [102, էջ 17]:

Այդ ֆիզիկալիստական մոտեցումը հաղթահարելու համար Ա.Ի. Միրաքյանը ձեռնամուխ է լինում ոչ ֆիզիկալիստական՝ աֆիզիկալ մոտեցում մշակելու գործին, ինչն իրականացնելու համար անհրաժեշտ էր հիմնվել այս խնդրին (հոգեկան արտացոլման) համարժեք փիլիսոփայա-մեթոդաբանական ելակետային հիմքերի վրա, որոնք թույլ կտային հաղթահարել ժամանակակից արգասիքային-ֆենոմենոլոգիական ֆիզիկալիստական մոտեցման ընկալման խնդրի սահմանափակումները:

Այդպիսի ելակետային հիմքեր ձևակերպելիս նա առաջարկում է հոգեկանի ուսումնասիրությունը սկսել «Ոչինչ» («Ничто») հասկացության մշակումից, որը պետք է արտահայտեր ինչպես ցանկացած ներկա գտնվողի (присутствующего) բացակայության իրականությունն, այնպես էլ բացակայողի իրականությունը (реальность отсутствующего) ցանկացած ներկա գտնվողի մեջ [108, էջ 10]:

Բացակայության իրականության (реальность отсутствия) հասկացման հնարավորությունը և նրա անցումը (կամ արթնացումը) ներկա գտնվողի

իրականություն, համաձայն Ա.Ի. Միրաքյանի, մարդկանց տրված չէ, որովհետև մարդն և նրա մտածողությունը (իմացությունը)՝ որպես արդեն գոյություն ունեցող, պատկանում են ներկա գտնվողի իրականությանը (реальности присутствующего), այդ իսկ պատճառով, նրանց գոյությունը բացակայողի իրականության մեջ անհնար է, քանի որ բացակայողի իրականության մեջ ցանկացած ներկա գտնվողը բացակայում է:

Այդպիսի մեկնաբանությունը նրան թույլ է տալիս հանգել այն բանին, որ մարդը և նրա մտածողությունը, որպես ներկա գտնվողի իրականությանը պատկանողներ, այդ իրականությունը ճանաչելու փորձ անելիս, գործ ունեն միայն ներկա գտնվողի ձևերի հետ: Իսկ ներկա գտնվողի իրականության ձևերը, մարդու գիտակցության մեջ հանդես են գալիս որպես իր կողմից արդեն գիտակցված աշխարհի մատերիականության և հասկացության իդեալականության ձևեր [111, էջ 80-84]:

«Մենք չգիտենք և չենք կարող իմանալ, թե ինչպես Աստված ստեղծեց մատերիան՝ ներկա գտնվողի գոյությունը, բայց այն, թե ինչպես է մատերիայից առաջացել հոգեկանը, մենք աստիճանաբար կարող ենք հասկանալ, քանի որ մատերիան և հոգեկանը գտնվում են ներկա գտնվողի մեջ, իսկ Աստված և նրա՝ մատերիայի ստեղծման հնարավոր օրենքները գտնվում են բացակայողի մեջ» [113, էջ 68]:

Ա.Ի. Միրաքյանը գտնում էր, որ մարդկային իմացությունը գտնվում է ներկա գտնվողի իրականության մեջ (реальности присутствующего), որի սահմաններից դուրս գալ չի կարող, իսկ բացակայողի իրականության մասին մարդը միայն կարող է գուշակել այն հետքերից, որոնք նա դրսևորում է ներկա գտնվողի իրականությունում, ինչպիսիք են օրինակ՝ ինքնապահպանման ձգտումը և կենդանի ու անկենդան մատերիայի կառուցվածքավորումը, ձգտումը նպատակին և ինքնաճանաչմանը, ձգողության ուժի ու սիրո դրսևորումները և այլն: Դրանց առաջացման գործընթացների մասին մարդն ոչին իմանալ չի կարող, քանի որ այդ դրսևորումները նրան տրվում են, որպես հավերժ բացակայողի (отсутствующего), մարդու համար անհայտ ինչ-որ բանի հետքեր: Բայց դրա հետ մեկտեղ մարդը կարող է խոսել դիսկրետ-կառուցվածքային քայքայման ձգտման և մատերիայի այդ դիսկրետ ձևերի ինքնապահպանման իրականության մասին: «Հնարավոր է, որ դրանք բացակայողի օրինաչափությունների

դրսևորումների հետևանքներն են և իրենցում ներառում են բնության անկենդան ու կենդանի ձևերի և դրանց գոյության սկզբունքների ու օրինաչափությունների առաջացման հնարավորությունը» [113, էջ 68]:

Կենդանի ձևերը, համաձայն նրա, բջջից սկսած, բնությունից տրված նպատակի իրականցման համար, ունեն թույլ էներգետիկ կառուցվածք, ինչը հանդես է գալիս սեփական ձևի ինքնապահպանման տեսքով: Այդ պատճառով, գոյություն ունեցող տենդենցի միջոցով (սեփական ձևի ինքնապահպանման ձգտում) անբաժան, ամբողջական դեպի «Ոչինչ» (Ничто) ձևափոխվելու դեպքում, կենդանի օրգանիզմը ըստ անհրաժեշտության ձեռք է բերում նոր հնարավորություն՝ շրջակա միջավայրի վտանգավոր ներգործության մասին նախազգուշացնող զգայության հնարավորություն: Այդուհանդերձ, կենդանի օրգանիզմը ձեռք է բերում այնպիսի համակարգի հատկություններ, ինչն օժտված է ներգործությունը փոխանցող և ֆիքսող բազմազան միջմասնիկային (межэлементное) կապերով: Սա այն կետն է, որտեղից բխում է կենդանության ձևերի ինքնապահպանման իրականացման հնարավորության համար նյութական աշխարհի ընդերքում առաջացող երևույթների արտացոլման տեղը և գործառույթները: Նրա համոզմամբ, այստեղ է նաև թաքնված արտացոլման՝ որպես կենդանի համակարգերի ձևագոյացման գործընթաց էությունը:

Այս ենթադրություններից ելնելով, Ա.Ի. Միրաքյանը առաջարկում է հոգեկանն ուսումնասիրելիս չելնել գիտակցության պատրաստի տվյալներից՝ հոգեկան արտացոլման արգասիքներից, որոնք սահմանափակված են ներկա գտնվածով: Նա համարում էր, որ պետք չէ դրանք հակադրել Աստծո կողմից ստեղծված բնության օրինաչափություններին, այլ անհրաժեշտ է գիտակցության տվյալների առաջացման հնարավորությունը փնտրել հենց բնության օրինաչափություններում:

Ի տարբերություն «Ոչինչի», որը հանդես է գալիս տարածաժամանակային միատարրության-հոմոգենության ձևով (ինչպես ընդհանուրում տարբերության օբյեկտիվ բացակայությունը), «Ինչ-որ բանը» (Нечто), համաձայն Ա.Ի. Միրաքյանի, պետք է ընդունել իբրև ընդհանուրում տարբերության օբյեկտիվ ներկայություն: Այսպիսով, հոմոգենությունը ամբողջության օբյեկտիվ հնարավորությունն է, իսկ անհզոտրոպությունը՝ ամբողջությունում տարբերության ձևը, ամբողջությունում

գոյություն ունեցողի ձևագոյացման օբյեկտիվ հնարավորությունը և դիսկրետության չափը, ինչն առաջացնում է մատերիայի օբյեկտիվ անընդհատությանը որպես միակ հակադիր: Ինչպես տեսնում ենք, անիզոտրոպությունը նրա կողմից դիտարկվում էր ոչ միայն դիսկրետ մասնիկներից կազմված համակարգերի տարածական բնութագիր, այլ ավելի ընդհանուր մի բան, որն իր մեջ օբյեկտիվորեն ներառում է մատերիայի յուրահատկության հարաբերությունը և որում ներդրված է ինքնազարգացման սկիզբը, նրա նոր ձևերի կազմավորումը: Այդ յուրահատկության միջոցով, որը հանդիսանում է հարաբերությունների և մասնավորապես՝ որպես փոխհարաբերությունների առաջացման հիմք, կարող է հանդիսանալ նաև հոգեկան արտացոլման ինքնաբերական (սպոնտան) ձևավորման գլխավոր պայմանը:

Անիզոտրոպությունը (այսինքն տարբերությունը ընդհանուրում) Ա.Ի. Միրաքյանի կողմից հասկացվում էր որպես բնություն, ինչը փիլիսոփայության պատմության մեջ հաճախ մտնում էր մատերիա հասկացության մեջ: Այդուհանդերձ, նա գտնում էր, որ «Ընկալող օրգանիզմը բնության հնարավոր անիզոտրոպ ձևերից մեկն է, որը հնարավորություն ունի առաջացնելու իր տարածա-ժամանակային ձևերը» [113, էջ 71]:

Մարդը, համաձայն նրա, հանդես է գալիս որպես դիսկրետ օրգանական համակարգ, որպես ընդհանուրում տարբերության ներկայություն, իսկ նրա ընկալումն ու մտածողությունը հնարավորություն ունեն արտացոլելու ընդհանուրում՝ միայն տարբերությունների ձևով: Այս կերպ, մարդը միայն ընդունակ է արտացոլելու ընդհանուրում անիզոտրոպ տարբերության ներկայությունը: Անիզոտրոպությունը, ինչպես նշում է նա, օբյեկտիվ գոյություն ունեցող մատերիայի յուրահատկություն է՝ ընդհանուրում նրա ձևի առաջացման հնարավորությունը և ընկալման հիմքը: Անիզոտրոպության միջոցով է պայմանավորված նաև, ոչ միայն մատերիայի ընդերքում տարբեր ձևերի առաջացման հնարավորությունը, այլև նրա ցանկացած գործընթացների հիմնական բնութագրերը:

Այսպիսին է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմքում ընկած փիլիսոփայա-մեթոդաբանական մոտեցումները, որում փորձ էր արվում նկարագրել մինչ արտացոլումը գոյություն ունեցող աշխարհի հնարավոր պատկերը: Օգտվելով աշխարհի այդպիսի պատկերից, Ա.Ի. Միրաքյանը առաջարկեց հոգեկան

արտացոլման գործընթացը մեկնաբանող ոչ արգասիքային, աֆիզիկալ մոտեցում, ինչի շնորհիվ հետազոտողին հնարավորություն ընձեռվեց այդ խնդիրը ուսումնասիրել ավելի խոր մակարդակի վրա, որի ժամանակ բացահայտվում էին ընկալման ստեղծող գործընթացի մեխանիզմները և օրինաչափությունները:

Ամփոփելով առաջին գլուխը, որում ուսումնասիրվեցին և վերլուծության ենթարկվեցին ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կազմավորման պատմությունը, ձևավորման նախադրյալները և այդ հայեցակարգի (ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության) առանձնահատկությունները, անհրաժեշտ ենք համարում առանձնացնել ներքոնշյալ հետևությունները.

1. Հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության մեջ Ա.Ի. Միրաքյանն ուներ իր ուրույն դերը, որն արտացոլվում է ընկալման խնդրի բացահայտման գործում ներդրած իր ավանդով:

2. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալներ են հանդիսացել հոգեկան արտացոլման գործընթացը ավանդական մոտեցումների միջոցով հետազոտելու սահմանափակումները, որոնց հիմնական պատճառը թաքնված էր ֆիզիկալիստական մտածելակերպի մեջ:

3. Հոգեբանության պատմության մեջ առաջին անգամ ցույց տրվեց, որ օբյեկտների տարածական չափերը ուսումնասիրելիս, հետազոտողները ցուցաբերում էին արգասիքային, ֆիզիկալ մոտեցում (իբրև ելակետային տվյալներ վերցվում էին օբյեկտի ուսումնասիրվող հատկությունները և հատկանիշները՝ երկարություն, լայնություն, խորություն և այլն), ինչը թույլ չէր տալիս բացահայտել ընկալման գործընթացի հիմնական սկզբունքները և օրինաչափությունները:

4. Հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու համար Ա.Ի. Միրաքյանը առաջարկեց նախորդներից տարբերվող (ոչ արգասիքային, աֆիզիկալ) նոր մոտեցում, ինչի շնորհիվ հնարավոր եղավ ցույց տալ ընկալման ստեղծող գործընթացի յուրահատկությունները և դրա հիմքում ընկած անհզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը:

Հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանելիս Ա.Ի. Միրաքյանի ներդրումը վեր հանելու, ընդգծելու, առավել ամբողջական և ամփոփիչ ներկայացնելու

համար անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել, համեմատական վերլուծություններ անցկացնել ընկալման առկա հիմնական մոտեցումների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության միջև, որի ժամանակ կբացահայտվեն և կառանձնացվեն ընկալման գոյություն ունեցող մոտեցումների և հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի տարբերությունները: Այդ խնդիրը իրագործելիս մենք կփորձենք նաև ցույց տալ այն սահմանափակումները, որոնք արգասիքային մոտեցում ցուցաբերելու հետևանքով առկա են ընկալման հիմնական մոտեցումներում:

# ԳԼՈՒԽ 2. ԱՐԳԱՍԻՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախորդ գլխում նպատակ հետապնդելով ամբողջական և համապարփակ կերպով ներկայացնել ու վերլուծել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները, առանձնահատկությունները և ձևավորումը, ինչը վեր հանեց և ընդգծեց հայ հոգեբանական մտքի զարգացման գործում Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը, այս գլխում ցանկանում ենք ցույց տալ ընկալման առկա մոտեցումներից հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի էական տարբերությունները, որի շնորհիվ կբացահայտվի և կընդգծվի հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում Ա.Ի. Միրաքյանի ներդրած ավանդը: Այդ խնդիրը իրագործելու համար կներկայացնենք ընկալման հիմնական տեսություններում արգասիքային մոտեցման դրսևորումները (երբ ելակետային տվյալներ են վերցվում հետազոտվող երևույթի, օբյեկտի արտացոլված հատկությունները) և համեմատական վերլուծություն կանցկացնենք ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հետ:

Աշխատանքի այս հատվածում ընկալման ավանդական տեսությունների ընտրությունը և հերթականությունը ընտրվել են այդ խնդրին նվիրված մի շարք աշխատությունների ուսումնասիրման ու վերլուծության արդյունքում [195], [95], [137], [54], [180], [55], [155], որը թույլ է տալիս մեզ այդ խնդիրը ներկայացնել առավել ամբողջական և ամփոփիչ տեսքով:

## 2.1. Օբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսություններ

Օբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսություններում հոգեկան արտացոլման գլխավոր դերակատարությունը պատկանում է զգայական օրգանների վրա ազդող օբյեկտներին: Այստեղ ընկալումը դիտարկվում է իբրև դրսից դետերմինացված գործընթաց: Ընկալաման օբյեկտային կողմնորոշում ունեցող հիմնական տեսություններից են. ***1) սփրուկփուրալիզմ, 2) գեշփալփ հոգեբանություն,***

*3) Ջ. Գիբսոնի էկոլոգիական հոգեբանություն և 4) ընկալման ինֆորմացիոն մոտեցում:*

Աշխատանքի այս հատվածը ավելի դյուրին և ամբողջական ներկայացնելու համար վերոնշյալ չորս տեսություններին կանդրադառնանք առանձին-առանձին, ինչը թույլ կտա ցույց տալ ոչ միայն նրանց օբյեկտային կողմնորոշում ցուցաբերելու միտումը, այլ նաև այդ տեսություններից ամեն մեկին բնորոշ առանձնահատկությունները:

1. *Արգասիքային մոտեցման առանձնահատկությունները ստրուկտուրալիզմում.*

19-րդ դարի վերջին, Վ. Վունդտը հետաքրքրվելով մարդու հոգեկանին վերաբերող մի շարք հիմնարար հարցերով և ցանկանալով հոգեկանի հետազոտման համար գտնել օբյեկտիվ մեթոդներ, 1879թ.-ին հիմնում է առաջին հոգեբանական փորձարարական լաբորատորիան և այդ ժամանակից ի վեր, հոգեբանությունը հռչակվում է իբրև առանձին գիտություն [213, էջ 11-18]: Այդ լաբորատորիայում, մի շարք հարցերի հետ մեկտեղ, ուսումնասիրվում էին նաև ընկալմանը վերաբերող խնդիրներ. ինչպես է մարդը ընկալում իրեն շրջապատող աշխարհը, ինքն իրեն և այլն:

Վ. Վունդտը իր հետազոտությունները իրականացնելիս օգտվում էր XIX-րդ դարում բնագիտությանը բնորոշ մեթոդաբանությունից, ինչը հայտնի էր ստրուկտուրալիզմ անվամբ: Ինչպես և բնագիտությունը, որոնց հիմնական խնդիրը կայանում էր նյութի (մատերիայի) հիմնական տարրերի հետազոտումը (ատոմներ, մոլեկուլներ), փորձարարական հոգեբանությունը ևս, համաձայն նրա, հոգեկան տարբեր գործընթացները հասկանալու համար, պետք է այն բաժանի տարրական մասնիկների և հետազոտի դրանք [210, էջ 14-18]:

Այս մոտեցումն իր զարգացումը գտավ Վ. Վունդտի աշակերտներից Է.Բ. Տիտչեների մոտ, ով հետևելով իր ուսուցչին, ընկալման գործընթացը հասկանալու համար, փորձում էր այն բաժանել իր իսկ բաղկացուցիչ մասերի միջև (տարրական զգացումների) և հետազոտել դրանք [174, էջ 31]: Որպես օրինակ դիտարկենք նկար 2-ում պատկերված «Ստրուկտուրալիստական» եռանկյունին [180, էջ 31].



Նկար – 2. «Ստրուկտուրալիստական» եռանկյունի [180, էջ 31]:

Համաձայն ստրուկտուրալիստների, կետերով կազմված գծում, յուրաքանչյուր կետը առաջացնում է մեկ տարրական զգացում, իսկ եռանկյունու ընկալումը պայմանավորված է դրանց (կետերի) գումարով: Հետևաբար, ստրուկտուրալիստները կարծում էին, որ նկարում պատկերված ամեն մի կետը առաջ է բերում մեկ տարրական զգացում, իսկ եռանկյունու ընկալումը պայմանավորված է այդ զգացումների գումարով: Վերոնշյալ մոտեցման ճշմարտացիությունը ստուգելու համար Է.Բ. Տիտչեները դիմում էր ինտրոսպեկցիայի (ինքնադիտարկման) մեթոդին, ինչը, համաձայն նրա, ենթադրում էր երկու պահ. «Երևույթի նկատմամբ ուշադրություն և այդ երևույթի գրանցում: Ուշադրությունը անհրաժեշտ է պահել հնարավորինս մաքսիմալ կենտրոնացված. գրանցումը պետք է լինի խիստ ճշգրիտ» [134, էջ 12]:

Այն, որ ստրուկտուրալիզմում կիրառվող մեթոդաբանության օգնությամբ հնարավոր չէ ճշգրիտ նկարագրել ընկալման գործընթացը, քննարկվել է տարբեր ուղղությունների կողմից, որոնց մենք կանդրադառնանք ներքևում: Այստեղ մենք ցանկանում ենք ցույց տալ նրանց կողմից արգասիքային մոտեցման դրսևորումները, այն է. ընկալման գործընթացը հետազոտելիս ստրուկտուրալիստները իբրև ելակետային տվյալներ վերցնում էին արդեն արտացոլվածը. օրինակ, եռանկյունու ընկալման դեպքում (վերևում նկարագրված), ստրուկտուրալիստները այն բաժանում էին իրեն կազմող կետերի միջև, որը, համաձայն ստրուկտուրալիստների, առաջ է բերում տարրական զգացում և փորձում էին եռանկյունու ընկալումը բացատրել դրանց հանրագումարի միջոցով: Սակայն, այդ կետերը, ինչպես և եռանկյունին, արդեն արտացոլման արգասիքներ (հատկանիշներ) էին: Դրանք (կետերը)՝ որպես այդպիսին,

առաջացել, ստեղծվել էին հոգեկան արտացոլման գործընթացի արդյունքում և հետևաբար, այդ արդյունքներում գործընթացը արդեն ավարտված էր: Նման մեթոդի կիրառման դեպքում (ինքնադիտարկելով արդեն արտացոլվածը) ստրուկտուրալիստները կարող էին բացահայտել, տվյալ դեպքում, այդ կետերի միջև հարաբերությունները, այլ ոչ թե հոգեկան արտացոլման գործընթացի սկզբունքները և օրինաչափությունները:

**2.** *Արգասիքային մոփեցման առանձնահափկությունները գեշփալփ հոգեբանությունում.*

Ընկալման գործընթացի վերաբերյալ ստրուկտուրալիստական մոտեցումներից այլ՝ մասամբ նաև հակադիր մոտեցում էին առաջարկում գեշտալտ հոգեբանները՝ կասկածի տակ դնելով նրանց հիմնական մոտեցումները [211, էջ 7, 8]: Այդ մոտեցման հիմնադիրներն են համարվում Մ. Վերտհեյմերը, Վ. Կյոլլերը և Կ. Կոֆֆկան (1910թ. առաջին կես):

Ընկալման գեշտալտ հոգեբանության հիմնական հասկացությունը գեշտալտն է (գերմ. Gestalt – ձև, կազմություն), ինչը նշանակում է ընկալվող պատկերների ամբողջականություն՝ իբրև գիտակցության հիմնական բովանդակություն, որը (ընկալվող պատկերը) չի կարող բացատրվել իրեն կազմող զգացումների պարզ հանրագումարով [188, էջ 14, 15]:

Հակառակ նախորդ ուղղության, այդտեղ (գեշտալտ հոգեբանությունում) գլխավոր խնդիրը հանդիսանում էր երևույթների ամբողջական, անբաժան ընկալման բացատրությունը, այլ ոչ թե դրա (ընկալման) մասերի բաժանումը: Վերտհեյմերը նշում էր, որ գեշտալտ հոգեբանությունը առաջացել է կոնկրետ հետազոտություններից, չնայած այն բանին, որ նրանք (գեշտալտ հոգեբանները) այն ժամանակ չէին կարող մանրակրկիտ հետազոտել իրենց հետաքրքրող ֆիզիոլոգիական գործընթացները [202, էջ 728, 729]:

Գեշտալտ հոգեբանության մոտեցումը պայմանավորված էր այդ ժամանակաշրջանի գիտական նոր հետազոտություններով և բացահայտումներով. համաձայն նրանց, ինչ-որ երևույթի էությունը հասկանալու համար միայն դրա մասերի վերլուծությունը (տվյալ երևույթի) և նկարագրությունը բավարար չէ, անհրաժեշտ է նաև

ուսումնասիրել դրա դաշտային հատկությունները՝ այն ուժերի փոխգործունեությունը, որոնք կազմում են այդ երևույթը: Այս կերպ, ընկալման ոլորտի գեշտալտ հոգեբանության հետազոտությունները ամբողջությամբ համընկնում էին տարբեր գիտություններում, մասնավորապես՝ ֆիզիկայում գործող մեթոդաբանության հետ (Մ. Ֆարադեյ, Ջ. Մաքսվել): Համաhունչ այս մեթոդաբանության Մ. Վերտհեյմերը գեշտալտ հոգեբանության հիմնական խնդիրը ձևակերպում էր հետևյալ կերպ. «Գոյություն ունեն կապեր, երբ ամբողջում տեղի ունեցող գործընթացը հնարավոր չի լինում հանել (բացատրել) տարրերի միջոցով, առանձին մասերի բաժանելով, այլ ընդհակառակը, այն, ինչ տեղի է ունենում ամբողջի մի մասում, որոշակիացվում է այդ ամբողջի կառուցվածքային օրենքներով: Գեշտալտ տեսությունը սա է՝ ոչ ավել և ոչ էլ պակաս» [58, էջ 5]:

Նկար 3. – ում պատկերված է «Գեշտալտյան» եռանկյունին: Այդտեղ երեք կետերը այնպես են միմյանց հետ կապված, որ ստեղծում են ձև (ֆիգուրա), ինչն ունի հատկություններ և որակներ, որոնք բացակայում են այդ պատկերի առանձին տարրերի մոտ:



նկ. 3. «Գեշտալտյան» եռանկյունի [180, էջ 32]:

Այս պարզ օրինակով գեշտալտ հոգեբանները փորձում էին ցույց տալ, որ մենք ձգտում ենք մեզ շրջապատող աշխարհը ընկալել ամբողջական, փոխկապակցված և իմաստավորված:

Գեշտալտ հոգեբանների հիմնական բացահայտումներից մեկը կարելի է համարել ձևի և ֆոնի (ֆիգուրա և ֆոն) ֆենոմենը, ինչը կայանում է նրանում, որ մեր ճանաչողական ֆենոմենալ դաշտը միշտ կառուցված է իբրև ձև և նրան շրջապատող ֆոն: Այդ ֆենոմենը պայմանավորված է ճանաչողական խմբերի օրենքներով և, որը ակնառու կերպով դրսևորվում է, երբ մենք դիտարկում ենք, այսպես ասած, երկիմաստ պատկերները:



Նկ. 4. Ֆոնի և ձևի ընկալման փոփոխումը կախված պատկերի ուրվագծից (կոնֆիգուրացիայից):

Սրանով գեշտալտ հոգեբանները ընդգծում էին այն փաստը, որ պատկերի մակերեսի լուսավորվածությունը, որն ընկնում է աչքի ցանցաթաղանթի վրա, չի փոխվում ժամանակի ընթացքում՝ այն հաստատուն է մնում, իսկ մեր ընկալման կերպը՝ ճանաչողական գեշտալտի կառուցումը փոխվում է՝ հաջորդաբար դառնալով մեկ ձև, մեկ ֆոն: Համապատասխան այդ փոփոխությունների փոփոխվում է նաև տեսողական պատկերի հատկությունները [207]:

Ինչպես տեսնում ենք գեշտալտ հոգեբանները հակառակ նախորդ ուղղության, ընկալման գործընթացը հասկանալու համար, այն (ընկալված օբյեկտը) չէին բաժանում փոքրագույն մասնիկների՝ զգացումների: Նրանք համարում էին, որ ընկալված պատկերում գոյություն ունեն այնպիսի որակներ և հատկանիշներ, որոնք բացակայում են այդ պատկերը կազմող առանձին տարրերում:

Այսպիսով, ընկալման գործընթացը բացատրելիս, գեշտալտ հոգեբանները իբրև ելակետային տվյալ վերցնում էին, օրինակ, պատկերը և փորձում դրանում գտնել

ընկալման գործընթացի մեխանիզմները, ճիշտ է, այդ մեխանիզմները փնտրելիս նրանք պատկերը չէին բաժանում մասերի: Սակայն, նրանք ևս, ինչպես և ստրուկտուրալիստները, ընկալման գործընթացը բացատրելիս վերցնում էին արդեն արտացոլվածը՝ պատկերը, ինչը հանդիսանում է հոգեկան արտացոլման արգասիք և որում (արգասիքում) գորընթացը արդեն ավարտված է: Նման մեթոդաբանությամբ առաջնորդվելով գեշտալտ հոգեբանները կարողացան բացահայտել արդեն արտացոլվածին՝ պատկերին բնորոշ հատկությունները (ֆոն և ձև, ամբողջին բնորոշ որակները, որոնք բացակայում են դրա տարրերում և այլն), սակայն չտվեցին այն մեխանիզմները և օրինաչափությունները, որոնք բնորոշ են հոգեկան արտացոլում ստեղծող գործընթացին: Ինչպես ցույց էինք տվել այս աշխատանքի առաջին գլխում, դրա պատճառը (չկարողանալու) արգասիքային մոտեցումն էր. ընկալման գործընթացը բացատրելիս իբրև ելակետային տվյալներ արդեն արտացոլվածը (այս դեպքում պատկերը) վերցնելն էր:

**3.** *Արգասիքային մոտեցման առանձնահատկությունները Ջ. Գիբսոնի էկոլոգիական տեսությունում.*

Ամերիկացի հոգեբան Ջ. Գիբսոնը ամբողջ կյանքի ընթացքում հետազոտելով ընկալման գործընթացի հետ կապված ընդամենը մեկ ոլորտ, այն է՝ տեսողական ընկալման խնդիրը, մոտ երեսուն տարիների ընթացքում ներկայացրեց ընդամենը երեք գիրք («The perception of visual world, 1950», «The senses considered as perceptual systems, 1966» և «An ecological approach to visual perception, 1979») և կասկածի տակ դրեց կոգնիտիվ հետազոտությունների տեսական հիմքերը [57, էջ 319]: Նա հատկապես խիստ քննադատության ենթարկեց տարածական ընկալման վերաբերյալ մինչ իրեն գոյություն ունեցող մոտեցումները [191, էջ 232-234]:

Ջ. Գիբսոնը համեմատելով ընկալման իր տեսությունը մյուս տեսությունների հետ, որոնցում այս կամ այն կերպ խոսքը գնում էր զգայական ինֆորմացիայի մշակման մասին, նշում է, որ ինֆորմացիայի մշակման գաղափարը իր մեջ պարունակում է (ակնհայտ կամ թաքնված) հետևյալ միտքը. մշակման գործընթացի ժամանակ տեղի է ունենում նախնական ինֆորմացիայի հարստացում և ձևափոխում (տրանսֆորմացիա) և, հետևաբար, ընկալումում ի հայտ է գալիս այն, ինչը չկա

նախնական ազդակում: Համաձայն Ջ. Գիբսոնի, լուսային հոսքում գոյություն ունի ընկալման համար անհրաժեշտ ինֆորմացիան: Արտաքին ազդակը իրենից ներկայացնում է ավելի բարդ և ինֆորմացիոն մի բան, այդ իսկ պատճառով այն կարող է կրել օբյեկտի վերաբերյալ ամբողջական և անմիջական ինֆորմացիա: Այդուհանդերձ, ընկալումը անցած փորձի մշակման արդյունք չէ կամ աղքատ զգայական ազդակի հարստացում, այլ իրենից ներկայացնում է հոսող ինֆորմացիայի անմիջական դուրս հանում, ստացում. «Որպեսզի ընկալենք աշխարհը, պետք է նախորոք ունենանք նրա մասին գաղափար» [189, էջ 304]: Այդ կերպ, նրա տեսությունում, ընկալման վերլուծության ժամանակ, շեշտը սուբյեկտի գիտակցությունից տեղափոխվում է օբյեկտի վերաբերյալ ինֆորմացիայի վրա:

Ջ. Գիբսոնի էկոլոգիական տեսությունում, սկզբունքորեն նորարարություն կարելի է համարել հնարավորությունների հայեցակարգը (концепция возможностей), որում, մեզ շրջապատող աշխարհը (մեկուսացված օբյեկտներ, մակերևույթներ, ամբողջական մակերեսներ) հարաբերակցվում է մեր ընկալման յուրահատկությունների հետ: «Եթե լույսն իր մեջ պարունակում է մակերեսները ընկալելու տեղեկություն, ապա, հնարավոր է, դրանում (լույսի մեջ) միաժամանակ նաև գոյություն ունի դրանց (մակերեսների) տարբեր հնարավորությունների ընկալման հնարավորությունը: Այդ դեպքում ընկալել դրանք՝ նշանակում է ընկալել այն հնարավորությունները, որոնք նրանք տրամադրում են: Այդ վարկածը շատ կարևոր է, քանի որ այն ենթադրում է, որ մեզ շրջապատող աշխարհի առարկաների «նշանակությունը» և «իմաստը» կարող են ընկալվել անմիջականորեն» [66, էջ 188]:

Ընդհանրացնելով Ջ. Գիբսոնի էկոլոգիական տեսությունը կարող ենք ասել, որ նրա նորարարությունը կայանում էր հետևյալում. դիտորդը շարժվելով իրեն շրջապատող աշխարհում, անմիջականորեն յուրացնում է էֆեկտիվ ադապտիվ ընկալման համար անհրաժեշտ ինֆորմացիան: Համապատասխան նրա պատկերացումների, ազդակը, որն ուղարկում է արտաքին աշխարհը, (ինֆորմացիա՝ որը ուղարկվում է արտաքին աշխարհի կողմից), իրենում պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք լիովին բավարար են ֆիզիկական աշխարհը

անմիջականորեն ընկալելու համար, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն չկա ոչ մի միջնորդության, ինչպես նաև լրացուցիչ մշակման [192, էջ 258 - 264]:

Վերոնշյալ մոտեցումները հաստատելու համար Ջ. Գիբսոնի կողմից ձեռնարկվել են բազմաթիվ փորձեր, մասնավորապես՝ տեսողական պատրանքների հետ կապված [190]:

Էկոլոգիական տեսությունը, չնայած այն բանին, որ չէր ընդունում ընկալման գործընթացում նախկին փորձի դերակատարությունը, և, հետևաբար, ընկալման գործընթացը չէր համարում կառուցման գործընթաց, միևնույնն է, ինչպես և նախորդները, ցուցաբերում էր արգասիքային մոտեցում: Բանը նրանում է, որ արտաքին աշխարհից եկող ինֆորմացիան, ինչն անհրաժեշտություն չուներ ավելացվելու կամ մշակվելու, իր մեջ արդեն ներառում էր օբյեկտի հատկությունները (գույն, համ, հոտ և այլն), սակայն, ինչպես նշում էր Ա.Ի. Միրաքյանը, արտաքին աշխարհում առկա օբյեկտների հատկությունները ձեռք են բերվում միայն արտացոլման արդյունքում: Ջ. Գիբսոնը ակամայից օբյեկտներին վերագրելով հատկություններ, արդեն գործ ուներ արտացոլման արդյունքների հետ, քանի որ օբյեկտների մեզ ծանոթ հատկությունները ձեռք են բերվում միայն արտացոլման գործընթացի արդյունքում: Այսպիսով. էկոլոգիական տեսությունը ևս, չնայած իր էական տարբերություններին, ցուցաբերում էր արգասիքային մոտեցում, ինչի հետևանքով թաքնված էին մնում հոգեկան արտացոլման գործընթացը ստեղծող սկզբունքները և օրինաչափությունները:

**4.** *Արգասիքային մոտեցման առանձնահատկությունները ինֆորմացիոն մոտեցումում*

Այս մոտեցումը կապված է անգլո-ամերիկացի գիտնական Դ. Մարրի անվան հետ: Ինֆորմացիոն մոտեցումը մարդուն դիտարկում է որպես եկող զգայական ինֆորմացիայի մշակման բարդ համակարգչանման մի համակարգ: Այդ գործընթացը իրենից ներկայացնում է հաջորդական կամ զուգահեռ փուլեր, որոնցից յուրաքանչյուրը ինֆորմացիայի հետ կատարում է վերափոխման առանձնահատուկ օպերացիաներ. կոդավորում, հատկանիշների դուրս հանում, ֆիլտրում, ճանաչում, վարկածների ստուգում, որոշումների կայացում և այլն:

Այդ տեսությունում, եկող ինֆորմացիայի հաջորդական վերլուծության սկզբունքների համապատասխան նկարագրվում են ինֆորմացիայի մշակման մի շարք փուլեր (կամ գործողություններ)՝ սկսած արտաքին օբյեկտի ցանցաթաղանթային պրոեկցիայից մինչև մարդու կողմից դրա ճանաչումը [204, էջ 301-303]:

Դ. Մարրի տեսությունում առանձնացվում են ինֆորմացիայի վերլուծության չորս հիերարխիկ մակարդակներ, կամ մոդուլներ: Առաջին մակարդակը նա անվանում է պատկեր, ինչը դիտարկվում է իբրև ցանցաթաղանթի վրա լուսային էներգիայի տարածա-ժամանակային բաշխում: Համաձայն նրա, դա հանդիսանում է տեսողական գործընթացի սկիզբը:

Վերլուծության երկրորդ մակարդակը կոչվում է ուրվագիծ կամ ստվերագիծ: Այս փուլում ինֆորմացիայի մշակման արդյունքը հանդիսանում է ցանցաթաղանթի վրա լույսի բաշխման կազմության նկարագրումը. կազմվածքի (տեքստուրայի), ուրվագծերի, ձևերի առաջացում, տարածությունում օբյեկտների փոխադարձ դասավորում և այլն: Նախնական ուրվագիծը կազմվում է պատկերի տարածությունում նրա դետալների միջև լույսի բաշխման տարբերությունները բացահայտելով, օբյեկտների սահմանները կամ անկյունները ընդգծելով՝ իբրև կտրուկ փոփոխություններ (ինտենսիվության առումով):

Ինֆորմացիայի մշակման երրորդ մակարդակը 2,5 չափի ուրվագծի ստեղծումն է (ի տարբերություն եռաչափ ընկալման): Այդ մակարդակում մշակվում է նախկին մակարդակում վերլուծված ինֆորմացիան: Այստեղ իրականացվում է ուրվագծերի ամբողջական կողմնորոշումը և խորությունը (ինչպես որոշակի ֆոնի, կամ տեսանելի մակերեսի վրա ձևի առանձնացում): Այս փուլում դուրս է բերվում օբյեկտների խորության և այն հեռավորության վերաբերյալ ինֆորմացիան՝ ինչ հեռավորության վրա որ գտնվում է դիտորդը տվյալ օբյեկտից:

Տեսողական ինֆորմացիայի մշակման վերջին փուլը եռաչափ մոդելի կառուցումն է: Վերլուծության այդ մակարդակում ցանցաթաղանթի վրա ստեղծվում է առանձին օբյեկտների տեսքով (անկախ իրենց դասավորվածությունից) ամբողջական տեսարան. դիտորդի մոտ ձևավորվում է աշխարհի ծավալուն պատկերը, որն անկախ է (ինվարիանտ) տարածությունում իր իսկ սեփական դիրքից կամ օբյեկտների

դասավորվածությունից: Այս մակարդակում դիտորդին արդեն ներկայանում է ճանաչելի առարկաներով և դրանց փոխադարձ դասավորվածությամբ աշխարհ [97, էջ 5-17]:

**ա** **բ** **գ** **դ**



Նկար 6. Օբյեկտի եռաչափ պատկերի ինֆորմացիայի մշակման փուլերը. ա) սկզբնական պատկեր. բ) նախնական ուրվագիծ (էսքիզ). գ) 2,5 չափի ուրվագիծ. դ) օբյեկտի եռաչափ ուրվագիծ [203]:

Դ. Մարրը, ինչպես և Ջ. Գիբսոնը համարելով, որ մեզ շրջապատող աշխարհը ընկալման համար մատակարարում է անհրաժեշտ ինֆորմացիա, միաժամանակ նաև գտնում էր, որ այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են ձևը կամ ուրվագիծը, դիտորդից պահանջում են ինֆորմացիայի մշակման լրացուցիչ գործողություններ. առարկայի տեսողական պատկերից, դրա որոշ հատկությունների՝ սիմվոլիկ տեսքով դուրս հանում, օրինակ ուղիղներ, անկյուններ, սահմաններ, շարժում և այլ ցուցանիշներ:

Ինչպես տեսնում ենք, Դ. Մարրը նույնիսկ կասկածի տակ չի դնում այն մոտեցումը, որ մեզ շրջապատող առարկաները ի սկզբանե՝ մինչ արտացոլումը, օժտված են մեզ ծանոթ հատկություններով և հատկանիշներով (գույն, հոտ, համ, ձև, անկյուններ և այլն): Նա իր առջև խնդիր է դնում բացահայտել, թե ինչպես են այդ հատկությունները և հատկանիշները մեզ համար, ինչ-որ պահից սկսած, ընկալելի դառնում: Այս կերպ, ինֆորմացիոն տեսությունը ևս ցուցաբերում էր արգասիքային մոտեցում. ընկալման գործընթացը մեկնաբանելիս իբրև ելակետային տվյալներ վերցնում էր արդեն արտացոլվածը (արտաքինից եկող ինֆորմացիան, որն իր մեջ կրում էր օբյեկտի հատկանիշները և հատկությունները), որոնք, սակայն, այդպիսի հատկություններ կարող էին ձեռք բերել միայն արտացոլման գործընթացի արդյունքում: Այդ կերպ շարժվելով Դ. Մարրը բացահայտում էր արդեն արտացոլվածի

ճանաչումը, արտացոլված օբյեկտների հարաբերությունները միմյանց նկատմամբ, սակայն ոչ այն օրինաչափությունները և սկզբունքները, որոնց օգնությամբ առաջանում են մեզ արդեն ծանոթ օբյեկտների հատկանիշները:

## 2.2. Սուբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսություններ

Սուբյեկտային կողմնորոշում ունեցող ընկալման տեսությունները, ի տարբերություն նախորդի՝ օբյեկտային կողմնորոշում ունեցողների, համարում են, որ ընկալման գործընթացում գլխավոր դերակատարությունը պատկանում է սուբյեկտի որոշակի բնութագրիչներին. ճանաչողական փորձին, պահանջմունքներին, էմոցիաներին, դիրքորոշումներին, անձնային հատկություններին և այլն: Ընկալումը, համաձայն այդ մոտեցման, մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ պատկերների տեսքով, պատկերացումների և գիտելիքների հետ կատարվող գործընթաց է, որոնք (պատկերները, գիտելիքները) առկա են արդեն սուբյեկտի մոտ: Այս մոտեցման վառ ներկայացուցիչներն են ***1. ֆունկցիոնալիզմը և 2. կոգնիտիվ մոտեցումը:***

1. *Արգասիքային մոտեցման առանձնահատկությունները ֆունկցիոնալիզմում.*

Ֆունկցիոնալիզմի տեսության հիմքում ընկած են մի շարքականավոր գիտնականների գաղափարներ, այդ թվում՝ Վ. Ջեյմսի, մասնավորապես էմոցիաների առաջացման իր նոր մեկնաբանությամբ [187, էջ 138-140], Ջ. Դյուիի, Ջ. Էնջելի և այլոց [184, էջ 120-170]:

Ընկալման գործընթացի վերաբերյալ նրանք առաջարկում էին նախորդներից էականորեն տարբերվող մոտեցում: Եթե նախորդները ընկալման գործընթացը փորձում էին մեկնաբանել ընկալվածի բովանդակությունից ելնելով, ապա ֆունցիոնալիստները ընկալումը համարում էին որպես օպերացիոն գործընթաց [89, էջ 235], այլ խոսքով ասած, ընկալման գործընթացը հասկացվում էր իբրև ճանաչողական համակարգի գործառույթ:

Հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ ֆունկցիոնալիզմի գաղափարները զարգացվել են, մասնավորապես՝ անգիտակցական եզրահանգումների Հ. Հելմհոլցի տեսությունում (теория бессознательных

умозаключений): Ընկալման խնդրի վերաբերյալ նրա մոտեցումը կրում էր խիստ բնագիտական բնույթ: Հոգեբանական մեթոդներին լուրջ վերաբերվելով հանդերձ (վերլուծություն, ինքնադիտարկում), միևնույն ժամանակ, նա իր աշխատանքներում դրանք չէր օգտագործում, ասելով, որ «...այդ դեպքում կարիք կլիներ հեռանալ այն մեթոդներից, որոնք հիմնված են հավաստի փաստերի և համընդհանուր ընդունված հստակ սկզբունքների վրա» [65, էջ 26]: Բնագիտությանը բնորոշ մեթոդների օգտագործման շնորհիվ Հ. Հելմհոլցը բացահայտում է նեյրոնի երկայնքով անցնող իմպուլսի արագությունը, ինչը ցույց էր տալիս, հոգեկան արտացոլման ժամանակ, դրսից եկող ազդակի ժամանակային արագությունը նեյրոնային կապերում [198, էջ 121]:

Այդ մոտեցման շրջանակներում, ինչը մեզ հայտնի է իբրև ֆունկցիոնալիզմ, ընկալումը սերտ կապված է բարձրագույն հոգեկան գործառույթների հետ՝ գիտելիքներ, փորձ, սպասումներ, շարժառիթներ և այլն: Այդուհանդերձ, Հ. Հելմհոլցը տեսողական պատկերների ձևավորման գործընթացը համարում էր նախկինում ստացած գիտելիքների միջոցով մեր զգացումների անգիտակցական մեկնաբանություն: Համաձայն նրա տեսության, ընկալման գործընթացը սկսվում է արտաքին գրգիռների կողմից նյարդային վերջույթները ակտիվացնելու միջոցով, ինչի արդյունքում առաջանում են զգացումներ: Այդ առաջնային զգացումները հանդիսանում են ընդամենը իրականության նշաններ (պայմանանշաններ), սակայն չեն արտացոլում դրա ամբողջ բազմազանությունը: Որպեսզի մենք ճիշտ մեկնաբանենք առաջնային զգացումները, համաձայն Հ. Հելմհոցի, անհրաժեշտ է առարկայի մասին ունենալ պատկերացում: Պատկերացումների ձևավորման գործընթացը տեղի է ունենում սուբյեկտի և արտաքին աշխարհի առարկաների միջև փոխգործունեության արդյունքում և, ինչպես նշում էր Հ. Հելմհոլցը «Եթե մենք սովորենք ճիշտ կարդալ այդ պայմանանշանները (սիմվոլները), ապա մենք կկարողանանք այնպես կազմակերպել մեր գործունեությունը, որ այն բերի ցանկալի արդյունքի» [65, էջ 36, 37]:

Հ. Հելմհոլցը հատուկ ուշադրություն էր դարձնում ճանաչողական պատկերում իրականության իսկության և ամբողջական արտացոլման հարցին, ինչը փորձում էր լուծել մարդու գործունեության մեջ ընկալվող առարկայի պրակտիկ նշանակության

տեսանկյունից: «Հարց տալ, թե արդյոք սեղանի վերաբերյալ իմ պատկերացումը հավաստի է կամ կեղծ (դրա ձևի, պնդության, գույնի, ծանրության և այլն) ինքնըստինքյան, անկախ դրա հնարավոր պրակտիկ օգտագործումից և արդյոք այն համընկնում է իրական առարկայի հետ կամ հանդիսանում է խաբկանք, նույնքան անհեթեթ է, ինչպես և այն հարցը, թե ինչ գույն ունի տվյալ ձայնը՝ կարմիր, դեղին թե կապույտ: Պատկերացումը և դրա օբյեկտը պատկանում են, հավանաբար, երկու միանգամայն տարբեր աշխարհների» [65, էջ 37]: Այդ կերպ, նա նշում էր, որ առարկայի զգայական ընկալման իսկությունը իմաստ ունի ոչ թե ինքնին, այլ այդ առարկայի պրակտիկ օգտագործման հարաբերությունով, իսկ դա նշանակում է, որ ընկալվող պատկերում մեզ համար բացվում են բազմազան հատկություններից նրանք, որոնք դրսևորվում են մարդու և աշխարհի պրակտիկ փոխգործունեության գործընթացի ժամանակ:

Ֆունկցիոնալիզմում, ընկալման գործընթացը դիտարկելով իբրև ճանաչողական համակարգի գործառույթ, այդ համակարգում տեղի ունեցող որոշակի օպերացիաների արդյունք, միևնույն ժամանակ հստակ սահմանագիծ էր անցկացվում սուբյեկտի և իրեն շրջապատող աշխարհի, առարկաների միջև: Չնայած այն բանին, որ այդ տեսությունում առարկայի և դրա պատկերի հարցը մղվում էր երկրորդ պլան, այդուհանդերձ, ինչպես նշում էր Հ. Հելմհոլցը, առարկան ուներ որոշակի հատկություններ, որոնք փոխգործունեության արդյունքում դառնում էին ճանաչելի: Ինչպես և նախորդ տեսություններում՝ ֆունկցիոնալիզմում ևս, առարկայի հատկությունները նախապես տրված էին արտացոլվող օբյեկտին, որոնք (հատկությունները), որպես այդպիսին, միայն արտացոլման գործընթացի արդյունքում են առաջանում: Այսպիսով, ֆունկցիոնալիզմում փնտրելով ընկալման գործընթացի մեխանիզմները և սկզբունքները ցուցաբերում էին արգասիքային մոտեցում, քանի որ ի սկզբանե թույլ էին տալիս այն ենթադրությունը, որ գոյություն ունի սուբյեկտ և նրանից անկախ օբյեկտ, որն օժտված է որոշակի հատկանիշներով (գույն, համ, հոտ և այլն) և ինչը ճանաչելի է դառնում փոխգործունեության արդյունքում (որոշակի մշակումներից և ձևափոխումներից հետո):

Ֆունկցիոնալիստները, գլխավորապես գործ ունենալով մարդու օպերացիոն համակարգի հետ, կարողացան մեկնաբանել հոգեկան արտացոլման ժամանակ մարդու համար կարևոր գործառնական հնարավորությունները, ինչը, սակայն, թույլ չէր տալիս բացահայտել ընկալման գործընթացի հիմքում ընկած սկզբունքները և օրինաչափությունները:

**2.** *Արգասիքային մոտեցման առանձնահատկությունները կոգնիտիվ մոտեցումում.*

Կոգնիտիվ հոգեբանությունը՝ իբրև գիտական ուղղություն, ակտիվորեն սկսեց զարգանալ 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած: Այդ մոտեցումում, մարդու վարքը դիտարկվում էր կոգնիտիվ գործընթացների հետ փոխկապակցված՝ որպես անբաժան ամբողջականություն [56, էջ 24-160]:

Կոգնիտիվ տեսության առավել վառ ներկայացուցիչներից են Ջ. Բրուները և Ու. Նայսերը [95, էջ 107]: Վերջինիս խոսքով, կոգնիտիվ հոգեբանության խնդիրը նրանում է, որպեսզի հասկանան, թե ինչպես է «Ընկալվող, հիշվող և իմաստավորված աշխարհն առաջանում այդպիսի քիչ խոստումնալից սկզբնաղբյուրներից, ինչպիսիք են ցանցենական (retinal) ուրվագծի խթանումը կամ ականջում ձայնային տատանումների ճնշումը» [206, էջ 4]: Հետագայում, իր մենագրությունում (Ճանաչումը և իրականությունը), ինչը գրվել էր, մեծամասամբ, Ջ. Գիբսոնի ազդեցության ներքո, Ու. Նայսերը փորձում է ընկալման եղած տեսությունները ընդհանրացնել և պերցեպտիվ պատկերի կազմավորման խնդրին տալ ինտեգրացիոն մոտեցում [135]: Նա գտնում էր, որ պետք է ընկալման առկա մոտեցումները համաձայնեցնել միմյանց հետ և մշակել ճանաչողական գործընթացի նկարագրության համար ամբողջական ու համապարփակ կոգնիտիվ կառուցվածքներ [137, էջ 88-90]:

Ընդհանուր առմամբ, ընկալման գործընթացի վերաբերյալ կոգնիտիվ տեսությունը առաջ էր քաշում հետևյալ վարկածը, այն է. ճանաչողական գործընթացը հանդիսանում է ինֆորմացիոն գործընթաց, որում, որոշակի կարգով, փուլային կերպով տեղի է ունենում զգայական ինֆորմացիայի մշակում, ինչի արդյունքները պահվում են հիշողության մեջ: Համապատասխան այդ վարկածի, հիմնական խնդիրներից մեկը ճանաչողական գործընթացների ֆունկցիոնալ կառուցվածքի նույնականացումն էր:

Դրա լուծումը կրում էր կոգնիտիվ գործընթացների հետազոտման միջգիտական մոտեցում: Այդուհանդերձ, տարբեր գիտական ոլորտներ (համակարգչային գիտություններ, լեզվաբանություն, նեյրոգիտություններ, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, մարդաբանություն և այլն) միավորում են իրենց ուժերը, որպեսզի բացատրեն ճանաչողական գործընթացները: Արդյունքում տրվում են այդ խնդրի վերաբերյալ մի շարք մեկնաբանություններ. ինֆորմացիայի մշակման նեյրոնային գործընթացների մոդելներ, շրջակա աշխարհի վերաբերյալ վիզուալ և ակուստիկ ներկայացուցչական ֆենոմենոլոգիական նկարագրում, որոշումների կայացման մոդելներ և շատ այլ բաներ [100, էջ 96-98]:

Ընկալման կոգնիտիվ տեսությունում, մարդու ճանաչողական համակարգը դիտարկվում է իբրև մի համակարգ, որն ունի ներմուծելու, պահելու, պայմանանշանների (սիմվոլների) հետ մանիպուլյացիա կատարելու, ինչպես նաև ինֆորմացիայի դուրս հանելու հնարավորություն: Համաձայն Ռ. Հաբերի, այս մոտեցման զարգացման նախնական փուլում արդեն մշակվել էին կոգնիտիվ գործընթացների վերաբերյալ հետևյալ ենթադրությունները.

1. Ինֆորմացիայի փուլային մշակում, համաձայն որի խթանումը ենթարկվում է մի շարք հաջորդական վերափոխումների և, ինչի վերջնական արդյունքը հանդիսանում է արտաքին աշխարհի մենթալ (գիտակցված) պատկերը: Գիտակցությունում ներկայացված է միայն գործընթացի վերջնական փուլը, այնինչ, այդ ընթացքում վերափոխման բոլոր միջանկյալ փուլերը թաքնված են մնում մեր գիտակցությունից:

2. Ինֆորմացիայի մշակման գործընթացի մեզ հասանելի լինելու սահմանափակություն:

3. Արտաքին աշխարհի վերաբերյալ ինֆորմացիայի ծածկագրման առանձնահատուկ մեխանիզմների վերաբերյալ ենթադրություն, ինչի արդյունքում ձևավորվում է աշխարհի մենթալ պատկերը, որը չի համընկնում խթանի հատկությունների հետ [197]:

Կոգնիտիվ բազմաթիվ մոդելներից պետք է նշել Ֆ. Քրեյկի և Ռ. Լոքհարդի ինֆորմացիայի մակարդակային մշակման տեսությունը: Համաձայն այդ տեսության,

ցանկացած կոգնիտիվ գործընթաց, կարելի է դիտարկել իբրև բազմամակարդակ համակարգ, որում՝ ամեն մի մակարդակում, կատարվում էին եկող ինֆորմացիայի յուրահատուկ մշակման օպերացիաներ: Օրինակ, ընկալվող պատկերի ձևավորման գործընթացը դիտարկվում է որպես որոշ մակարդակների հաջորդական աշխատանք. զգայական ազդանշանների բացահայտում, օբյեկտի առանձին պարամետրերի ծածկագրում, օբյեկտի ճանաչման համար ծածկագրերի ինտեգրացիաներ, ճանաչման գործընթացներում ուշադրության և հիշողության ազդեցություն: Ցանկացած ենթադրյալ մակարդակում կատարվում են յուրահատուկ գործառույթներ, որոնք թույլ են տալիս դուրս հանել, վերլուծել, փոխել և մշակել եկող ինֆորմացիան: Այդ մոդելում հայտնի էին «եկող» ինֆորմացիայի պարամետրերը, որոնք ներկայանում էին տարածության և ժամանակի մեջ լուսային կամ ձայնային էներգիայի բաշխման տեսքով ու «դուրս եկող» ինֆորմացիայի պարամետրերը՝ դիտորդի խոսքային կամ շարժողական պատասխանների տեսքով: Ինֆորմացիայի ծածկագրումը միջանկյալ փուլերում մնում էր գիտակցությունից թաքնված, ինչը ստիպում էր մշակել յուրահատուկ նոր փորձարարական մեթոդներ [185, էջ 671-682]:

Ընկալման գործընթացի վերաբերյալ առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել կոգնիտիվ նեյրոլոգիան (cognitive neuroscience): Այն հանդիսանում է միջգիտական ոլորտ, որն առաջացել է փորձարարական և կոգնիտիվ հոգեբանության, ինչպես նաև նեյրոլոգիայի և ինֆորմատիկայի հիմքի վրա [208, էջ 10, 11]:

Կոգնիտիվ նեյրոլոգիան, նեյրոնային մակարդակում ուսումնասիրում է ուղեղի այնպիսի մարդկային գործունեության բարդ ձևեր, ինչպիսիք են մտածողությունը և ընկալումը: Այդ տեսությունում ընկալման և ճանաչողական բարձրագույն գործընթացները իրենցից ներկայացնում են հասարակ մտածողական գործընթացների փոխազդեցության արդյունքներ, որոնցից ամեն մեկը, իր հերթին, հանդիսանում է ուղեղի այս կամ այն հատվածի նեյրոնային ակտիվության հետևանք: Այդ իսկ պատճառով, նյարդային փոխկապակցված վերջավորությունների ակտիվության հետազոտումը, որոնք դասավորված են ուղեղի տարբեր հատվածներում (նեյրոլոգիան զբաղվում է հենց դրանով), կարող է նպաստել բարդ ճանաչողական գործընթացները ուսումնասիրելու գործին: «Կոգնիտիվ նեյրոլոգիայի հիմնական խնդիրը նրանում է, որ

ընկալման գործընթացի ժամանակ կարողանան փորձարարական մեթոդների օգնությամբ բացատրեն նյարդային այդ վերջավորությունների դերը » [54, էջ 21]:

Կոգնիտիվ նեյրոլոգիան խիստ կերպով կապված է նեյրոֆիզիոլոգիական մոտեցման հետ, սակայն, առավելապես կենտրոնացած է ուղեղի ֆունկցիոնալ մեխանիզմների և դրա (ուղեղի) հատվածների փոխազդեցության վրա, որոնք մասնակցում են, գլխավորապես՝ կոգնիտիվ գործընթացների ժամանակ: Այդ մոտեցման հիմքը հանդիսանում է տարբեր մեթոդների օգտագործումը, որոնց ժամանակ, երբ դրսևորում են յուրահատուկ կոգնիտիվ-ճանաչողական ակտիվություն, տեսանելի կերպով երևում է ուղեղի տարբեր հատվածների գործունեությունը [180, էջ 37, 38]:

Այսպիսով, կոգնիտիվ տեսությունը և մասամբ դրանից ածանցված կոգնիտիվ նեյրոլոգիան, ընկալման գործընթացը բացատրելիս, փորձում էր բացահայտել այն նեյրոնային (ուղեղային) ուղիները, որով անցնում է դրսից մեզ եկող ազդակը, ինչն իրենում կրում է արտաքին աշխարհի այս կամ այն երևույթի, առարկաների վերաբերյալ ինֆորմացիա: Այդ երկու մոտեցումները, չխոսելով այն մասին, թե ինչպիսին է օբյեկտը, միևնույն ժամանակ, անխոս ընդունում էին, որ արտաքին աշխարհում գտնվող երևույթները և առարկաները օժտված են հատկություններով և հատկանիշներով ու մեզ մնում է միայն բացահայտել, թե ինչ ուղիներով և մեխանիզմներով են դրանք հասնում մեզ: Կոգնիտիվ մոտեցումները իր մեկնաբանությունները սկսում էր ընդունելով արդեն որոշակի ինֆորմացիայի գոյությունը և հետո նոր փորձում բացատրել ընկալման գործընթացը: Նրանք ևս (կոգնիտիվ հոգեբանները), հոգեկան արտացոլման գործընթացը բացատրելիս, ինչպես տեսնում ենք, իբրև ելակետային տվյալներ վերցնում էին արդեն արտացոլվածը, որը բնորոշվում էր որպես դրսից եկող ինֆորմացիա և դրանից հետո նոր տալիս էին ընկալման գործընթացի մեկնաբանությունը: Այս դեպքում, նրանց հաջողվեց բացահայտել դրսից եկող ազդակների ազդեցությամբ գրգռվող նեյրոնային ուղիները և ուղեղի հատվածները (ի դեպ, այդ ազդակները, մինչ արտացոլման գործընթացը, իրենց մեջ չէին կարող կրել հատկություններ և հատկանիշներ, դրանք (այդ հատկությունները և հատկանիշները) միայն արտացոլման արդյունքում են ձեռք

բերվում), ինչպես նաև այդ հատվածների միջև փոխազդեցությունը, բայց ոչ հոգեկան արտացոլման գործընթացը ծնող սկզբունքները և օրինաչափությունները:

### 2.3. Ընկալման տեսությունը կոնստրուկտիվիստական մոտեցումում

Այս ուղղության զարգացման գործում մեծ ավանդ ունի Ժ. Պիաժեն: Նա ուսումնասիրելով և տեղ-տեղ սուր քննադատության ենթարկելով ընկալման գործընթացի հետ կապված իր նախորդների աշխատանքները (Հելմհոլցի, Գերինգի, Էրենֆելսի և այլոց) [149, էջ 109-111] նշում է, որ ընկալման գործընթացը դա արտաքին աշխարհի պատճենահանման գործընթաց չէ և ընկալման ժամանակ սուբյեկտը ունի ակտիվ դերակատարություն [193, էջ 613-629]:

Արմատական կոնստրուկտիվիստները զարգացնելով Ժ. Պիաժեի մոտեցումները գտնում էին, որ ճանաչող սուբյեկտը տարբեր երևույթների և իրեն շրջապատող առարկաների վերաբերյալ գիտելիքները պասիվ կերպով չի ստանում, այլ կառուցում է դրանք. ճանաչողական գործառույթը դա ադապտիվ գործընթաց է, և ծառայում է փորձարարական գործունեության կազմակերպմանը, այլ ոչ թե իրականության գոյաբանական բացահայտմանը [194, էջ 17]:

Այդ մոտեցումում, ընկալման գործընթացի վերաբերյալ հատկապես նշանակալի են եղել Ի. Ռոկի, Ջ. Հոհբերգի և Լ. Գրեգորի աշխատանքները: Վերջինս գրում էր, որ ընկալման գործընթացը իրականում շատ բարդ գործընթաց է, քանի որ ընկալող ուղեղը պետք է ընտրի զգայական տվյալների բազմաթիվ հնարավոր մեկնաբանություններից ընդամենը մեկը: «Չէ որ միևնույն զգայական տվյալներից հնարավոր է «դուրս հանել» լրիվ այլ օբյեկտներ: Սակայն մենք ընկալում ենք ընդամենը մեկ օբյեկտ և սովորաբար ընկալում ենք ճիշտ: Հասկանալի է, որ բանը միայն նյարդային պատերների (տարբերության) գումարման կամ զուգակցման մեջ չէ, ընկալումը կառուցվում է նաև որոշումներից: Որպեսզի հասկանանք դա, արժե ուշադիր հետևել օբյեկտների ոչ միանշանակ լինելու հատկությանը, հատկապես այստեղ պետք է նկատի ունենալ, որ օբյեկտին համապատասխան պատերնի որոշակի հատվածի

ընդգծումը (ոչ թե ուղղակի ֆոնի ընդգծումը) ընդամենը ընկալման գործընթացի առաջին քայլն է» [67, էջ 32]:

Ընդհանրացնելով հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ կոստրուկտիվիստների մոտեցումը կարող ենք նշել հետևյալը.

1. Կոնստրուկտիվիզմում ընկալումը դիտարկվում է իբրև սուբյեկտի կառուցողական գործունեության ակտիվ գործընթաց: Համարվում է, որ ճանաչումը իրենից ներկայացնում է, նախևառաջ, ինքնուրույն գործընթաց: Սուբյեկտը միայն այն ժամանակ է գիտելիքի տիրապետում, երբ նա կոգնիտիվ ապարատում անցկացնում է իր սեփական գործողությունները: Գիտելիքը իբրև ճանաչողական գործընթացի արդյունք՝ զուտ արտացոլում չէ (արտաքին աշխարհի բացահայտման իմաստով), այլ ավելի շուտ իրականության կառուցում: Ճանաչողական գործընթացը և արդյունքը (գիտելիքը) հանդիսանում են երկվալենտ, մենք կարող ենք ճանաչել միայն այն, ինչը մենք ինքներս «կառուցել» ենք:

2. Կոնստրուկտիվիզմը ենթադրում է, որ ճանաչումը ծառայում է սուբյեկտի ներքին աշխարհի կազմակերպմանը, այլ ոչ թե օբյեկտիվ գոյաբանական իրականության նկարագրման խնդրին: Համարվում է, որ գիտելիքը կոնստրուկտիվ-հասկացական կազմություն է, որը պետք է կոնֆլիկտի մեջ չմտնի փորձարարական աշխարհի հետ: Ճանաչումը որպես կառույց չի նշանակում, որ իրականության ներքո պետք է հասկանալ ցանկացած ինքնակամ ստեղծված ֆանտաստիկ կառույց, այլ պետք է հասկանալ մի կառույց, որը չի վերացվում աշխարհի դիմադրողականությամբ, այդ իսկ պատճառով, հանդիսանում է «կենսունակ» [70, էջ 3,4]:

3. Կոնստրուկտիվիզմում մարդու կողմից ընկալման յուրաքանչյուր պահը իրենից ներկայացնում է մենտալ (ինտելեկտուալ, բանական) կառույց (կոնստրուկցիա), հիմնված մեր ճանաչողական ստրատեգիայի վրա, մեր նախորդ փորձի վրա (սպասումներ, հակումներ, դրդապատճառներ, ուշադրություն և այլն): Այլ խոսքով ասած, կոնստրուկտիվիստական մոտեցումը հիմնված է այն բանի վրա, որ դիտորդը կառուցում կամ նույնիսկ «դուրս» է հանում ընկալումը տրամաբանորեն՝ արտաքինից իրեն եկող տվյալները մեկնաբանելով: Կոնստրուկտիվիստական մոտեցման համար սկզբունքային է այն միտքը, որ ընկալման առաջացմանը նախորդում է կառուցումը,

ֆիզիկական աշխարհի իրադարձությունների և երևույթների միջև կապի գիտակցումը, միջնորդությունը: «Ընկալումը իրենից ներկայացնում է, այսպես ասած խնդիրների լուծում» [67, էջ 41]:

Ասվածը ավելի պարզ լինելու համար բերենք մեկ օրինակ.



Նկար 5. Հիմնակմախքային խորանարդ [67, էջ 47]:

Այս խորանարդի ընկալումը ուղեղի համար հասարակ խնդիր չէ: Ոչ հասարակ պատկերների, առարկաների ընկալումը կապված է մի շարք դժվարությունների հետ, հատկապես, երբ այդ ոչ սովորական պատկերը նման է լինում հասարակ պատկերների: Այդ դեպքում «...դրանց ճիշտ ընկալումը (ոչ սովորական պատկերի) կախված է լինում նախկինում կուտակված տվյալներից» [67, էջ 48]: Նախկին փորձի բացակայության հետևանքով, ինչպես նշում էին կոնստրուկտիվիստները, կարող են լինել պատկերների սխալ ընկալում (պատրանքներ) [67, էջ 49-56]:

Կոնստրուկտիվիստները չընդունելով այն մեկնաբանությունները, որ ընկալումը զուտ արտաքինից եկող ազդակների վերծանում է, առաջարկում էին իրենց՝ յուրօրինակ մոտեցումը, որն ենթադրում էր ընկալման գործընթացի ժամանակ սուբյեկտի ակտիվ դերակատարությունը:

Այս մոտեցումն իրենից ներկայացնում է ընկալման օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող տեսությունների յուրօրինակ մի սինթեզ, որտեղ չհերքելով օբյեկտի դերը միաժամանակ մեծ տեղ էր հատկացվում սուբյեկտին (սուբյեկտի ճանաչողական ապարատին): Այսքանով հանդերձ, կոնստրուկտիվիստները ևս

ցուցաբերում էին արգասիքային մոտեցում, նրանք, ինչպես և նախորդ տեսությունները, ընկալման գործընթացը մեկնաբանելիս ընդունում էին, որ սուբյեկտից առանձին գոյություն ունի օբյեկտ և այն օժտված է որոշակի հատկություններով, միայն այն տարբերությամբ, որ կոնստրուկտիվիստները այդ օբյեկտի ճանաչման համար անհրաժեշտ էին համարում մարդու ակտիվ դերակատարությունը, մասնավորապես՝ տվյալ օբյեկտի ճանաչման համար անհրաժեշտ էր սուբյեկտի նախկին փորձի միջամտությունը, նախկին փորձի օգնությունը:

Կոնստրուկտիվիստները, այսպիսով, կառուցման գործընթաց համարում էին նախկին փորձի օգնությամբ դրսից եկող ազդակների վերծանումը, ինչը, սակայն, արգասիքային մոտեցման դրսևորում էր, քանի որ սուբյեկտի նախկին փորձը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ հասկացությունների, պատկերների, օբյեկտների տարբեր հատկությունների հավաքածու, որոնք նախկինում տեղի ունեցած և հիշողությունում ամրացված արտացոլման արգասիքներ են: Նրանք ընդունելով, որ ընկալման գործընթացը դա կառուցման գործընթաց է, միաժամանակ կառուցումը համարում էին իբրև օբյեկտների արտացոլված հատկությունների, հատկանիշների, հասկացությունների միջոցով կատարվող օպերացիաներ, ինչն արդեն արգասիքային մոտեցում էր:

### 2.4. Ընկալման տեսությունը նեյրոֆիզիոլոգիական մոտեցումում

Այս մոտեցման նախադրյալները արտացոլված են արդեն Ի. Մյուլլերի զգայական օրգանների յուրահատուկ էներգիան տեսությունում (19դ.): Համաձայն դրա, մեր զգայությունները, ինչպես նաև բարձրագույն հոգեկան գործընթացները պայմանավորված են ուղեղի գործունեության ֆիզիոլոգիական հատկություններով. «Յանկացած զգայական օրգան ունի իր սեփական «յուրահատուկ էներգիան», ինչը գրգռվում է արտաքին աշխարհից եկող յուրաքանչյուր ազդակից» [96, էջ 168]:

Այդ մոտեցումը ինտենսիվ կերպով սկսեց զարգանալ 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Դա կապված էր մի շարք նոր ֆիզիոլոգիական տեխնոլոգիաների և մեթոդների հետ (պոզիտրոն-էմիսիոն տոմոգրաֆիա, (ՊԷՏ), ֆունկցիոնալ մագնիսա-

ռեզոնանսային տոմոգրաֆիա (ֆՄՌՏ), և այլն): Տեսողական ընկալման հետ կապված նեյրոֆիզիոլոգիական մոտեցման հիմնական գաղափարները ձևակերպվել են Դ. Հաբելի և Թ. Վիզելի աշխատանքներում: Նրանց կողմից պնդվող հիմնական դրույթներից մեկը այն էր, որ առանձին նեյրոնների գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև նեյրոնային համակարգի շրջանակներում դրանց փոխգործունեությունը, միմյանց հետ կարող են դրսևորվել տեսողական ընկալման ֆենոմեններում [201, էջ 106-150]:

Նեյրոֆիզիոլոգիական մոտեցման վառ ներկայացուցիչներից էր նաև Ֆ. Քրիկը: Նա իր խիստ դիրքորոշմամբ գերազանցելով նախորդներին նշում էր, որ գիտակցության օրենքները կարող են հասկանալի դառնալ միայն առանձին նեյրոնների և նեյրոնային խմբերի գործունեությունը հասկանալու պարագայում [186]:

Ընկալման գործընթացը նեյրոֆիզիոլոգիական մոտեցման միջոցով հետազոտելու անհրաժեշտությունը մասնավորապես կապված էր հետևյալ հանգամանքներով. 1) արտաքին ինֆորմացիայի վերլուծության ամբողջ հոգեկան գործընթացները պայմանավորված են ուղեղի նեյրոնների աշխատանքով և դրանք կարող են գործել միայն ուղեղի կառուցվածքների նորմալ աշխատանքի դեպքում: Այդ մոտեցումը հաստատվել է բազմաթիվ աշխատանքների միջոցով, որտեղ ցույց է տրվում, որ գլխուղեղի առանձին բաժինների գործունեության խանգարումը կարող է բերել ընկալման, ուշադրության խանգարումների [93, էջ 70-253]: 2) Առանձին նեյրոններ կարող են կատարել դժվար տրամաբանական գործառույթներ, ինչպիսիք են, օրինակ, պայծառության կոնտրաստների, ուրվագծերի թեքությունների, մարդու դեմքի էմոցիաների և այլնի կոդավորումը [195, էջ 73-115]: 3) Նկատվել էին արտաքին օբյեկտների առանձին հատկությունների ընկալման առանձնահատկությունների (ավելի պայծառ ընկալվող կոնտրաստներ, ավելի կոր ընկալվող ուղիղներ և այլն) և զգայական, մասնավորապես՝ տեսողական նեյրոնների ակտիվության առանձնահատկությունների միջև կոռելացիոն կապ [200]:

Համաձայն նեյրոֆիզիոլոգների, զգայական համակարգը սկսում է գործել այն ժամանակ, երբ մեզ շրջապատող միջավայրի ինչ-որ երևույթ՝ ազդակ, կամ գրգիռ, ընկալվում է զգայական նեյրոններով՝ առաջնային զգայական ընդունիչներով

(ռեցեպտորներով)։ Ամեն մի ընդունիչի վրա ազդող ֆիզիկական գործոն (լույս, ձայն, ջերմություն, ճնշում) վերափոխվում է գործողության պոտենցիալի։ Գործողության պոտենցիալները, կամ նյարդային իմպուլսները, արտացոլում են բջջային ազդանշանների տեսքով զգայական խթանները, որոնք կարող են հետագայում նյարդային համակարգի կողմից ենթարկվել մշակման։ Ընդունիչների միջոցով ստեղծված նյարդային իմպուլսները փոխանցվում են զգայական նյարդաթելերի միջոցով ընկալող կենտրոն, ինչը պատասխանատու է տվյալ զգայական տեսակին։ Հենց որ իմպուլսները հասնում են նախնական մշակման տարածքին, զգայական իմպուլսների մասերից (դետալներից) դուրս է հանվում ինֆորմացիան։ Ինքնին իմպուլսների ընդունումը արդեն նշանակում է, որ կատարվել է իրադարձություն։ Իմպուլսների հաճախականությունը և ընդունիչների քանակը արտացոլում են խթանի ուժը և ընկալվող օբյեկտի չափերը։ Օրինակ, ծաղկի ընկալման ժամանակ տեղի է ունենում դրա գույնի, ձևի, չափի և հեռավորության առանձնացում (դուրս հանում)։ Այդ, և էլի ուրիշ տեղեկություններ, մշակման նախնական գոտիներից հետո տրվում են երկրորդական գոտիներին, որտեղ ձևավորվում են ընկալվող իրադարձությունների վերաբերյալ հետագա դատողությունները։ «Զգայական համակարգի հաջորդ ինտեգրացիոն կենտրոններում կարող են զգայության այլ աղբյուրներից ավելացվել ինֆորմացիա, ինչպես նաև, այն կարող է լրացվել հիշողությունից՝ նախկինում տեղի ունեցած նմանատիպ փորձից » [49, էջ 55]։

Ամեն մի զգայական համակարգ տարբերում է մեկ կամ մի քանի ընկալվող ազդանշանի որակներ։ Մենք տեսնում ենք գույներ և դրանց պայծառությունը։ Մենք լսում ենք տեմբրը և ձայնի բարձրությունը, զգում ենք քաղցր, դառը կամ աղի համը։ Ազդանշանների սրության օգնությամբ մարդը տարբերում է իր մարմնի մակերեսից եկող զգացումները (սուր կամ բութ), ջերմաստիճանը (տաք կամ սառը), մարմնի վրա ճնշման բնույթը (անընդհատ կամ թրթռուն)։ «Այն, որ այդ ցանկացած որակներից յուրաքանչյուրը ընկալվում է զգայական օրգանների կողմից առանձին կերպով, նշանակում է, որ գոյություն ունեն բջջի ընդունիչներ, որոնք մասնագիտացված են խթանի համապատասխան յուրահատկությունները ընկալելու համար» [49, էջ 55]։

Հիմնվելով ստացված տեղեկատվության ամբողջության վրա՝ գլխուղեղը այն մեկնաբանելուց հետո ստեղծում է ներքին կառույց, որն էլ իրենից ներկայացնում է ցանկացած պահին արտաքին աշխարհի մեր ընկալումը:

Աղյուսակ 1-ում թվարկված են տեղեկատվության վերամշակման հիմնական շրջանները, որոնց մեծ մասը նաև ուղիների այն մենահատուկ հատվածներն են, որոնցով անցնում է զգայական ազդակի յուրաքանչյուր տեսակը:

Դրանցից ցանկացածի ախտահարման դեպքում կարող են նկատվել տվյալ մոդալականությանը հատուկ խանգարումներ [175, էջ 69-213]:

| Փոխարկման մակարդակները | | | |
|---|---|---|---|
| Մոդալականություն | Առաջնային մակարդակ (I) | Երկրորդային մակարդակ (II) | Երրորդային մակարդակ (III) |
| Տեսողություն | Ցանցաթաղանթ: | Կողմնային ծնկային մարմին: Քառաբլրի վերին թմբիկներ: | Առաջնային տեսողական կեղև: Երկրորդային տեսողական կեղև: |
| Լսողություն | Խխունջի կորիզներ: | Ժապավենի քառաբլրի և միջային ծնկաձև մարմնի կորիզներ: | Առաջնային լսողական կեղև: |
| Հավասարակշռություն | Անդաստակային կորիզներ: | Տեսաթումբ: Ողնուղեղ: Ակնաշարժողական կորիզներ: Ուղեղաբուն: Ուղեղիկ: | Մարմնազգայական կեղև: |
| Շոշափելիք | Ողնուղեղ կամ ուղեղաբուն: | Տեսաթումբ: | Մարմնազգայական կեղև: |

| | | | |
|---|---|---|---|
| Հոտառություն | Հոտառական կոճղեզ: | Տանձանման բլիթ: | Լիմբիական համակարգ: Ենթատեսաթումբ: |
| Համի զգայություն | Երկարավուն ուղեղ | Տեսաթումբ | Մարմնազգայական կեղև |

Աղյուսակ 1. – Այստեղ ներկայացված են մենահատուկ զգայական ազդակների ուղիները [1, էջ 81]:

Ընդհանրացնելով ընկալման վերաբերյալ նյարդաֆիզիոլոգիական մոտեցումը կարող ենք ասել, որ նյարդային համակարգն ունի զգայարաններից տեղեկատվությունը հավաքող և կենտրոնական նյարդային համակարգ փոխանցող զգայական նեյրոնների խումբ: Զգայարաններն ընդունակ են ընկալելու արտաքին միջավայրից եկող տեղեկատվության հինգ տեսակ. շոշափելիքի, համի, հոտառության, լսողության և տեսողության:

Տեսողական տեղեկատվությունն ընկալվում է լույսի ձևով, հետևաբար աչքում կան լույսն ընկալող հատուկ ընկալիչներ: Լսողական տեղեկատվությունն ընկալվում է ձայնային ալիքների ձևով, հետևաբար ականջում կան ձայնն ընկալող հատուկ ընդունիչներ: Համի մասին տեղեկատվությունը մենք ստանում ենք լեզվի հետ հպվող քիմիական նյութերի միջոցով: Դրանցից ամեն մեկի մասին տեղեկատվության ընկալման համար անհրաժեշտ են հատուկ մեխանիզմներ, սակայն բոլորն օժտված են ընդհանուր գործառույթով՝ վերափոխմամբ: Քանի որ ուղեղը կազմված է էլեկտրական ազդակներ փոխանակող նյարդային բջիջների զանգվածից, զգայարանների զգայական բջիջները պետք է ձևափոխեն ընկալվող տեղեկատվությունը էլեկտրական ազդակների և ծածկագրեն դրանք այնպես, որ ուղեղը հնարավորություն ունենա հասկանալու ստացված հաղորդագրությունը: Զգայական նյարդային բջիջների դերը նրանում է, որ ընկալվող տեղեկատվությունը վերափոխեն ուղեղի համար հասկանալի ձևի՝ նյարդային ազդակի [196, էջ 22-198]:

Այսպիսով, «Յուրաքանչյուր զգայական համակարգ կատարում է մի շարք հիմնական գործառույթներ կամ գործողություններ՝ զգայական ազդակների հայտնաբերում, տարբերակում, փոխանցում, վերափոխում և ծածկագրում, ինչպես նաև զգայական պատկերի հատկանիշների դետեկցիա (հայտնաբերում) և ճանաչում» [1, էջ 74]:

Նեյրոֆիզիոլոգիական մոտեցումը ընկալման գործընթացը մեկնաբանելիս, մասնավորապես փնտրում էր մարդկանց ֆիզիոլոգիայում այն հատվածները և գործընթացները, որոնք այս կամ այն ազդակների ազդեցությամբ ակտիվանում կամ գրգռվում էին: Ինչպես նաև նեյրոֆիզիոլոգները որոնում էին այն հնարավոր գոյություն ունեցող կապերը, որոնք ընկած են դրսից եկող ազդակների և գլխուղեղի կոնկրետ հատվածների միջև: Ընկալման գործընթացը բացատրելիս, այդ մոտեցումը սահմանափակվեց դրսից եկող ազդակի (լուսային էներգիա, ձայնային ալիք և այլն) ճանապարհը (մարդու ֆիզիոլոգիայում) մատնանշելով և առանձնացնելով գլխուղեղում այդ ազդակի արդյունքում ակտիվացված (պատասխանատու) հատվածները: Իհարկե, սա գիտության մեջ մեծ ձեռքբերում էր և լուծում էր բազմաթիվ ծառացած խնդիրներ, սակայն, այնուամենայնիվ, այդ մոտեցումը ևս ցուցաբերում էր արգասիքային մոտեցում. ընկալման նեյրոֆիզիոլոգիական տեսությունը ի սկզբանե ընդունում էր, որ մեր արտացոլման համակարգից անկախ գոյություն ունեն օբյեկտների հատկություններ, որոնք, այս կամ այն ազդակների միջոցով փոխանցվում են մեզ, և մարդուց միայն պահանջվում է այդ ազդակները ճիշտ ձևով ճանաչել, կոդազերծել՝ դուրս հանել դրանում եղած ինֆորմացիան: Այսինքն, այս մոտեցումը, ի սկզբանե ընդունում էր, որ մեզ շրջապատող աշխարհը օժտված է տարբեր հատկանիշներով, և նեյրոֆիզիոլոգների խնդիրն էր բացահայտել, թե ինչպես է այդ հատկանիշները իր մեջ կրող ազդակը «ընթեռնելի» դառնում մեր ֆիզիոլոգիական ապարատի կողմից (չմանրամասնելով այն ֆենոմենը, թե ինչպես է դրսից եկող ինֆորմացիան ծածկագրվում մեր ֆիզիոլոգիական ապարատի կողմից): Նման կերպ շարժվելով (ելակետային տվյալներ վերցնելով արդեն արտացոլվածը՝ ազդակներ, որոնք իրենցում կրում են այն հատկանիշները, որոնք այդպիսին են դառնում միայն արտացոլման գործընթացի արդյունքում) նրանք չէին կարող բացահայտել հոգեկան արտացոլում

առաջացնող գործընթացը: Նեյրոֆիզիոլոգները, այսպիսով, բացահայտում էին ուղեղում և մինչև ուղեղը հասնող այն հատվածները, որոնք գրգռվում էին արտաքինից եկող տարբեր ազդակների շնորհիվ, այն ուղեղային (նեյրոնային) կապերը, որոնք ակտիվանում էին արտաքին տարբեր խթանների ազդեցությունից, սակայն ոչ այն սկզբունքները և օրինաչափությունները, որոնք ընկած են ընկալումը ստեղծող գործընթացների հիմքում:

## 2.5. Ընկալման տեսությունները Ռուսաստանի հոգեբանների աշխատանքներում

Աշխատանքի այս գլուխը ցանկանում ենք եզրափակել ընկալման գործընթացի վերաբերյալ Ռուսաստանի հոգեբանների մոտեցումները ներկայացնելով և այդ մոտեցումներում արգասիքային դրսևորումները մատնանշելով: Ռուսաստանի հոգեբանների աշխատանքներին հատկացվեց առանձին ենթագլուխ, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում ոչ միայն հոգեբանությունը, այլ նաև ամբողջ գիտությունը զարգանում էր առավելապես ամփոփված իր իսկ տարածքում և երկրորդ, Ա.Ի. Միրաքյանի գիտական գործունեությունը ծավալվել և զարգացվել է Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում, ինչն իր ուղղակի ազդեցությունն է թողել նրա աշխատանքների և գիտական մտքի զարգացման վրա: Իհարկե, արդարացիորեն կարող ենք պնդել, որ հոգեկան արտացոլման խնդրի վերաբերյալ խորհրդային ժամանակաշրջանի հոգեբանների մեկնաբանությունները կարող ենք ընդգրկել վերը թվարկված (օբյեկտային կամ սուբյեկտային կողմնորոշում ունեցող) որևիցե մոտեցման կամ մոտեցումների շրջանակներում, սակայն, քիչ առաջ նշված փաստը մեզ ստիպեց աշխատանքի դասավորվածությունը այս կերպ շարադրել, ինչից աշխատանքը ոչ միայն չի տուժում, այլ նաև ավելի ամբողջական է դարձնում: Այս ենթագլխում մանրակրկիտ կհետազոտենք այն հոգեբանների մոտեցումները, որոնք իրենց հոգեբանական գործունեությունը առավելապես նվիրել են հոգեկան արտացոլման խնդրին:

1879թ.-ին Վ. Վունդտի կողմից առաջին հոգեբանական փորձարարական լաբորատորիայի հիմնումով հոգեբանությունը առանձնացվեց իբրև առանձին

գիտություն: Այդ ժամանակ, աշխարհի տարբեր ծայրերից գնում էին Վ. Վունդտի մոտ սովորելու, դասախոսությունները լսելու, աշխատելու և բանավիճելու: Դրանց շարքին էին պատկանում նաև ռուս հոգեբանները (Վ.Մ. Բեխտերև, Վ.Ֆ. Չիժ, Ն.Ն. Լանգե, Գ.Ի. Չելպանով և ուրիշներ) [53, էջ 4]:

Ռուսաստանում հոգեբանական լաբորատորիայի հիմնումը կապված է հենց Վ.Մ. Բեխտերևի անվան հետ, ով 6-տարի հետո՝ 1885թ., առաջին հոգեբանական լաբորատորիայի բացումից հետո (1879), Կազան քաղաքում բացեց առաջին հոգեբանական լաբորատորիան: Հետագայում, Ռուսաստանի այլ քաղաքներում ևս, Վ. Վունդտի աշակերտների կողմից բացվեցին փորձարարական-հոգեբանական լաբորատորիաներ (Լանգե-Օդեսա, Չիժ-Դերպտ, Չելպանով-Մոսկվա): Անցնելով առաջ ասենք, որ Ռուսաստանում հոգեբանության հետագա զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցություն ունեցավ ականավոր ռուս ֆիզիոլոգ Ի.Մ. Սեչենովի «Գլխուղեղի ռեֆլեքսները» աշխատանքը [161]: Գլխավորապես նրա աշխատանքների շնորհիվ էր, որ Ռուսաստանում հոգեբանությունը ընթացավ պոզիտիվիստական ուղղությամբ: 1917թ. հեղափոխությունից հետո, մինչև ռեպրեսիաների ժամանակաշրջանը (1937թ.), Ռուսաստանում լույս է տեսնում հոգեբանությանը նվիրված ավելի քան 600 գիրք [53, էջ 11]:

Խորհրդային միությունում հոգեբանության ծաղկումը նոր թափ ստացավ 1955թ. հետո: Այդ ժամանակ լույս տեսան Լ.Ս. Վիգոդսկու աշխատանքները [61], [62], ում անունը դրական լույսի ներքո ներկայացնելը մինչ այդ արգելված էր: Պ. Գալպերինը ներկայացրեց ինտելեկտի զարգացման իր հայեցակարգը [63], Ա. Լուրիան նեյրոհոգեբանության դիրքերից ներկայացնում է հոգեբանական տարբեր խնդիրների իր սեփական լուծումները [94], Բ. Զեյգարնիկը ստեղծում է պաթոհոգեբանության դպրոց [78], Ա. Զապորոժեցը առաջարկում է մինչդպրոցական տարիքի խնդիրների նորովի լուծումներ [77] և վերջապես՝ Բ.Գ. Անանևը (Լենինգրադ), Ա.Ն. Լեոնտևը (Մոսկվա), հետագայում Ս.Դ. Սմիրնովը և Վ.Ա. Բարաբանշչիկովը ներկայացրեցին հոգեկան արտացոլման խնդրի շուրջ իրենց մոտեցումները: Սա բնավ չի նշանակում, որ վերոնշյալ մարդկանցից բացի Ռուսաստանում ուրիշ ոչ ոք չի զբաղվել ընկալման գործընթացի խնդրով: Այսպիսի ընտրությունը պայմանավորված է միայն այն

հանգամանքով, որ վերոնշյալ թվարկված հոգեբանների աշխատանքներում կարող ենք գտնել հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ ռուս հոգեբանների հիմնական տեսակետները և ամբողջական պատկերացում կազմել նրանց մոտեցումների վերաբերյալ:

Ընկալման խնդրի շուրջ, առաջինը կներկայացնենք մեր հայրենակից Բ.Գ. Անանևի մոտեցումը: Նրա աշխատանքները հիմնականում նվիրված էին զգայության, ընկալման, խոսքի, մարդու հոգեկան զարգացման խնդիրներին [160, էջ 4]:

Զգայական-ճանաչողական գործընթացները, որոնց միջոցով, համաձայն նրա, արտացոլվում է օբյեկտիվ իրականությունը և կարգավորվում է մարդու գործունեությունը, վերաբերում են «...կյանքի գործունեության արմատական ֆենոմեններին և կապված են մարդկային զարգացման՝ իբրև անձի ամբողջական կառուցվածքի խոր շերտերի հետ» [34, էջ 40]: Բ.Գ. Անանևը ապացուցված էր համարում այն մոտեցումը, որ ընկալումը իբրև ամբողջական պատկեր, ինչը իզոմորֆ է օբյեկտի այս կամ այն պարամետրին, «...ձևավորվում է գործունեության ընթացքում, օբյեկտիվացվում է, շտկվում և ստուգվում (համարժեքության աստիճանով) պրակտիկ գործունեության ժամանակ» [33, էջ 10]:

Մարդու կողմից օբյեկտիվ իրականության ճանաչումը, համաձայն նրա, իրենից ներկայացնում է բարդ և հակասական գործընթաց, որում զգայական և տրամաբանական արտացոլումը կազմում են անհրաժեշտ փուլեր կամ աստիճաններ: «Զգայականը և տրամաբանականը փոխկապակցված են այդ միասնական գործընթացում. դրանք միավորված են պրակտիկայով՝ ինչպես ճշմարտության և ճանաչողության աղբյուրի չափանիշներ» [36, էջ 9]:

Բ.Գ. Անանևը հետազոտել և վերլուծել է մարդու ընկալման բոլոր մոդալականությունները (տեսողություն, լսողություն, համ և այլն): Տեսողական ընկալման վերաբերյալ նա ասում էր, որ ինչպես աչքը, այնպես էլ ամբողջ լուսային անալիզատորը, հանդիսանում են արեգակնային լույսի նկատմամբ օրգանիզմի հարմարվողականությունը: Սակայն, միևնույն ժամանակ նա նշում էր, որ ավելի մեծ նշանակություն ունի ոչ թե լույսին հարմարվելը, այլ լույսի և գունային զգացումների միջոցով շրջակա միջավայրի առարկաների նկատմամբ կողմնորոշվելը, ընդ որում, այդ

միջավայրում կողմնորոշվելու կարևոր պայման է հանդիսանում «...առարկաների լուսավորվածությունը, առարկաների մակերևույթների կողմից լուսային ճառագայթների արտացոլումը կամ կլանումը» [37, էջ 139]:

Բ.Գ. Անանևը տեսողական ընկալումը փորձում էր բացատրել նեյրոֆիզիոլոգիական գործընթացների և ֆիզիկայում տեղ գտած մոտեցումների միջոցով (աչքի կառուցվածք, գլխուղեղի համապատասխան բաժիններ, նեյրոնային փոխանցումներ, ճառագայթի երկարություն, հաճախականություն և այլն) [37, էջ 169-200]:

Ձայնի ընկալումը բացատրելիս նա կրկին դիմում էր ֆիզիկայի և ֆիզիոլոգիայի օգնությանը: Այսպես. համաձայն Բ.Գ. Անանևի ձայնը հանդիսանում է տարբեր մարմինների և տարբեր միջավայրերի փոխգործունեության պահերից մեկը: «Ձայնի բնույթը ընդհանրապես անհասկանալի է առանց մարմինների և արտաքին աշխարհի երևույթների փոխգործունեության» [37, էջ 202]: Առարկան հանդիսանում է ձայնի աղբյուր այնքանով, ինչքանով այն գտնվում է շարժվող առաձգական միջավայրի ազդեցությունից օրորման և շարժման վիճակում: Այդ փոխգործունեության արդյունքում ձայնային ալիքը տարածվում է տվյալ միջավայրի պայմաններում՝ արտացոլելով այդ պայմանները՝ ինչպես որ միջավայրը (հավասարապես) այս կամ այն կերպ արտացոլում է ձայնային ալիքները: «Միայն շնորհիվ հնչունակ մարմնի և ֆիզիկական միջավայրի փոխգործունեության ձայնը ազդում է ձայնային ընկալիչի (ռեցեպտորի) վրա՝ որում ձևափոխվում է նյարդային գործընթացի, իսկ հետո արդեն ձայնային վերլուծիչում (անալիզատոր) դառնում է ձայնային զգացում» [37, էջ 202]: Ինչ վերաբերում է հոտի ընկալմանը, Բ.Գ. Անանևը ասում էր, որ այն պայմանավորված է հոտավետ նյութերի քիմիական կառուցվածքով, ինչի շնորհիվ (հոտավետ նյութի քիմիական կառուցվածքի) որոշվում է նաև հոտի որակը, իսկ այդ նյութի ֆիզիկական հատկությունները որոշում են օդում հոտավետ նյութի մոլեկուլների ձևը և տարածման արագությունը, ինչն էլ իր հերթին, «...հետևաբար, որոշում է հոտավետ նյութի օգնությամբ հոտի ընկալիչի գրգռման աստիճանը» [37, էջ 341]:

Համի ընկալումը (քաղցր, դառը, աղի, թթու), ինչպես և հոտինը, համաձայն Բ.Գ. Անանևի, կապված են քիմիական նյութերի հետ: Դրանց կառուցվածքից է կախված, թե

ինչ աստիճանի կգրգռվի համի ընկալիչը և ինչ համի զգացում, վերջնական արդյունքում, կունենա մարդը [37, էջ 369-402]: Հետագայում, նրա մոտեցումները զարգացվեցին ականավոր հոգեբանների աշխատանքներում. Ա. Բոդալյով [51], Ա. Կովալյով [81], Բ. Լոմով [91] և ուրիշներ:

Բ.Գ. Անանևը ինչպես տեսողական, այնպես էլ մյուս մոդալականությունները վերլուծելու ժամանակ, իբրև ելակետային տվյալներ վերցնում էր արդեն արտացոլված հատկությունները. տեսողականի դեպքում՝ գույներ, որոնք մեզ էին հասնում առարկաների մակերևույթներից լույսի միջոցով, ձայնը՝ գոյություն ուներ մինչև մեր կողմից արտացոլելը, համը և հոտը՝ պայմանավորված էին հոտավետ և համ ունեցող քիմիական նյութերով և այլն: Բ.Գ. Անանևը նախապես ընդունում էր, որ մեզ շրջապատող աշխարհում գոյություն ունեն առարկաների որակներ և հատկանիշներ և մեր խնդիրն է բացահայտել այն ուղիները, որոնց միջոցով այդ հատկանիշները մեզ են հասնում: Դա էր պատճառը, որ նա դիմում էր նեյրոֆիզիոլոգիային և փորձում էր բացատրությունը գտնել այդ գիտության օգնությամբ: Նրա տեսադաշտից վրիպել էր այն փաստը, որ առարկաների հատկանիշները (գույն, ձայն, համ, հոտ և այլն), որպես այդպիսին, ձեռք են բերվում միայն արտացոլման ընթացքում, ինչի մասին մենք խոսեցինք առաջին գլխում:

Այսպիսով, Բ.Գ. Անանևը հոգեկան արտացոլման գործընթացը բացատրելիս ակամայից, իբրև ելակետային տվյալներ վերցնում էր արտացոլված հատկությունները և հետո նոր փորձում, դրանցից ելնելով բացատրել ընկալման գործընթացը: Սակայն, ինչպես ցույց է տալիս Ա.Ի. Միրաքյանը, ավարտված գործընթացի արգասիքներից (ինչը հանդիսանում են առարկայի հատկանիշները) անհնար է բացահայտել ընկալում առաջացնող սկզբունքները և օրինաչափությունները, քանի որ արգասիքում (արտացոլված հատկությունում, հատկանիշում) գործընթացը այլևս ավարտված է:

Հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ նախորդից տարբերվող մոտեցում էր առաջարկել ռուս անվանի հոգեբան Ա.Ն. Լեոնտևը: Հոգեբանության պատմության մեջ նա հայտնի է, առավելապես՝ գործունեության իր տեսությամբ (теория деятельности), ինչն արժանացավ խորհրդային ժամանակաշրջանի բոլոր հայտնի հոգեբանների ուշադրությանը: Այդ տեսության միջոցով նա փորձում էր

գործունեության խնդիրը նորովի լուսաբանել և դրա օգնությամբ մեկնաբանել հոգեբանության առջև ծառացած շատ հարցեր: Դրանց շարքին էր պատկանում հոգեկան արտացոլման խնդիրը: Այն հասկանալու համար Ա.Ն. Լեոնտևը առաջարկում էր ընկալումը դիտարկել գործունեության տեսանկյունից [86], [88]:

Հետևելով անվանի ֆիզիոլոգ Ի. Սեչենովին [162], նա ևս կարծում էր, որ շարժման միջոցով մարդը իրականացնում է պրակտիկ շփում՝ ձեռքի «իրական հանդիպում» արտաքին օբյեկտի հետ, ինչը (ձեռքը), այդ ժամանակ, անպայմանորեն ենթարկվում է դրա հատկություններին. «Շոշափելով առարկան, հետևելով դրա ուրվագծին, ձեռքը վերարտադրում է դրա մեծությունը և ուրվագիծը ու ազդանշանների միջոցով, որոնք գալիս են նրա շարժողական ապարատից, ուղեղում ձևավորում է դրանց «պատճենները» [88, էջ 136]:

Ա.Ն. Լեոնտևը, ի տարբերություն այն մոտեցումների, որոնք հոգեկան արտացոլումը համարում էին հայելային, պասիվ, «մահացած» ինչ-որ գործընթաց, գտնում էր, որ այն (հոգեկան արտացոլման գործընթացը) սուբյեկտիվ, ակտիվ գործընթաց է և դրա բովանդակության մեջ մտնում է մարդկային կյանքը, պրակտիկան և «...այն բնութագրվում է օբյեկտիվի և սուբյեկտիվի մշտական փոխներարկման շարժումով» [86, էջ 125]: Բոլոր ճանաչողական գործընթացները, նշում է Ա.Ն. Լեոնտևը, ինչպես և շոշափող ձեռքի գործունեությունը, գտնում են օբյեկտը այնտեղ, որտեղ այն իրականում գոյություն ունի՝ արտաքին աշխարհում, օբյեկտիվ տարածության և ժամանակի մեջ: Վերջինը (ժամանակը) կազմում է սուբյեկտիվ պատկերի այն կարևորագույն հոգեբանական հատկությունը, որն անվանվում է առարկայություն կամ դրա օբյեկտիվացում (объективированность) [86, էջ 128]:

Հանրագումարի բերելով ընկալման վերաբերյալ իր մոտեցումները Ա.Ն. Լեոնտևը 19-րդ իր դասախոսությունում (դասախոսություններ ընդհանուր հոգեբանությունից, ընկալումը իբրև գործունեություն) նշում է, որ 1) զգայական պատկերը այն ձևն է, որում առարկայական աշխարհը, գործունեության արդյունքում, ներկայանում է սուբյեկտին. «Այդ առարկայական աշխարհը ներկայանում է պատկերի մեջ՝ իբրև իրական, այսինքն անկախ սուբյեկտից, որպես գոյություն ունեցող» [87, էջ 150] և 2) ընկալումը, սուբյեկտի համար աշխարհի օբյեկտիվ կեցությունից անցման

գործընթացն է սուբյեկտի կեցության մեջ [87, էջ 150]: Օբյեկտիվ աշխարհը մինչև սուբյեկտին ներկայանալը, համաձայն Ա.Ն. Լեոնտևի ամոդալ է: Ամոդալ ասելով նա նկատի ուներ, որ մեզ շրջապատող աշխարհը կախված չէ մոդալականություններից: «Աշխարհը հյուսված չէ լույսից, գույնից, տատանումներից, տաքությունից, սառնությունից: Այն ունի իր բնութագրիչները և հանդիսանում է այդ որակներով, հատկանիշներով, այսպես ասած մոդալականություններով» [87, էջ 142]: Նրա կարծիքով, մոդալականությունների միջոցով մեզ ներկայացվող աշխարհը համարժեք է այդ ամոդալ՝ մինչ արտացոլումը գոյություն ունեցող աշխարհին: Այստեղ պետք է նաև նշենք, որ համարժեք ասելով Ա.Ն. Լեոնտևը նկատի ուներ արտացոլվածին ավել կամ պակաս, քիչ թե շատ նման, ինչը, համաձայն նրա, ստուգվում է առարկաների հետ բախման, հանդիպման ժամանակ [87, էջ 144]: Ամոդալ աշխարհի պատկերի վերաբերյալ խոսել է նաև Ա.Ն. Լեոնտևի աշակերտ Ս.Դ. Սմիրնովը [164, էջ 7]: Աշխարհի պատկերը սահմանելու ժամանակ նա մատնացույց է անում այն բանի վրա, որ ոչ թե պատկերների աշխարհը, այլ աշխարհի պատկերն է կարգավորում և ուղղորդում մարդու գործունեությունը: Աշխարհի պատկերի հիմնական բնութագրերը նա ձևակերպում էր հետևյալ կերպ.

1. Այն ամոդալ բնույթի է, քանի որ նրա մեջ մտնում են նաև գերզգայական բաղադրիչները, ինչպիսիք են իմաստը և նշանակությունը: Աշխարհի պատկերի ամոդալ բնույթը թույլ է տալիս ասել, որ նրանում ներառված են ոչ միայն օբյեկտի այն հատկությունները, որոնք բացահայտվում են օբյեկտ-սուբյեկտ փոխգործունեության արդյունքում, այլ նաև օբյեկտի այն հատկությունները, որոնց բացահայտման համար անհրաժեշտ են երկու կամ ավելի օբյեկտների փոխգործունեություն:

2. Աշխարհի պատկերը ամբողջական և համակարգային բնույթի է, այսինքն՝ առանձին պատկերների հանրագումարով հնարավոր չէ այն դուրս հանել՝ բացահայտել: Աշխարհի պատկերը ունի բազմամակարդակ կազմություն:

3. Աշխարհի պատկերը ունի անձնական-էմոցիոնալ իմաստ:

4. Աշխարհի պատկերի երկրորդական լինելը արտաքին աշխարհի նկատմամբ [163]:

Ա.Ն. Լեոնտևին և Ս.Դ. Սմիրնովին մասամբ հաջողվեց հաղթահարել այն մոտեցումը, որ մարդը հանդիսանում է շրջապատող միջավայրի պայմանների նկատմամբ ընդամենը հարմարվող էակ [69, էջ 62] և ճանաչողական գործընթացները իրենցից ներկայացնում են զուտ պատճենահանում, սակայն, այդպես էլ նրանց չհաջողվեց ամբողջությամբ դուրս գալ օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունից և հոգեկան արտացոլում առաջացնող գործընթացը դիտարկել՝ չօգտվելով արդեն արտացոլված արգասիքներից (հատկություններից և հատկանիշներից), մասնավորապես. հոգեկան արտացոլումը փորձելով բացատրել մարդու գործունեության միջոցով՝ իբրև մարդու և օբյեկտիվ աշխարհի միջև շփում, հարաբերակցվելու արդյունք, չնայած այն բանին, որ այդ արտաքին՝ մինչ արտացոլված աշխարհը ամոդալ էր, միևնույն է, Ա.Ն. Լեոնտևը և Ս.Դ. Սմիրնովը դրան ակամայից, իմպլիցիտ կերպով վերագրում էին հատկություններ և հատկանիշներ, երբ բարձրացնում էին համարժեքության հարցը և փաստում, որ արտաքին աշխարհի մոդալականությունները բացահայտվում են գործունեության արդյունքում: Այսինքն, դրանք արդեն կային, միայն թե դրանց բացահայտման համար անհրաժեշտ էր սուբյեկտը իր ընկալման մոդալականություններով: Այս կերպ շարժվելով, այն է՝ հոգեկան արտացոլման առաջացումը դիտարկել մարդու գործունեության համատեքստում, ինչն ենթադրում էր մարդու հարաբերությունը, շփումը արդեն արտացոլված արգասիքների հետ («ամոդալ» աշխարհի, որը քիչ թե շատ համարժեք էր արտացոլվածին), հոգեկան արտացոլում առաջացնող գործընթացը նրանք հետազոտում էին արգասիքային մակարդակի վրա: Այդ դեպքում (նման մոտեցման) թաքնված էին մնում հոգեկան արտացոլում առաջացնող սկզբունքները և օրինաչափությունները, որոնք (այդ սկզբունքները և օրինաչափությունները) իրենց ակտիվ դերակատարությունն ունեն օբյեկտները արտացոլելու ժամանակ:

Այս ենթագլուխը կեզրափակենք ռուս անվանի հոգեբան, մեր ժամանակակից՝ Վ.Ա. Բարաբանշչիկովի մոտեցումների վերլուծությամբ:

Վ.Ա. Բարաբանշչիկովը, հոգեբանությունում իր հիմնական հետազոտությունները նվիրելով ընկալման խնդրին, մասնավորապես՝ տեսողական ընկալմանը [42], [41], [44], ցույց է տալիս, որ իմացաբանական պարադիգմայի

շրջանակներում այդ խնդրի (հոգեկան արտացոլման գործընթացի) ուսումնասիրությունները սահմանափակ են և չեն կարող պատասխանել մեզ հուզող շատ հարցերի [43]: Նա գտնում էր, որ ճանաչողական գործընթացը լավ հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել գոյաբանական պարադիգմայի շրջանակներում, ինչը թույլ կտա «...ճանաչողական գործընթացը հասկանալ իր ամբողջականության և զարգացման տեսանկյունից» [46, էջ 431]: Ընկալման գործընթացի վերաբերյալ Վ.Ա. Բարաբանշչիկովի մոտեցումները ինչքանով են համընկնում, համապատասխանում գոյաբանական մոտեցումներին (ինչը, մեր կարծիքով քիչ կարևոր չէ), այս աշխատանքում չենք քննարկի, միայն կնշենք, որ այդ ուղղությամբ մանրակրկիտ վերլուծական աշխատանք է կատարել Ռ.Մ. Նաղդյանը [123]: Այսպես.

Վ.Ա. Բարաբանշչիկովը գտնում էր, որ ընկալման առարկա, նախևառաջ, հանդիսանում է ճանաչողական իրադարձությունը (перцептивное событие)՝ դրա գոյաբանական հատվածները կամ դեպքերը (էպիզոդ). և «Ինքնին ընկալումը իրականացվում է իրադարձության ձևով, այսինքն, կյանքի կոնկրետ հատվածի կամ դեպքի տեսքով» [45, էջ 15]: Նա նշում է, որ ընկալումը օբյեկտիվ տեսանկյունից անընդհատ կապն է անհատի և միջավայրի միջև, մարդու և աշխարհի միջև, ինչի շրջանակներում, աշխարհը անմիջականորեն ներկայանում է մարդուն և հասանելի դառնում նրան: Այս դեպքում, համաձայն Վ.Ա. Բարաբանշչիկովի, ընկալման կրողը կոնկրետ մարդն է՝ իբրև կյանքի սուբյեկտ [43, էջ 7]: Որպես կյանքի սուբյեկտ, Վ.Ա. Բարաբանշչիկովը նկատի ուներ ֆունկցիոնալ հնարավորությունների (հատկություններ, հատկանիշներ, ձևագոյացումներ, դերեր) և միաժամանակ մարդու նվաճումների յուրօրինակ ինտեգրալը:

Սուբյեկտի գոյաբանական պատկերացումը, համաձայն նրա, անմիջականորեն ներգրավում է ևս մեկ իրականություն՝ ընկալման օբյեկտին: Ընկալման օբյեկտը՝ «...դա ֆունցիոնալ կազմություն է, ինչը դրսևորվում է սուբյեկտի ակտիվության պրիզմայի միջոցով» [43, էջ 12]: Այստեղ խոսքը գնում է անհատի և միջավայրի ամբողջական ձևի մասին, ինչը, նրա կարծիքով, լավ նկարագրվում է «իրավիճակ» տերմինի միջոցով: Վ.Ա. Բարաբանշչիկովը ասում էր, որ օբյեկտ իրավիճակը հանդիսանում է առարկա օբյեկտի գլխավոր այլընտրանքը: Օբյեկտ իրավիճակը «ոչ միայն տարբերվում է

ամբողջականությամբ, այլ նաև դինամիկայով, զարգացումով» [43, էջ 12]: Օբյեկտ իրավիճակը հանդես է գալիս իբրև զգայական բովանդակության աղբյուր և որպես մարդու հարաբերությունների և ակտիվության դաշտ: Դրանում (օբյեկտ իրավիճակում) դրված է անհատի «...զգայական ընկալման հնարավորությունը, և նրա նկատմամբ հարաբերությունը, ինչպես նաև դրա փոփոխությունները. առանց ճանաչողական գործընթացի ընկալման օբյեկտ գոյություն չունի» [43, էջ 13]: Ընկալման վերաբերյալ իր մոտեցումները ընդհանրացնելով Վ.Ա. Բարաբանշչիկովը նշում է, որ ընկալման օբյեկտի բովանդակության մեջ ներառված են իրականության ճշմարիտ իրավիճակների ամբողջ սպեկտորը՝ ինչպես բնական, այնպես էլ սոցիալական: «Ընկալումը դիտարկվում է ոչ թե մեկուսացած, այլ տարբեր հոգեկան երևույթների համակարգում մեկտեղ, և հանդիսանում է իբրև բազմաչափ, բազմամակարդակ, զարգացող ամբողջականություն» [43, էջ 24]:

Չնայած այն բանին, որ Վ.Ա. Բարաբանշիկովը ժամանակին եղել է Ա.Ի. Միրաքյանի աշխատակիցը [183, էջ 33] և լավ ծանոթ էր արգասիքային մոտեցման սահմանափակումների հետ ու ընդունում էր այդ մոտեցման սահմանափակ լինելու փաստը, այնուամենայնիվ, նա ևս ընկալման գործընթացը մեկնաբանելիս ցուցաբերում է արգասիքային մոտեցում, մասնավորապես՝ թե կյանքի սուբյեկտը և թե իրավիճակ օբյեկտը նկարագրելիս Վ.Ա. Բարաբանշչիկովը օգտագործում է արդեն արտացոլված արգասիքները (արտացոլված հատկությունները և հատկանիշները) և հետո, դրանց միջոցով փորձում է մեկնաբանել ընկալման գործընթացը ընդհանրապես: Ա.Ի. Միրաքյանը մատնանշում էր հենց նման մեթոդի սահմանափակությունը և առաջարկում էր հոգեկան արտացոլման գործընթացի առաջացման սկզբունքները փնտրել իր իսկ արտացոլած հատկություններից այն կողմ, մասնավորապես՝ բնության օրինաչափություններում:

Ամփոփելով երկրորդ գլխում ներկայացված տեսական վերլուծությունները կարող ենք նշել, որ.

1. Ընկալման այդ բոլոր տեսությունները (օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող, կոնստրուկտիվիզմ, նեյրոֆիզիոլոգիական մոտեցում, Բ.Գ. Անանևի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Դ. Սմիրնովի և Վ.Ա. Բարաբանշչիկովի տեսությունները)

ունենալով միմյանցից տարբերվող մոտեցումներ, տեղ-տեղ նույնիսկ իրար հակադիր տեսակետներ, միևնույն ժամանակ ցուցաբերում էին արգասիքային մոտեցում. հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանելիս իբրև ելակետային տվյալներ էին վերցնում հետազոտվող օբյեկտի հատկությունները՝ գույն, ձայն, համ, հոտ, երկարություն, լայնություն և այլն, և դրանց միջոցով փորձում բացահայտել ընկալման գործընթացի սկզբունքները և մեխանիզմները, որը (այդպիսի արգասիքային մոտեցումը), ինչպես ցույց տվեցինք առաջին գլխում, հնարավոր չէ:

2. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու համար առաջարկում է նոր (ոչ արգասիքային) մոտեցում, ինչն էականորեն տարբերվում է ընկալման ավանդական տեսություններում տեղ գտած արգասիքային մոտեցումից, որտեղ այդ խնդրի սկզբունքները բացահայտելու համար, իբրև ելակետային տվյալներ վերցնում են արդեն արտացոլված հատկությունները և հատկանիշները (գույն, համ, երկարություն, լայնություն և այլն):

Այսպիսով. Ա.Ի. Միրաքյանի ներդրումը հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման մեջ, ի դեմս այդ խնդրի բացահայտման գործում իր նոր՝ ոչ արգասիքային մեթոդաբանության, կարող ենք համարել հիմնավորված և հաստատված:

Սակայն, հոգեբանության մեջ Ա.Ի. Միրաքյանի ներդրումը այսքանով պետք չէ համարել ավարտված: Ինչպես ցույց կտանք վերջին՝ երրորդ գլխում, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մի շարք դրույթների միջոցով (ոչ արգասիքային մոտեցում, աֆիզիկալ մտածելակերպ, անիզոտրոպ հարաբերությունների ստեղծում և այլն) հնարավոր է արդի հոգեբանության մեջ մեկնաբանել և տարբեր հիմնարար խնդիրների լուծման ուղիներ գտնել, մասնավորապես՝ էկոհոգեբանությունում, հոգեբանական համարժեքության խնդիրը մեկնաբանելիս, կրթական ոլորտում և հոգեթերապիայում:

## ԳԼՈՒԽ 3. ԸՆԿԱԼՄԱՆ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ Ա.Ի. ՄԻՐԱՔՅԱՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Երկրորդ գլխում ցույց տվեցինք, հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանելիս, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մոտեցումների էական տարբերությունները ընկալման հիմնական տեսություններից: Ինչպես նաև մատնանշեցինք այդ տեսություններում արգասիքային մոտեցման դրսևորումները և հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելիս դրանց (արգասիքային մոտեցման) սահմանափակումները:

Ա.Ի. Միրաքյանը իր ամբողջ գիտական գործունեությունը հիմնականում նվիրեց հոգեկան արտացոլման գործընթացը ուսումնասիրելուն, ինչի արդյունքում մշակվեց իր մոտեցումներին և մտածելակերպին համահունչ (ոչ արգասիքային, աֆիզիկալ) մեթոդաբանություն: Մեր կարծիքով, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը, բացի նրանից, որ թույլ տվեց նոր՝ ոչ արգասիքային մոտեցման միջոցով հետազոտել հոգեկան արտացոլման գործընթացը, նաև նախադրյալներ ստեղծեց հոգեկան այլ երևույթները ուսումնասիրելու համար: Ասվածի ապացույց կարող է ծառայել նրա հետևորդների աշխատանքները (Վ.Ի. Պանով, Ռ.Մ. Նաղդյան, Ռ.Հ. Պողոսյան, Ս.Լ. Արտեմենկով, Վ.Ի. Կոզլով, Գ.Վ. Շուկովա, Ն.Լ. Մորինա և ուրիշներ) [27], [152], [153, էջ 36], որոնցում փորձ է արվում Ա.Ի. Միրաքյանի մոտեցումները կիրառել հոգեկան տարբեր երևույթները բացատրելու ժամանակ: Սակայն, ատենախոսության այս հատվածում կներկայացնենք Վ.Ի. Պանովի և Ռ.Մ. Նաղդյանի աշխատանքները, որոնցում, ըստ մեզ, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումն արտացոլված է առավել ամբողջական և ամփոփիչ կերպով: Ինչպես նաև աշխատանքի վերջին ենթագլուխներում կներկայացնենք կրթական ոլորտում և հոգեթերապիայում կատարված տեսական հետազոտություններ, որի ժամանակ փորձ է արվում այդ բնագավառներում որոշ հիմնարար հարցեր մեկնաբանել Ա.Ի. Միրաքյանի մոտեցումների միջոցով:

## 3.1. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումը էկոհոգեբանությունում

Վ.Ի. Պանովը լինելով Ա.Ի. Միրաքյանի աշակերտը և երկար տարիներ աշխատելով նրա հետ՝ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության շրջանակներում հետազոտում էր օբյեկտների շարժման, արագության և կայունության ընկալման առաջացման խնդիրը, ինչը՝ 1996թ.-ին ամփոփվեց իր դոկտորական ատենախոսությունում «Непосредственно-чувственный уровень восприятия движения и стабильности объектов» («Օբյեկտների ստաբիլության և շարժման անմիջական-զգայական ընկալման աստիճանը») [144]: Սակայն, այսքանով նրա գիտական գործունեությունը չսահմանափակվեց, այլ, այսպես ասած, ազդարարեց նոր փուլի սկիզբը:

Վ.Ի. Պանովը ընդունելով Ա.Ի. Միրաքյանի այն մոտեցումը, որ հոգեկանի ուսումնասիրումը մինչ այժմ իրականացվել է իր իսկ արգասիքներից ելնելով, իսկ այդ դեպքում, հոգեկան գործընթացը, որն առաջացնում է այդ արգասիքները (օբյեկտի հատկությունները, հատկանիշները), մնում է թաքնված, առաջ է քաշում հետևյալ հարցը. «Ի՞նչ է ուսումնասիրում հոգեբանությունը և արդյո՞ք հոգեբանության առարկան հանդիսանում է հոգեկանը» [145, էջ 50] և միաժամանակ նշում, որ այստեղ մենք բախվում ենք մի շարք պարադոքսների հետ, այդ թվում.

<u>Պարադոքս 1.</u> «Եթե մենք վերցնենք «հոգեբանություն» տերմինի ուղղակի իմաստը, ապա հոգեբանությունը՝ դա հոգու մասին գիտություն է» [145, էջ 50]: Սակայն, ինչպես նշում է Վ.Ի. Պանովը, հոգեբանություն գիտությունը անխոս ընդունում է, որ ինքնին «հոգին» աստվածաբանության ուսումնասիրման առարկան է, այլ ոչ թե հոգեբանության: Հոգեբանությունը, ինչպես նշված է ամենատարբեր հոգեբանական դասագրքերում, հետազոտում է հոգեկան գործընթացները, էմոցիոնալ վիճակները, անձի հատկանիշները, գիտակցությունը և հոգեկան այլ երևույթները, սակայն ոչ «հոգին»: [145, էջ 50]:

Հոգեբանական տարբեր խմբերը, նրա խոսքով, սովորաբար չեն ընդգծում այն հանգամանքը, որ գիտականության չափանիշը հանդիսանում է բնագիտական

մտածողությունը, ինչին (բնագիտական մտածելակերպին), խիստ կերպով հետևում են ֆիզիկայում և մաթեմատիկայում: Համաձայն Վ.Ի. Պանովի, դրա պատճառը այն է, որ բնագիտական մտածելակերպի հիմքերը դրվել են Դեկարտի և այլ փիլիսոփաների ու ֆիզիկոսների կողմից: Հոգեբանության զարգացման հետ մեկտեղ նման մտածելակերպը, ինչը, ի սկզբանե, նախատեսված էր և մշակված արտաքին հատկանիշները և հարաբերությունները (այլ ոչ թե հոգեկան հատկանիշները) հետազոտելու համար, ներառեց նաև հոգեբանությունը: Ժամանակակից հոգեբանության հիմնադիրները համարում էին, որ այդ մտածելակերպի կիրառումը հոգեբանությանը կդարձնի «իսկական» գիտություն [145, էջ 50, 51]:

<u>Պարադոքս 2.</u> Եթե մենք ելնում ենք այն բանից, որ հոգեբանության օբյեկտ է հանդիսանում հոգեկանը, ապա այդ դեպքում մեր կողմից իբրև հոգեբանության հետազոտման առարկա է սահմանվում հոգեկան գործընթացները (ընկալում, մտածողություն, հիշողություն և այլն), էմոցիոնալ վիճակները և ապրումները, խառնվածքը և կարողությունները, անձնային հատկությունները ու գիտակցությունը և այլն: Սակայն, եթե մենք այն դիտարկենք համակարգության սկզբունքից, ապա հոգեկանը չի կարող դուրս հանվել (հասկանալ) իր դրսևորումներից ելնելով, չնայած այն բանին, որ հոգեկանը դրսևորվում է դրանց միջոցով: Այդ դեպքում Վ.Ի. Պանովի մոտ առաջ է գալիս տրամաբանական մի հարց. ինչպե՞ս որոշակիացնել հոգեկանը, որպես հետազոտման օբյեկտ, չէ որ զգայությունները, ընկալումը, մտածողությունը, անձը, գիտակցությունը՝ այդ բոլորը հոգեկանի դրսևորումներն են՝ այս կամ այն արդյունքի ձևով: «Ինչպե՞ս սահմանել հոգեկանը՝ իբրև հետազոտման առարկա, որպես մի երևույթ, ինչը առաջացնում է այդ դրսևորումները» [145, էջ 51]:

<u>Պարադոքս 3.</u> Անդրադառնալով Ա.Ն. Լեոնտևի գործունեության տեսությանը, նա նշում է, որ համաձայն դրա, հոգեկանը դրսևորվում և ձևավորվում է գործունեության մեջ և գործունեության միջոցով: Այդուհանդերձ, հոգեկանը ներկայանում է մեր առջև միջնորդավորված և, ավելին, առարկայացված նպատակներով ու պայմաններով, ինչպես նաև հանդիսանում է այն գործունեության առարկան, ինչի միջոցով և շրջանակներում ստիպում են հոգեկանին դրսևորել իրեն: «Փոխելով գործունեությունը, մենք ստանում ենք հոգեկանի տարբեր դրսևորումներ՝

իբրև մեր հետազոտման առարկա: Ինչքան փոխում ենք, այնքան տարբեր դրսևորումներ ենք ստանում» [145, էջ 51]:

Պարադոքս 4. Վ.Ի. Պանովը բարձրացնում է հետևյալ հարցը. «Գուցե պետք է մեր հետազոտման օբյեկտը փնտրել հոգեկանի հիմնարար հատկություննեերու՞մ» [145, էջ 51]: Այսպես, եթե ելնենք հոգեկան արտացոլման սկզբունքից, ապա հոգեկանի հիմնարար սկզբունքը հանդիսանում է նրա առարկայականությունը, իսկ դա նշանակում է, որ հոգեկանի վերոնշյալ դրսևորումները (գործընթացները, վիճակները, գիտակցությունը և այլն) մեր կողմից չեն հետազոտվում դրանց անմիջական ձևերում: Դրանք (հոգեկանի դրսևորումները) հետազոտվում են միջնորդավորված. կամ դրանց առարկայական բովանդակությունից ելնելով կամ էլ ճանաչողական գործընթացի բովանդակության պահանջներից և նպատակներից (խնդիրներից) ելնելով:

Պարադոքս 5. Համաձայն Վ.Ի. Պանովի, գոյություն ունեն զարգացման և գործընթացի սկզբունքներ, որոնք հետազոտական մտածելակերպին հնարավորություն են տալիս իբրև հետազոտման առարկա դարձնել հենց հոգեկան երևույթների առաջացման գործընթացային կողմը: «Գոյություն ունի, այսպես ասած, հատումների և փորձի ձևավորման մեթոդ, որոնք թույլ են տալիս հետևել այս կամ այն հոգեկան երևույթի զարգացման գործընթացային փուլերը (հատումները), կամ էլ մոդելավորել նմանատիպ զարգացման գործընթացը՝ վերակառուցելով պայմանները և այդ ենթադրյալ գործընթացի զարգացման մեխանիզմը» [145, էջ 51]: Սակայն, ինչպես նշում է նա, երկու դեպքում էլ ելակետային հիմքեր են ծառայում նախապես (նպատակային) տրված հոգեկանի այն արդյունքները, որոնց գործընթացի զարգացումը մեր կողմից հետազոտվում է: Հետևաբար, երբ մենք փորձում ենք որպես հետազոտման առարկա վերցնել հոգեկանի գործընթացային կողմը, ապա մենք այն տեսնում ենք փորձարարական և առարկայական հետազոտմանը հատուկ մտածելակերպի միջոցով, այսինքն՝ ելնելով հոգեկանի ոչ թե գործընթացային՝ այլ արգասիքային կողմից [145, էջ 51]:

Պարադոքս 6. Հոգեկանի «գործընթացային» մասը, ընդունելով իբրև հետազոտման առարկա, համաձայն Վ.Ի. Պանովի, կառուցվում է տարածության և ժամանակի հասկացությունների (կատեգորիաների) վրա: Դա նշանակում է, որ

հետազոտական մտածողությունը, պատկերավոր ասած, «մտածում» է «տարածության - ժամանակի» կատեգորիաներով և հասկացություններով: «Մեր (մարդկային) մտածողությունը իմաստավորում է այնպիսի երևույթները, ինչպիսիք են «փոփոխությունը», «ժամանակը», «դինամիկությունը», «գործընթացը», «գործընթացայինը», պատկերացնելով և նկարագրելով դրանք տարածական պատկերացումների, հասկացությունների և հարաբերությունների օգնությամբ՝ միջնորդավորելով «ժամանակը» և դրա «փոփոխությունը» տարածական պատկերացումներով և հարաբերություններով» [145, էջ 52]:

Վ.Ի. Պանովը ասում է, որ եթե մենք կատարենք մտածողական փորձ, ապա կպարզվի, որ մարդը կարող է իմաստավորել «ժամանակը» միայն «տարածական հարաբերությունների» ձևով: Սակայն, մեզ շրջապատող տարածությունը կրկին մեր հոգեկան արտացոլման արգասիքն է՝ դրա միջնորդավորված տարբեր ձևերում: Հոգեբանական հետազոտումներում (և ոչ միայն) «տարածությունը»՝ իբրև գիտահոգեբանական հետազոտական մտածողության ելակետային կատեգորիա, ունի տարբեր իմաստներ և տարբեր բնութագրեր [147]: Այդուհանդերձ, այսքանից ելնելով կարող ենք ասել, նշում է Վ.Ի. Պանովը, որ հոգեկանի «գործընթացայինությունը»՝ որպես հետազոտման օբյեկտ և առարկա, անմիջականորեն կախված է այն բանից, թե ինչ իմաստ է ներդնում հետազոտողը շրջապատող աշխարհի տարածականության հասկացության մեջ [142]:

<u>Պարադոքս 7.</u> Այս վերջինը, Վ.Ի. Պանովը համարում է նախորդ պարադոքսների պատճառը և նշում, որ այն (պարադոքսը) հոգեբանությանը «ստիպում» է հատուկ մեթոդաբանական դիրքորոշում ընդունել և դրանով իսկ առանձնանալ մի շարք բնական գիտություններից: Բանը նրանում է, որ հոգեբանությունում, ի տարբերություն այլ գիտությունների, հոգեկանը հանդես է գալիս միաժամանակ թե՛ որպես հետազոտման օբյեկտ և թե՛ որպես ինքն իրեն հետազոտելու միջոց (մտածողության եղանակ), այսինքն. տեղի է ունենում «Հոգեկանի՝ իբրև օբյեկտի և դրա հետազոտման միջոցի համընկնում» [145, էջ 52]: Այդ իսկ պատճառով, հոգեկանը որպես հետազոտման առարկա միշտ միջնորդավորված է և սահմանափակված ոչ միայն իր իսկ ֆենոմենալ կողմով («գործընթացը արդյունքում

ավարտված է» այդ իսկ պատճառով ներկայացված չէ), այլ նաև այն մտածողության եղանակով (այն նույնպես արգասիքային է և հոգեկանի ֆենոմենալ դրսևորում), ինչի միջոցով իրականացվում է հոգեկանի մեկնաբանումը՝ իբրև հետազոտման օբյեկտ և առարկա:

Այդուհանդերձ, Վ.Ի. Պանովի խոսքով, գիտական հոգեբանությունում ոչ թե ուսումնասիրվում է հոգեկանը՝ որպես այդպիսին, այլ նրա տարատեսակ դրսևորումները (մասնավոր ֆենոմենները), որտեղ, հոգեկանը կախված է հետազոտողի մտածելակերպից: «Կախված հետազոտական մտածելակերպից մենք ֆիքսում ենք հոգեկանը (իբրև հետազոտման օբյեկտ և առարկա) «զգեստավորված»՝ այս կամ այն ֆենոմենալ դրսևորումներում, սակայն, ոչ երբեք հոգեկանը՝ որպես այդպիսին, որը (հոգեկանը), դրսևորվելով իր ֆենոմեններից մեկում, այնուամենայնիվ, չի կարող դուրս հանվել (ճանաչելի դառնալ) և դրանցից ոչ մեկի միջոցով» [145, էջ 52]:

Համաձայն Վ.Ի. Պանովի, հոգեկանը հնարավոր չէ մեկնաբանել իբրև հետազոտման առարկա և, համապատասխանաբար, այն հնարավոր չէ ուսումնասիրել անմիջականորեն տրված հոգեկան իրականության տեսքով (պատկեր, գործընթաց, վիճակ և այլն), քանի որ «...մենք անընդհատ կվերսկսենք դեկարտյան, առարկայական տրամաբանությունը օգտագործելով հոգեկանը իբրև հետազոտման օբյեկտ և առարկա սահմանել» [145, էջ 52]: Այս փակուղուց դուրս գալու համար նա առաջարկում էր հետազոտման օբյեկտ դարձնել պայմանները, որոնք անհրաժեշտ են և ապահովում են հոգեկան այս կամ այն իրականության տեսքով՝ հոգեկանի գոյության իրական ձևի առաջացման հնարավորությունը: Սակայն, այդ դեպքում, համաձայն նրա, պետք է հասկանալ, թե ինչ ելակետային հիմքերով և ինչ ձևով պետք է կառուցվի հետազոտման տրամաբանությունը, ինչի առարկան հանդիսանում է ոչ թե ինքնին «հոգեկան իրականությունը», այլ «պայմանները», որոնք ապահովում են հոգեկան անմիջական գործընթացում՝ հոգեկանի առաջացման հնարավորությունը [148, էջ 3-6]:

Սրանք այն տեսական հիմնական նախադրյալներն էին, որոնց օգնությամբ հետագայում պետք է կառուցվեր հոգեկանի զարգացման Վ.Ի. Պանովի էկոհոգեբանական մոտեցումը: Սակայն, ամեն ինչ հերթով.

1992թ. – ին, Վ.Վ. Դավիդովի նախաձեռնությամբ, Վ.Ի. Պանովը ընդգրկվում է «Մանկության էկոլոգիան» և «Շնորհալի աշակերտ» ակադեմիական ծրագրում, որպես համաղեկավար: Այդ ընթացքում նա սկսում է հետազոտել դպրոցական տարիքի երեխաների ուսուցման և զարգացման (ֆիզիկական, հոգեկան, սոցիալական) վրա շրջակա միջավայրի ազդեցությունը: Շրջակա միջավայր ասելով նկատի ունեին ընտանեկան, կրթական (մինչդպրոցական, դպրոցական, բարձագույն և արտադպրոցական կրթությունը) միջավայրը, ինչպես նաև տարածական-առարկայական, ինֆորմացիոն, էթնոմշակութային և այլն: Այս և ուրիշ հետազոտությունները իրականացնելու համար 1996թ. – ին, Ռուսաստանի Կրթության Ակադեմիայում ստեղծվում է զարգացման էկոհոգեբանության լաբորատորիան: Արդյունքում, Վ.Ի. Պանովը լծվում է հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցման մշակման գործին (այդ թվում կրթական միջավայրի պայմաններում), շատ լավ հասկանալով, որ իր առջև դրված խնդիրները բացատրելու համար անհրաժեշտ է հոգեկանի հետազոտման նոր մեթոդաբանություն: Այս աշխատանքը իրականացնելու համար նա փորձում է օգտագործել այն մեթոդաբանական նախադրյալները և տեսական կառուցվածքները, որոնք մշակվել և փորձով վավերացվել էին ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում:

Եթե ընդհանրացնենք հոգեկանի զարգացման վերաբերյալ էկոհոգեբանության հիմնական դրույթները, ապա կարող ենք ասել, որ այն կայանում է հետևյալում.

1. Հոգեկանը դիտարկվում է իբրև կեցության յուրահատուկ ձև: Այդ իսկ պատճառով, ինչպես և կեցության ցանկացած ձև, այն բնութագրվում է ի սկզբանե իրեն հատուկ սուբստանցիոնալությամբ, այսինքն, ինքն իր մեջ ունի իր իսկ զարգացման աղբյուրը, որը, համապատասխան պայմանների առկայության դեպքում, դրսևորվում է հոգեկան ակտիվության տարբեր ձևերում՝ միջնորդավորելով անհատի (իբրև հոգեկանի սուբյեկտի) փոխազդեցությունը շրջակա միջավայրի հետ (ընկալման, հակազդման, վարքագծի, գործունեության և այլն).

2. Հոգեկանի զարգացումը (որպես կեցության ձևեր) կարելի է անվանել մի գործընթաց, որի ժամանակ տեղի է ունենում կոնկրետ ձևերի առաջացման միջոցով դրա (հոգեկանի) դրսևորում և զարգացում (հոգեկան գործընթացների, հոգեկան

վիճակների, գիտակցության տեսքով), որոնք ապահովում են (միջնորդում են) հոգեկան ակտիվության իրենց սուբյեկտի փոխգործունեությունը շրջակա միջավայրի հետ (գործունեության, վարքի և հոգեկանի ակտիվության այլ բաների տեսքով), որոնցից յուրաքանչյուրը անխուսափելիորեն անցնում է հետևյալ փուլերը. զարգացում և մահ (անցում դեպի կեցության այլ ձևի):

3. Հոգեկանի կողմից հոգեկան ակտիվության տարբեր ձևերի և տարբեր աստիճաններում իր իրացման տեսքով (հոգեկան գործընթացների, վիճակների և գիտակցության) գոյության արդիական ձևի ձեռքբերումը տեղի է ունենում մարդու և արտաքին (շրջապատող) ինչպես նաև ներքին (մենթալ) միջավայրերի փոխազդեցության միջոցով. կատարվում է հոգեկանի առաջացման գործընթաց՝ «հնարավորությունում կեցությունը» անցում (տեղափոխում) է կատարում դեպի «կեցությունը իրականությունում» (համաձայն Արիստոտելի) [148, էջ 288-290]: Այդ իսկ պատճառով, հոգեկանը որպես հետազոտման օբյեկտ և առարկա ձևակերպելու համար, Վ.Ի. Պանովը ճիշտ և անհրաժեշտ է համարում, իբրև ելակետային նախադրյալ վերցնել հարաբերությունը. «մարդ – շրջապատող միջավայր (բնական, սոցիալական)»: «Այդ ժամանակ հոգեկանը իրեն դրսևորում է և հոգեկանի ակտիվության տեսքով ստանում արդիական գոյության ձև» [148, էջ 290]:

Վերոնշյալից ելնելով կարող ենք ասել, որ հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցման մեթոդաբանական հիմք է հանդիսանում «մարդ – միջավայր (արտաքին, ներքին)» կամ ավելի լայն համատեքստում վերցված «հոգեկան ակտիվության սուբյեկտ (մարդ կամ այլ էակ) – շրջակա միջավայր» համակարգային հարաբերությունը, ինչպես նաև այդ հարաբերությունում բաղադրամասերի միջև փոխազդեցությունները [148, էջ 78-167]:

Հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցման հիմնական դիրքորոշումները, այսպիսով, ինչպես նշում է Վ.Ի. Պանովը, իսկապես կարող են օգտագործվել ոչ միայն հոգեկան տարբեր ֆենոմենները և դրանց առաջացման հիմքերը հետազոտելու ընթացքում իբրև տեսական նախադրյալներ և կառուցվածքներ, այլ նաև կարող են կիրառվել հոգեկանի ուսումնասիրման ժամանակ տարբեր տեսական մոտեցումների մեթոդաբանական նախադրյալները վերլուծելու համար:

Ինչպես նաև, հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցման մեթոդաբանության մշակման արդյունքում ավելի ամբողջական է դառնում հոգեկան իրականությունները հետազոտող սուբյեկտի և ինքնին հոգեկանի՝ իբրև հետազոտման օբյեկտի ու առարկայի վերաբերյալ մոտեցումը:

Էկոհոգեբանությունում հոգեկանը դիտարկվելով իբրև կեցության ձև և «մարդ – շրջակա միջավայր» հարաբերությունը օգտագործելով որպես ելակետային նախադրյալներ, էկոլոգո-հոգեբանական հետազոտություններում, հոգեկանը իբրև հետազոտման օբյեկտ, հանդես է գալիս իր գոյության հետևյալ ձևերում. 1) իր գոյության սեփական ձևում, 2) վերափոխված (առարկայացված), 3) ձևավորված (դարձած) և 4) իր գոյության վիրտուալ ձևում:

1. Հոգեկանը իրական գոյության իր սեփական ձևում՝ դա հոգեկանն է գիտակցության, հոգեկան գործընթացների, վիճակների, ընդունակությունների և մարդու հնարավորությունների (կամ այլ կենդանի էակների) տեսքով ֆենոմենոլոգիապես ներկայացված ձևում, ինչը, մշտապես գտնվում է շրջակա միջավայրի հետ փոխազդեցության մեջ: Այստեղ, հոգեկան իրականության սուբյեկտ հանդես է գալիս «մարդը», ով կարող է դիտարկվել իբրև «կենսաբանական (ֆիզիոլոգիական), սոցիալական, հոգևոր էակ, ինչպես նաև հոգեկան էակ, այսինքն՝ կեցության հոգեկան իրականությունը առաջացնող և զարգացնող սուբյեկտ» [148, էջ 295]:

Այս դեպքում, հոգեկանը հետազոտողին ներկայանում է ֆենոմենոլոգիական տեսքով՝ իբրև կատարված գործընթացի արդյունքներ: Դա, ինչպես նկատում է Վ.Ի. Պանովը, իմացաբանական պարադիգմայի շրջանակներում, հոգեբանական ավանդական հետազոտությունների օբյեկտն է և առարկան, ինչի ժամանակ (հոգեբանական հետազոտության) մաքսիմալ կերպով օգտագործվում է բնագիտական մտածելակերպը և դեկարտյան տրամաբանությունը [148, էջ 295, 296]:

2. Հոգեկանը վերափոխված (առարկայացված) ձևում՝ դա հոգեկանն է մի երևույթի տեսքով, որը ներկայացված է բնական և մարդածին (անտրոպոգեն) շրջակա միջավայրի հոգեբանական և գրեթե հոգեբանական որակներով, այդ թվում՝ առարկայացված մշակույթի օբյեկտներում (գրքեր, ճարտարապետություն, ինտերնետ

և այլն) և մարդածին բնապատկերներում: Այս դեպքում, համաձայն էկոհոգեբանական մոտեցման, հոգեկան իրականության սուբյեկտ է հանդես գալիս «շրջակա միջավայրը», այսինքն, «մարդ – շրջակա միջավայր» համակարգի այլ բաղադրամասը: Դա էկոհոգեբանական հետազոտությունների օբյեկտն է և առարկան: Եթե հետազոտման առարկա է հանդես գալիս շրջակա միջավայրի հոգեբանական և գրեթե հոգեբանական որակները, ապա, ըստ Վ.Ի. Պանովի, «մարդու հոգեբանական ֆենոմենները, որոնք առաջանում են նրա մոտ շրջակա միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում, օգտագործվում են շրջակա միջավայրի նշված հոգեբանական և գրեթե հոգեբանական հատկությունների և որակների գնահատման համար իբրև չափանիշ և միջոց» [148, էջ 296]:

3. Հոգեկանը ձնավորված (դարձած) ձևում («կեցությունը իրականությունում») իրենից ներկայացնում է հոգեկան իրականության անմիջական առաջացումը, այսինքն, հոգեկանի կողմից ձեռք է բերվում գործընթացների, վիճակների, գիտակցության (և, հնարավոր է, նույնիսկ նոոսֆերայի) տեսքով իր գոյության իրական ձևը. «Ճեղքվածքում» տեղի է ունենում «մարդ – շրջակա միջավայր» բաղադրամասերի միջև, կամ, ավելի լայն իմաստով վերցված, «հոգեկան ակտիվության սուբյեկտ (մարդ կամ այլ էակ) – շրջակա միջավայր» համակարգերի միջև գործընթաց և փոխազդեցություն: Հոգեկանը կեցության այս ձևում հնարավոր է ուսումնասիրել ինչպես իմացաբանական, այնպես էլ գոյաբանական պարադիգմայի շրջանակներում:

Գոյաբանական պարադիգմայի շրջանակներում հոգեկան իրականության բացահայտումը՝ իբրև հետազոտման օբյեկտ և սուբյեկտ, պահանջում է սկզբունքների նախնական ռեֆլեքսիա, որոնց վրա պետք է կառուցվի այդ պարադիգմայի իրականացումը: Էկոհոգեբանական մոտեցումում, ինչպես նշում է Վ.Ի. Պանովը, իբրև այդպիսիք հանդես են գալիս ձևաստեղծման սկզբունքը և կեցության տեսքով հոգեկանի վերաբերյալ պատկերացումը, ինչը, իր գոյության ընթացքում, հոգեկան ակտիվության սուբյեկտի (մարդու կամ կենդանի այլ էակների) և շրջակա միջավայրի կամ դրա սուբյեկտների միջև փոխազդեցության ու գործընթացի շնորհիվ ձեռք է բերում ռեալություն (իրականություն, ֆենոմենալություն): Այդ մոտեցումում, իբրև հոգեկան իրականություն առաջացնող սուբյեկտ հանդես է գալիս «հոգեկան

ակտիվության սուբյեկտ – շրջակա միջավայր, կամ այն ներկայացնող հոգեկան ակտիվության այլ սուբյեկտներ» համակարգը: Սակայն, Վ.Ի. Պանովը նշում է, որ իբրև հետազոտման առարկա հանդես է գալիս ոչ թե այս կամ այն գործընթացի կամ ֆենոմենի ինքնին հոգեկան իրականությունը, այլ դրա առաջացման պայմանները և մեխանիզմները [148, էջ 188-207]:

4. Հոգեկանը վիրտուալ ձևում՝ դա հոգեկանի «հնարավորությունում կեցության լինելու» ձևն է: Վ.Ի. Պանովը ասում է, որ այն վիրտուալ է անվանվել այն իմաստով, որ «հոգեկան ակտիվության սուբյեկտ (մարդ կամ այլ էակ) – շրջակա միջավայր» համակարգում, փոխազդեցության միջոցով, այն հնարավորություն և մտադրություն ունի ինքնադրսևորման և իր իրական գոյության ձևերի առաջացման: Հոգեկանը այս ձևում (կեցության վիրտուալ ձևում) հետազոտման ենթակա չէ: Սակայն, ըստ Վ.Ի. Պանովի, հնարավոր և անհրաժեշտ է այն օգտագործել հոգեկանի կոնցեպտուալ հնարավորությունները հետազոտելու համար՝ իբրև հայեցակարգային վերացարկում և տրանսցենդենտալ ելակետային նախադրյալներ (նրա այս կամ այն ֆենոմենների տեսքով, հոգեկան իրականության առաջացման հնարավորություն)՝ իբրև անցումը «կեցությունը հնարավորությունում» դեպի « կեցությունը իրականությունում»: Հոգեկանի վիրտուալ ձևում «…հետազոտման օբյեկտ են դառնում այն սկզբունքները, որոնք ապահովում են հոգեկան իրականություն ստեղծող՝ առաջացնող գործընթացի հնարավորությունը» [148, էջ 297]:

Օգտագործելով էկոհոգեբանական փոխազդեցության ձևերը և այն պատկերացումը, որ հոգեկանը կեցության ձև է, Վ.Ի. Պանովը ներմուծում է բնական իրավիճակի զարգացման հասկացությունը և արդիականացնում էմպիրիկ փորձը ու բնական զարգացման իրավիճակներում էկոլոգիական գիտակցության անհատական ընդլայման տեխնոլոգիան: Այդ տեխնոլոգիայի հիմք է հանդիսանում զարգացման բնական վիճակի պայմաններում, գիտակցաբար յուրահատուկ հոգեկան վիճակների ապրումի ունակության զարգացումը, ինչը բերում էր մարդու և այլ մարդկանց ու նույնիսկ բույսերի հետ անմիջական – զգայական փոխազդեցության ֆունկցիոնալ շրջանակի մեծացմանը, ինչպես նաև «ծառերի հետ ոչ բառային հաղորդակցման փոխազդեցության հնարավորության զարգացմանը» [148, էջ 298]:

Հոգեկանի զարգացման էկոհոգեբանական հիմնական դրույթների օգտագործումը, համաձայն Վ.Ի. Պանովի, թույլ է տալիս հիմնավորել, այսպես ասած, ֆանտաստիկ մի վարկած, այն է. «նոոսֆերա» հասկացությունը միայն փոխաբերական (մետաֆորիկ) արտահայտություն չէ: Համաձայն այդ վարկածի, նոոսֆերան՝ դա հոգեկան իրականության յուրահատուկ ձև է, որն առաջանում է սուբյեկտ-առաջացնող այնպիսի մարդկություն - մոլորակ փոխազդեցության գործընթացի արդյունքում, որը «մարդկություն-մոլորակ» համակարգը դարձնում է ամբողջական սուբյեկտ (էվոլյուցիայի հետ համատեղ)՝ իբրև իմացաբանական մի ձևաստեղծ գործընթաց: Վ.Ի. Պանովը նշում է, որ հենց այս դեպքում է հնարավոր (մարդկության և մոլորակի միջև փոխազդեցության), որպեսզի առաջանա համակարգային այնպիսի մի որակ, որը կունենա հոգեկան իրականությանը համապատասխան բնութագրեր: Այդ բնութագրերը՝ իբրև մեկ ամբողջականություն, կարտահայտվեն մարդու և մոլորակի, դրանց արտացոլման, փոխադարձ փոխանակումների և հակազդումների համար համատեղ ապրելու (գոյության) հնարավորություններով. [148, էջ 248-282]:

Համաձայն Վ.Ի. Պանովի, «Նոոսֆերային» հոգեկան իրականությունը առաջանում է մարդու (մարդկության) և շրջակա միջավայրի բնական օբյեկտների միջև (և առավելագույն չափով վերցված՝ ամբողջ մոլորակի միջև) այնպիսի ֆունկցիոնալ դիապազոնի փոխազդեցության սահմաններում, ինչի արդյունքում առաջանում է մարդու այն անմիջական ապրումը, որ ինքը գտնվում է այդ օբյեկտների հետ մի ամբողջականության մեջ: Նման ապրումի առաջացման անհրաժեշտ պայման է հանդիսանում այն անմիջական-զգայական փոխազդեցության ֆունկցիոնալ դիապազոնի մեծացումը (ընդհուպ մինչև էքստրանսենսոր հնարավորությունները), որը ձևավորվել է տվյալ մարդու մոտ իր ֆիլո - և օնտոգենեզում:

Այս կերպ, Վ.Ի. Պանովը համարում է հաստատված այն ենթադրությունը, որ հոգեկանի զարգացման վերաբերյալ էկոհոգեբանական մոտեցման հիմնական դրույթները կարող են օգտագործվել իբրև նոր հոգեբանական ուղղության՝ միջտեսակային (межвидовой) հոգեբանության տեսական-մեթոդաբանական հիմք, ինչը (միջտեսակային հոգեբանությունը) գտնվում է «ընդհանուր հոգեբանության, կենդանաբանական հոգեբանության, համեմատական հոգեբանության, սոցիալական

և էկոլոգիական հոգեբանության և նույնիսկ երկրաբանության սահմանագծին» [148, էջ 298]:

Ինչպես տեսնում ենք, Վ.Ի. Պանովի էկոհոգեբանական մոտեցման հիմքում ընկած է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցումը, այն է. հոգեկանն ուսումնասիրելիս անհրաժեշտ է իբրև ելակետային տվյալներ չվերցնել արդեն արտացոլված արգասիքները՝ հետազոտվող օյեկտի, երևույթի հատկությունները և հատկանիշները: Առաջնորդվելով ոչ միայն այս հիմնական մոտեցումով, Վ.Ի. Պանովը հոգեկանի զարգացման հետազոտման համար առաջարկեց նախկին տեսություններից տարբերվող էկոհոգեբանական մոտեցումը, որն առաջնորդվում էր նոր մեթոդաբանությամբ և իբրև ելակետային տվյալներ չէր վերցնում երևույթի, օբյեկտի արդեն արտացոլված հատկությունները և հատկանիշները, այլ իբրև այդպիսիք հանդիսանում էին սուբյեկտ-շրջակա միջավայր փոխհարաբերությունները:

Վ.Ի. Պանովի էկոհոգեբանական մոտեցումը դասախոսությունների տեսքով ընդգրկված են Ռուսաստանի տարբեր բուհերում և լայն տարածում ունեն:

Ամփոփելով այս ենթագլուխը ցանկանում ենք մեկ անգամ ևս նշել, որ էկոհոգեբանական մոտեցման հիմքում ընկած են հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հիմնական հասկացությունները (ոչ արգասիքային մոտեցում, արդյունքում գործընթացը ավարտված է և այլն) և այն շարադրված է ոչ մեխանիստական՝ աֆիզիկալ մտածելակերպին համահունչ ոգով, ինչը կազմում էր ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական բաղադրիչը:

Այս կերպ, Վ.Ի. Պանովը, ի դեմս էկոհոգեբանության, օգտագործելով ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մոտեցումները, առաջարկեց հոգեկանի զարգացման հետազոտման նոր մոտեցում, ինչը նոր խոսք էր հոգեբանության մեջ:

Հաջորդ ենթագլխում կներկայացնենք Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հետևորդ՝ Ռ.Մ. Նաղդյանի մոտեցումները:

## 3.2. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումը հոգեկան արտացոլման համարժեքության խնդրի համատեքստում

Հոգեկան արտացոլման համարժեքության խնդիրը ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մոտեցման միջոցով բացահայտելու փորձը կապված է Ռ.Մ. Նաղդյանի անվան հետ:

Ա.Ի. Միրաքյանի և Ռ.Մ. Նաղդյանի հանդիպումը տեղի ունեցավ 1970-72թթ., երբ վերջինս վերապատրաստվում էր Ռուսաստանի Մանկավարժական Գիտությունների Ակադեմիայի «Ընդհանուր և մանկավարժական հոգեբանության» ինստիտուտում: Ռ.Մ. Նաղդյանը լինելով ֆիզիկոս՝ այդ տարիների ընթացքում հետաքրքրվում էր այնպիսի մի հիմնարար հարցով, ինչը բնագիտությունում շատ ակտուալ էր և քննարկվող: Խոսքը սիմետրիայի սկզբունքների մասին է, ինչից, տարբեր գիտություններ օգտվել և օգտվում են մինչ օրս: Այդ ժամանակ նրա մոտ հասունանում էր մի համարձակ միտք այն մասին, թե հնարավոր է արդյոք վերոնշյալ սկզբունքներն օգտագործել հոգեբանությունում և ինչքանով դրանք օգտակար կլինեն հոգեկան տարբեր երևույթները բացատրելու ժամանակ: Երկար տարիների աշխատանքից հետո, ի վերջո, 1988թ.-ին, նրան հաջողվում է՝ ի դեմս իր թեկնածուական ատենախոսության, ցույց տալ հոգեբանության մեջ սիմետրիայի սկզբունքների կիրառելիությունը, մասնավորապես՝ մտածողական գործընթացները բացատրելու ժամանակ («Симметрия и асимметрия процессов решения мыслительных задач разного уровня сложности») [132]: Իհարկե, այս հետազոտությունը չէր կարող աննկատ մնալ Ա.Ի. Միրաքյանի տեսադաշտից և նա սկսում է Ռ.Մ. Նաղդյանի հետ ինտենսիվ քննարկումներ կազմակերպել: Այդ ատենախոսությունը, Ա.Ի. Միրաքյանին, նախևառաջ, հետաքրքրում էր այն բանի համար, որ դրանում, որպես ելակետային տվյալներ չէին օգտագործվել արդեն արտացոլված արգասիքները (հետազոտվող երևույթի հատկանիշները), այլ որպես այդպիսիք հանդես էին գալիս բնությունում գործող հայտնի սիմետրիայի սկզբունքները:

Այդ տարիների ընթացքում, Ա.Ի. Միրաքյանի նախաձեռնությամբ կազմակերպվում էին բազմաթիվ քննարկումներ, որին ներկա էր լինում նաև Ռ.Մ.

Նաղդյանը: Նա ծանոթանալով ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական դրույթների հետ (ոչ արգասիքային մոտեցում, անհիզոտրոպ հարաբերությունների ստեղծում և այլն) հավանություն է տալիս դրանց և հետագայում, իր աշխատանքների վեկտորը ուղղում այդ կողմ:

Ինչպես Ա.Ի. Միրաքյանը, այնպես էլ Ռ.Մ. Նաղդյանը իր հիմնական ուսումնասիրությունները նվիրում է հոգեկան արտացոլման գործընթացի խնդրի մեկնաբանման գործին: Նա փորձում է հոգեկան արտացոլման բնույթը հասկանալու և հետազոտելու համար օգտագործել մետաֆիզիկական մոտեցումը, ինչն էականորեն տարբերվում էր ավանդական մոտեցումներից:

Նա իր տեսական վերլուծությունները սկսում է հոգեկան արտացոլման համարժեքության հիմնախնդրի քննարկումներից [129], որի արդյունքում գալիս է այն ենթադրության, որ մարդկային ընկալման որակներով ու հատկություններով օժտված տեսանելի աշխարհից անդին գոյություն ունի այլ իրականություն, որն անգիտակցելի է և անմիջականորեն անճանաչելի:

Այս տեսական վերլուծությունների հիմքի վրա նա առաջարկում է մարդու գոյությունը դիտարկել չորս իրականությունների միջոցով. 1) մինչարտացոլման իրականություն, 2) ընկալվող օբյեկտիվ (առարկայական) աշխարհի իրականություն, 3) ներքին պատկերների իրականություն և 4) անգիտակցականի իրականություն:

1. Մինչարտացոլման իրականությունը, համաձայն նրա, մեր գիտակցության կողմից անմիջականորեն չի ընկալվում և անմիջականորեն ճանաչելի չէ: Իրականություն – 1-ն զրկված է մարդու ընկալման մոդալականությունների որակներից, այն անվերջանալիորեն բազմազան և չտարբերակված աշխարհն է: «Փոխազդելով մարդու ընկալման օրգանների հետ՝ Իրականություն-1-ը խթանում և գործարկում է հոգեկան արտացոլման առաջացումը, որն և ստեղծում է Իրականություն-2-ը» [130, էջ 25]:

Իրականություն-1-ը անառարկա է, քանի որ հնարավոր չէ դրա հանդեպ կիրառել ավանդական գիտությունների և ոչ մի հասկացություն, որոնցով նշանակվում են միասնականությունից առանձնացված իմացության առարկաները: «Յուրաքանչյուր այնպիսի հասկացություն, ինչպիսիք են տարրական մասնիկ, ատոմ,

էլեկտրոմագնիսական ալիք, կյանք՝ կամ հոգեկան արտացոլման արգասիքներ են, կամ էլ դիմակ-մոդելներ, որոնք դրվում են հետազոտվող երևույթների վրա՝ քողարկելով դրանց իրական «առանձնահատկությունները», կազմակերպվածության բարդությունը, տիեզերքի հետ դրանց փոխկապակցվածությունն ու փոխհարաբերությունը» [20, էջ 84]: Այդ իսկ պատճառով, ինչպես նշում է Ռ.Մ. Նաղդյանը, մեկ մոդելից մյուսին անցնելու հետազոտման այդ ճանապարհը (ավանդական գիտությունների ուղին) անվերջանալի է: Արդյունքում Իրականություն-1-ը մասնատվում և առանձնանում է Իրականություն-2-ի կառուցող և կարգավորող տարբեր գիտությունների պատկերներով և հասկացություններով (արտապատկերումներով, մոդելներով, նշաններով, օրինաչափություններով):

2. Իրականություն-2-ը մեր հոգեկանի կողմից գունազարդված և ձայնարկված, բոլոր մարդկային զգայությունների և զգացումների բազմազանությամբ օժտված իրականություն է: Ռ.Մ. Նաղդյանը այն անվանել է իրականություն, քանի որ զգայությունները, ընկալման մտապատկերները և զգացումները մարդու համար ունեն իրական-սուբյեկտիվ գոյություն: Համաձայն նրա, դրանք արտապատկերվելով դեպի դուրս՝ ստեղծում են մեր կողմից գիտակցվող և ճանաչվող «օբյեկտիվ (առարկայական) աշխարհը, որը կազմված է մեր հոգեկանի կողմից ստեղծված որակներով և յուրահատկություններով օժտված առարկաներից [126]:

«Իրականություն-2-ի (այսինքն՝ այն, ինչն ընկալում է մարդը) առանձնահատկությունները կախված են մարդու և նրա ընկալման օրգանների տարածաժամանակային, կառուցվածքային և ուժաբանական չափորոշիչներից, ինչպես նաև նրա առջև կանգնած խնդիրներից, որոնք մարդը պետք է լուծի կենսագործունեությամբ [20, էջ 81]: Վերը բերվածը հաստատելու համար, նա առաջարկում է պատկերացնել, թե ինչպես մարդը կընկալեր իրեն շրջապատող միջավայրը, եթե նրա տեսողությունը լիներ ի ծնե մանրադիտակային կամ հեռադիտակային և պատասխանում է, որ այդ դեպքում դրանք կլինեն ինչպես իրարից, այնպես էլ մեր իրականությունից բոլորովին տարբերվող այլ իրականություններ: Եվ այդ իրականություններում կբացահայտվեին լրիվ այլ առարկաներ և օրինաչափություններ: Սակայն, բոլոր դեպքերում, համաձայն նրա, դրանք կլինեին

Իրականություն-2-ի տարբերակներ, քանի որ որոշակի արտացոլող համակարգերի ստեղծման արդյունքներ են [131]:

Ռ.Մ. Նաղդյանը նկատում է, որ վերոնշյալ դատողություններից շատերը՝ փոքր-ինչ այլ համատեքստում, արտահայտվել են Ա.Ի. Միրաքյանի կողմից: Իրականություն-1-ը, համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգում համապատասխանում է «բացակայողի իրականությանը» (реальность отсутствующего), իսկ Իրականություն-2-ը՝ «ներկա գտնվողի իրականությանը» (реальность присутствующего): «Ոչինչ» (Ничто) հասկացությամբ նշանակվում է ոչ թե դատարկությունը, այլ Իրականություն-1-ի անառարկա ամբողջությունն ու բազմազանության անսպառությունը (տես՝ առաջին գլխի վերջին ենթագլուխը):

Հեղինակը համարում էր, որ Իրականություն-1-ն անցնում է ամբողջ Իրականություն-2-ով և թաքնված կերպով բովանդակվում նրա մեջ, սակայն, Իրականություն-1-ի մեջ չկա որևիցե մի բան, ինչը կլիներ Իրականություն-2-ում: Նա նշում է, որ «Իսկապես, եթե «ներկա գտնվողի» տակ հասկանանք այն ամենը, ինչն արտացոլված է մարդու գիտակցության մեջ և հանդես է գալիս որպես հոգեկան գործընթացի արդյունք, ապա «բացակայողի» մեջ «ներկա գտնվողի» բացակայության իրականությունը հենց նշանակում է, որ Իրականություն-1-ում չկա ոչինչ, ինչն ունենար գույն, ձայն, համ և այլն. մի խոսքով այն ամենը, ինչը հատուկ է Իրականություն-2-ին» [20, էջ 84]:

Իրականություն-2-ը, Ռ.Մ. Նաղդյանը պայմանականորեն անվանում է նաև «Բաց աչքերի» իրականություն, քանի որ այն ամենն ինչ որ մենք ունենք այդ Իրականությունում՝ արտացոլման արդյունքներ են: Այստեղից առաջ է գալիս օրինաչափ մի հարց. իսկ արդյոք գոյություն ունի փակ աչքերի Իրականություն, և եթե այո, ապա ինչպիսին է այն: Համաձայն նրա, նման Իրականություն գոյություն ունի և այդ Իրականությունը նա անվանում է Իրականություն-3:

Իրականություն-3-ը, նրա խոսքով, գոյանում է ներքին ներկայացնող համակարգերի կողմից: Այդ Իրականությանն են պատկանում բոլոր մոդալականությունների ներքին մտապատկերները, ինչպես նաև ներքին երկխոսությունն ու երազատեսությունները:

Իրականություն-3-ը չի պատճենում Իրականություն-2-ը և կարող է, նույնիսկ, Իրականություն-2-ի տեսանկյունից լինել անտրամաբանական և անբնական: Այն (Իրականություն-3-ը), բաց աչքերի դեպքում, սովորաբար, չի գիտակցվում, սակայն, ինչպես նկատում է Ռ.Մ. Նաղդյանը, եթե մենք մարդուն խնդրենք կենտրոնացնել ուշադրությունը հիշողության, պատկերացումների կամ երևակայության մտապատկերների վրա, ապա այս դեպքում Իրականություն-3-ը հասանելի կդառնա գիտակցությանը՝ հաճախ ապշեցնելով իր «ստեղծողներին» մտապատկերների և «սյուժեի» ֆանտաստիկությամբ (հատկապես ուժեղ ապրումների դեպքում): «Որքան էլ որ անբնական լինեն այդ ներքին մտապատկերները, դրանք իսկապես մարդու համար գոյություն ունեն. նա դրանք տեսնում է իր ներքին տեսողությամբ: Այդ իսկ պատճառով Իրականություն-3-ը կարելի է անվանել իրական-վիրտուալ» [20, էջ 93]:

Համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, Իրականություն-2-ից Իրականություն-3-ի բնութագրիչ տարբերություններից մեկն այն է, որ Իրականություն-3-ում իրադրության պատկերացումը (երևակայումը) կարող է լինել ասոցացված կամ դիսոցացված: Ասոցացված պատկերացման մեջ մարդն իրավիճակը «տեսնում» է ներսից, կարծես իր սեփական աչքերից, ինչպես դա սովորաբար լինում է Իրականություն-2-ում (այս դեպքում մարդը, բնականաբար, չի տեսնում իր աչքերն ու դեմքը): Դիսոցավորված պատկերացման դեպքում մարդը «տեսնում» է իրավիճակը և իրեն այդ իրավիճակում՝ որպես կողմնակի դիտորդ, ինչպես չի լինում Իրականություն-2-ում: «Այս դեպքում մարդը կարող է «տեսնել» իր աչքերը, դեմքը, մեջքը և այլն՝ կախված դիտարկման կետից, որն, ընդ որում, կարելի է ընտրել կամայականորեն» [20, էջ 94]:

Այդ Իրականությունների միջև տարբերությունը (Իրականություն 2-ի և 3-ի) նաև կայանում է ժամանակի հետ փոխհարաբերության տեսանկյունից: Եթե Իրականություն-2-ը կապված է միայն ներկայի հետ, ապա Իրականություն-3-ում կարելի է ազատ տեղաշարժվել ժամանակի մեջ, ինչի արդյունքում յուրաքանչյուր մարդ իր մեջ ունի ժամանակի սեփական գիծը՝ որի շնորհիվ հնարավոր է իրարից տարբերել անցյալը, ներկան և ապագան [133]:

Սակայն, որոշ դեպքերում, Ռ.Մ. Նաղդյանի համոզմամբ, կարող է տեղի ունենալ Իրականություն-2-ի և Իրականություն-3-ի ինչպես կամավոր, այնպես էլ ակամա

միավորում, և այդ ժամանակ Իրականություն-2-ում հնարավոր է առաջ գան հալյուցիանացիաներ, կեղծ առարկաներ, այսինքն՝ Իրականություն-1-ի կողմից նյութապես չխթանված երևակայական օբյեկտներ:

Իրականություն-3-ի մտապատկերներում, համաձայն հեղինակի, մենք կարող ենք «գտնել» ևս մեկ Իրականություն՝ մեր անգիտակցականի իրականությունը, ինչը նրա կողմից անվանվեց որպես Իրականություն-4:

Այս Իրականությունը, Իրականություն-1-ի նման անգիտակցելի է: Մարդը չի կարող իմանալ ինչ է Իրականություն-4-ը, սակայն նրա հետքերը կարելի է տեսնել Իրականություն-3-ի պատկերների կառուցվածքի և բովանդակության մեջ, որոնք, իրենց հերթին, ազդում են Իրականություն-2-ում մարդու ապրումների և վարքի վրա [130, էջ 42]:

Այս Իրականության հետազոտմամբ Ռ.Մ. Նաղդյանը շատ չի զբաղվել, նա նշում է, որ այդ ուղղությամբ կան բազմաթիվ աշխատանքներ, մասնավորապես՝ Զ. Ֆրոյդի, Կ. Յունգի, Ա. Մենեգետիի և նրանց աշակերտների մոտ, միաժամանակ նաև նշելով, որ այդ ոլորտում դեռևս կան բազմաթիվ «սպիտակ» բծեր:

Ռ.Մ. Նաղդյանին ավելի շատ հետաքրքրում էր, թե ինչպես են փոխազդում այս Իրականությունները, ինչպես են դրանք ազդում միմյանց վրա և անցում կատարում մեկը մյուսին: Օրինակ. «Մարդու ընկալող (արտացոլող) համակարգերի հետ փոխազդող (չգիտակցվող) Իրականություն-1-ից, ինչի գործընթացը նույնպես չի գիտակցվում և գտնվում է Իրականություն-1-ում, գոյանում է (գիտակցվող) Իրականություն-2-ը, որի վրա միևնույն ժամանակ ազդում է Իրականություն-3-ը» [20, էջ 96]: Համաձայն նրա, նմանատիպ ինչ-որ բան է տեղի ունենում (չգիտակցվող)՝ Իրականություն-4-ից (գիտակցվող) Իրականություն-3-ի անցման ընթացքում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փնտրել գոյացման համապատասխան գործընթացը և գոյացնող համակարգը, որտեղ ընթանում է այդ իսկ գործընթացը: Դա հնարավորություն կտա մասնավորապես հասկանալ ռեպրեզենտատիվ համակարգերի բնույթը: Ընդ որում, «Կարելի է ենթադրել, որ այդ երկու գոյացնող համակարգերն իրենց գործառույթներով և ազդեցության սկզբունքներով կլինեն նույնական, բայց

իրենց գոյության ու կազմակերպվածության կառուցվածքի և որակի տեսանկյունից՝ տարբեր» [130, էջ 43]:

Այս կերպ, մենք տեսնում ենք, որ նման մոտեցում դրսևորելու պարագայում, միավորվում են երևույթների երկու դասեր՝ ֆիզիկականը և հոգեկանը (Իրականություն-1-ը և Իրականություն-4-ը), որոնք մինչ այժմ համարվում էին անհամատեղելի հակադրություններ: Այս սահմանափակման հաղթահարումը, համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, կապված է բնության երևույթների մասին տեղեկույթի ստացման այլընտրանքային միջոցների որոնման, հայտնաբերման, ուսումնասիրման և կիրառման հետ [20, էջ 97, 98]:

Վերոնշյալ չորս Իրականությունների համատեղ դիտարկման դեպքում, ճանաչողության հնարավորությունների տեսանկյունից, ճանաչողության որոշ միջոցներ են բացահայտվում: Ճանաչողական գործընթացների հետազոտման ներկայիս մեթոդները ուղղված են Իրականություն-2-ից Իրականություն-1-ի կողմը, ինչը թույլ է տվել գիտությանը մարդկային արտացոլող համակարգերի հնարավորությունները մեծացնող բարդ տեխնիկական սարքեր ստեղծել: Ռ.Մ. Նաղդյանը նշում է, որ այս ճանապարհը ճանաչողության ֆիզիկական (նյութականացված) ուղին է, որը հատուկ է արևմտյան քաղաքակրթությանը: Սակայն «Ցանկացած արտացոլող համակարգ, որքան էլ որ այն բարդ լինի, տալիս է պատկերացում ոչ թե աշխարհի, այլ աշխարհի որոշակի մոդելի, այսինքն՝ Իրականություն-2-ի տարատեսակի մասին» [20, էջ 99]:

Այս տրամաբանական շղթան հեղինակին թույլ է տալիս ենթադրել, որ նման ուղղությամբ աշխարհի ճանաչման առաջընթացը, Իրականություն-1-ի նկարագրին առավել մոտ, առավել ճշգրիտ մոդելի ստացումն է: Ընդ որում, այդ առաջընթացը ապահովող և խթանող պայմանները տեղակայված են մարդուց դուրս, ճանաչողության անընդհատ զարգացող տեխնիկական միջոցներում: Այդուհանդերձ, այդ առաջընթացն ակնհայտ, շոշափելի և տեսանելի է: Եվ, դրա հետ մեկտեղ, այն ձեռնտու է մարդուն, քանի որ տեխնիկական առաջընթացի հետ միասին այն տալիս է նաև կենսագործունեության ավելի ու ավելի հարմարավետ պայմանների ստեղծման հնարավորություն [130, էջ 47]:

Ճանաչողության մյուս ուղին, համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, ուղղված է անգիտակցականի ոլորտն հասկանալու և այդտեղից տեղեկատվություն ստանալու ուղղությամբ, այսինքն՝ Իրականություն-3-ի միջոցով Իրականություն-4-ը հետազոտելու և հասկանալու գործին: Այս ճանապարհը «Ճանաչողության հոգևոր ուղին է, որը հատուկ է արևելյան քաղաքակրթությանը» [20, էջ 100]: Նա նաև նշում է, որ նման կերպ շարժվելով մարդը կարողանում է մեծացնել ինքնաճանաչման հնարավորությունները, խորանալ սեփական ներաշխարհի մեջ, ինչպես նաև կարողանում է անգիտակցականի հետ ուղիղ անմիջական կապի հաստատման շնորհիվ նոր հոգեկան միջոցներ ձևավորել:

Մարդը կարող է անգիտակցականի ոլորտ ներխուժել նաև արթմնի վիճակում, այսինքն՝ երբ նա գտնվում է Իրականություն-2-ում: Ռ.Մ. Նաղդյանի խոսքով, հոգեբանության մեջ այդպիսի վիճակները հայտնի են «ինսայթ» կամ «պայծառացում» անվամբ, երբ մարդը բացարձակապես անսպասելիորեն ստանում է իր հիմնախնդրի պատասխանը («էվրիկա»): «Պայծառացման վիճակները հատուկ են տաղանդավոր և հանճարեղ մարդկանց և պատահական չէ, որ նրանց մասին հաճախ խոսում են որպես ցրված և «այս աշխարհին չպատկանող» մարդկանց մասին, ինչը կարող է նշանակել Իրականություն-2-ից նրանց անջատվածությունը» [20, էջ 100]: Ռ.Մ. Նաղդյանը ընդգծում է, որ նման վիճակներում մարդու գիտակցությունը կողմնորոշված է ոչ թե դեպի Իրականություն-2-ը (չնայած որ ենթագիտակցականը շարունակում է ստանալ ինֆորմացիա Իրականություն-2-ից), այլ ուղղված է Իրականություն-4-ի ուղղությամբ և արտացոլում է այդտեղից եկող տեղեկությունը: Սակայն, եթե այդ վիճակները անգիտակցականի ոլորտ ոչ կամային, պատահական, ինքնաբուխ ներխուժման արդյունք են, ապա կարելի է պատկերացնել, թե որքան կմեծանա ճանաչողության արդյունավետությունը, եթե այդ գործընթացը դառնա կառավարելի: Տաղանդավոր, հանճարեղ մարդկանց ստեղծագործական առանձնահատկություններին և յուրահատուկ գիտակցական վիճակներին ավելի մանրակրկիտ մենք կանդրադառնանք հաջորդ ենթագլխում, երբ ներկայացնենք առկա կրթական համակարգի սահմանափակումները և դրանցից դուրս գալու ուղիները:

Ճանաչողության ուղիների մասին խոսելով Ռ.Մ. Նաղդյանը ասում է, որ Իրականություն-2-ից դեպի Իրականություն-1-ը և Իրականություն-3-ից դեպի Իրականություն-4-ը տանող ուղիներն, իսկապես, հակադիր են: Բայց դրանք այլընտրանքային ուղիներ են, որոնք տանում են միավորված Իրականության (1-4) ճանաչմանը: «Այլընտրանքային ուղին ճանաչողության ուղի է, որը կարող է իրականացվել մոտ ապագայում և ներկայանում է որպես երկու առաջինների՝ նյութականացվածի (նյութականի) և հոգևորի (հոգեկանի) համադրում» [130, էջ 50]:

Այսպիսով, նշում է Ռ.Մ. Նաղդյանը, որ եթե գիտական ճանաչողության դեպքում գիտակցությունը կողմնորոշված է Իրականություն-1-ի հետազոտության ուղղությամբ և ուղղված է դեպի դուրս, իսկ «հարագիտական» ճանաչողության ժամանակ՝ Իրականություն-4-ի ուղղությամբ և դեպի ներս, ապա երրորդ՝ այլընտրանքային տարբերակում գիտակցությունը միաժամանակ «աշխատում» է երկու ուղղություններով և դա, հավանական է, որ առավել ներդաշնակ և արդյունավետ տարբերակ է: «Այդպիսի մարդու գիտակցությունը կստանա և կհամադրի տեղեկատվության երկու՝ որակապես տարբերվող, սակայն իրար փոխլրացնող հոսքեր, ինչը կարող է հանգեցնել Իրականության-(1-4) հասկացման զգալի առաջխաղացմանը» [20, էջ 102]: Նման դեպքում, Ռ.Մ. Նաղդյանի կարծիքով, այն աստիճան կփոխվի արտաքին և ներքին աշխարհի հետ մարդու փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև նրա կողմից գիտակցվող տեղեկության բնույթն ու դրա գոյատևման իրականությունների ճանաչման խորությունը, որ այդժամ կարելի կլինի խոսել մարդու՝ որակապես նոր տեսակի առաջացման մասին: Դրան հասնելու համար, հեղինակը առաջարկում է նախևառաջ փոխել մարդկանց աշխարհայացքները, ինչի համար այսօր արդեն կան որոշակի նախադրյալներ:

Ամփոփելով 4 Իրականությունների վերաբերյալ իր հիմնական մոտեցումները Ռ.Մ. Նաղդյանը կարևորում է, մասնավորապես՝ հետևյալ հանգամանքները.

1. Մարդուց դուրս եղել է, կա և կլինի իրականություն, ինչը նրա կողմից անվանվեց Իրականություն-1:

2. Իրականություն-1-ն անմիջականորեն չի ընկալվում մարդու կողմից: Այն ընկալվում է միջնորդավորված կերպով, մարդու հոգեկանի կողմից ձևավորված

մտապատկերների և զգայությունների միջոցով, որոնց հատկությունները (կարևոր է չխառնել քանակության հետ) ոչ մի ընդհանրություն չունեն Իրականություն-1-ի հետ:

3. Մարդու կողմից գիտակցվող և նրա կողմից Իրականություն-2 անվանված իրականությունը ստեղծված է հենց մարդու (նրա հոգեկանի) կողմից: Այն դետերմինացված է Իրականություն – 1-ով:

4. Իրականություն-2-ի և Իրականություն-1-ի միջև չկա որակական համապատասխանություն: Կարելի է խոսել միայն անհամապատասխանության տարբեր աստիճանների մասին՝ կախված արտացոլող համակարգի յուրահատկություններից, ինչը պարզ է դառնում կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների ընկալման օրգանների համեմատական վերլուծությունից:

5. Յուրաքանչյուր մարդ՝ որպես առանձին և յուրօրինակ արտացոլող համակարգ, յուրովի է կառուցում Իրականություն-2-ը:

6. «Մտապատկեր» և «արտացոլում» հասկացությունները տեղին են այն դեպքում, երբ դրանք դիտարկվում են գիտակցության առկայության համատեքստում: Այդ իսկ պատճառով, համարժեքության սկզբունքը կարող է հիմնավորվել միայն «հոգեկանի ստեղծած արգասիք՝ գիտակցություն» համակարգում, այլ ոչ «իրականություն (կամ բնություն)՝ հոգեկանի ստեղծած արգասիք» համակարգում:

7. Մարդը գիտակցում է նաև ներքին ներկայացնող համակարգերի կողմից ստեղծված մտապատկերներն ու զգայությունները, որոնք կազմում են Իրականություն-3-ը և անգիտակցականի ազդեցության հետքերը:

8. Իրականություն-1-ն ու Իրականություն-4-ը կազմում են միևնույն երևույթի երկու տարբեր դրսևորումների ոչ նույնական միասնություն:

9. Հնարավոր են իմացության երեք ուղիներ՝ Իրականություն-2-ից դեպի Իրականություն-1-ը (գիտական), Իրականություն-3-ից դեպի Իրականություն-4-ը (հարագիտական) և ամբողջական իմացության ուղին, որը միավորում է առաջին երկու ուղիները [130, էջ 50-52]:

Ինչպես տեսնում ենք, մարդը միշտ գործ է ունենում ոչ թե իրականության հետ, այլ իր կողմից ստեղծած իրականության մոդելի, ինչը, համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, չի գիտակցվում մարդու կողմից: Մարդը չի գիտակցում, որ իր կողմից ընկալվող

աշխարհը՝ դա դեռևս իրականությունը չէ, այլ դրա մոդելը կամ այդ իրականության պատկերն է, որն ակամայից նույնականացնում է իրականության հետ:

Այդ նույնականացումների նախադրյալները Ռ.Մ. Նաղդյանը տեսնում է արդեն երեխայի հոգեկանի օրինաչափություններում. «Երեխայի մտածողությանը բնորոշ է համանմանեցման հատկությունը՝ ոչ նույնական օբյեկտների նույնականացման հնարավորությունը, ինչի համար անհրաժեշտ է առնվազն երկու օբյեկտ: Երեխայի մտածողության հետագա զարգացումը բերում է ասիմետրիացիայի, այսինքն՝ տարբերակման ուժեղացմանը» [124, էջ 147]: Սա գալիս է նրանից, որ մարդը գործ ունի համանմանության երևույթի հետ, որտեղ, համաձայն նրա, համանմանության օպերացիայի դերում հանդես է գալիս յուրահատուկ մտածողական բինար կամ դիպլաստիկ համակցությունը:

Այդ խնդրի ուսումնասիրումը հեղինակին թույլ է տալիս ենթադրել, որ բինար համակցությունները, դիպլաստիկ և այլ նույնականացման երևույթները իրենց արմատներով հասնում են բնության խորքերը և ցույց են տալիս բնության հիմնական օրինաչափություններից մեկը՝ հակահամաչափությունը (անտիսիմետրիան):

Այժմ տեսնենք, թե ինչպես էր Ռ.Մ. Նաղդյանը նույնականացման խնդիրը փորձում մեկնաբանել իր կողմից առաջ քաշված 4 իրականությունների միջոցով: Հիշեցնենք, որ Իրականություն-1-ը՝ չարտացոլված, սակայն մարդու վրա ազդող իրականությունն է. Իրականություն-2-ը՝ արտացոլված և մարդու կողմից ընկալվող իրականության մոդելն է, ինչը Ռ.Մ. Նաղդյանը անվանում է օբյեկտիվ իրականություն. Իրականություն-3-ը՝ դա մեր ներքին վիճակների և հատկությունների (պատկերներ, ներքին երկխոսություն, արժեքներ, էմոցիաներ, երազներ և այլն) իրականությունն է. իսկ Իրականություն-4-ը՝ անգիտակցականի իրականությունը:

Համաձայն այդ մոդելի, Ռ.Մ. Նաղդյանը ներկայացնում է պրոեկտման երեք տեսակ.

1. «Ֆիզիկական» իրականություն Ի-1-ը, ազդելով մարդու վրա և փոխակերպվելով ձևաստեղծման գործընթացի ժամանակ, դետերմինացնում է Ի-3-ում հայտնված չգիտակցված պատկերը, ինչը, պրոյեկտվելով հետ՝ Ի-1-ի համապատասխան երևույթները, բերում է Ի-1-ի երևույթների «ընկալմանը»՝ իբրև Ի-2-ի

օբյեկտներ: Ռ.Մ. Նաղդյանի խոսքով, դա հենց այն «պատրաստված» աշխարհն է, ինչը մարդը ընկալում և ընդունում է որպես իրականություն.

Ի-1->Ի-3->Ի-1=>Ի-2 [124, էջ 160]:

Հիշեցնենք, որ Ի-3-ում ոչ միայն ազդեցություն է թողնում Ի-1-ը, այլ նաև անգիտակցականի իրականություն Ի-4-ը, որում անգիտակցված ձևով պահվում են մարդու ամբողջ փորձը (զգայական, սոցիալական, արխետիպային, տրանսպերսոնալային և այլն):

2. Արտաքին միջավայրի խթաններով չդետերմինացված և ներքին ներկայացուցչական համակարգերով կառուցված Ի-3-ի պատկերները պրոյեկտվում են Ի-2-ի տարածության մեջ: Դա բերում է Ի-2-ում մտացածին ֆենոմենների (մ.ֆ.) հայտնվելուն. «կեղծ տագնապ», ինչը հայտնի է մեզ հոգեֆիզիկայից, և հալյուցինացիաներ.

Ի-3-> տարածություն Ի-2=> (մ.ֆ.) Ի-2 [124, էջ 160]:

Ռ.Մ. Նաղդյանը նշում է, որ հատկապես այս իրավիճակն է պարզորոշ կերպով ցույց տալիս ներքին պատկերների իրական գոյությունը, որոնք անկախ են արտաքին միջավայրի ազդեցությունից ու պրոեկտված են դեպի ներս: Այս դեպքում ակնհայտ է դառնում Ի-3-ի պատկերների վրա Ի-4-ի՝ անգիտակցականի իրականության ազդեցությունը: Հեղինակի խոսքով, եթե Ի-3-ի պատկերները չեն պրոյեկտվում Ի-2-ի տարածության մեջ, սակայն ներկա են գտնվում մարդու գիտակցությունում, ապա այդ դեպքում մենք կարող ենք խոսել երևակայական պատկերների մասին.

Ի-3-> տարածություն Ի-2=> (մ.ֆ.) Ի-2 [124, էջ 160]:

3. Ի-3-ի պատկերների պրոյեկտումը Ի-2-ի օբյեկտների և նյութերի վրա (մարդկանց վարք, թուղթ, ծառ, մարմար և այլն) և դրանց փոփոխումը համապատասխանաբար այդ պրոեկցիայի էության վրա (ներքին պատկերների նյութականացման գործընթացը), բերում են Ի-2-ում արհեստական օբյեկտների (ա.օ.) ստեղծմանը: Մասնավոր դեպքերում դրանք կարող են լինել մշակույթի օբյեկտներ.

Ի-3-> նյութեր – օբյեկտներ Ի-2=> (ա.օ.) Ի-2 [124, էջ 160]:

Այժմ ներկայացնենք, թե ինչպես է Ռ.Մ. Նաղդյանը պատկերացնում այդ պրոեկտումների նույնականացումները:

1. Ի-2-ի օբյեկտները անգիտակցորեն նույնականացվում են Ի-3-ի պատկերների հետ և գիտակցվում են իբրև մարդուց դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող: Իրականություն-1-ը չի գիտակցվում այն պարզ պատճառով, որ այն ամբողջությամբ հանդիսանում է Ի-3-ի պատկերների կոդավորված (փակ) համակարգ, ինչի հետ գործ է ունենում մարդու գիտակցությունը:

2. Ի-2-ի մտացածին օբյեկտները նույնականացվում են ասես իրականում գոյություն ունեցող Ի-2-ի օբյեկտների հետ, որոնց ենթամոդալային և իմաստային (սեմանտիկ) կառուցվածքը պայմանավորված է Ի-3-ի պատկերների և ներքին վիճակների հետ: Համաձայն Ռ.Մ. Նաղդյանի, հոգեկան արտացոլման այդ հնարավորությունը հանդիսանում է տվյալ պահին և տվյալ տեղում գոյություն չունեցող օբյեկտների պատկերների առաջացման թե՛ նախադրյալները և թե՛ պատճառը: «Մարդու «անջատումը» իրականությունից՝ մեզ շրջապատող իրականության անմիջական ազդեցությունից, ստեղծում է ներքին պատկերացումների առաջացման (անցյալի և ապագայի) համար պայմաններ, ինչը կարող է նպաստել լեգենդների, մշակույթի, իսկ հետագայում նաև կրոնի առաջացմանը (որի պատկերներին մարդիկ հավատում էին այնպես, ասես իրականում գոյություն ունեին)» [124, էջ 161]:

3. Ի-2-ի արհեստական օբյեկտները (ա.օ.) նույնականացվում են Ի-3-ում գոյություն ունեցող համապատասխան նախատիպերի հետ և օժտվում են իմացական նշանակություններով՝ ինչով և օժտված են Ի-3-ի այդ նախատիպերը: Այս կերպ, ինչպես նշում է Ռ.Մ. Նաղդյանը, պրոյեկտման և նույնականացման միջև տարբերությունը նրանում է, որ պրոյեկտումը՝ դա միշտ «ներքինի պրոյեկտումն է դեպի ներս», իսկ նույնականացումը՝ դա միշտ «արտաքինի նույնականացումն է ներքինի հետ»: Դրանք փոխկապակցված գործընթացներ են, սակայն հեղինակը պայմանականորեն առանձնացնում է դրանց հետևյալ հաջորդականությունները. հայեցակարգային ձևով պրոյեկտվելով ստեղծվում է Ի-2-ի արտաքին իրականությունը, ինչն օժտվում է պերցեպտիվ բաղադրամասերով, հետո, նույնականացման շնորհիվ, այդ իրականությունը ներառվում է որոշակի իմաստային համատեքստում, ինչը համապատասխանում է սուբյեկտի ներքին փորձին և վիճակին: Առաջին դեպքում, հեղինակի խոսքով, մենք գործ ունենք պատկերացումների հետ, որոնք

արտահայտվում են ներկայացուցչական համակարգերի մոդալականությունների և դրանց ենթամոդալականությունների միջոցով, իսկ երկրորդ դեպքում՝ մենք գործ ունենք արժեքների, համոզմունքների, զգացումների և այլնի հետ, որոնք արտահայտվում են համապատասխան լեզվաբանական (լինգվիստիկ) կառուցվածքների միջոցով [130, էջ 73-75]:

Մարդն ուսումնասիրելով Ի-2-ի օբյեկտները ցանկանում է ներթափանցել դրանց էության մեջ և պատասխանել մի շարք հարցերի. ի՞նչ է այն իրենից ներկայացնում և ինչպե՞ս է այն կառուցված: Ռ.Մ. Նաղդյանը գտնում է, որ վերջին հաշվով, ամեն ինչ տանում է գլխավոր հարցին պատասխանելուն. ինչպիսին է իրականում մեզ շրջապատող աշխարհը և ինչպես է այն կառուցված: Հենց այդտեղ է, համաձայն հեղինակի, թաքնված մարդու այն մեծ տենչանքը, որ նա ցանկանում է ներթափանցել Ի-1-ի և Ի-4-ի անգիտակցական իրականությունները, ինչի շնորհիվ նրան կհաջողվի ստեղծել տիեզերքի իրական պատկերը և այդ դեպքում, հնարավորինս, դուրս կմղվի սեփական սուբյեկտիվության գործոնը: Դա այն ոլորտն է, որն անհրաժեշտ է բնությանն ինքն իրեն ճանաչելու և հասկանալու համար. «Այդ գործընթացում էական դերակատարություն ունեն հնարավոր մոդելներով նկարագրված և բացատրված գիտակցված երևույթների բազմաթիվ նույնականացումները, որոնք, ի վերջո, բերում են իրականության առավել կատարյալ և ճշգրիտ մոդելներին» [124, էջ 163]:

Վերոնշյալից բացի, Ռ.Մ. Նաղդյանը նաև գտնում է, որ նույնականացումների շնորհիվ տեղի է ունենում դինամիկ և փոփոխական աշխարհի «կանգը»՝ արտացոլման պահի ֆիքսումը, ինչի ժամանակ դրան տրվում է առանձնահատուկ իմաստ, որը, սովորաբար, «...մարդը սկզբից դա անում է ընկալման ենթամոդալականություններում, իսկ հետո արդեն հասկացություններում, ինչը մենք անվանում ենք իբրև զգայություններ, զգացումներ կամ պատկերներ» [130, էջ 77]: Այս կամ այն նույնականացման պատճառը հեղինակը տեսնում էր մարդու համապատասխան գիտակցական վիճակից ելնելով, ինչով էլ փորձում էր բացատրել փիլիսոփայական տարբեր դպրոցների միջև տեղի ունեցող վեճերը (մատերիալիստների և իդեալիստների):

Հոգեկան արտացոլման համարժեքության, ինչպես նաև աշխարհի և աշխարհի պատկերի նույնականացման վերաբերյալ այսպիսի յուրատիպ մոտեցումները հնարավոր եղան կյանքի կոչել, մասնավորապես՝ Ա.Ի. Միրաքյանի բնորոշմամբ, ոչ արգասիքային մոտեցում ցուցաբերելու շնորհիվ: Նման մոտեցում ցուցաբերելու համար Ռ.Մ. Նաղդյանին անհրաժեշտ էր դուրս գալ դասական և ժամանակակից ընկալման հոգեբանությանը բնորոշ հասկացությունների և կատեգորիաների շրջանակից, ինչը հնարավոր եղավ անել միայն այլ մտածելակերպի՝ ոչ ֆիզիկալ, աֆիզիկալ, կամ ինչպես հեղինակն է նշում՝ մետաֆիզիկական մտածելակերպի կիրառման պարագայում:

Իր աշխատանքում օգտագործելով մետաֆիզիկական դատողությունների մեթոդը, նրան հաջողվեց հոգեկան արտացոլման համարժեքության սկզբունքին տալ նոր մեկնաբանություն, բացահայտել իրականության հոգեբանական հարաբերականության սկզբունքը և ի վերջո, ստեղծել «Չորս Իրականությունների» հայեցակարգը:

Ռ.Մ. Նաղդյանի մոտեցումը չունենալով ավանդական ընկալման հոգեբանությունում իր նմանատիպը, հիմնված էր այնպիսի հասկացությունների և փիլիսոփայական պատկերացումների վրա ինչպիսիք են, ոչ արգասիքային մոտեցումը, աֆիզիկալ մտածելակերպը, մինչ արտացոլումը գոյություն ունեցող «Ոչինչի» (Ничто) վերաբերյալ պատկերացումը և այլն, որոնք ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնասյուներն են:

Հաջորդ ենթագլուխը նվիրված է կրթական ոլորտին, որտեղ աֆիզիկալ (ոչ մեխանիստական) մոտեցման օգնությամբ փորձում ենք մեկնաբանել որոշ դժվար բացատրելի (կամ անբացատրելի) իրավիճակներ և ցույց տալ այդ ոլորտում (կրթական) աֆիզիկալ մտածելակերպի կիրառելիության հավանական հեռանկարները:

## 3.3. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կիրառման հեռանկարները արդի ուսուցման համակարգում

Աշխարհի դասական (մեխանիստական) պատկերը, ինչն իր վերջնական հաստատումը գտավ դեկարտյան փիլիսոփայությունում, ազդեցություն թողեց բոլոր

գիտական ոլորտների վրա. ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա, տիեզերաբանություն և այլն: Մի կողմից այդ գիտություններում առկա են մի շարք էական տարբերություններ, իսկ մյուս կողմից, այդ գիտությունների մեթոդաբանական հիմքում ընկած են ընդհանուր սկզբունքներ: Դրանցից կարող ենք առանձնացնել 1) դետերմինիզմի սկզբունքը, ինչի համաձայն բնության երևույթների միջև հաստատվում է միանշանակ պատճառա-հետևանքային կապեր, 2) գիտական գիտելիքների վերաբերյալ բացարձակ իսկության և բացարձակ օբյեկտիվության սկզբունքը, 3) գիտական մեթոդի ունիվերսալ լինելու ընդունումը, 4) մի առարկայի վերաբերյալ մեկ կոնցեպցիայի գոյությունը և բացարձակ ճշմարտության գոյության ընդունումը և 5) գիտության անընդհատ, անդադար զարգացման ընդունումը:

Այս սկբունքներն ու դրույթները հանդիսանում են մարդու և իրեն շրջապատող աշխարհի, բնության, այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների որոշակիացումը և «օբյեկտիվության» չափանիշները: Դրանցում (սկզբունքներում և դրույթներում) արտացոլված է ռացիոնալության այն տիպը, ինչը կարելի է բնորոշել իբրև դասական, դեկարտյան: Վերոնշյալ սկզբունքներով և դրույթներով առաջնորդվում է նաև մեր կրթական ամբողջ համակարգը՝ դպրոցներ, բարձրագույն և գիտական հաստատություններ և այլն:

Նման մոտեցումը (մեխանիստական) մարդկությանը թույլ է տվել բազմաթիվ գիտական նվաճումներ ձեռք բերել և գիտական ոլորտում անասելի թռիչքներ կատարել: Այդ ձեռքբերումները կատարվել են այնպիսի գիտնականների կողմից, ում անունները հայտնի են ոչ միայն գիտական շրջանակներին այլ նաև հասարակությանը ընդհանրապես: Այդ գիտնականներից են Ի. Նյուտոնը, Ա. Էյնշտեյնը, Կ. Ցիոլկոսկին, Դ. Մենդելեևը, Չ. Դարվինը, Կ. Լիննեյը, Բ. Գեյթսը, Ջ. Նեշը և այլք: Այս և շատ ուրիշ հանճարների շնորհիվ է, որ մենք այսօր ապրում ենք այսպիսի իրականությունում, և դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչպիսին կլիներ աշխարհը, եթե չլինեին այդ գիտնականների բացահայտումները:

Աշխատանքի այս հատվածում փորձելու ենք հակիրճ ներկայացնել և վերլուծել ներկայիս կրթական համակարգի որոշ սահմանափակումները, ինչը կապված է

աշխարհի դասական (մեխանիստական) պատկերի և դրանում գործող սկզբունքների ու դրույթների հետ:

Մեր կրթական համակարգի գլխավոր դերակատարություններից մեկը այն է, որ դրա շնորհիվ պետք է ձևավորվեն և ի հայտ գան տաղանդավոր գիտնականներ: Այն պետք է նպաստի և բացահայտի երեխաների, պատանիների, երիտասարդների մեջ այն հանճարը, որը հետագայում առաջ կտանի գիտությունը: Կրթական հաստատություններում ընդունված գնահատման համակարգի օգնությամբ դասավանդողները փորձում են խրախուսել նման անձանց և դրանով իսկ խթան հանդիսանալ: Գնահատականները նախատեսված են արտացոլելու այն գիտելիքները, որոնք անհատը յուրացրել է դասապրոցեսի ժամանակ: Հետագայում, այդ գիտելիքները զարգացնելով, պետք է ստեղծվեն հանճարեղ հայտնագործություններ:

Առաջին հայացքից կարծես թե անթերի գործող համակարգ է, սակայն, արդյո՞ք այդքան հարթ է ընթանում ինչպես որ մեզ է թվում:

Այսպիսով, այն անձինք, ովքեր լավ են յուրացրել դասապրոցեսի ժամանակ տրված գիտելիքները, պետք է հետագայում հենց դառնան այն հանճարները, որոնց մենք վերևում նշեցինք և, հետևաբար, այն անձինք, ովքեր դասապրոցեսի ընթացքում լավ չեն յուրացնում գիտելիքները, լավ չեն կարողանում սովորել, իրենց տեղը կզբաղեցնեն գիտության ոլորտից այն կողմ: Ամեն ինչ տրամաբանական է և պետք է որ ճշգրիտ գործեր, սակայն, ինչքան էլ որ զարմանալի թվա, վերոնշյալ ականավոր գիտնականները (Ի Նյուտոն, Ա. Էյնշտեյն, Կ. Ցիոլկովսկի, Դ. Մենդելեև, Չ. Դարվին, Կ. Լիննեյ, Բ. Գեյթս, Ջ. Նեշ և էլի շատ այլք), դպրոցում ոչ միայն չէին փայլում իրենց գիտելիքներով, այլ նաև ստանում էին անբավարար գնահատականներ: Նրանցից շատերն էլ իրենց տարօրինակ վարքի համար համարվում էին հոգեբանական շեղումներ ունեցող անձինք: Այնուամենայնիվ, սրանք այն մարդիկ էին, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել գիտության ներկայիս վիճակը:

Ստացվում է, որ հանճարեղ նորարարություններ անելու համար մեր կրթական համակարգում տրված գիտելիքների լավ յուրացումը պարտադիր պայման չէ և դրանք նույնիսկ վատ յուրացնողները կարող են ականավոր գիտնականներ դառնալ: Այս ամենին էլ եթե ավելացնենք այն փաստը, որ նման անձինք ոչ միայն դպրոցում, այլ

նաև կյանքում հաճախ աչքի են ընկել ոչ սովորական՝ տարօրինակ պահվածքով, խնդիրն ավելի է խճճվում: Դեռևս Չ. Լոմբրոզոն (1836) զուգահեռներ էր տանում հանճարեղության և հոգեխանգարման միջև, համարելով, որ հանճարներին բնորոշ է այս կամ այն հոգեկան շեղումները [90]: Իսկ գուցե հենց այդտեղից պետք է սկսել հետազոտությունները և հնարավոր է այդտեղ է թաքնված վատ սովորելու բանալին:

Համաձայն Քեմբրիջի և Օքսֆորդի աշխատակիցների Ա. Էյնշտեյնին, Ի. Նյուտոնին և Բ. Գեյթսին հատուկ են եղել աուտիզմին բնորոշ ախտանիշներ, ավելի ստույգ՝ Ասպերգերի համախտանիշը [64]: Այդ համախտանիշը ավելի շատ նկատվում է արական սեռի ներկայացուցիչների մոտ: Համարվում է, որ Ասպերգերի համախտանիշով մարդիկ ժամանակի ընթացքում սովորում են ապրել դրա հետ, սակայն, երբևիցե չեն «բուժվում»՝ որպես այդպիսին երբեք չի լինում: Նրանք ստիպված են լինում ինտելեկտի օգնությամբ սովորել սոցիալական նորմերին, ինչի արդյունքում սոցիալական զարգացումը դանդաղում է: Հասակակիցների հետ շփվելու ցանկության բացակայությունը ևս համարվում է այդ համախտանիշի բնորոշ դրսևորումներից: Այդպիսի մարդիկ ցուցաբերում են սոցիալական շփումներում նախվություն, գերճշմարտախոսություն և, երբ նրանց դիտողություն են անում, նրանք չափից ավելի վիատվում են:

Նման անձինք դժվարությամբ են հասկանում, թե ինչ է ցանկանում ասել կողմնակի մարդը, երբ չի արտահայտվում ուղիղ կերպով (չեն կարողանում հասկանալ տողատակերը): Դա նրանից չէ, որ նրանք չեն տրամաբանում, այլ նրանից է, որ նրանք չեն կարողանում ընտրություն կատարել հնարավոր պատասխանների միջև. սոցիալապես «կույր» մարդը չի կարողանում հավաքել բավարար տեղեկատվություն, որպեսզի այն անի:

Ասպերգերի համախտանիշով տառապող մարդիկ հասակակիցների հետ առօրյա շփումների ժամանակ, սովորաբար խնդիրներ են ունենում: Այդ խնդիրները կարող են լինել շատ լուրջ, հատկապես՝ երեխա և պատանի տարիքում. նրանք իրենց յուրօրինակ վարքի, խոսքի և հետաքրքրությունների համար դպրոցում հաճախ են դառնում խուլիգանների, կռվարարների զոհ: Այդպիսի երեխաները և պատանիները մտահոգվում են, երբ իրենց նկատմամբ ցուցաբերում են վատ վերաբերմունք, նրանք

չեն կարողանում հասկանալ, թե ինչն են իրենք սխալ արել (ոչ ճիշտ): Այդքանով նրանք անպաշտպան են և ունեն խնամքի և հոգածության կարիք, ինչին մենք կանդրադառնանք ավելի ուշ:

Ասպերգերի համախտանիշով անձը, երբ զբաղվում է իր սիրելի զբաղմունքով, այդ ընթացքում, բառիս բուն իմաստով, նա ոչինչ չի լսում և ոչինչ չի տեսնում՝ ցուցաբերելով ընտրված զբաղմունքում բացառիկ կոմպետենտություն: Իրենց հետաքրքրությունների ոլորտից դուրս գտնվող այլ բաների նկատմամբ հաճախ դրսևորում են ծուլություն: Դպրոցական տարիքում նրանցից շատերը համարվում են իբրև խելացի աշակերտներ, սակայն անառաջադեմ (անբավարար սովորող), ովքեր կարող են ավելի լավ սովորել իրենց հասակակիցներից, սակայն ցուցաբերում են ծուլություն (երբեմն նաև այն ոլորտներում, որն իրենք սիրում են): Նման և այլ բաների պատճառով նրանց հաճախ հեռացնում են դպրոցից [158, էջ 47-50]:

2009թ. փետրվարի 18-ին «The Daily Telegraph» ամսագրում «Charles Darwin had autism, leading psychiatrist claims» վերնագրով հոդվածում իռլանդացի հոգեբույժը իր հավաքած փաստերի միջոցով փորձում էր հաստատել, որ Չ. Դարվինը ևս տառապել է Ասպերգերի համախտանիշով [209]:

Հանճարեղ գիտնականներից շատերին բնութագրում էին իբրև շիզոֆրենիկներ (Ջ. Նեշ) [141], կամ շիզոֆրենիային բնորոշ ախտանիշներ ունեցող մարդկանց (Դ.Մենդելեև, Կ. Լիննեյ, Կ. Ցիոլկովսկի և այլն) [179]: Նրանցից, գուցե, ամենավառ օրինակ կարող է ծառայել նոբելյան մրցանակակիր, մաթեմատիկոս, տնտեսագետ Ջ. Նեշը, ում ախտորոշել էին իբրև պարանոիդ-շիզոֆրենիա: Նրա պատմությունը հագեցած է բազում փորձություններով. ստիպողական հոգեբուժարաններ, քաղաքական հալածանքներ և այլն: Նրա մոտ հաճախ դրսևորվում էին վախեր՝ իբրև իրեն հետապնդում են, ցանկանում են ինչ-որ կարևոր տեղեկություններ կորզել, ծառայեցնել իրենց շահերին և այլն: Սակայն, այդ ամենը ի վերջո հաղթահարելով, նա արժանացավ գիտության մեջ ամենաբարձր պարգևին՝ նոբելյան մրցանակի:

Այս գիտնականները դրսևորելով ոչ «նորմալ» վարք, ինչը պայմանավորված էր յուրօրինակ մտածելակերպով, իրենց հայտնագործությունները ևս հաճախ անում էին ոչ «նորմալ» ճանապարհներով, որտեղ բացակայում էին, կամ շատ թույլ էին

պատճառահետևանքային (դետերմինացիոն) կապերը, խնդրի վերաբերյալ հարցադրումները սովորականից տարբերվում էին և նույնիսկ կարող էին թվալ տարօրինակ: Բոլորիս հայտնի է խնձորի հետ կապված Ի. Նյուտոնի պատմությունը: Նրա կենսագրությունը ներկայացնողներից Ու. Սթակլին գրում է, որ 1666թ., երբ Ի. Նյուտոնը նստած էր այգում և այդ ժամանակ ծառից ընկավ խնձոր, նրա մոտ առաջին անգամ հանդես եկավ ձգողության ուժի վերաբերյալ միտքը [29, էջ 17]: Իսկ, օրինակ, Ա. Էյնշտեյնը, երբ տվեց աշխարհի ամենաաղմկահարույց և գիտության պատմության մեջ ամենահայտնի բանաձևը $E=mc^2$, նա չուներ և չէր օգտվում լաբորատորիաներից: Ինչքան էլ զարմանալի թվա, այդ ժամանակ նա օգտվում էր ոչ թե նորագույն բացահայտումներից, այլ տասնյակ և նույնիսկ հարյուրավոր տարիներ առաջ մահացած գիտնականների նվաճումներից: Սակայն դա չէ ամենագլխավորը. «Ա. Էյնշտեյնը իր գաղափարները չզարգացրեց որոշ քանակի նոր արդյունքների կոմպիլյացիայի ճանապարհով: Ոչ, նա, ինչպես մենք տեսնում ենք, երկար ժամանակ անցկացրեց, «երազկոտ» մտածելով լույսի մասին, դրա արագության, այն բանի մասին, թե ինչն է մեր տիեզերքում հանդիսանում տրամաբանական կամ անտրամաբանական: Ճիշտ է, այդ մտորումները «երազկոտ» էին թվում միայն կողմնակի անձանց, ովքեր չէին հասկանում Ա. Էյնշտեյնին: Քանի որ այդ ֆանտազիաները նրան բերեցին բոլոր ժամանակների ամենամեծագույն ինտելեկտուալ նվաճումներից մեկին» [52, էջ 118, 119]:

Մի այլ «խելահեղ» երազող էր համարվում Կ. Ցիալկովսկին: Նրա որոնումների կարգախոսը գիտական հաշվարկն էր, ինչը, համաձայն նրա, «...քայլում է անուրջների, ֆանտազիաների, հեքիաթների հետևից» [84, էջ 175]: Կ. Ցիալկովսկու «Фатум, судьба, рок» անվանումով չհրատարակված ձեռագիր աշխատանքում գրված է. «Դասատուներ ես ընդհանրապես չեմ ունեցել, այդ իսկ պատճառով ստիպված էի լինում ոչ թե ընդունել և յուրացնել, այլ շատ կառուցել և ստեղծել: Ցուցումներ, օգնություն ոչ մի տեղից երբևիցե չեն եղել, գրքերում անհասկանալի բաները շատ էին, իսկ դրանք լուսաբանել ստիպված էի լինում ինքնուրույն անել: Այսպես ասած, ես ամբողջ կյանքում սովորեցի մտածել, հաղթահարել դժվարությունները, լուծել հարցերը և խնդիրները: Չունենալով գրքեր և դասատուներ, շատ գիտություններ ստեղծվել են

ինքնուրույնաբար՝ իմ կողմից» [84, էջ 178]: Այսպիսին էր հանճարեղ գիտնական-ֆանտազիորը:

Պարբերական աղյուսակի բացահայտման պատմությունը այնքան հայտնի է, որ գրեթե ցանկացած ոք գիտի, թե ինչպես է այն տեղի ունեցել: Դ. Մենդելեևը ասում է, որ «Գլխում ամեն ինչ կառուցվել էր, բայց աղյուսակի տեսքով չէի կարողանում արտահայտել» [136, էջ 88]: Հետո նա պատմում է, որ «Երազումս տեսնում եմ աղյուսակը, որտեղ տարրերը դասավորված են, ինչպես պետք է: Արթնացա, և իսկույն նեթ թղթի վրա գրեցի: Անհրաժեշտ եղավ միայն մի տեղում կատարել ուղղում» [136, էջ 88]: Այսքանից հետո, իհարկե, զարմանալի չէ, որ այդպես էլ իր երկրում հանճարեղ գիտնականը ակադեմիկոսի կոչում չստացավ:

Չ. Դարվինի մոտ էվոլյուցիոն տեսության մտահղացումը ևս պակաս տարօրինակ կերպով չի եղել: Նա պնդում էր, որ էվոլյուցիոն տեսության վարկածը իր մոտ առաջ է եկել 1842թ., և նրան այդ գաղափարին է բերել անգլիացի հայտնի տնտեսագետ Թոմաս Մալթուսի գիրքը («Опыт о законе народонаселения 1798») [71, էջ 128]: Այդ գրքում Մալթուսը ապացուցում էր, որ ժողովրդի քանակը երկրագնդի վրա աճում է համաձայն երկրաչափական պրոգրեսիայի, իսկ գոյատևման միջոցները՝ ընդամենը թվաբանական: Հենց այս գաղափարն էր հանճարեղ գիտնականին մղել ստեղծելու էվոլյուցիոն տեսությունը, այլ ոչ թե Քեմբրիջում ստացած գիտելիքները, որի մասին նա գրում էր. «Այն ժամանակը, որ ես անցկացրեցի Քեմբրիջում, իսկապես կորած էր, և նույնիսկ ավելի վատ, քան կորած: Երբեմն մենք խմում էինք չափից ավելի, իսկ դրանց հետևում էր ուրախ երգերը և թղթախաղը» [165, էջ 87]:

Դպրոցական տարիներին ուսուցման գործում առաջիններից չէր և, նույնիսկ, վերջին հորիզոնականներն էր զբաղեցնում մյուս հանճարեղ գիտնական Կ. Լիննեյը: Իր դպրոցի մասին նա գրում էր. «Կոպիտ դասատուները, այն բանի փոխարեն, որ երեխաներին տան սկզբնական գիտելիքներ, օգտագործում էին այնպիսի դաժան մեթոդներ, որ մազերս բիզ-բիզ էին կանգնում» [50, էջ 11]: Ամբողջ ազատ ժամանակը և ոչ միայն ազատ, նա անցկացնում էր արվարձաններում և ուշադրությունը կենտրոնացնում բուսական աշխարհի վրա: Նրա կենսագրությունը ներկայացնողներից մեկի մոտ մենք կարդում ենք հետևյալը. «Իր ոլորտում նա չէր աշխատում մեծ ջանքեր

գործադրելով և չուներ մեծ լսարան: Մեծ հետազոտություններ չի անցկացրել բնագիտության ոլորտում: Բնության երեք թագավորությունների վերաբերյալ չուներ խոր գիտելիքներ: Խոշոր կենսաբան կամ կենդանաբան չէր» [50, էջ 197]: Այս ամենը ասված էր մարդկության պատմության մեջ, գուցե, ամենախոշոր կենսաբանի և կենդանաբանի մասին:

Հաջորդ հանճարեղ գիտնականը նախորդի պես դասատուներին չէր մեղադրում, սակայն չէր էլ ցանկանում սովորել այն, ինչն իրեն չէր հետաքրքրում: Վեցերորդ դասարանում անբավարար սովորելու և մոր հետ վեճեր սարքելու համար նրան ստիպված եղան տանել հոգեբանի մոտ, ով մեկ տարի աշխատելուց հետո նրա ծնողներին ասաց. «Դուք կպարտվեք, եթե փորձեք ստիպել, որ նա ավանդական վարք ցուցաբերի կամ լինի լսող: Դուք ստիպված եք սովորել նրան, քանի որ ծեծը ևս օգուտ չի տա» [92, էջ 6]: Այս ամենը մեր ժամանակակցի՝ Բ. Գեյթսի մասին է, ով հիմնադրեց «Մայքրոսոֆթ» ընկերությունը ու առանց որի, այժմ դժվար է պատկերացնել աշխարհը: Նրան դասատուները համարում էին «բութ», սակայն, երբ նա կատարեց իր առաջին քայլերը, շրջապատը ստիպված եղավ վերանայելու սեփական կարծիքը: Այսպիսին է եղել Բ. Գեյթսը, ով հավատում էր, որ կյանքը քաոսային է և իր հաջողությունները կախված են եղել ինչ-որ թիթեռից (խոսքը թիթեռի էֆեկտի մասին է – պարզաբանումը մեր կողմից) [92, էջ 86]:

1994թ. 66-տարեկանում, տնտեսագիտությունից նոբելյան մրցանակ ստացավ հանճարեղ տնտեսագետ և մաթեմատիկոս Ջ. Նեշը: Մրցանակը ստանալիս նա հանդիսավոր ելույթից հրաժարվեց, վախենալով առողջական վիճակի սրացումից: Բանը նրանում էր, որ նրա մոտ, դեռևս տարիներ առաջ, ախտորոշել էին շիզոֆրենիա: Ինչպես և վերոնշյալ գիտնականները, նա ևս դպրոցում հաճախ ստանում էր անբավարար գնահատականներ: Չորրորդ դասարանի նրա գնահատականների ցուցակում անբավարար էին գնահատվել երաժշտությունը և մաթեմատիկան: Դասատուները բողոքում էին նրանից և ասում, որ «Նա պետք է ավելի շատ աշխատի և սովորի հետևել կանոններին» [205, էջ 31]: Դասերի ժամանակ հաճախ նկատում էին, որ նա դասատուներին լսելու փոխարեն ինչ-որ բանի մասին է երազում: Այդպիսին էին նրա տարիները միջնակարգ դպրոցում: Ավելի ուշ, մաթեմատիկայի առաջադրանքները

ստանալիս, նա գտնում էր իր սեփական լուծումները, որոնք ավելի պարզ էին քան դասագրքերում տրվածները [205, էջ 34]: Ջ. Նեշի կյանքում մաթեմատիկայի նկատմամբ առաջին խթանը հանդիսացել է Է. Բելլի «Մաթեմատիկայի ստեղծողները (1937)» գիրքը, որտեղ ներկայացված էին ականավոր մաթեմատիկոսների կենսագրությունները և գործերը: Այդ գրքում նա հանդիպում է մաթեմատիկայի գաղտնիքների հետ, ինչը, համաձայն նրա «...կապ չուներ դպրոցում դասավանդվող հոգնացուցիչ և անիմաստ թվաբանության ու երկրաչափության հետ» [205, էջ 34]:

Ներկայացված ութ հանճարեղ գիտնականները, լինելով գիտության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, ունեին մի շարք ընդհանուր բաներ. դպրոցում աչքի չէին ընկնում իրենց առաջադիմությամբ և, նույնիսկ, համարվում էին անբավարար սովորողներ: Նրանց հատուկ էր ոչ սովորական (ժամանակի նորմերին համապատասխան) վարք, նրանցից որոշներն էլ առօրյա շփումներում ունենում էին լուրջ խնդիրներ: Իրենց հանճարեղ հայտնագործություններին խթան են հանդիսացել «անհասկանալի», պատճառահետևանքային կապերից զուրկ կամ շատ թույլ պատճառահետևանքային կապեր ունեցող իրավիճակները, գիտելիքները և այլն, ինչի պատճառով նրանք համարվել են տարօրինակ, իսկ նրանց հայտնագործությունների մղող խթանները «անհասկանալի» (խնձոր, երազ, ամենատարբեր ֆանտազիաներ): Հասարակությունից նրանց տարբերվելը, հասարակական նորմերին չենթարկվելը, կարող էր պայմանավորված լինել այլ գիտակցական վիճակի հետ, ինչը համապատասխանում է, Ռ.Մ. Նաղդյանի բնորոշմամբ, աշխարհի ուրիշ պատկերին, որը տարբերվում է դասական՝ մեխանիստական աշխարհի պատկերից: Դրանում (նրանց աշխարհի պատկերում) չէին գործում կամ թույլ էին գործում այն սկզբունքները և դրույթները, ինչը բնորոշ է աշխարհի դասական պատկերին: Այդպիսի մարդիկ շրջապատի կողմից անհասկացված լինելու հետևանքով, ինչի պատճառը մտածելակերպի տարբերությունն է, պայքարում են իրենց գաղափարների ճշմարտացիության համար, փորձելով հաղթահարել շրջապատի կողմից թելադրված սկզբունքները: Նրանք, բառիս բուն իմաստով, կռիվ են տալիս ամեն մի փոքրիկ ճշմարտությունը ապացուցելու համար, և դժբախտաբար, նման մարդկանցից շատերը, այդ պայքարում կարող են դուրս մղվել, պարտվել և չհասկացվել:

Ինչպես նշեցինք, դպրոցում վատ սովորելու, հասակակիցների հետ ոչ նորմալ հարաբերությունների հավանական հիմնական պատճառը գիտակցական վիճակի տարբերությունն էր: Դպրոցներում, հասարակության լայն շրջանակներում գործող մեխանիստական մտածելակերպը՝ ինչը ձևավորվել և իր վերջնական հաստատումն էր գտել դեկարտյան փիլիսոփայությունում, թույլ չէր տալիս նրանց հասկացված լինել: Իրենց աշխարհի պատկերում գործում էին այլ սկզբունքներ և դրույթներ, որոնք չէին ենթարկվում աշխարհի դասական պատկերից ածանցված սկզբունքներին և դրույթներին, այդ իսկ պատճառով, նրանցից շատերին համարում էին ոչ համարժեք վարք ցուցաբերող, նրանց պարզաբանումները, դետերմինացիոն կապերի թույլ լինելու կամ ընդհանրապես բացակայելու պատճառով, համարվում էին սխալ և անպետք: Սակայն, ինչպես տեսնում ենք, հենց նման մտածելակերպի՝ ոչ մեխանիստական, Ա.Ի. Միրաքյանի բնորոշմամբ՝ աֆիզիկալ մտածելակերպի արդյունքում է, որ նրանց գլխում ծնվել են հանճարեղ հայտնագործություններ:

Մեր կրթական համակարգում մինչ այժմ գերիշխում է այդ մեխանիստական, ֆիզիկալ մտածելակերպը, ինչի պատճառով շատ հանճարեղ մտքեր կարող են ճնշվել և կյանքի չկոչվել: Ստիպելով երեխաներին, պատանիներին մի կողմ դնել երազկոտությունը, ֆանտազիաներով տարվելը և նրանց մեջ մշակելով մեխանիստական մտածելակերպ, միաժամանակ կարող են «սպանել» հանճարին: Իսկ ինչպես վարվել, ինչ անել այդ դեպքում: Մեր կարծիքով կրթական համակարգում պետք է մեխանիստական մտածելակերպին զուգահեռ թույլ տրվի ոչ մեխանիստական, աֆիզիկալ մտածելակերպի գոյությունը, ինչի մասին մենք բավականաչափ խոսել ենք առաջին գլխում:

Ոչ մեխանիստական, աֆիզիկալ մտածելակերպը բնորոշ էր նաև վերոնշյալ հանճարներին: Հենց այդ մտածելակերպի առկայությունն էր առիթ տալիս շրջապատի մարդկանց նրանց համարել տարօրինակ, սակայն, միաժամանակ, հենց դրա գոյությունն էր, որ նրանց մղում էր հանճարեղ հայտնագործություններ կատարելու: Ուղղակի այդ հայտնագործությունները կատարվում էին ոչ «նորմալ» ճանապարհով, ինչի (նորմալի) սահմանները գծվել էին դեկարտյան, մեխանիստական աշխարհի պատկերի շրջանակներում: Մինչ այժմ չընկալելով նրանց ոչ մեխանիստական

մտածելակերպը, շատերը փորձում են այդ հայտնագործությունները խթանող ազդակները տեղավորել մեխանիստական մտածելակերպի շրջանակներում (Ի. Նյուտոնի խնձորը, Դ. Մենդելեևի երազը, Ա. Էյնշտեյնի, Կ. Ցիալկովսկու ֆանտազիաները և այլն). մի դեպքում համարելով, որ այդ խթանները աղավաղվել են նրանց կենսագրությունը գրողների կողմից, իսկ մյուս դեպքերում, նրանց վերագրել են հոգեկան այս կամ այն հիվանդությունները, ինչի պարագայում դետերմինացիոն կապերը աղավաղվում են: Սակայն, երևույթները ավելի խորը հասկանալու համար, մենք ևս պետք է ձեռք բերենք այլ՝ ոչ մեխանիստական մտածելակերպ, ինչն առաջարկում էր նաև Ա.Ի. Միրաքյանը: Խնդիրներին նման հայացքով նայելու դեպքում (ոչ մեխանիստական մտածելակերպի օգնությամբ) մենք կկարողանանք ոչ միայն լավ հասկանալ այդ հանճարեղ գիտնականներին, այլ նաև ճանապարհ կհարթենք նորանոր բացահայտումների համար:

Կրթական ոլորտում թույլ տալով ոչ մեխանիստական մտածելակերպի գոյությունը, մենք ոչ միայն երեխաներին, պատանիներին կթողնենք ստեղծագործել այդ մտածելակերպին համապատասխան, այլ նաև նրանց մեջ կմշակենք այդ մտածելակերպը (ասենք, շատ խնդիրների լուծման համար իբրև ելակետային տվյալներ չվերցնել այն պայմանները, հասկացությունները, ինչով կարող են պայմանավորված լինել հենց այդ խնդիրները, ինչպես մատնանշում էր Ա.Ի. Միրաքյանը): Կրթական ոլորտում աֆիզիկալ մտածելակերպի առկայության անհրաժեշտության մասին խոսում էր նաև Ռ.Մ. Նաղդյանը և մատնանշում, որ նախևառաջ պետք է լինեն համապատասխան մտածելակերպով ուսուցիչներ [127]:

Իհարկե, մենք այս աշխատանքով չենք ցանկանում հերքել կրթական համակարգում մեխանիստական մտածելակերպի անհրաժեշտությունը, այլ միայն ցանկանում ենք նշել, որոշ, սակայն, միաժամանակ, շատ կարևոր դեպքերում, դրա սահմանափակումները և դրանից բխող հնարավոր բացասական հետևանքները: Այդ փակուղուց դուրս գալու համար առաջարկում ենք գերիշխող մեխանիստական մտածելակերպի հետ զուգահեռ կրթական համակարգում թույլ տալ ոչ մեխանիստական, աֆիզիկալ մտածելակերպի գոյությունը, ինչն ոչ միայն հնարավորություն կստեղծի երեխաների, պատանիների և երիտասարդների մեջ

հասկանալ, տեսնել հանճարը, այլ նաև կօգնի նրանցում մշակել աֆիզիկալ մտածելակերպը: Միայն այն փաստը, որ մեխանիստական մտածելակերպի պատճառով, նույնիսկ 100-տարին մեկ, մարդկությունը կարող է կորցնել մի Ա. Էյնշտեյն, Ջ. Նեշ կամ Չ. Դարվին, ապա անհրաժեշտ է մտածել այդ մասին և ջանքեր ներդնել նման բանի բացառման գործում:

Ինչպես տեսնում ենք տեսական այս վերլուծությունից, կրթական համակարգում աֆիզիկալ (ոչ մեխանիստական) մտածելակերպի առկայությունը, ուսուցանողների մոտ դրա մշակումը կարող է ոչ միայն շատ անբացատրելի երևույթների (դետերմինացիոն կապերից զուրկ իրավիճակների) մեկնաբանման բանալին հանդես գալ, այլ նաև հանճարեղ գիտնականների ճանապարհը հարթելու ուղին լինել:

Հաջորդ՝ վերջին ենթագլխում կներկայացնենք, թե ինչպիսի հեռանկարներ կարող են հոգեթերապիայում բացվել (հոգեվերլուծության օրինակով) ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքները օգտագործելու դեպքում (մասնավորապես՝ անհզոտրոպ հարաբերությունների սկզբունքը):

### 3.4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների կիրառման հնարավորությունները հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով)

Հոգեթերապիայում ընկալման այս կամ այն խանգարումները հաճախ են դառնում հոգեթերապևտի հետազոտման առարկա: Այս ոլորտում (հոգեթերապիայում) ամենատարբեր հոգեբանական խնդիրները հասկանալու, դրանց լուծումները գտնելու համար, հոգեթերապևտները ստիպված են լինում գործ ունենալ տվյալ մարդու ընկալման հետ (փոխելով այն, դրանում շտկումներ կատարել և այլն), որի պատճառով ընկալման գործընթացը դառնում է բազմաթիվ մեկնաբանությունների առիթ: Սակայն, ինչպես և հոգեբանության տարբեր բնագավառներում, այդ խնդիրն իր վերջնական լուծումը չի գտել:

Վերոնշյալ, ինչպես նաև այլ հանգամանքները հաշվի առնելով, կարևոր համարեցինք ուսումնասիրել և տեսական վերլուծության ենթարկել ընկալման և հոգեկան արտացոլման գործընթացի վերաբերյալ հոգեթերապիայում ներառված

հիմնական մեկնաբանությունները: Նշենք նաև, որ աշխատանքի ֆորմատից ելնելով չենք կարողացել ընդգրկել հոգեթերապիայի բոլոր ուղղությունները, որոնց թիվը տատանվում է 400-ից [80, էջ 5] 600-ի սահմաններում [157, էջ 9], այլ միայն սահմանափակվել ենք բազմաթիվ հոգեբանների կողմից ընդունված երեք հիմնական ուղղությունների հետազոտմամբ. հոգեդինամիկ, ֆենոմենոլոգիական (էկզիստենցիալ-հումանիտար) և վարքային (կոգնիտիվ-վարքային) [80], [31], որոնցում, այս կամ այն կերպ ամփոփված են հոգեթերապիայի տարբեր ուղղություններում ներառված հիմնական սկզբունքները և մեխանիզմները: Այդ երեք ուղղությունները ներկայացնելով, զուգահեռաբար կփորձենք մատնանշել դրանցում առկա արգասիքային մոտեցման դրսևորումները (երբ հետազոտվող խնդիրը փորձում են հասկանալ, լուծել հենց այդ խնդրից, դրա բաղկացուցիչ մասերից ելնելով):

**1. Հոգեդինամիկ մոտեցում.** Այս մոտեցման հետևորդները պնդում են, որ մարդու մտքերը, զգացումները և վարքը դետերմինացված են անգիտակցական հոգեկան գործընթացներով: Հոգեդինամիկ մոտեցման հիմքերը դրվել են Զ. Ֆրեյդի կողմից, ով մարդու հոգեկանը համեմատում էր սառցաբեկորի (айсберг) հետ, «...ինչի միայն աննշան մասն է գտնվում ջրից դուրս» [79, էջ 105]: Սառցաբեկորի գագաթը գիտակցությունն է, իսկ հիմնական մասը, որը գտնվում է ջրի տակ՝ մարդու անգիտակցականը:

Համաձայն Զ. Ֆրեյդի մարդու հոգեկանը կառուցված է երեք գլխավոր բաղադրամասերից՝ «Իդ», «Ես» և «Գեր Ես» [170, էջ 91-156]:

«Իդ» (Այն)՝ անգիտակցական էներգիայի աղբյուրն է, ինչը Զ. Ֆրեյդի կողմից անվանվեց լիբիդո: Իդ-ը իրենում ներառում է մարդու հիմնական բնազդները, ցանկությունները և իմպուլսները, որոնցով մարդիկ ծնվում են: Իդ - ը գործում է հաճույքի սկզբունքի համաձայն: Զ. Ֆրեյդը գտնում էր, որ մարդու մեջ գործում են երկու հակադիր հիմնական բնազդները. Էրոսը՝ հաճույքի և սեքսի բնազդը ու մահվան բնազդը: Վերջինս կարող է իր կամ ուրիշների նկատմամբ ցուցաբերել դեստրուկտիվություն կամ ագրեսիա [170, էջ 157]:

Հոգեկանի երկրորդ բաղադրամասը «էգո»-ն է (Ես): Այն մարդու գիտակցականն է: Հաշվի առնելով հասարակության նորմերը և կանոնները էգո-ն փնտրում է

բնազդների բավարարման ճանապարհներ: Էգո-ն փորձում է Իդ-ի անտրամաբանական («անթույլատրելի») պահանջների և իրական աշխարհի պահանջների միջև փոխզիջումներ գտնել. այն գործում է համաձայն իրականության սկզբունքի: Էգո-ն փորձելով բավարարել Իդ-ի պահանջմունքները, միաժամանակ ուղիներ է փնտրում մարդուն ֆիզիկական և էմոցիոնալ վնասներից զերծ պահելու համար: Էգո-ն, համաձայն Զ. Ֆրեյդի, մարդու իշխանությունը ցուցաբերելու հիմնական գործիքն է [170, էջ 103-113]:

Մարդու հոգեկանի երրորդ բաղադրամասը՝ «Գեր-Ես»-ն է: Այն զարգանում է դաստիարակման, սոցիալականացման ընթացքում՝ իբրև ծնողական և հասարակական արժեքների ինտերնալիզացիայի արդյունք: Գեր-Ես-ը իրենում ներառում է ինտրոեկտված արժեքները, մեր «անհրաժեշտները» և «չի կարելիները»: Այն (Գեր-Ես-ը) մեր խիղճն է, որը գործում է բարոյական սկզբունքի համաձայն, ինչի խախտումը կարող է բերել մեղքի զգացումի առաջացման: «Գեր-Ես-ը կարող է նաև դառնալ գերբարոյական և այդ ժամանակ այն կլինի այնքան դաժան, որքան կարող է լինել միայն Իդ-ը» [170, էջ 150]:

Իդ-ի, Էգո-ի և Գեր-Ես-ի բախումը կարող է բերել միջհոգեկան կամ հոգեդինամիկ կոնֆլիկտների [30, էջ 14]:

Հոգեդինամիկ ուղղության հետևորդներից և վառ ներկայացուցիչներից է Ա. Ադլերը, ով առաջարկեց անհատական հոգեբանության իր տեսությունը [25]: Համաձայն նրա, անձի ձևավորման գործում մեծ դեր են խաղում սոցիալական բնածին շարժառիթները: Նա նշում էր, որ ամեեն մարդ ծնվում է անօգնական, կախյալ վիճակում, ինչը բերում է թերարժեքության բարդույթի: Այդ բացասական զգացումը, որը սերտորեն կապված է հասարակության «լիարժեք» անդամ դառնալու բնական ցանկության հետ, հանդիսանում է անձի զարգացման հիմնական խթաններից մեկը: Ա. Ադլերը այդ գործընթացը բացատրում էր մարդու գերազանցության ձգտումով, ինչը հասկացվում էր որպես ինքնիրացման բնական պահանջ, այլ ոչ թե միայն ուրիշներից ավելի լավը լինելու ցանկություն: Եթե թերարժեքության զգացումը շատ ուժեղ է լինում, ապա այն բերում է փոխհատուցման, նույնիսկ գերփոխհատուցման՝ «թերարժեքության բարդույթի»: Համաձայն նրա, նևրոզը զարգանում է այն դեպքում, երբ մարդը

թերարժեքության բարդույթը հաղթահարելու ճանապարհին պարտություն է կրում. մարդը, նևրոզի միջոցով, իր թուլությունը վերագրելով հիվանդությանը, կարողանում է պահպանել սեփական արժանապատվության զգացումը [26]:

Հոգեդինամիկ մոտեցման ուղղություններից է նաև էգո-հոգեբանությունը (Ա. Ֆրեյդ, Հ. Հարթման, Է. Էրիկսոն): Էգո-հոգեբանները «էգո»-ն դիտարկում էին «Իդ»-ի, «Գեր-Ես»-ի և միջավայրի միջև ոչ թե հասարակ, պասիվ միջնորդ, այլ որպես ստեղծագործական, ադապտիվ մի ուժ: «Էգո»-ն պատասխանատու է լեզվի, ընկալման, ուշադրության, պլանավորման, ուսուցման և այլ հոգեբանական գործառույթների զարգացման գործում [199, էջ 17-42]:

Նեոֆրեյդիստները՝ Կ. Հորնին, Է. Ֆրոմմը, Հ. Սալլիվենը, ի տարբերություն նախորդների, իրենց հետազոտությունների հիմնական թիրախ ընտրեցին սոցիալական միջավայրը և դրա ազդեցությունը անձի ձևավորման վրա [73, էջ 286]: Նրանք կարծում էին, որ անձի ձևավորման գործում ամենանշանակալի ազդեցությունը թողնում են սոցիալական պահանջմունքների բավարարումը. ապահովվածության, անվտանգության, ճանաչման (ընդունման) պահանջմունքները: Երբ դրանք չեն բավարարվում, մարդիկ ուժեղ դիսկոնֆորտ են զգում և ձգտում են լուծել այդ խնդիրը (օգտագործելով այլ մարդկանց՝ ստանալով նրանցից այն, ինչի կարիքը նրանք ունեն) [73, էջ 282-288]: Հ. Սալլիվենը մեծ նշանակություն էր տալիս միջանձնային հարաբերություններին, ինչի խախտումը կարող էր դառնալ նևրոզի առաջացման պատճառ [176, էջ 10]:

Ժամանակակից հոգեդինամիկ մոտեցումում իրենց ուրույն դերն ունեն օբյեկտային հարաբերությունների տեսաբանները: Այդ ուղղության առավել վառ ներկայացուցիչներից են Մ. Քլեյնը, Օ. Քերնբերգը և Հ. Կոհուտը:

Անձի զարգացման գործում օբյեկտային հարաբերությունների տեսությունը, հատկապես կարևոր է համարում մարդու շատ վաղ տարիների հարաբերությունները. երեխայի և իր սիրո օբյեկտի միջև կառուցված հարաբերությունը, ինչը, սովորաբար, լինում է երեխայի և մոր, ինչպես նաև այն մարդու միջև, ով երեխայի համար հոգ է տանում: Մարդու կյանքում առավել կրիտիկական է հանդիսանում այն, թե ինչպես են առաջնային օբյեկտները նրան աջակցություն, պաշտպանություն ապահովում, այլ

խոսքով ասած, ինչպես են բավարարում երեխայի ֆիզիկական և հոգեբանական պահանջմունքները: Օբյեկտային հարաբերությունների նման բնույթը շատ կարևոր խթան է հանդիսանում անձի զարգացման հետագա ընթացքի համար: Օբյեկտային խաթարված հարաբերությունները կարող են խնդիրներ ստեղծել: Դրանք (խաթարված հարաբերությունները), խառնվելով անձի զարգացման գործընթացին, կարող են անձի ոչ համարժեք ինքնագնահատականի պատճառ հանդիսանալ, միջանձնային վատ հարաբերությունների և, նույնիսկ, ավելի լուրջ հոգեբանական խնդիրների առաջացման առիթ դառնալ [177, էջ 15-241]:

Այդ ուղղության գլխավոր նպատակը սոցիալական գործոնների ազդեցությամբ անձի զարգացման գործընթացի խաթարված հարաբերությունների վերակառուցումն է. առաջին հերթին, ծնողական ընտանիքում միջանձնային խեղաթյուրված հարաբերությունների կարգավորումը: Խախտված հարաբերությունների համակարգը թույլ չի տալիս մարդուն ռացիոնալ կերպով լուծել կյանքի դժվարին պահերին ստեղծված միջհոգեկան կոնֆլիկտները, ինչն էլ իր հերթին դառնում է նևրոզի առաջացման պատճառ: Համաձայն այդ տեսության, կոնֆլիկտի գիտակցումը հանդիսանում է հոգեթերապիայի գլխավոր խնդիրը [178, էջ 15-83]:

Հոգեվերլուծությունը, ինչպես նաև հոգեդինամիկ մոտեցման շրջանակներում այլ մեթոդները, եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ իրենց առջև դնում են հետևյալ հիմնական խնդիրները.

1. Այցելուն ի վերջո գիտակցի ներքին կամ հոգեդինամիկ կոնֆլիկտը.

2. Մշակել կոնֆլիկտը, այսինքն՝ հետևել, թե ինչպես է այն ազդում վարքի և միջանձնային հարաբերությունների վրա [30, էջ 14]:

Այսպիսով, Զ. Ֆրեյդը և հոգեդինամիկ մոտեցման հետևորդները հոգեբանական խնդրի լուծումը տեսնում էին այցելուի կողմից իր ներսում գոյություն ունեցող կոնֆլիկտը գիտակցելու մեջ: Համաձայն Զ. Ֆրեյդի, ներքին կոնֆլիկտը տեղի է ունենում հոգեկանի երեք բաղադրամասերի միջև (Իդ, Ես և Գեր-Ես), որոնցից ամեն մեկը հոգեկանում ունի իր նշանակությունը և դերը (Իդ՝ որոշ «օբյեկտների» նկատմամբ սեքսուալ հակումներ, պահանջներ, Ես՝ բանականություն, և Գեր-Ես՝ բարոյականություն): Այդպիսի մտահղացումը՝ հոգեկանը բաժանել երեք

բաղադրամասերի, Զ. Ֆրեյդի մոտ առաջ եկավ, երբ նա փորձում էր հիվանդներին բուժել հիպնոսի միջոցով: Հիպնոսի ժամանակ, հետևելով հիվանդների խնդիրներին, նա նկատել էր, որ դրանց հետքերը հասնում են գիտակցությունից այն կողմ գտնվող մի այլ ոլորտ, ինչը, նրա կողմից անվանվեց անգիտակցական: Հետագայում, խնդիրների ծագումը փնտրելով հենց այդ ոլորտում, նա տալիս է մեզ հայտնի հոգեկանի երեք բաղկացուցիչ մասերը (անգիտակցական, ենթագիտակցական և գիտակցական), ինչը, իր իսկ խոսքերով, շատ պայմանական է, գիտական առումով ոչ ճիշտ և կոպիտ, սակայն, միաժամանակ նշելով, որ այդ բաժանումը մեզ ավելի քիչ մոլորության մեջ կգցի քան նախկինում եղածները [168, էջ 267, 268]:

Զ. Ֆրեյդը և նրա հետևորդները հոգեբանական ամենատարբեր խնդիրները (ֆոբիաներ, հիստերիա և այլն) լուծելու համար փորձում էին հասկանալ հոգեբանական խնդրի ծագման պատճառները, ինչը պետք է գիտակցվեր այցելուի կողմից: Դրան հասնելու համար նրանք իբրև ելակետային տվյալներ վերցնում էին հենց այդ հոգեբանական խնդիրները (փորձելով այն մասնատել, ազատ ասոցիացիաների մեթոդով այդ խնդրի շուրջ տարբեր հիշողություններ արթնացնել և այլն), որոնց ծագման պատճառները պետք է գտնեին: Այդուհանդերձ, նրանք ցուցաբերում էին արգասիքային մոտեցում, քանի որ իրենց հետազոտումներում ելակետային տվյալներ էին ծառայում հենց այդ խնդիրները, իսկ ինչպես նշել էինք մեր աշխատանքում, արգասիքներում (տվյալ դեպքում հոգեբանական խնդիրներում, որոնք հոգեկան ինչ-որ գործընթացի ավարտված ֆենոմեններ են) գործընթացը արդեն ավարտված է:

Հոգեդինամիկ ուղղության ներկայացուցիչներին հաջողվեց բացահայտել, մասնավորապես՝ իրենց իսկ կողմից մասերի բաժանած վերացարկումների (Իդ, Էգո, Գեր-Էս) միջև հարաբերությունները, սակայն ոչ երբեք հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքները և օրինաչափությունները:

**2. Ֆենոմենոլոգիական (էկզիստենցիալ-հումանիտար) մոտեցում.** Ֆենոմենոլոգիան և էկզիստենցիալիզմը համարվում են իրար փոխլրացնող ուղղություններ: Էկզիստենցիալ գաղափարներին և հասկացություններին դիմել է նույնիսկ Է. Հուսերլը, երբ ֆենոմենոլոգիան վերջնական մշակման էր ենթարկում [68]: Ֆենոմենոլոգիական հետազոտման մեթոդներին դիմում էին ոչ միայն

էկզիստենցիալիստ փիլիսոփաները՝ Ժ.Պ. Սարտրը, Մ. Մերլո-Պոնտին, այլ նաև էկզիստենցիալ հոգեբանները և հոգեթերապևտները՝ Լ. Բինսվանգեր, Մ. Բոսս, Ռ. Մեյ և այլոք: Հետագայում այդ հանգամանքը բերում է այդ երկու ուղղությունների միահյուսմանը (միախառնվելուն) [59]:

Համաձայն ֆենոմենոլոգիական մոտեցման, ցանկացած մարդ օժտված է աշխարհը յուրովի ընկալելու և մեկնաբանելու ունակությունով: Փիլիսոփայության լեզվով ասած, այն հոգեկան ապրումները, որը մենք ունենում ենք միջավայրի նկատմամբ՝ անվանվում է ֆենոմեն, իսկ այն բանի հետազոտումը, թե ինչպես է մարդը զգում իրականությունը՝ ֆենոմենոլոգիա:

Այդ մոտեցման ներկայացուցիչները համոզված են, որ ոչ թե բնազդները, ներքին կոնֆլիկտները կամ միջավայրի խթաններն են դետերմինացնում մարդու վարքը, այլ իրականության վերաբերյալ (ցանկացած տվյալ պահի) նրանց անձնական ընկալումը: «Մարդը՝ ներհոգեկան կոնֆլիկտների բեմ չէ և ոչ էլ բիհեվիորիալ կավ, որից պետք է անձը կերտվի» [30, էջ 15]:

Ֆենոմենոլոգիական մոտեցումում, մարդու ապրումների բնույթի վերաբերյալ տվյալները համարվում են աշխատելու (թերապիայի) համար բավարար նյութ: Հոգեթերապիայի ժամանակ կարող են բաց թողնվել, օրինակ, մարդու անցյալում կատարված շատ բաներ, քանի որ, համաձայն նրանց, այն ամենը, ինչը վերաբերում է անցյալին, ցանկացած դեպքում հանդես է գալիս իբրև անձի անբաժանելի մի մաս, ինչը գոյություն ունի ներկա պահին [72, էջ 26]:

Այստեղ թերապևտի խնդիրը նրանում չէ, որպեսզի օգնի մարդուն գիտակցելու սեփական խնդիրների սկզբնաղբյուրները և պատճառները, այլ նրանում է, որպեսզի օգնի նրան զգալու և ապրելու խնդրահարույց իրավիճակը: Այդ հանգամանքը այն հիմնական տարբերությունն է, ինչով առանձնանում է սույն մոտեցումը այլ մոտեցումներից, որոնք թերապիայի ժամանակ հիմնվում են մեկնաբանող մեթոդի վրա (հոգեվերլուծություն, անհատական հոգեբանություն, տրանսակցիոն վերլուծություն, կոգնիտիվ հոգեթերապիա և այլն): Հոգեթերապիայում իրական հաջողությունների հասնելու համար խնդրի վերաբերյալ պատկերացումների փոփոխումը և նոր հայացքը այստեղ համարվում են իբրև ածանցյալ և ոչ պարտադիր [72, էջ 56]:

Փաստացի, ֆենոմենոլոգիական մոտեցումը իր տեսադաշտից դուրս է թողնում բնազդները և ուսուցման գործընթացները, որոնք ընդհանուր են մարդկանց և կենդանիների համար: Դրա փոխարեն այդ մոտեցումը կենտրոնանում է այնպիսի յուրահատուկ հոգեկան որակների վրա, որոնք մարդկանց առանձնացնում են կենդանի աշխարհից. «Գիտակցություն, ինքնագիտակցում, կրեատիվություն, պլաններ կառուցելու ունակություն, որոշումներ կայացնելու և պատասխանատվություն կրելու դրանց համար: Այդ իսկ պատճառով ֆենոմենոլոգիական մոտեցումը կոչվում է նաև հումանիտար» [31, էջ 13]:

Ի տարբերություն հոգեդինամիկ ուղղության, ֆենոմենոլոգիական մոտեցումը հոգեկանում առաջացած խնդրի ծագումը չէր փնտրում անգիտակցականում և սեքսուալ հակումներում ու դրա լուծման համար իր առջև խնդիր չէր դնում, որ այցելուն գիտակցեր վաղ տարիքում տեղի ունեցած վնասվածքային ապրումները: Սակայն, այնուամենայնիվ, ֆենոմենոլոգիական մոտեցման հետևորդները ևս ցուցաբերում էին արգասիքային մոտեցում, մասնավորապես՝ նրանք փորձում էին աշխատել այս կամ այն իրավիճակների պատճառով մարդու հոգեկանում տեղ գտած ապրումներից ածանցված տվյալների հետ, որոնք (այդ տվյալները) հանդիսանում են որոշակի հոգեկան գործընթացի արգասիքներ: Այսինքն, ֆենոմենոլոգիական մոտեցումը հոգեբանական խնդիրների հետ աշխատելիս իբրև ելակետային տվյալներ վերցնում էր հենց ծագած խնդիրները (ֆենոմենները, ապրումները բնորոշող հատկությունները և հատկանիշները), համարելով, որ դրանք իրենցում ներառում են նաև վաղ տարիքի ապրումները: Նրանք գտնում էին, որ այցելուն իր ներսում գոյություն ունեցող խնդիրները գիտակցելու փոխարեն, պետք է դրանք զգա և վերապրի:

Խնդիրները լուծելու համար ֆենոմենոլոգիական մոտեցման հետևորդները, մեծ շեշտ դնելով նաև մարդու գիտակցության, ինքնագիտակցման և նման այլ երևույթների վրա, փաստորեն հոգեկան որոշ գործընթացների արդյունքում առաջացած խնդիրը փորձում էին բացատրել և լուծել հոգեկան ֆենոմենների օգնությամբ, որոնք հոգեկան գործընթացի ավարտված արգասիքներ են: Նման կերպ շարժվելով նրանք բացահայտում էին հոգեկան համապատասխան ֆենոմենների միջև հարաբերությունները, այլ ոչ թե հոգեկանում ծնված, որոշակի գործընթացի

արդյունքում առաջացած հոգեբանական խնդիրներ ստեղծող սկզբունքները և մեխանիզմները: Նրանց ամբողջ արսենալը ուղղված էր հոգեկան ֆենոմենների օգնությամբ հոգեկանում ծնված խնդիրները բացահայտելու և լուծելու գործին: Սակայն, հոգեկան ֆենոմեններում (գիտակցություն, ընկալում և այլն) հոգեկան երևույթները ստեղծող՝ այդ թվում նաև հոգեբանական խնդիրները, գործընթացի սկզբունքները և մեխանիզմները այլևս ավարտված են և, այդ իսկ պատճառով, մենք չենք կարող ֆենոմեններից ելնելով բացահայտել հետազոտվող խնդրի սկզբունքները և օրինաչափությունները, որոնց օգնությամբ միայն հնարավոր կլինի հասկանալ խնդրի ծագման մեխանիզմները:

Ֆենոմենոլոգիկան մոտեցումը հոգեբանական խնդրի ծագումը մեկնաբանելով, մասնավորապես՝ իբրև շրջապատող աշխարհին վատատեսական հայացքով դիտելու հետևանք, տալիս էր այն բազմաթիվ մեկնաբանություններից մեկը, ինչը հնարավոր է անել վերացարկված և հասկացություններում ամրացված հոգեկան գործընթացի արգասիքի՝ հոգեբանական խնդրի հետ:

**3. Բիհեվիորիստական (կոգնիտիվ-վարքային) մոտեցում.** Բիհեվիորիզմ (անգլ. behaviour - վարք), ամերիկյան հոգեբանությունում գլխավոր ուղղություններից մեկն է, որը մարդու (անձի) ուսումնասիրման հետ կապված բոլոր գիտական ճյուղերի վրա նշանակալի հետք է թողել: Բիհեվիորիստները ենթադրում էին, որ «...վարքը՝ ակնհայտ, տեսանելի, անվիճելի գործողություն է, այդուհանդերձ այն պետք է լինի հոգեբանության առարկան, այլ ոչ թե հոգեբան-մենթալիստների կողմից հորինված (մտացածին) հիշողությունը, դատողությունը, կամքը և նման անտեսանելի հոգեկան գործընթացները» [174, էջ 323]: Համաձայն նրանց, վարքը հետազոտելու համար պետք է օգտագործվեն օբյեկտիվ միջոցները, որպեսզի այն հնարավոր լինի ծառայեցնել պրակտիկային [166, էջ 3]:

Բիհեվիորիստների տեսանկյունից անձը՝ դա այն փորձն է, որը մարդը ձեռք է բերում կյանքի ընթացքում: Այդ ուղղությունը գործ է ունենում մարդու բաց (տեսանելի) գործողությունների հետ, որոնք ածանցվել են մարդու կյանքի փորձից: Ի տարբերություն նախորդ ուղղությունների «Բիհեվիորիստական ուղղության տեսաբանները անհրաժեշտ չէին համարում մտածել «բանականությունում» թաքնված

հոգեկան կառուցվածքների և գործընթացների մասին» [79 ,էջ 331, 332]: Հակառակը, նրանք արտաքին միջավայրը սկզբունքորեն դիտարկում են որպես մարդու վարքի գլխավոր (հանգուցային) գործոն: Համաձայն նրանց, հենց միջավայրն է ձևավորում մարդուն, այլ ոչ թե ներքին հոգեկան երևույթները:

Վարքային թերապիան՝ որպես հոգեբանական խանգարումների ախտորոշման և բուժման համակարգված մոտեցում ծագել է անցած դարի 50թթ.: Բիհեվիորիզմը իր վաղ փուլում համարվում էր որպես կլինիկական խնդիրների լուծման «ուսուցման ժամանակակից տեսության» գործնական կիրառում: «Ուսուցման ժամանակակից տեսություն» հասկացությունը այն ժամանակ կապված էր դասական և օպերանտորեն պայմանավորված սկզբունքների ու ընթացակարգերի (պրոցեդուրաների) հետ: Հիմնվելով ուսուցման տեսությունների վրա, վարքային թերապևտները մարդու հոգեբանական խնդիրները և շեղումները դիտարկում էին որպես օնտոգենեզում մշակված չադապտացված վարքի արտահայտություններ: Ջ. Վոլպեն վարքային թերապիան բնորոշում էր իբրև փորձարարորեն հաստատված ուսուցման սկզբունքների օգտագործումով չադապտացված վարքի փոփոխմանն ուղղված մոտեցում: Համաձայն նրա, չադապտացված սովորությունները կարող են թուլանալ և վերանալ, իսկ ադապտիվ սովորությունները կարող են առաջանալ և ամրանալ [212]: Բիհեվիորիստները պնդում էին, որ «Բավարար է միայն հիվանդին ազատել ախտանիշներից և, այդուհանդերձ, կհեռանա նաև նևրոզը» [30, էջ 19]:

Այժմ վարքային թերապիան ենթարկվում է փոփոխությունների՝ իրենում ներառելով կոգնիտիվ-վարքային մոդելներ: «Մաքուր» վարքային թերապևտի խնդիրը հանդիսանում է ընկալման մեջ շրջակա միջավայրի և սեփական անձի վերաբերյալ պատկերացումների փոփոխումը, իսկ կոգնիտիվ-վարքային թերապևտները ընդունում էին թե մեկը և թե մյուսը. «Սեփական անձի և աշխարհի վերաբերյալ գիտելիքները ազդում են վարքի վրա, իսկ վարքը և դրա հետևանքները ազդում են աշխարհի և սեփական անձի վերաբերյալ պատկերացումների վրա» [140, էջ 56]:

Կոգնիտիվ-վարքային թերապևտները, ինչպես և նրանց նախորդները (բիհեվիորիստները), չեն հետաքրքրվում անցյալով կամ նյարդային խանգարումների պատճառներով: Նրանք կարծում են, որ ոչ ոք չի կարող իմանալ իրական

պատճառները, և բացի այդ, ապացուցված չէ, որ պատճառների իմացությունը կապ ունի բուժման հետ: Նրանք ասում էին, որ եթե ոսկրի կոտրվածքով հիվանդը գալիս է բժշկի մոտ, ապա այդ բժշկի խնդիրը նրանում է, որ նա ուղղի (ամրացնի) այդ ոսկորը, այլ ոչ թե հետազոտի այն պայմանները, որոնք բերել են այդ կոտրվածքին [30, էջ 20]:

Բիհեվիորիզմում անձին դիտարկելով իբրև իր կյանքի ընթացքում ձեռք բերված փորձի արդյունք՝ մարդու հոգեբանական խնդիրները դիտարկում էին որպես չադապտացված վարքի հետևանք: Ուշադրություն չդարձնելով մարդու հոգեկանում տեղի ունեցող գործընթացների մեկնաբանություններին, բիհեվիորիստները աշխատում էին ախտանիշների հետ, համարելով, որ դրանք վերացնելով կվերացնեն նաև ամբողջ խնդիրը:

Այս հոգեթերապևտիկ ուղղությունը այն եզակիներից է, որը բացահայտ ասում է, թե գործ ունի արդյունքների հետ (նևրոտիկ ախտանիշների) և չի էլ ձգտում գտնել խնդրի առաջացման բուն պատճառները:

Ամփոփելով վերոնշյալ երեք հոգեթերապևտիկ ուղղությունները, կարող ենք արձանագրել, որ դրանցում գոյություն ունեցող մի շարք էական տարբերությունների հետ մեկտեղ կա ընդհանուր մի բան, այն է. այդ բոլոր ուղղությունները իբրև ելակետային տվյալներ վերցնում են հոգեկան այն ֆենոմենները (հոգեբանական խնդիրները), որոնք պետք է հետազոտեն, այդուհանդերձ ցուցաբերելով արգասիքային մոտեցում: Նշված հոգեթերապևտիկ ուղղությունները յուրովի մեկնաբանելով հոգեբանական խնդրի ծագումը և դրա լուծման ճանապարհները, միևնույն է, չէին կարողանում բացահայտել կամ չէին ցանկանում հասկանալ (բիհեվիորիստներ) այն սկզբունքները և մեխանիզմները, որոնց շնորհիվ իրականանում է հոգեբանական խնդրի ծագումը:

